



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2466

2467

Դրամբան


ԲԱՄԲ

84

U-63

Զ. Տյունիս

1879



84-31
11-63

874

այս


ԷՅԺԷՆ ՍԻԻ

ԴԻԻԱԲՆԱԿ ԲԼՈՒՐ

ԹԱՐՄԱՆԵԱՅ
Ս. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ՉՄԻՒՌՆԻԱ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՅ ՏԷՏԷՆԱՆ

1879

1-2

2011

679

ԴԻԻԱՐՆԱԿ ԲԼՈՒՐ

ՄԸՍՆ ԵՌԱԶԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ն Ա Ի Ո Ր Դ Ը

Յամին 1690 մայիսի վերջերը Լիբերն անուն եռակայմը Բոչէ-
 Լէն մեկնեցաւ Մարթինիքա երթալու համար: Այս նաւը զոր կը
 վարէր Գանիէլնաւապետը, տասներկու միջակ թնդանօթներով զի-
 նեալ էր ի զգուշութիւն պաշտպանողական որ խիստ կարևոր էր.
 վասն զի այն ատեն Անգղիոյ հետ պատերազմ ունէինք, և Սպա-
 նիացի ծովահէններն Անթիլեան կղզեաց ծովերուն մէջ ասպատա-
 կութեան կ'երթային, թէպէտ մեր ծովասպատակներէն անդադար
 կը հալածուէին:

Լիբերնի խիստ օակաւթիւ նաւորդաց մէջ կը զտնուէր նաև վե-
 րապատուելի հայր Կրիֆօն, քարոզիչ եղբարց միաբանութենէն:
 Սա Մարթինիքա կը վերադառնար Մաքուպայի ժողովուրդը հո-
 վուելու համար, որուն մի քանի տարիէ ի վեր քարոզիչն էր,
 և շատ զօճ ըրած էր այն թաղին բնակիչներն ու գերիները:

Մեր զաղթականներն այն ատեն Անգղիացոց, Սպանիացոց
 կամ քարայիսներուն հետ գրեթէ միշտ պատերազմելով կեանք



729
 31 9

2003

անցընելուն պատճառաւ, Անթիլեան կղզեաց քահանայք տարօրինակ կայութեան մը մէջէին: Այժմոյն պարտաւոր էին քարողել, խոստովանցընել, հաղորդել իրենց հօտը, այլ նաև օգնել անոնց երբ ամեն ազգէ, ամեն գոյնէ թշնամեաց անդադար յարձակմանց դէմ ինքզինքնին կը պաշտպանէին:

Ծողովրդագպետին տունն ալ ուրիշ ամեն բնակարանաց պէս առանձնացեալ և յեղակարծ ու արիւնահեղ յարձակմանց ենթակայ էր. շատ անգամ պատահած էր որ հայր Արիֆօն, իւր երկու սեւերուն օգնութեամբը, մահակոնէ ժայռաւոր և խոշոր գրան մը ետին ամբանալով, յարձակողները սաստիկ կրակով մը ետ մղած էր:

Ծամանակաւ երկլաչափութեան և մաթեմատիկայի գասատու ըլլալուն պատճառաւ զինուորական ճարտարագիտութեան տեսականապէս քաջ տեղեակ ըլլալով, Հայր Արիֆօն հեռոճեաէ Մարթինիքա եկող կուսակալներուն լաւ խրատներ առած էր մի քանի ամբողջներու շինութեան մասին:

Այս կրօնաւորն աղէկ կը հասկընար նաև քարիփութենէ և հիւանդութենէ. երկրագործութեան հմուտ, ընտիր պարաիզպան, հնարագէտ և յաջողակ, հազուադիւս հաստատմութեան տէր, արի և յանգուղն անձ մ'ըլլալով, գաղթականութեան և մանաւանդ իւր բնակած թաղին համար գանձ մ'էր: Աւետարանին խօսքը իւր բերնին մէջ այնչափ քաղցր չէր. ձայնը խոտալուր էր, քարողները խիստ, բայց հոգեշահ և բարոյալից էին: Պատարազը շուտ կը լմնցընէր, բայց ասոր համար ոչ որ կը մեղադրէր զինքը, վասն զի շատ անգամ պատահած էր որ հերետիկոս Անդղիլացիներու կամ կուսապաշտ Քարայիտներու մէկ յարձակումը ժամերգութիւնն ընդմիջած էր, և այն ատեն հայր Արիֆօն, ցատկելով այն բեմէն ուրիկէ խաղաղութիւն և միաբանութիւն կը քարողէր, իւր հօտին գլուխը կ'անցնէր և դայն պաշտպանողներուն առաջինը կ'ըլլար:

Առիւր վերջանալուն պէս այս քաջ հովիւր վերաւորելոց և դերիւրց կրցածին չափ խնամք կը տանէր, և իւր տուած վէրքերն

իւր ձեռքը կը պատէր:

Հոս միտք չունինք սուրբուցանելու թէ հայր Արիֆօնի ընթացքը ըստ ամենայնի օրինաւոր էր, և ոչ ալ սա վէճի տակ եղած խնդիրը լուծելու. Ընդ պարտպաներու մէջ եկեղեցականք կրնան պատերազմի երթալ: Այս մասին ոչ սուրբ Գրիգորի հեղինակութեանը կը դիմենք, և ոչ ալ Անն Գ.ի. այսչափ միայն կ'ըսենք թէ այս աղբիւ երէցը ձեռքէն եկած բարիքը կը դործէր և իւր բոլոր դօրութեամբը չարիքը կը հալածէր: Արգարաւէր և վեհաձն, համարձակ և զուարթ, հայր Արիֆօն կանանց քիչ մը հակառակ էր և զանոնք ծաղրելը կը սիրէր: Անգագար կատակարանութիւններ կ'ընէր: Եւայի աղջիկներուն, այն փորձիչներուն, օձին այն ստամանյամիտ գաշակիցիներուն վրայ: Արսենք նաև ի գովեստ հայր Արիֆօնի թէ իւր կատակները, որք սակայն բնաւ գառնութիւն չունէին, քիչ մը ոխ և սրտմտութիւն կը պարունակէին. զուարթ կատակներ կ'ընէր այնպիսի երջանկութեան մը վրայ որուն չկարենալ փափաքին անգամ վիրա մ'էր իրեն. վասն զի՝ գաղթածիներու վարած խառնադանց կեանքին հակառակ՝ հայր Արիֆօնի վարքը միշտ անբիծ մնաց:

Արուխտմը քիչ մը կը սիրէր. չէ թէ չափէն դուրս կ'ելնէր (Աստուծոյ մեղտուած բարիքը վայելելը բաւական կը համարէր), այլ շատ կը սիրէր խօսակցիլ որս եփելու, ձուկն համեմելու, արեւագարձին ներքև գանուող տաք երկիրներուն անուշահոտ պտուղները շաբարի մէջ պահելու նորանոր և զարմանալի կերպերուն վրայ: Երբեմն ալ՝ կղզւոյն անտառներուն մէջ կամ ծովեղբրն ըրած ցլորսական խնջոյքները պատմելով, ունկնդրաց բերնին ջուրերը կը վազցընէր: Ասոնցմէ զատ հայր Արիֆօն կրիայ եփելու մէկ գաղտնիքն ալ դիտէր որուն խօքը միայն բաւական էր ամենքն անթութեանէ մարեցընելու: Իւր այս մեծ ախորժակին հակառակ, հայր Արիֆօն պահեցողութիւնէ ամենէին ետ չէր կենար, զոր թէպէտ Պապին մէկ կոնդակն Անթիլեան կղզեաց և Հնդկատառի մէջ քիչ մը թուլցուցած էր: Աւերորդ է ըսել թէ այս աղբիւ քահանայն ամենէն համապատ խորտիկներէն իսկ կը

հրաժարէր եթէ պէտք ըլլար իւր կրօնական պարտաւորութիւնները կատարել խեղճ գերիի մը նկատմամբ. չկար մէկը որ իրեն չափ զթասիրտ, ողորմած և խնայողէտ ըլլար. ունեցած գոյզն ինչքը դժբաղդներուն սեպհականութիւնը կը համարէր:

Միշտ կը մխիթարէր տառապեալները և կ'օգնէր անոնց. իւր կրօնական պարտաւորութիւնները կատարելուն պէս, պարտէզը կ'երթար և ուրախ զուարթ կ'աշխատէր հօն, տունկերը կ'ոռոգէր, գէշ խոտերը կը փրցունէր, ծառերուն աւելորդ ոստերը կը կտրէր, և իրիկունը՝ սոյն օգտակար և դաշտային աշխատութենէն ետև կ'երթար կը հանդէսէր երկրին մատակարարած ճոխ և պատուական խորտիկները վայելելով: Իւր ժողովուրդն ամենեւին պարապ չէր ձգեր իւր շտեմարանն ու մառանը: Միրգերուն, երէներուն, ձուկերուն ամենէն ընտիրները միշտ իրեն կը զրկուէին: Ամենուն սիրելի եղած էր. քանի անգամ որ վէճ մը ծագէր, գինքն իրաւարար կ'ընէին, և իւր վճիռն ամեն ինչիւր վերջնական կերպով կը լուծէր:

Հայր Արիֆօնի արտաքին կերպարանքն իւր բարուց վրայ մեր ըսածներէն կրնայ գիւրաւ մտաբերուիլ: Առ առաւելն յիսուն տարեկան մարդ մ'էր, ուժեղ, գիւրաշարժ, թէպէտ քիչ մը դէր: Սև թիկնոյակով սպիտակ բրդէ երկայն լօզիկին տակէն իւր լայն ուսերը կընշմարուէին, իւր կունդ ճակատը թաղեայ գլխարկի մը ներքև ծածկուած էր: Կարմիր սյտերով, եռակի կզակով, թանձր և շառագոյն շրթերովը, երկայն և ծայրը տափկուկ քիթովը վաւվուուն և գորշ աչքերովը քիչ մը Ռապլէի կը նմանէր. սակայն հայր Արիֆօն սա յատկութիւնն ունէր որ իւր արգարատէր, ազնուասիրտ, ձեռնարկող և միանդամայն անմեղկատակները սիրող անձ մ'ըլլալը գէմքէն կ'երևէր:

Պատմութիւնս սկսելու միջոցին, քարոզիչ եղբայրը նաևուն յետնակողմը ոտքի վրայ կեցած Գանիէլ նաւապետին հետ կը խօսակցէր: Նաևուն սաստիկ տատանման հակառակ՝ իւր հաստատ և կանգուն կեցուածքէն յայտնի էր որ հայր Արիֆօն ծովային ճամբորդութիւն շատ ըրած էր: Գանիէլ նաւապետը բոլոր կեանքը

ծովերու վրայ անցուցած էր. ցամաքէն հեռանալուն պէս, նաւը վարելու պաշտօնը իւր երկրորդին կամ նաւուղուդն կը թողուր, և ամեն իրիկուն կը գինովնար: Որովհետև Մարթինիքայէն Բօչէլ յաճախ կ'երթար կու դար, ուրիշանգամ հայր Արիֆօնը Ամերիկայէն Եւրոպա տարած էր: Ուստի այս քահանայն, նաւապետին թեթև գինովութիւնները գիտնալով, նաւալարական գործողութեանց վրայ բաւական ուշադրութեամբ կը հսկէր. վասն զի՝ թէպէտ հայր Քուրնիէրի և ուրիշ ընկերակցացը պէս նաւուղուութեան արհեստը չէր գիտեր, բայց այս մասին տեսականապէս և գործնականապէս բաւական հմտութիւն ունէր:

Այս կրօնաւորը շատ անգամ Մարթինիքայէն Սուրբ Տօմինիկոս և Ամերիկայի ցամաքը ճամբորդած էր ծովասպատակաց նաւուղորք իրենց կողոպուտներէն տասանորդի պէս բան մը միշտ բաժին կը հանէին ի նպաստ Անթիլեանց եկեղեցիներուն: Գիշերը կը մօտենար, նաևուն յառաջակողմը իրիկուան կերակուրները կը պատրաստուէին, ուր հայր Արիֆօն կեցած անոնց անոյշ հոտերը կ'առնէր. նաւապետին սպասաւորը նաւորդաց իմաց տուաւ թէ կերակուրը պատրաստ է. ասոնց մէջէն ծովէն չբուսուող երկու երեք հողի բարձրաւանդակին սենեակը մտան: Հայր Արիֆօն սեղանը օրհնեց. ամեն մարդ նոր բաղմած էր, մէկ մ'ալ յանկարծ սենեկին գունն բացուեցաւ, և Կասկօնեան արտասանութեամբ սա խօսքերը լսուեցան.

— Պարոն նաւապետ, յուսամ թէ Քրուսթիյաք ասպետին համար պղտիկ տեղ մ'ունիք:

Բոլոր բազմականք զարմացման շարժում մ'ըրին, և յետոյ նաւապետին երեսը նայելով անոր զիմացը վրայ կը փնտուէին այն տարօրինակ երևութիւն բացատրութիւնը:

Նաւապետին բերանը բաց մնացեր էր, և գրեթէ սարսափահար՝ իւր նորեկ հիւրը կը գիտէր:

— Բայց ո՞վ էք դուք: Չեմ ճանաչեր զձեզ: Ո՞ր սատանին ծակէն ելաք, պարոն, գոչեց վերջապէս:

— Եթէ սատանին ծակէն ելած ըլլայի, այս բարի հայրը:

. (Աստուծոյն հայր Արիֆօնի ձեռքը համբուրեց) այս բարի հայրը զիս խոյն ելած տեղս կը զրկէր, ըսելով. Ե՛րբ զէ՛ս ի՞մ, Աստուծոյ . . . :

— Բայց, ո՛ւրիշ կու գար, պարոն, զոչեց նաւապետը՝ այս անակնկալ հիւրին անհոգ և զուարթ կերպարանքէն ապուշ դարձած. այսպէս նաւ զալ չըլլար . . . : Նաւորդայոս ցանկին մէջ չկար դուք . . . երկիրքէն ինկար արդեօք :

— Քիչ մ'առաջ սատանին ծակէն կ'երնէինք, հիմա ալ երկիրքէն կ'իջնենք : Զարմանալի բան, ես ոչ այդչափ երկնային և ոչ ալ այդչափ սատանայական ծաղման մը յաւակնութիւն ունիմ, քաջ նաւապետ . . . : Ես . . .

— Երկար խօսք պէտք չէ, պատասխանեցէ՛ք, զոչեց նաւապետը, ինչպէս եղաւ որ հոս եկաք :

Ասպետը ծանր կերպարանք մ'աւաւ :

— Աիէ՛նի ամենէն հին տոհմերէն մէկուն, այն է Քրուսթիւյոսը տոհմին անարժան զաւակը կ'ըլլայի, եթէ քաջ նաւապետին արդարացի հետաքրքրութիւնը դո՛հ ընելու փոքր ինչ վարանէի :

— Շատ լաւ, շատ լաւ, զոչեց նաւապետը :

— Մի՛ ըսէք, շատ լաւ, այլ ըսէք թէ այսպէս պէտք է : Ռուբրի մը պէս ձեր նաւուն մէջ ինկայ և դուք կը զարմանաք, բնական է այս . . . : Ինչպէս այս նաւը մանելու կը հարցընէք. այդ ձեր իրաւունքն է. ես ալ կը բացատրեմ, այս ալ իմ պարտականութիւնս է . . . : Տուած բացատրութիւններէս բոլորովին դո՛հ ըլլալով ձեռքերնիդ ինձ կ'երկընցընէք ըսելով. — Շատ աղէկ, ասպետ, եկէ՛ք մեզի հետ սեղան նստեցէ՛ք. ես ալ կը սատասխանեմ. — Նաւապետ, ինչպէս կ'ընամ մերժել, քանի որ անօթութենէ կը մեռնիմ. օրհնեալ ըլլայ ձեր սեղանը : Այս ըսելով, սա երկու յարդի անձանց մէջտեղը կը մտնեմ. զիրենք շնորհելու համար կրցածիս չափ կը պղտիկնամ. բայց ինչո՛ւ նեղեմ. ընդհակառակն, վասն զի տատանումն այնչափ սաստիկ է որ մոյթ կ'ըլլամ իրենց . . . :

Այսպէս խօսելով, ասպետն ըսածները կէտ առ կէտ ի

զորձ դրաւ. երբ ամենքը զարմուցեր մնացեր էին, ինքը դնաց երկու սեղանակցաց մէջտեղը նստաւ, մէկուն գաւաթն առաւ, միւսին սպասք, ուրիշի մը սկաւառակը, մինչդեռ քովիններն արձան կտրեր էին : Այս ամենն այնպիսի արագութեամբ, ճարտարութեամբ, ապահովութեամբ և յանգստութեամբ բրաւ, որ Լիւքօրնի նաւապետին սեղանակիցները, և նոյն ինքն նաւապետը աւելի ևս հետաքրքրութեամբ և զարմացմամբ Քրուսթիյաք ասպետին երեսը նայելէ զատ բան մը չըրին :

Այս բաղդախնդիրն հաղած էր բրգէ թիկնոց մը, որուն գոյնն երբեմն կանաչ բայց երթալով գեղինի զարնող կապոյտի փոխուած էր. սոյն գոյնէն էր նաև իւր մաշած տաբաղը. զանկապանները, որք ի սկզբան շաւաղոյն ըլլալով ետքը թուումս վարդի գոյն առեր էին, տեղտեղ ձերմակ թելով բանուած կ'երեւէին. զլուխը դրած էր թաղեայ գորշ գլխարկ մը բոլորովին հինցած. մէջքն ունէր հին կամար մը, կարմրած սուտ ոսկիէ լայն ժապաւէններով պատած. կամարէն կախուած էր լայն սուր մը, որուն վրայ կ'ընած էր ասպետը թատերական սուտ քաջի մը կերպարանքով սենեկէն ներս մտած ատենը : Քրուսթիյաք ասպետը բարձրահասակ և չափազանց նիհար մարդ մ'էր. տարիքը երեսունվեցէն քառասուն կ'երևէր : Մաղերը, պէխը և յօնքը սև սաթի նման էին, գէմքը ոսկրուտ, թուխ և արեակէղ էր : Արկայն քիթ մ'ունէր, աչքերը մանր, շէկ և չափազանց վառվառն էին, և բերանը խիտ մեծ. վերջապէս գէմքը կը ցուցընէր որ խիտ հաստատամիտ, յանդուգն և միանգամայն վերջին աստիճան մտադարձ անձ մ'էր :

Պ. ալ Քրուսթիյաք իւր վրոյ հարաւայնոց յատուկ եղած մեծ և տարօրինակ համարում մ'ունէր : Ինքզինքն այնքան մեծ արժանեաց և բնատուր ձրից ու շնորհաց տէր կը համարէր, որ կարծէր թէ զինքը տեսնող կիներն անպատճառ պիտի սիրահարէր իրեն. եթէ իւր խօսքին հատացուէր, այս մասին ունեցած ամեն սեսակ բաղդաւորութիւններն անհաշուելի էին : Թէպէտ խոշոր սուտեր շինելը շատ զիւրին բան մ'եղած էր իրեն, սակայն ճշմարտ

քաջութիւն մը և ըստ բաւականի բարուց արնուութիւն մ'ունենալը չէր կրնար ուրացուիլ : Իւր այս բնական արիութիւնը և իւր վրայ ունեցած կոյր վստահութիւնը երբեմն ամենէն ծանր վտանգներու մէջ կը մղէին զինքը, որոյ մէջ կը նետուէր անխորհրդաբար և երբէք մէկ կողմը չփնասուած չէր ազատեր . վասն զի՝ որքան յանդուզն և պոռոտախօս էր Ասքօնի մը պէս, այնքան ալ յամառ և պինդ զլուխ էր Պրըթմնի մը պէս :

Մինչև այն ատեն թափառաշրջիկ կեանք մ'անցուցեր էր : Ասքօնացի խեղճ ընտանիքի մը ամենէն փոքր զաւակը և անստոյգ ազնուակնութենէ մ'ըլլալով, Քարիզ եկած էր բաղլի փնտուելու . նախ Աորուսեայ տղայոյ* գնդին մէջ ստորին պաշտօնակալ եղաւ, յետոյ զինալարժ գասատուի օգնական, այնուհետև հետզհետէ բաղնեպան, ձիավաճառի միջնորդ եղաւ, փողոցները երգիծական հրատարակութիւններ և Հոլանտայի լրագիրներ վաճառեց . քանի՛ քանի անգամ ինքզինքը բողոքական կարծեցուցեր և յետոյ կաթոլիկ կրօնքն ընդունիլ կեղծեր էր, որպէս զի առնէ այն յիսուն սկուտը զոր Պ. Քելիսոն իւրաքանչիւր հտաաափոխի կը վճարէր կաթոլիկութեան դարձողներուն յատկացեալ սնտուկէն : Այս խաբէութիւնը երևան եղնելով, ասպետը խարաղանի և բանտի դատապարտեցաւ : Ծեծը կերաւ, բանտէն խոյս տուաւ, աչքին վրայ խոշոր խարան մը փակցընելով ծպտեցաւ, մէջքը ահադին թուր մը կսպեց, սկսաւ փողոցները թափառիլ, և վարձք մ'ընդունելու համար պանդուխտները համոզելով խաղարանները ասնիլ ուրկէ այս անմեղմարդոյ և ոչ մէկը անինայ չկողոպտուած դուրս չէր ելներ : Սակայն ի գովեստ ասպետին պէտք է բսել թէ այսպիսի խաբէութեանց և սրիկայութեանց բնաւ չէր մտնուելցեր, և՛ ինչպէս որ ինքն ալ կ'ըսէր, ձուկն կ'որսար բոցը չէր ուտեր :

* Աորուսեայ տղայք կը կոչուէին կորէ մը զեհուորք որ յարչակութիւն կ'ըսէին :

Այն ատենները մեծամարտութիւնը սաստիկ արդիւուած էր : Օր մը ասպետը ճամբուն վրայ Փոնթընէ-Քու-ալէրէ (Փոնթընէ-Հարուած-Սրոյ) անուն հանրածանօթ սուսերամարտի մը պատահեցաւ : Այս վերջինը ուժով մը մէկդի հրեց բաղլիականները ըսելով . — Չգուշացիր . . . Ես եմ Փոնթընէ-Քու-ալէրէ : — Իս ալ՝ Քրուսթիյաք-Քու-ալը-Քանօն . (Քրուսթիյաք-Հարուած-Թնդանօթոյ), ըսաւ Ասքօնը սուրը քաշելով : Փոնթընէ ինկաւ գիւթաւալ, և Քրուսթիյաք պարտաւորեցաւ փախչիլ :

Ասպետը շատ անգամ լսած էր թէ կղզիներուն մէջ անբաւ հարստութիւն կը գիղէին : Ճամբայ ելաւ Բօշէլ երթալու համար, անկէ նաւով Ամբրիկա երթալու յուսով : Ճամբան մերթ հետի կ'երթար, մերթ ետ դարձող ձիերը կը հեծնէր, մերթ սայլ՝ կը նստէր : Բօշէլ հասնելէն ետև, ոչ միայն նաւողչէք վճարել պէտք էր, այլ նաև նաւահանդսաին վերատեսուչէն Անթիլեան կղզիներն երթալու համար հրաման ստանալու էր : Այս երկուքն ալ խիստ դժուար բան էր, վասն զի բողոքականաց զաղթականութեան պատճառաւ, զոր Աուգովիկոս ԺՊ. արդիւլ կ'ուզէր, նաւահանդիստները չափազանց հսկողութեան ներքև էին, և Մարթինիքա երթալու համար առ նուազն ութ ինն հարիւր ֆրանք ծախք ընել պէտք էր : Արդ՝ բաղլիականները կենացը մէջ սոյն գումարին կէսն անգամ տեսած չէր :

Աերջապէս զրպանին մէջ տասն սկուտով, տաւատով մը հագած, և թիկնոցն ու տարատը ծրարելով սուրին ծայրէն կախած, ասպետը Բօշէլ հասաւ, և գձուձ գինեաուն մը գնաց օթեանելու : Հոն սովորաբար յաճախող նաւատիկներէն տեղեկացաւ թէ Աիօրն նաւը մէկ քանի օրէն ճամբայ պիտի ելնէր : Այս նաւուն պաշտօնատարներէն երկու հոգի սոյն գինեաունը կը յաճախէին զոր ասպետն իւր գործողութեանց կեդրոն ընտրած էր : Խիստ երկար կ'ըլլար պատմել թէ Քրուսթիյաք ո'րպիսի խորամանկութեամբ և ճարտարութեամբ, ո'րպիսի լպիրշ և առասպելական սուտերով, ո'րպիսի խօլական խոստումներով յաջողեցաւ զրաւելնաւուն տակաւագործին սիրտը, որ նաւուն յատակը անոյշ

ջրի տակառները շարելու պաշտօն ունէր . վերջապէս այս մար-
դը հաճեցաւ Բրուսթիյաքը պարապ տակառի մը մէջ մտցընելով
զաղանի Լիքօրն տանելու :

Երբ նաւը ճամբայ ելնելու վրայ էր , նաւահանդատի վերա-
տեսչին և նաւարանի պաշտօնատարները նաւն երթալով ամեն
կողմը ուշադրութեամբ աչքէ անցուցին , որպէս զի չըլլայ թէ
մէկը խաբէութեամբ նաւ մտած ըլլայ : Ասպետը հանդարտ կե-
ցաւ իւր տակառին մէջ որ նաւուն յատակը շփուաներուն կարգը շա-
րուած էր , և պաշտօնատարաց մանրակրկիտ խուզարկութիւննե-
րէն ազատեցաւ : Երբ նաւուն քալելն զգաց , աշխարհք իրեն ե-
ղաւ , բայց սպասեց որ մէկ քանի ժամանցնի և յետոյ երեւան ել-
նէ . վասն զի քաջ զիտէր որ այնչափ հեռանալէ յետոյ նաւապե-
տը վերստին նաւահանդիստ չպիտի դառնար մաքսէն փախած նա-
ւորդ մը հոն տանելու համար :

Ասպետը տակառագործին խօսք տուած էր որ ինչկերպով նաւ
մտած ըլլալը բնաւ մարդու չյայտնէ : Եթէ մեր յանդուդն բաղ-
դանդիրին տեղ ուրիշ մէկն ըլլար , նաւաստիներուն քովէն հե-
ռանալու չպիտի համարձակէր , դող ի սիրտ սպասելով այն վայր-
կենին յորում Գանիէլ նաւապետը պիտի իմանար իւր նենգութեամբ
նաւ մտած ըլլալը : Ընդ հակառակն՝ Բրուսթիյաք չսպասեց այն
վայրկենին . նաւապետին սեղանը նաւաստեաց զուշէն լաւադոյն
համարելով , բնաւ չտարակուսեցաւ թէ եթէ ոչ իրաւամբ գէթ
իրապէս պիտի կրնար այն սեղանը բազմիլ : Ինչպէս որ արդէն
տեսանք , կրցաւ իւր յանդուդներէն օդուտ քաղել : Ահա այսպի-
սի մարդ մ'էր այն անակնկալ հիւրը զոր հետաքրքիր աչօք կը
նկատէին Լիքօրնի բազմականները :

Գ Լ Ո Ւ Ն Ե Բ Կ Բ Ո Ր Գ

Կ Ա Պ Ո Յ Տ - Մ Օ Դ Ո Ւ Բ Ը

— Աւերջապէս պիտի յայտնէ՞ք ինձ , պարոն , ինչպէս հոս
զալերնիդ , դուչեց նաւապետը , որ Կասրօնին զաղտնիքն իմանալու
անհամբերութենէն թողուցեր էր որ սեղանը մնայ :

— Բրուսթիյաք ասպետը իւր դաւաթը մինչև բերանը լեցուց ,
ոտքի վրայ ելաւ և բարձրաձայն ըսաւ .

— Նախ և առաջ այս պատկառելի ակմբին կ'առաջարկեմ մէյ-
մէկ դաւաթ պարպել մեր քաջայաղթ թաղաւորին , Մեծին Լու-
գովիկոսի անդին կենայր :

Այնպիսի բռնապետական ժամանակ մը , նաւապետին համար
մեծ անխոհեմութիւն մը , մինչև անդամ վտանգաւոր բան մը կ'ըլ-
լար եթէ ասպետին առաջարկութեանը ցուրտ ընդունելութիւն մը
ընէր : Ուստի Գանիէլ նաւապետը , ըստ իւր օրինակին և նաւորդ-
ները սոյն հրաւերին պատասխանելով կրկնեցին միաբերան .

— Թաղաւորին կենայր , Մեծին Լուգովիկոսի կենայր :

Բազմականներէն մէկը միայն լուռ կեցաւ : Այս անձն ասպե-
տին քովինն էր : Բրուսթիյաք յօնքը պատեւելանոր երեսը նա-
յեցաւ :

— Ա՛յդ ինչ է , պարոն , միթէ դուք մենէ չէ՞ք , մեր սիրելի
Թաղաւորին թշնամի՞ն էք , ըսաւ անոր :

— Բնաւ երբէք , բնաւ երբէք , պարոն . ե՛ս ալ կը սիրեմ ,
ե՛ս ալ կը յարգեմ զինքը , բայց ի՛նչպէս կրնամ խմել , դաւաթս ա-
ռիք , պատասխանեց նաւորդը երկիւղիւ :

— Ա՛յդ ինչ խօսք է , պարոն , այդպիսի ջնչին պատճառի մը
համար ինքզինքնիդ կասկածելի՞ երեցընել կ'ուզէք , դուչեց ասպե-

տը ուտը թոթուելով: Միթէ դաւած չկայ հոս: Իս նայեցէք, մով կայ հոն. պարոնին դաւած մը բերէք: Լաւ, հիմա ոտքի վրայ ամենքս ալ ըսենք. Մեր վեհապառ Թաղաւորին կենանցը:

Գինիները խմեցին և նստան: Սոյն միջոցին ասպետը սկիւտաակ մը և սպաս մը բերել տուաւ իւր քովինին համար: Յետոյ առջիկ թանին բերանը բանալով, արձակ համարձակ ըսաւ հայր Արիֆօնի.

— Աւերապատուելի, այս աղանեկի թանէն քիչ մը տամ ձեզ:

— Բայց, պարոն, զոչեց նաւապետը՝ ասպետին համարձակութեանցը չկրնալով համբերել, շատ աղաւորէն կը շարժիք:

Քրուսթիյաք ընդմիջեց նաւապետին խօսքը, և լուրջ դէմքով մ'ըսաւ անոր.

— Նաւապետ, կրնամ իւրաքանչիւրն իւր աստիճանին համեմատ մեծարել. կղերական դասը Պետութեան մէջ առաջինն է, ուտի՛ նախ և առաջ այս վերապատուելի Հօր հրամայելովս քրիստոնէի մը արժանաւայելի կերպով վարուած կ'ըլլամ, նա մանաւոր՝ այս պատկառելի և սուրբ անձն մեծարելով, պատեհութիւն ունեցած կ'ըլլամ խորին յարգանքս մատուցանելու այն աւետարանական առաքինութեանց որով կը փայլի և միշտ պիտի փայլի մեր Ա'եղեցին:

Այս խօսքն ընելէն ետև ասպետը հայր Արիֆօնի հրամայոց: Այնուհետև նաւապետին համար գծուար բան էր բաղդախնդիրը սեղանէն արտաքսել. ոչ կրցաւ ասպետին առաջարկած բաժակը մերժել, և ոչ ալ մօտը գտնուած կերակուրները հրամայելն արդիւել: Սակայն իւր հարցաբնութիւնը շարունակեց:

— Շատ աղէկ, պարոն, քաջ աղնուական մ'էք, բարեպաշտ քրիստոնէայ մ'էք, թաղաւորը կը սիրէք ինչպէս որ ամենքս ալ կը սիրեմք, ասոնց բան մը ըսելէք չունիմ. սակայն ըսէ՛ք նայիմ, ուրկէ՞ ելաք, ինչպէս եկաք սեղանին գլուխը:

— Հայր, զոչեց ասպետը, թէ՛ զձեզ և թէ՛ այս պատուաւոր անձինքը վկայ կը բռնեմք. . .

— Ակնայ, ինչ բանի, տղաս, ըսաւ հայր Արիֆօն:

— Նաւապետին ըսածներուն:

— Բայց ինչ ըսի ես, զոչեց Գանիէլ նաւապետը:

— Նաւապետ, ամենուն ներկայութեանը ըսիք, ընդունեցիք և հրատարակեցիք թէ ես քաջ աղնուական մ'եմ. . .

— Ըսի, բայց. . .

— Թէ բարեպաշտ քրիստոնէայ մ'եմ:

— Այո, բայց. . .

— Թէ կը սիրեմ թաղաւորը:

— Այո, վասն զի. . .

— Հիմա, ասոր դարձեալ վկայ կը բռնեմ այս պատուաւոր աղուարը, յարեց ասպետը. քանի որ կ'ընդունիք թէ բարեպաշտ քրիստոնէայ մ'եմ, քաջ աղնուական մ'եմ, թաղաւորը կը սիրեմ, ալ ինչ կը հարցընէք ինձ: Աւերապատուելի, սա կ'ըսիկէն կը հրամայէք:

— Ա'ընդունիմ, տղաս, վասն զի ամենը նաւ նստած աստիճանին ծովը կը բռնէ, իսկ իմ ախորժակս աւելի կը բացուի:

— Շատ ուրախ եմ, հայր, որ կազմութիւնն իրարու շատ նման է եղեր, ինչու որ ես ալ ծովու վրայ սաստիկ անթոթութեանէ զատ ուրիշ անհանդատութիւն չեմ զգար:

— Հիմա, զնուակս, քանի որ մեր ազնիւ նաւապետը թոյլ կուտայ ձեր քաղցոյ յաղեցընելու, ես ալ՝ ձեր խօսքերն ի կիրարկանելով կ'ըսեմ թէ բարի և քաջ աղնուական մը. բարեպաշտ քրիստոնէայ մը և իւր վեհապետին վրայ սէր ունեցող անձ մը ըլլալու համար պէտք է որ պարոն նաւապետին իւր նաւուն մէջ ձեր անախակալ ներկայութեան մասին ըրած հարցմանը պատասխանէք:

— Գծաբաղդարար ահն ես այ այդ բանը չեմ կրնար ընել:

— Զէք կրնար, զոչեց նաւապետը բարկութեամբ:

Ասպետը զըջացողի մը դէմքով պատասխանեց, հայր Արիֆօնը ցուցընելով.

— Միայն վերապատուելի հայրը կրնայ լսել խոստովանու-

Թիւնս . յայտնելիք զաղտնիքս միայն ինձ չվերաբերիր , շատ և շատ ծանրակշիռ զաղտնիք մ'է , աւելցուց ասպետը աչքերը երկինք բարձրացընելով վշտալին :

— Բայց ես կրնամ զձեզ ստիպել որ խօսիք , գոչեց նաւապետը . մինչև անդամեթէ պէտք ըլլայ ոտքերնուդ մէյմէկ ուուք կապել տալով զձեզ անուորդի մէկ ձողին վրայ կը հեծցընեմ մինչև որ շիտակը խօսիք :

— Նաւապետ , պատասխանեց ասպետը անխուով հանդարտութեամբ մը , ես կենացս մէջ թշնամանաց երեւոյթ մ'ունեցող սպառնալիքի մը , ակնարկի մը , նշանի մը , վերջապէս ամենաչնչին բանի մը համբերած մարդ չեմ , բայց դուք ձեր նաւուն մէջ թաղաւոր էք , որով ես ալ ձեր իշխանութեան ներքև կը դանտիմ , և ձեր հպատակն եմ , զիս ձեր սեղանն ընդունեցիք (այս շնորհքին միշտ արժանի ըլլալու պիտի ջանամ) սակայն ասկէ չհետևիր թէ կրնաք ուզածնուդ պէս զիս անխնայ տանջել . ես տանջանք ալ կրնամ կրել , եթէ այս բարի հայրը , որ հզօրին դէմտկարին նեցուկն ըլլալու պաշտօն ունի , չհաճի միջնորդել ինձ համար , պատասխանեց ասպետը խոնարհաբար :

Նաւապետը երկու սրին մէջտեղը մնաց , վասն զի հայր Արիֆօն ստիպուեցաւ մէկ երկու խօսք ընել ի նպաստ բաղդախնդրին որ առանց հարցընելու անոր պաշտպանութեան ներքև մտաւ , խոստանալով որ ինչ կերպովնաւն եկած ըլլալու զաղտնիքը յայտնէ անոր : Նաւապետին բարկութիւնը քիչ մը իջաւ , և ասպետը շուրջորթութիւնն ու փաղաքշանքը ձգելով սկսաւ զուարճաբանութիւններ ու խեղճատակութիւններ ընել . բաղմականները զուարճացընելու համար ամեն տեսակ ճարտարութիւն ի գործ դրաւ . քթին ծայրը գանակ կանդնեցուց , դաւաթներով և շիշերով զարմանալի ճարտարութեամբ բուրդեր շինեց , երդիծական նոր երգեր երգեց , այլ և այլ կենդանիներու ձայներ հանեց : Աերջապէս Քրուսթիլյաք այնքան զրօսեցուց Աիքօրնի նաւապետը որ ընթրիքէն ետև Ասպետին ուսը ձեծելով ըսաւ անոր .

— Է՛հ , ասպետ , ինչ որ ալ ըլլայ նաւուս մէջն էք , զձեզ

զուրս հանելու ճարը չկայ . զուարթ ընկեր մ'էք , սեղանիս վըրայ ձեզի համար միշտ սպաս մը պիտի ունենաք , և պառկելու համար հարկաւ անկողին մը կը գտնուի մէկ անկիւնը կախելիք :

Ասպետը խորին շնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնելով , իրեն նշանակուած տեղը գնաց և պառկելուն պէս սկսաւ անոյշ քուն մը քաշել , վասն զի այլևս վախնալու բան մը չունէր նաւուն մէջ , թէև ինքզինքը փոքր ինչ նուաստացեալ համարեց նաւապետին սպառնալեաց հանդուրժելու ստիպուած ըլլալուն , և անոր հոգածութիւնը ստանալու մտօք մինչև անդամ մարդահաճութիւն ընելու խոնարհած ըլլալուն համար . քանի քանի անդամ մտքէն անբան և ծովային արջանուանեց Գանիէլ նաւապետը :

Ասպետը ճշմարիտ էլտօրատո* մը կ'երեակայէր զաղթականութեանց մէջ : Այնքան գովեր էին իրեն զաղթականաց հիւրասիրութիւնը , ըսելով թէ զիրենք տեսնելու եկող Եւրոպայիները ուրախութեամբ ամիսներով կ'ասպնջականեն , որ ասպետը սախիստ պարզ վիճակագրական պատճառաբանութիւնն ըրած էր :

Մարթինիքայի և Կուստալուբայի մէջ յիսուն վաթսուհի չափ հարուստ գերգաւտաններ կան . ասոնց տէրերը , որ մուելոց պէս կը ձանձրանան , հարկաւ շատ կը փափարին խելացի , զուարճախօս և ամեն բանի տակէն ելնող մարդիկը քովերնին պահելու . ես ալ ի բնէ այս անձանց կարգէն եմ . զիս տեսնելուն պէս ինչպէս կերցընենին , խնայընենին , զգուերնին և մեծարենին չափտի դիտնան . զիցաք թէ խրաբանչիւրին տունը մէկմէկու վըրայ վեց ամիս հաճիմ մնալ , տուները վաթսուհի չափ ըլլալով , ըսելէ որ քսանհինգ երեսուն տարի ուրախ , զուարթ և պատուական կեանք մը պիտի անցընեմ , թողունք որ սպասած բաղդիս յետինն է այս : Ինքզինքս հաւանեցընելու կատարեալ հասակիս մէջն եմ . սիրուն

* Էլտօրատո երկիր ոսկուց : Աւերկայի մէջ երկր մ'է որ իւր իւր ձուեր թէ արար սոյն կայ :

729
39



եմ. հանձարեղ եմ, ընկերական ամեն տեսակ տաղանդներն ու-
 իմ. միմէ կարելի է որ դաղթականութեանց մէջ իրենց ծնողա-
 ցը մէկ հատիկն եղող հարուստ ժառանգուհիներն ինձ նման
 բազմ մը փախցընելու չափ անմիտ և ապուշ եղած ըլլան, և
 շփութան մանկամարդ և սիրուն աղջկան մը կամ այրիի մը՝ ան-
 կողմին մէջ երազած ամենէն չքնաղ ամուսինը ձեռք անցընելու:»

Ահա այս տեսակ էին ասպետին յոյսերը. ետքը պիտի տես-
 նենք թէ ի դերև ելան թէ ոչ.

Հետևեալ առաւօտուն Գրուսթիյաք իւր խոստմանը համեմատ
 հայր Արիֆօնին խոստովանեցաւ: Թէպէտ ճշմարիտ էին խոստո-
 վանութիւնները, սակայն քահանան իւր խոստովանորդոյն վիճա-
 կին նկատմամբ արդէն գուշակածէն աւելի բան մը չկրցաւ իմա-
 նալ. ասպետին խոստովանութեան համառօտութիւնը գրեթէ սա
 էր. հօրմէն ինկած ժառանգութիւնը վատներ, մեծամարտութեան
 մէջ մարդ մը սպաններ, իշխանութենէն հալածուելով, առանց
 ասորուստի մնալով, ճարը հատեր և բազը փնտուելու մտօք
 կղղիններն երթալու որոշում ըրեր էր. նաւողչէքը վճարելու
 ստակ չունենալով տակառագործին կարեկցութեան զիմեր էր որ
 զինքը պարսպ աակառի մը մէջ մտցունելով նաւը տարեր և պա-
 հեր էր:

Այս խոստովանութիւնը հայր Արիֆօնի անկեղծ երևելով,
 սկսաւ բաղդախնդրին նպաստաւոր կերպով շարժիլ, սակայն գաղ-
 թականութեան երկիրներուն մէջ հարստութիւն գտնելու յուսոյն
 պատրանք մ'ըլլալը չծածկեց անկէ. հոն դոյզն բնակութիւն մը
 հաստատելու համար մեծ դրամագլուխներով գալ պէտք է, կլի-
 ման մահաբեր է, բնակիչք առհասարակ օտարականաց վրայ
 վտաճութիւն չունին, առաջին գաղթականաց վեհանձն ասպնջա-
 կանութիւնը բոլորովին մոռցուած է մէկ կողմանէ բնակչաց ինք-
 նասիրութեանը պատճառաւ, միւս կողմանէ Անդղիոյ գեմմեր ու-
 նեցած պատերազմէն յառաջ եկած նեղութեան պատճառաւ, վասն
 զի իրենց գործերը մեծ վնասներ կը կրէին պատերազմէն: Միով
 բանիւ, նաւասպետը ասպետին առաջարկած ըլլալով որ Մարթինի-

քա հանդիպելէ ետև զինքը Բօշէլ վերադարձնէ, հայր Արիֆօն
 խրատ կու տար իրեն որ նաւասպետին առաջարկութիւնն ընդունի:

Եկեղեցականին կարծիքն այն էր թէ Գրուսթիյաք Գաղղիոյ
 մէջ շատ միջոց կրնար գտնել ասպետուստի քան զոր կը յուսար ձեռք
 բերել այն կէս բարբարոս երկրին մէջ, վասն զի գաղթականու-
 թեանց մէջ սպիտակները բարձր զիրքէ մ'ունենալնուն, Եւրոպա-
 ցւոց արժանապատուութեանը կը դպչէր ստորին սաշտօններ վա-
 րել: Հայր Արիֆօն չյիտէր թէ իւր խոստովանորդին Գաղղիոյ
 մէջ ամեն միջոց փորձելէ ետև ստիպուեր էր հայրենիքէն գաղ-
 թելու: Ինչ ինչ պարագաներու մէջ շատ դիւրին էր խաբել այս
 բարի եկեղեցականը. թշուառին համար ունեցած դուրս ու կա-
 րեկցութիւնը իւր սովորական կորովամտութեանը կը վնասէին:

Գրուսթիյաք ասպետին անցեալը շատ անրիժ չէր երևեր քա-
 հանային, սակայն ասպետն այնչափ հոգ չէր ընէր իւր թշուա-
 վիճակը, այնչափ անտարբեր էր զինքն սպառնացող ապագային
 նկատմամբ, որ հուսկ ուրեմն հայր Արիֆօն սկսաւ հոգածութիւն
 ցոյց տալ բաղդախնդրին, հոգածութիւն մը՝ որուն թերևս այն-
 չափ արժանի չէր, և առաջարկեց անոր որ մինչև Լիբօրնի Մար-
 թինիբայէն մեկնելու օրը իւր Մաքուսայի տունը բնակի. Գրուս-
 թիյաքի ուղածն ալ այս էր: Օրերը կ'անցնէին. Գանիէլ նաւասպետ
 անգաղար կը զարմանար ասպետին ձրիցը և ճարտարութեանցը վը-
 րայ, որ ամեն օր ձեռնածութեան նորանոր փորձեր կ'ընծայէր:

Բաց ի զանազան փորձերէ վերջապէս ասպետը բերնին մէջ վա-
 ուած ճրագ գրաւ, և պատառաքաղ կլինեց: Այս վերջին ճարտարու-
 թեան վրայ նաւասպետին խելքը գլխէն երթալով, Ասքընին ա-
 ռաջարկեց որ ցմահ իւր նաւուն մէջ մնայ, սա պայմանաւ որ նաւար-
 կութեան պարսպ ժամանակները խոստանայ ամենքը զբօսեցընելու:
 Գրուսթիյաքի այսչափ յաջողութեան մէկ պատճառն ալ սա է որ ծո-
 վու վրայ օրերն իրիկուն չըլլալուն ամենափոքր զբօսանքն անգամ
 մեծ յարգ կը գտնէ, և այն ատեն որչափ ուրախ կ'ըլլայ մարդ երբ
 յարազուարթ բնաւորութեան տէր խելկատակ մ'ունենայ իւր հրա-
 մանացը սպասող:

Իսկ ասպետը զուարթութեան և անհոգութեան զիմակին ներքև տխուր մտահոգութիւն մը ծածկած էր. նաւարկութեան վախճանը կը մօտենար. հայր Արիֆօնի խօսքերն այնքան խելացի, այնքան արդար, այնքան անկեղծ էին, որ բուն ասպետութիւն մ'ըրին բաղդախնդրին վրայ, որ ի սկզբան կը յուսար թէ զաղթականաց շնորհիւ ուրախ զուարթ կեանք մը պիտի անցընէր: Նաւորդաց մէջ զանուող և Մարթինիքա վերադարձող բնակչաց իրեն նկատամբ ցոյց տուած անտարբերութենէն բոլոր յոյսերը ցրեցան: Թէև ի դործ դրած ճարտարութիւններովն ամենքը կը զուարճանային, սակայն զաղթականաց մէջէն ոչ ոք իրեն հետ բարեկամանալու ամենափոքր յօժարութիւն մ'անդամ ցոյց տուաւ. թողունք որ անդադար կ'ըսէր թէ կղզւոյն ներսերը երկար արշաւանք մ'ընելու ջերմ փափաք մը ունէր:

Նաւը նպատակին հասնելու վրայ էր, Բրուսթիյաք իւր ակնկալութեանց բոլորովին պատրանք մ'ըլլալը հասկըցաւ. վիճակը ամեն կողմէն ցաւալի էր, վասն զի կամ Գանիէլ նաւապետին հետ յաւիտեան նաւարկելու էր, կամ Գաղղիա վերադառնալով թաղաւորին մարդոց խտտութեանցը գիմադրաւելու էր: Գիսլուած մը յանկարծ ասպետին մտացը շէտցուցիչ տեսիլ մը ներկայացընելով սրտին մէջ ամենէն խօլական յոյսերը զարթոյց: Գեւ Լիքօրն իբր երկու հարիւր փարսան հեռու էր Մարթինիքայէն, Գաղղիական վաճառաքարձ նաւու մը պատահեցաւ, որ այս կղզիէն վերադառնալով Գաղղիա կ'երթար: Այս նաւը կանգ առնելով մակոյլ մը զրկեց Լիքօրնի Եւրոպայի վրայօք լուր ստանալու համար. զաղթականութեանց մէջ քանի մը շաբաթէ ի վեր խաղաղութիւնը կը տիրէր և բնաւ Անդղիացի պատերազմական նաւ մը չէր տեսնուած: Արիշ մէկ քանի լուրեր ևս իրարու հաղորդելէ ետև նաւերը բաժնուեցան:

— Քանի որ նաև այդչափ արժողութեամբ վաճառք կը պարուհակէ (նաւորդք 400,000 ֆրանքի չափ հաշուէր էին) ըստ իս լաւ զինեալ չհամարուիր, ըսաւ ասպետը, Անդղիացոց համար աղէկ որս մը կրնայ ըլլալ:

— Բէ՛հ, յարեց նաւորդ մը, Ապոյոյա-Վօրուքին համար բան մ'ըսել չէ այդ նաւը կորսընցընելը:

— Ազոր նո՛ւ կը տարակուսի, կրնայ ետքը ուրիշներ ալ գնել և յարդարել:

— Մինչև անգամ, եթէ ուղէ, քսան հատ, ըսաւ Գանիէլ նաւապետը:

— Քսան . . . շատ է, պատասխանեց նաւորդ մը:

— Ճշմարիտ կ'ըսեմ, առանց հաշուելու Անս-օ-Սապլի իւր գեղեցիկ կալուածը, և Գիւարնակ-Բլուրին խորհրդաւոր տունը, ամեն մարդ չըսեր թէ թաքստոցի մը մէջ հինգ վեց միլիոնի ոսկի և գոհարեղէն թաղած է:

— Եւ ո՞վ զիտէ ուր թաղած է, կրկնեց Գանիէլ նաւապետը, բայց սա ստոյգ է թէ ունի, վասն զի ծերունին հայր Աւլըր-Լ'Էօյլ, որ անգամ մը Գիւարնակ-Բլուրը գացած և Ապոյոյա-Վօրուքին առաջին ամուսինը տեսած է, որուն համար կ'ըսեն թէ երիտասարդ և հրեշտակի նման գեղեցիկ է եղեր, Աւլըր-Լ'Էօյլ ինձ ըսած է թէ այն օրը Ապոյոյա-Վօրուքը գուշերով աղամսնգ, մարդարիտ և զմրուխտ չափելով կ'ըզբօսնուր, թողունք որ կ'ըսեն թէ իւր երբորդ և վերջին ամուսինը անբաւ հարստութիւն ունի եղեր, և այս հարստութիւնը փոշի եղած ոսկիէ է եղեր:

— Ամանք ալ կ'ըսեն թէ այնչափ ազահ է որ թէ իրեն և թէ իւր սպասաւորաց համար տարին 10,000 ֆրանքէն աւելի ծախք չընէր, ըսաւ նաւորդ մը:

— Այդ ստոյգ չէ, յարեց Գանիէլ, անոր ինչպէս ապրիլը մարդ չկրնար գիտնալ՝ զաղթականաց ծանօթ չըլլալուն պատճառաւ, և Գիւարնակ-Բլուրը ոտք կոխող չորս հոգի չկայ:

— Ստուգիւ, շատ աղէկ կ'ըսեն. իմ ալ գործիս չգար հոն երթալ, ըսաւ ուրիշ մը. այս մասին Գիւարնակ-Բլուրը շատ աղէկ համբաւ մը հանած չէ . . . : Ա'ըսեն թէ հոն խիստ տարօրինակ բաներ կը պատահին . . . :

— Սա ստոյգ է որ երեք անգամ կայծակ իջած է հոն . . . :

— Այդ զարմանալի բան մը չէ ինձ համար. կ'ըսեն թէ այդ

տանը բոլորախոր աշխատակի ձայներ կը լսուին:

— Քապէսութիւրի ժայռերուն մէջ անմատչելի ամրոցի մը ձևով շինուած է, կ'ըսեն . . . :

— Հարկաւ սոյդպէս ըլլալու է, քանի որ Աստուծոյ-Մօրուքն այնչափ գանձ ունի սոսիսի:

Քրուսթիլայք չտալողանց հետաքրքրութեամբ ունկնդիր կ'ըլլար այս խօսակցութեան: Այն դանձերն ու աղամանդները իւր երեւա- կայութեան առջև կը պատկերանային:

— Բայց որո՞նք վրայ կը խօսիք, պարոնայք, ըսաւ վերջապէս:

— Աստուծոյ-Մօրուքն վրայ:

— Ո՞վ է այդ Աստուծոյ-Մօրուքը:

— Աստուծոյ-Մօրուքը: Նոյն ինքն Աստուծոյ-Մօրուքն է:

— Բայց էրիկ մարդ է, կի՞ն է, ըսաւ ասպետը:

— Աստուծոյ-Մօրուքը:

— Այո՛, այո՛, ըսաւ Քրուսթիլայք անհամբեր:

— Աստուծոյ-Մօրուքը կի՞ն մ'է:

— Կի՞ն մ'է: Ինչո՞ւ համար Աստուծոյ-Մօրուք կ'ըսեն:

— Ինչո՞ւ համար: Անոր համար որ՝ ինչպէս նոր վէպին Աս- տուծոյ-Մօրուք անուանեալ մարդը իւր կիներն անդիի աշխարհքը կը զրկէր, այս ալ իւր ամուսինները հոն կը զրկէ:

— Այրի՛ ալ է . . . այրի՛ մ'է . . . այրի՛ մ'է կ'ըսէք . . . զոչեց ասպետը անբացատրելի յուզմամբ մը. այրի՛ մը . . . կրկնեց ձեռքերն իրար կցելով, այրի՛ մը, այնչափ հարուստ որ իւր հա- րստութեանց լոկ հաշիւէն մարդուս խելքը կը դառնայ . . . այրի՛ մը:

— Այրի մը, և երեք տարուան մէջ երրորդ անգամ այրի մը, ըսաւ նաւասպետը:

— Եւ իրօք այնչափ հարուստ է:

— Այո՛, և ամենուն զիտցած բանն է այս, ըսաւ նաւասպետը:

— Միլիոններու տէր, 400,000 ֆրանքնոց նաւեր գնելու և յարգարեւու չափ հարուստ . . . սուպրակներով աղամանդ, զմրուխտ, ընտիր մարգարիտ օւնենալու չափ հարուստ . . . զոչեց

Աստուծոյ, որուն աչքերը կը փայլատակէին, ունդունքը կ'ուռէին և ձեռքերը կը կարկամէին:

— Որչափ հարուստ ըլլալն ասկէ կրնաք մակարեւել որ եթէ ուզէ, կրնայ Մարթինիքան և Աուատալուրան գնել, յարեց նաւա- սպետը:

— Ծե՛ր է . . . շատ ծե՛ր է . . . հարցուց ասպետը անձկու- թեամբ:

Նաւասպետը միւս նաւորդաց երեսը նայեցաւ անոնցմէ սրտաս- խան մ'ուզելու դիմօք, և ըսաւ.

— Քանի՛ տարեկան կայ Աստուծոյ-Մօրուքը:

— Տարիքը չգիտեմ, ըսաւ մէկը:

— Իմ զիտցածս սա է որ, կրկնեց ուրիշ մը, երբ ասկէ երկու տարի առաջ Մարթինիքա եկայ, արդէն երկրորդ ամուսնոյն հետ էր և երրորդին կը պատրաստուէր . . . որ տարի մ'ալ չտեսցի:

— Երրորդ ամուսնոյն համար կ'ըսեն թէ մուսած չէ, այլ ան- հետ եղած է, ըսաւ ուրիշ մը:

— Մեռած ըլլալուն բնաւ տարակրօյ չկայ, վասն զի Աստուծոյ- Մօրուքին սուղը մտած ըլլալը տեսնող եղած է, ըսաւ նաւորդ մը:

— Անտարակոյս, յարեց երրորդ մը, ինչու եր հայր Արիֆօնի բացակայութեան ժամանակ, Մարուպայի թաղին մէջ իւր փոխանոր- դը անոր հողոյն համար սրտաբազ մատուցի:

— Սակայն կրնայ ըլլար որ սպաննուած ըլլայ, ըսաւ ուրիշ մը:

— Անտարակոյս իւր կնոջմէն սպաննուած, կրկնեցին միաձայն. և այս նպաստաւոր չէր Աստուծոյ-Մօրուքին:

— Իւր կնոջմէն չէ:

— Ա՛, նոր բան կը լսենք:

— Իւր կնոջմէն չսպաննուեցա՞ւ, ուրիմն որմէ՛:

— Պարզապէս մէջ ունեցած թշնամիներէն:

— Անդ զիտցի զաղթականներէ:

— Այո՛, Անդ զիտցիներէ, վասն զի կ'ըսեն թէ ինչն ալ Անդ զի- աջի էր . . . :

— Վերջապէս, աղէկ զիտէք, բարեկամ, երրորդ ամուսնոյն մեռած ըլլալը, հարցոյց ասպետը անձկութեամբ:

— Օ, մեռած ըլլալուն տարակոյս չունինք, կրկնեցին ամենքը մէկէն:

— Բրուսթիյաք քիչ մը շունչ առաւ. յոյսերը, որ ցնդելու վրայ էին, վերստին յանդուգն թիւ մ'առին:

— Բայց քանի տարեկան է Կապոյտ-Վօրուքը, զիտցող կնոջ, կրկնեց ասպետը:

— Տարիքը կրնամ ըսել ձեզ. քսանէն . . . այն, այս տեղունքը բան մ'է, քսանէն . . . վաթսուն տարեկան մը, ըսաւ Գանիէլ նաւապետը:

— Բայց տեսած չէք զինքը, ըսաւ ասպետը՝ քիչ մը նեղանալով այս կատակէն:

— Տեսած, Ես. բայց ի՞նչպէս կրնամ տեսած ըլլալ Կապոյտ-Վօրուքը, հարցոյց նաւապետը: Խեղ էք ինչ էք:

— Ի՞նչպէս:

— Կը լսէք . . . բարեկամք . . . ըսաւ նաւապետը իւր նաւորդաց, ինձ կը հարցընէ թէ Կապոյտ-Վօրուքը տեսած եմ:

Նաւորդք ուսերին թոթուեցին:

— Բայց հարցմանս վրայ այդչափ զարմանալու ի՞նչ կայ, ըսաւ ասպետը:

— Ի՞նչ կայ, կրկնեց Գանիէլ:

— Այո:

— Կեցէք . . . գուք Փարիզէն կու գաք, այնպէս չէ. և Փարիզ Մարթինիբայէն փոքր է:

— Անշուշտ:

— Հիմա, կը հարցընեմ ձեզ, Փարիզի մէջ դահլիճը տեսած էք:

— Գահլիճը, ո՞չ . . . բայց նրկէ ուր:

— Աւրեմն, զիտցած եղիք որ եթէ դահլիճը տեսնելու փափաք ունեցող կայ՝ Կապոյտ-Վօրուքը տեսնելու փափաք ունեցող ալ կրնայ ըլլալ . . . բարեկամս: Նախ՝ վասն զի իւր բնակած տունը Գիւաբնակ-Բլուրին ամենէն ամայի տեղերը շինուած է, ուր երթալու

շատ համարձակող չիայ . . . երկրորդ՝ վասն զի արիւնախանձ կնոջ մը ընկերակցութիւնը շատ հաճելի բան չէ, վերջապէս՝ վասն զի Կապոյտ-Վօրուքը շատ վտանգաւոր մարդոց հետ կը տեսնուի:

— Վտանգաւոր, ըսաւ ասպետը:

— Այո, այսչափ միայն կ'ըսեմ որ այն մարդիկը իւր սրտակից բարեկամներն են, վայ անոր որ իրիկունը ծովեզերքը, զիշերը անտառներուն մէջ կամ արեւ մարը մտնելու ատեն կղզոյն բացերը ծովու վրայ անոնցմէ մէկուն պատահի, ըսաւ նաւապետը:

— Նախ՝ Փոթորի՛լը . . . ծովասպատակ նաւապետը . . . ըսաւ սոսկմամբ նաւորդներէն մին:

— Յետոյ՝ Հողեկորդը . . . Մարի-Կալանտի յլորսը, ըսաւ ուրիշ մը:

— Ետքը՝ Եումալէն . . . Նհանգաց խորշին մարդակեր Բարայիլը, յարեց ուրիշ մ'ալ:

— Բայց ի՞նչ կ'ըսէք, զոչեց ասպետը, միթէ Կապոյտ-Վօրուքը ծովասպատակ, յլորս և մարդակեր սիրականներ ունի . . . : Նզովից արմատ . . . : Ի՞նչ տեսակ կին մ'է եղեր այդ:

— Այո, կին մը, և ոչ սանկ ու նանկ կին մը. . . այս անհասկացաւ մը, ինչպէս կ'ըսեն Սպանիայիք:

Գ Լ Ո Ւ Ն Ե Ր Ր Ո Ր Գ

Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ Ն

Այս խօսքերը, որ Կապոյտ-Վօրուքին տարօրինակ բարքը կը յայտնէին, բաւական տպաւորութիւն ըրին ասպետին վրայ: Մէկ քանի վայրկեան լուռ կենալէ ետեւ հարցոյց նաւապետին.

— Մ'ի է այդ Փոթորիկ սնուանեալ ծովասպատակը :

— Սուրբ—Տոմիրիկոսցի խառնածին մ'է, կ'ըսեն, պատասխանեց Գանիէլ նաւապետը, Անթիլեան կղզեաց ամենէն յանդուգն ծովասպատակներէն մէկը. երկու տարի կայ որ Մարթինիքա եկած է, ուր իբրև քաղաքացի կը բնակի առանձին տան մը մէջ: Ա'ըսեն թէ ծառափոր և խցաւոր մակոյկով արշաւանքի կ'եւնէ:

— Խցաւոր մակոյկը ի՞նչ է, հարցուց ասպետը:

— Մեծ, սև, երկայն և օձի պէս բարակ մակոյկ մ'է. ղեկին մօտ տակը խոշոր խից մը կայ, որ ուղուած ասին կը բացուի: Հեռուն նաւ մը տեսնուելուն պէս, կ'ըսեն թէ Փոթորիկը դանակներով և ատրճանակներով զինեալ ծովասպատակներով այսպիսի մակոյկ մը կը մտնէ: Մակոյկը կը թիալարէ և առադաստ չպարզեր որպէս զի թշնամին չկարենայ զայն տեսնել և նա աւելի շատ մօտենայ նաւուն. մակոյկն ուղղակի դէպ ի նաւը կը դիմէ. եթէ նաւը կասկածելով ինքզինքը պաշտպանէ, մակոյկին յառաջքը նեղ և տասարի մը բերնին պէս սուր ըլլալով, թնդանօթ չբանիւր. իսկ թշնամուցն հրաշաններուն դալով, կ'ըսեն թէ Փոթորիկ զէնքի տեղ դրած չէ զանոնք: Գրաւել ուղած նաւուն մօտենալուն պէս, Փոթորիկը, որ միշտ ինք կը վարէ մակոյկը, խիցը կը բանայ, և մակոյկը կ'ըսկսի ընկղմիլ խեղաց կողմէն, որով ամենէն գանդաղներն ալ կ'ըստիպուին թշնամուցն նաւուն մէջ նետուիլ չխեղդուելու համար. ծովասպատակները նաւը ոտք կոխելուն պէս կ'ըսկսին գիմարողները դանկտել և չիմադրողները ծովը նետել. Փոթորիկ գրաւած նաւը Սուրբ—Թովմաս կը տանի, ուր ոտքէին միջուկն ու կեղեր կը վաճառէ (ծովահէնք այսպէս կ'անուանեն նաւը և մէջի վաճառքը), և ստակը իր ընկերաց հետ կը բաժնէ: Ստակը հատնելուն պէս, Փոթորիկ նորէն խցաւոր մակոյկ մը շինել կու տայ, և զայն քահանայի մը օրհնել տալէ ետև. վերստին արշաւանաց կ'ըսկսի. կ'ըսեն թէ զուարթ եղած ատեն թէ իրեն և թէ իւր ծովասպատակներուն սպաննած կամ խեղդամահ ըրած Սպանիացուց և Անդղիացուց հաշիւը կ'ընէ Կապոյտ—Մօրուքին հետ. ինք կ'ըսէ թէ ասոնց թիւը երբեք չորս հազարէն անդին չանցնիր: Հիմա հասկըցմբ, բարեկամ,

Փոթորիկին ինչպէս մարդ մ'ըլլալը:

— Եւ իրօք կը կարծէք թէ Կապոյտ—Մօրուքը այս պարծուկին կարեւորութիւն տուած է, հարցուց ասպետը անտարբերութեամբ:

— Ա'ըսեն թէ Փոթորիկը պարաս ժամանակներն երբ իւր սուսը չէ, Գիւաքնակ—Բլուրն է:

— Ադիկէ գոնէ կրնայ հասկըցուիլ թէ Կապոյտ—Մօրուքը ազնուասիրտ մարդոյմէ չախորժիւր, ըսաւ ասպետը: Տեսնենք ցլորսն ի՞նչպէս մարդ է:

— Շիտակը խօսելով, գոչեց նաւորդ մը, չեմ գիտեր թէ լաւաւ պոյն չըպիտի համարիմ թշնամի ունենալ ինձ Փոթորիկը քան թէ Հողեկորդ ցլորսը:

— Ա', գոնէ բան մը կը խոստանայ այդ անունը, ըսաւ Քրուսթիլոս:

— Եւ կը կատարէ, ըսաւ նաւորդը, վասն զի տեսած եմ ցլորսը . . . :

— Սոսկալի մարդ է:

— Գէթ իւր որսացած վարաղներուն կամ ցուլերուն չափ կատարի է: Այս մասին կրնամ խօսիլ ձեզ: Ասկէ իբր տարի մը առաջ, Մարթինիքայի հիւսիսային կողմը մեծ Թարիի իւր խոհարանը դացի իրմէ վայրի եզան մորթ գնելու համար, իւր քսանի չափ որսի շնորոգի առանձին էր, որք իրեն պէս ժանտ և վայրագ դէմք մ'ունէին. իմ դացած ատենս արմատենի իւղով երեսը կը շփէր, վասն զի դէմքին վրայ բնաւ պարաս տեղ մը չմնալով որ տեղը կապոյտ, որ տեղը դեղին, որ տեղը ծիրանի գոյներով ծածկուած էին:

— Հասկըցայ, ըսաւ ասպետը, ծիածանի գոյներ, զոր բունցի հարուած մը աչքին վրայ կը ձգէ:

— Ճիշդ այդպէս, պարոն ասպետ: Հարցուցի թէ ի՞նչ եղեր է. տեսէք ի՞նչ պատասխանեց. «Աշկերսս շուներս առջին ձգելով երկու տարեկան ցուլ մը դուրս հանեց բայոցէն. ես ալ ուսին գնտակ մը դրկեցի, ցուլը թաւուտի մը մէջ ցատկեց, շուներս հասան, ցուլը դիմադրեց, և խեթկելով անոնցմէ երկուքին աղէքները դուրս թափեց: Մինչդեռ հրացանս կը լեցընէի, աշկերսս հասնելով կրակ ը-

բաւ բայց չկրցաւ զարնել : Ասոր վրայ աշան դանակով ցուլին վրայ յարձակեցաւ , բայց ցուլն անոր փորը պատառեց և ոտքին տակն առաւ : Այնչաժ տեղէս չէի կրնար կրակ ընել կենդանիին վրայ , վախնալով որ չըլլայ թէ գնտակը աշկերտիս դորձը բոլորովին լմընցընէ . մեծ գանակս առի և երկուքին մէջ նետուեցայ , եղջիւրի հարուած մը զիստս ձեղքեց , երկրորդ հարուած մը այս թևս կտարեց (ձախ թևըցոյց տուաւ ինձ , որ արդարև պատատու կով կապած էր) . ցուլը կը շարունակէր յարձակու մները , ևս միայն աջ ձեռքով մնացի , և այն միջոցին երբ կենդանին զլուխը կը խնարհեցընէր որովայնս պատառելու համար , եղջիւրէն բռնեցի և զլուխը ծուելով ցատկեցի շրթերէն խածի , և Անդղիացի դամիւրի մը պէս խածածս չթողուցի , մինչդեռ շուներս ալ կողերը կը խածաւէին :

— Շիտալը , այդ մարդուն կզակին խօսք չկայ , ըսաւ Քրուսթիյայք արհամարհոտ դէմքով մը : Եթէ ուրիշ բան չունի հաճելի ըլլալու , կը գթամ իւր սիրուհւոյն վրայ . . . :

— Արդէն ըսի ձեզ թէ տեսակ մը վայրի կենդանի է , յարեց պատմողը . բայց շարունակենք . « Երբ ցուլի մը շրթերը խածնեն , յարեց ցլորսը , իսկոյն դորձը կը լմըննայ : Արձակած գնտակներս կենդանիին հանգիպած ըլլալով , վաղած արիւնէն ուժը կտրած , հինգ վայրկեան ետքը կրնակին վրայ ինկաւ . շուներս իսկոյն վրան ելան , և կոկորդը խառատելով սպաննեցին : Իսկ ևս որ կուէն սկարացած և շատ արիւն կորուսած էի , կենացս մէջ առաջին անգամ ըլլալով , կնկան մը պէս մարեցայ . . . : Այս միջոցին ինչ պատահի կը հասնիս . շուներն աշկերտս տտելու չսկսին մի . տե՛ս թէ ինչպէս խածատող և աղէկ կը թուած են : — Բայց ինչ կ'ըսէք , ըսի Հոգեկորդին սոսկալով , մի՞թէ շուներնից ձեր աշկերտը կերած ըլլալուն համար աղէկ կը թուած կը համարուին : » Եւ կը խոստովանիմ որ , պարոն , շարայարեց ցլորսին քաջագործութիւնները Քրուսթիյայքին պատմողը , կը խոստովանիմ որ սոսկիմամ կը զիտէի այն կատաղի կենդանիները , որ անգագար շուրջս դառնալով զիս կը հոտոտէին մտքերնէն ուրիշ բան անցընելու կերպով մը . . . :

— Աւերջապէս քիչ շատ վայրայգ բարբեր են աղոնք , ըսաւ

Քրուսթիյայք , և այդպիսի անտառային մարդու մը հետ քաղաքավարական զեղեցիկ լեզուաւ մը խօսիլը կրնայ դժարատե՛հ համարուիլ . . . : Բայց ինչ կը խօսի արդեօք Ասպոյտ-Մօրու քին հետ :

— Աստուած չընէ որ ունկնդիր ըլլալու երթամ , ըսաւ նաւորդը :

— Բաւական է որ Հոգեկորդը Ասպոյտ-Մօրու քին անգամ մ'ըսէ . — Յուլի մը քիթը խածի , շուներս աշկերտս լափեցին , յարեց Ասքօնը , ասկէց աւելի սիրարժարձ խօսակցութիւն չկրնար ըլլալ , սակայն մարդ ամեն օր շուներուն մէյմէկ հողի չկրնար կերպընել խօսակցութեան նիւթ ունենալու համար :

— Ո՛ր կտէ , պարոն , ըսաւ ունկնդիր մը , այդ մարդիկը ամեն բան կրնան ընել :

— Բայց այդպիսի կենդանի մը , ըսաւ Քրուսթիյայք անհամբերութեամբ , երբէք չկրնար զիտնալ այն փափուկ ձևերը , այն շնորհալի լեզուն որ զեղեցիկ կնոջ մը սիրտը կը զրաւէ :

— Երբէք , յարեց պատմողը (որ կ'երևի թէ իրողութիւնները կ'ըստուարացընէր) վասն զի երկինքն ու երկիրը դողացընող հայհոյութիւններ կ'ընէ , այնպիսի ձայն մ'ունի . . . այնպիսի ձայն մը որ . . . ցուլի մը պոռոչիւնին կը նմանի :

— Հարկաւ այդպէս պիտի ըլլայ , քանի որ ցուլերու հետ ժամանակ կ'անցընէ , ըսաւ ասպետը , բայց , կ'աղաչեմ , պատմութիւննիդ շուտ աւարտէիք :

— Ահա կ'աւարտեմ : Յլորսին հարցուցի թէ ինչպէս կրնայ պնդել որ մարդ մը ուսող շուները կրնան աղէկ կը թուած ըլլալ : « Անշուշտ , ըսաւ , իմ շուներս անանկ կը թուած են որ ցուլ մը դետինը իյնալէն ետև ալ ամենևին ակուանին չեն դուրսընել անոր , վասն զի մորթներնին կը ծախեմ , և պէտք է որ անարատ ըլլան . կենդանին մեռնելէն ետև , շուներս իրքան անթիւ ալ ըլլան , կը յարդեն զայն , և իրենց որսամասին կ'ըստատեն . այս առտու խեղճերը սաստիկ անթեցած էին . աշկերտս կիտով չափ սպաննուած էր և արեան մէջ կը լողար . խստիւ կը վարուէր անոնց հետ . տարակոյտ շունիմ որ նախ վերքերը լղելու սկսած են , յետոյ՝ ինչպէս կ'ընեն

Թէ մարդ քանի ուտէ ախորժակը կը բացուի, խեղճերը չզիմանալով՝ աշխերանս սակորները միայն թողուցին ինձ: Եթէ սկսեալի օձ մը, որ դէշ կը խայթէ բայց թունաւոր չէ, զիս չխածնէր, թերևս տակաւին մարած պիտի ըլլայի: Խեղճս գլուխս ետ կաւ, տեսայ որ օձը աջսրունքին փաթթուեր էր, քաշեցի հանեցի, պոչէն բռնելով պարսատիկի պէս դարձուցի և տանձենի մը կոճղին զարնելով գլուխը ջախջախեցի. յետոյ վրաս շօշափեցի և տեսայ որ բան մը չունիմ . . . միայն զիսսա ճեղքուեր և թևս կոտորեր էր. պակշկէի թարմ տերևով մը զիստիս վէրքը պատեցի և պատատուիով կապեցի. իսկ ձախ թևս արմուկիս և դաստակիս մէջտեղէն կոտորեր էր. երեք հատ փոքր դաւազաններ և երկայն պատատուկ մը կտրելով կոտորած թևս սկսի մը սէս փաթթեցի. ասոնք ընելէս վերջը աշխորտս փնտռեցի, վասն զի տակաւին գլխուն եկածը չէի նշմարած, կանչեցի, պատասխան չտուաւ. շուներս ոտքիս տակը պառկած անմեղու թիւն կը ձևացնէին, և պոչերնին շարժելով զիս կը դիտէին, որպէս թէ բան մ'ըրած չըլլային. վերջապէս ոտք ելայ, մէկ մ'ալ քսան քայլ անդին աշկերտիս կմախքը շտեմնեմ. իւր դանակին պատենէն և եղջիւրէն ճանչցայ զինքը: Իրմէն ասոնք միայն մնացեր էին: Ահա ասոնք յայտնի ապացոյցներ են, յարեց Հոգեկորզը իւր սոսկալի պատմութիւնը վերջացնելով. շուներս քաջ խածանող և աղէկ կըթուած ըլլալնուն, վասն զի ցուլին մորթէն մաղ մ'անդամ պակսած չէ:

— Հասկըցանք, ցլորսն ալ ծովասպատակէն վար չմնար եղեր, ըսաւ Գրուսթիայք:

Աերջապէս, ես ադոնց մէջ սա կըտեսնեմ որ Ասպրոյտ-Մօրուքը շատ մեղքընալու արժանի կին մ'է իւր ընտրութիւնն այդպիսի կենդանիներուն մէջ ընելուն համար . . . : Եւ Ասքօնը շարայարեց կարեկցութեամբ: Բայց զարմանալի բան մը չէ այս. խեղճ կինը բնաւ գաղափար չունի սիրուն և բարեկիրթ ազնուականի մը վրայ: Աենացը մէջ բակլայէն ուրիշ բան չուտողը փափանի պէս փափուկ և պատուական բան մ'ըլլան . . . Թորկէ պիտի

դիտնայ . . . : Հիմա, կըտեսնեմ որ ինձ պահուած է եղեր ամեն բան Ասպրոյտ-Մօրուքին սովբեցընել, և նոր աշխարհ մը ցոյց տալ անոր . . . : Քարայիպին գալով, կարծեմ իւր գաղանարայ հակառակորդներէն վար չմնար, այնպէս չէ:

— Օ՛, Քարայիպը ինձ հարցուցէք, ըսաւ նաւորդներէն մէկը. անոր վրայ շատ աղէկ տեղեկութիւններ կրնամ տալ ձեզ: Այս ձմեռ իւր պաշտօնով* Անս-օ-Սապլէն Մարի-Ալանդ գացի, ուր ստիպուած էի շուտ հասնելու. գետը յորդած ըլլալով, շատ պարտիլ պէտք էր մըջէն անցք մը գտնելու համար: Եռմալէի նաւակը մանելու ատենս յառաջակողմի թխազոյն դէմքի մը պէս բան մը տեսայ. մօտը գացի, մէյմ'ալ ինչ տեսնեմ, Աստուած իմ Յիսուս. մովիայի նման չորցուցած գլուխ մը և երկու թև որ նաւակին գլխի զարդը կըկազմէին: Մեկնեցանք. Քարայիպը իւր վայրենական լուսթեամբը կը թիավարէր: Երբ Հասանք այն կղզեկին դիմացը, ուր քանի մ'ամիս առաջ Սպանիական նաւ մը ըկզմեր էր, հարցուցի իրեն. — Հոն կորսուեցաւ Սպանիական նաւը: Քարայիպը նշանացի հասկըցուց ինձ թէ հոն էր . . . : Չմոռանաք ըսելս որ վերապատուելի հայր Սիմոն քարոզիչն այն նաւուն մէջն էր: Այն աստիճան սրբակեաց եկեղեցական մը համարուած էր որ մինչև անգամ Քարայիպներն այնպէս կը ճանաչէին զինքը. լսածնուս նայելով, նաը իւր բոլոր պարունակած բաներովը կորսուեր էր: Յետոյ ըսի Քարայիպին. — Հոն ինդուուեցաւ հայր Սիմոն, իմացար: Գարձեալ գլխովը, այն, ըսաւ . . . վասն զի այս մարդիկը կ'ըզուշանան բաւ մը աւելի արտասանելէ: Շատ աղիւ ահձն մ'էր, այնպէս չէ, յարեցի:

— Աերջ, պատասխանեց կուսպաշտը՝ տեսակ մը կատաղի և ամբարտաւան դոհունակութեամբ:

* Պաշտուր կամ պաշտու պէտակ մը նաւոր, երկայն և սրնիաց նաւ է զոր Անթիլեան կղզեաց բնակիչք և Գործածեն:

— Մէկուն ինչ տեսակ մարդ ըլլալը հասկընալու, և սկզբունքներն ընդունելու մէկ կերպն ալ այս է, ըսաւ Գրուսթի-յաք :

— Ի սկզբան չլրջայ հասկընալ թէ, շարայարեց նաւորդը, ինչ ըսել կ'ուզէր այս սոսկալի մարդակերը, բայց երբ խօսեցուցի զինքը, իմացայ որ քարողիչը և երկու նաւաստիք ամայի կղցեակ մը իյնալով աղատեր են, սակայն Գարայիպներն յանկարծ վրանին հասնելով տեսակ մը վայրենական արարողութենէ ետքը կերեր են զանոնք . . . : Երբ Եուամալէն մեղադրելով ըսի իրեն թէ երեք դժբաղդ Գաղղիացիներն իրենց արինախանձ կատաղութեանը մատնելով սոսկալի բարբարոսութիւն մ'ի գործ դրած են, այն-պիսի պատասխան մը տուաւ ինձ, որպէս թէ ես իրեն կը հարցը-նէի որ երեք ազգայ ձրն աւելի համով է. վճռական ձայնով մը ըսաւ. — Իրաւունք ունիս. Սպանիացի, բնաւ. Գաղղիացի, շատ անգամ. Անգղիացի, միշտ :

— Ուստի կ'երեւի թէ Անգղիացին Գաղղիացիէն շատ աւելի փափուկ է, իսկ Սպանիացին կաշիի կը նմանի, ըսաւ Գրուսթի-յաք. բայց հաւանական է որ սոյն որկրամոլութեամբ Եուամալէն օր մը Ասպրյա-Վօրուքն ալ ուտէ զգուանօք . . . եթէ պատ-մածնիդ ստոյգ է . . . :

— Շատ ստոյգ է, պարոն :

— Ուրեմն ազիէ կը հետեւի թէ Փոթորիկը, Էւոզեկորդը և Մարդակերն իրենց վայրենական ձրիցը շնորհիւ այդ մանկամարդ կամ ծեր սյրւոյն սիրտը գրաւած են :

— Ամեն մարդ այսպէս կ'ըսէ :

— Տունը շատ կ'երթան :

— Երբ Փոթորիկ ասպատակութիւն չըներ, երբ Էոզեկորդ իւր խոհարանը չպանուիր, երբ Եուամալէ անտառները չէ, Ասպրյա-Վօրուքին քոֆն են :

— Կ'ըսեն թէ Ասպրյա-Վօրուքը Թուրքաց Սուլթանին պէս բռնավարական և խրոխտ կերպով վարուող կին մ'է . . . և նախանձիւն արդիւած է անոնց . . . :

— Բայց, ո՛չ, պարոնայք, ո՛չ, չեմ հաւատար. գիտէք որ Ասպրոն մ'եմ, և Ասպրոններն իրողութիւնները խոշորցընողի ա-նուն հանած են, այս պատճառաւ զիս ծաղրելու ելեր էք . . . :

Գանիէլ նաւապետը լուրջ դէմքով մը պատասխանեց .

— Երբ Մարթինիքա հասնինք, առաջին անգամ դէմդ ելնող դաղթականին հարցուցէք Ասպրյա-Վօրուքին ինչ ըլլալը, և թեղ արբ Յովհաննէս, իմ սաշտպանս, անիծէ զիս եթէ այն կնաջ և իւր բարեկամներն եղող Փոթորիկին, Յլորսին և Գարայիպին վը-րայօք արգէն լսածներնուդ յար և նմանը չըսեն ձեզ :

— Իւր անբաւ : Հարստութիւններն ալ պիտի պատմեն ինձ, հարցոյց ասպետը :

— Պիտի ըսեն թէ իւր Գիւարնակ-Բլուրի տունը կղզւոյն ա-մենէն դեղեցիկ բնակարաններէն մէկն է, և թէ Ասպրյա-Վօրու-քը Սէն-Փիէրի նաւահանգստին մէջ վաճառատուն մ'ունի, ուր իւր կողմէն մէկը նստած է, և քիչ մ'առաջ տեսած նաւերնուս պէս Սէն-Փիէրէն ամեն առիտ հինգ վնց նաւ կը զրկէ :

— Հիմա հասկըցայ, ըսաւ ասպետը հեղնական դէմքով մը : Ասպրյա-Վօրուքը աշխարհիս ճոխութիւններէն և զուարճութիւն-ներէն կշտացած կին մ'ըլլալու է. չձանձրանալու համար՝ կը յուսացուի որ ջլորսութեան և ծովասպատակութեան ելնէ, մինչև անգամ թերևս մարդակերի պաշտօն ալ կատարէ եթէ սիրտը քա-չէ :

— Այժմ ուզէ՞ շատ հաւանական է որ կ'ընէ, ըսաւ նաւա-պետը :

— Այս միջոցին հայր Արիֆօն նաւուն յարկն ելաւ. Գրուս-թիյաք ըսաւ անոր .

— Հայր, քիչ մ'առաջ այս պարոններուն ըսի թէ Ասպրօննե-րուն անունը ստախօս ելած է, բայց կ'ուզեմ հասկընալ թէ Աս-պրյա-Վօրուքին համար ըսածնին ստոյգ է :

Հայր Արիֆօնի դէմքը որ սովորաբար զուարթ էր, մէկէն ի մէկ տխրութիւնը պատեց. և լուրջ կերպով մը պատասխանեց բաղդականորին .

— Տղան, չըլլայ որ անգամ մ'ալայդ կնոջ անունը արտասանեք:

— Ի՞նչ կ'ըսեք, հայր, մի՞թէ ստոյգ է ըսածնին: Իրօք այդ կինը իւր հանդուցեալ ամուսիններուն տեղ ծովասպատակ մը. . . ցլորս մը. . . և մարդակեր մը առած է. . . :

— Հերիք, զաւակս, հերիք. . . կ'աղաչեմ այլ ևս Գիւարնակ-Բլուրին խօսքը չընենք:

— Բայց, հայր. . . այդ կինը ըսածնուն չափ հարմատ է, յարեց Կասքօնը, որուն աչքերը ցանկութեամբ կը փայլէին, անբաւ զանձերու տէր է, դեղեցիկ է, մանկամարդ է:

— Քնն լիցի ինձ տեղեկանալ ուղել:

— Ճշմարիտ է թէ իւր երեք ամուսիններն ինք սպաննած է, հայր: Եթէ ճշմարիտ է. . . արդարութիւնն ի՞նչպէս անպատիժ թողած է այդպիսի ոճրագործ մը:

— Այնպիսի ոճիրներ կան որ կրնան մարդոց արդարութենէն վերիպիլ, տղան, բայց Աստուծոյ արդարութենէն երբեք չեն վերիպիր: Այսու ամենայնիւ չդիտեմ թէ այդ կինը լսածնու չափ յանցաւոր է. բայց զարձեալ կ'ըսեմ, զաւակս, ալ չխօսինք անոր վըրայ. . . կ'աղաչեմ, ըսաւ հայր Արիֆօն, որուն բաւական ցաւ կը պատճառէր այս խօսակցութիւնը:

Քրուսթիյաք յանկարծ գոռոզ դիրք մ'առաւ, հին դլխարկը դլխուն վրայ կոխեց, պիտերը ոլորեց, կռուելու պատրաստուող արաղաղի մը պէս ոտքին մասններուն վրայ կանգնեցաւ, և Կասքօնեան յանդգնութեամբ գոչեց.

— Պարտնայք, ըսէք, այսօր ամայն քանին է:

— Այսօր յուլիսի 13ն է, պատասխանեց նաւապետը:

— Արդ, պարտնայք, յարեց բաղդախնդիրը, թո՛ղ ես Քրուսթիյաք չըլլամ, թո՛ղ ես աղնուականութեանս անարժան մէկն եղած ըլլամ, եթէ ասկէ ճիշդ մէկ ամիսէն Մարթինիքայի և բոլոր տիեզերաց յլորսներուն, ծովասպատակներուն և մարդակերներուն հակառակ Կասպոյտ-Մօրուքը Փօլիֆեմ տըՔրուսթիյաքի կինը չըլլայ:

Իրիկունը՝ երբ Քրուսթիյաք պառկելու կ'երթար, հայր Արիֆօն մէկ կողմ տարաւ զայն և ջանաց հասկընալ թէ արդեօք բաղդախնդիրը դիտեմ մը չճանաչել կը ձևացնէր զԿասպոյտ-Մօրուքը: Քահանայն կասկածի դացեր էր տեսնելով որ Քրուսթիյաք միշտ Կասպոյտ-Մօրուքին և անոր հետ յարարերութեան մէջ դանուող մարդոց վրայ կը խօսի: Հայր Արիֆօն այս մասին ասպեւսին հետ երկարօրէն խօսակցելէ ետեւ դրեթէ համոզուեցաւ թէ Քրուսթիյաքին ըրած խօսքը իւր յանդգնութենէն և մնապարծութենէն միայն յառաջ եկած էր:

— Հող չէ, ըսաւ քահանայն մտախոհ դեմքով մը երբ ասպետը քովէն կը հեռանար, աչքս միշտ այն բաղդախնդրին վրայ ուրիշ ըլլայ. . . խենդուկ և ծանծաղամիտ մարդ մը կ'երևի, բայց նենդաւոր անձինք ամեն գիւմակ կրնան առնուլ. . . : Աւա՛ղ, յարեց տխրութեամբ, այս վերջին ուղևորութիւնս մեծ պարտականութիւններ կը դնէ վրաս անոնց նկատմամբ որ Գիւարնակ-Բլուրը կը բնակին: Ալ այսու հետեւ անոնց զաղտնիքը իմ զաղտնիքս է. . . բայց պէտք էր ընել ինչ որ ըրի, խիղճս այնպէս կը պահանջէր. . . եբանի՛ թէ իրենց լարուած որոգայթներէն ազատելով դեռ երկար ատեն վայելէին այն երջանկութիւնը որուն արժանի են. . . : Ա՛հ, ո՛րչափ վստանդաւոր թշնամիներ են թաղաւորք. . . և մարդ շատ անգամ շատ սուղ կը վճարէ զահի մը աստիճաններուն վրայ ծնանելու տխուր պատիւ. . . : Աւա՛ղ, կրկնեց բարի քահանայն խորին հառաչանօք, խեղճ և հրեշտակաբարոյ կին. . . իւր վրայ եղած այսպիսի խօսքերը ո՛րչափ կը խոցէ սիրտս. . . : Բայց անխոհեմութիւն ըրած կ'ըլլամ եթէ պաշտպանեմ զինքը. . . : Ապահովութիւննին այս շուկներուն շնորհիւ կրնան գտնել այն աղնիւ անձինքը սրոց վըրայ սիրտս կը գողայ:

Գարձեալ մտածելէ ետեւ հայր Արիֆօն ըսաւ ինքնիրեն. — Պահ մը այս բաղդախնդիրը Անդղիոյ մէկ լրտեսը կարծեցի, բայց տարակոյս չունիմ որ սխալեցայ. . . : Այսու ամենայնիւ պիտի հսկեմ այս մարդուն վրայ. . . : Բայց աւելի աղէկ է որ

տունս հիւրընկալում զայն . . . այն ատեն կրնամ իւր ամեն շար-
 շումները դիտել . ինչ որ ալ ըլլայ , պէտք է որ Գիւարնակ-Բլու-
 րի բարեկամաց ըսեմ թէ ատելի խոհեմութեամբ վարուին , վասն
 զի չեմ գիտեր ինչո՞ւ համար Կապոնիին զալը մտահոգութիւն կը
 պատճառէ ինձ :

Արքիւթանք իմացընել ընթերցողաց թէ Քրուսթիյաքի նկատ-
 մամբ հայր Արիֆօնի կասկածներն անտեղի էին , վասն զի աստի-
 տը խարբրայ չուտակիան մ'էր և ոչ ուրիշ բան , ինչպէս որ նկա-
 րագրեցինք զայն : Իւր յանդուգն գրաւին միակ պատճառը ինքզին-
 քին վրայ ունեցած բարձր համարումն էր , այն է ամիս մը չե-
 ղած Կապոյտ-Վորուքին ամուսինն ըլլալ :

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Հ Ա Յ Բ Կ Ի Թ Օ Ն Ի Տ Ո Ւ Ն Ը

Լիբօրն նաը երեք օրէ ի վեր Մարթինիքայի առջև խարխիս
 նեամ իւր : Հայր Արիֆօն Սէն-Ֆիէրի մէջ տեսելիք մի քանի
 դործեր ունենալուն համար , տակաւին ի Մաքուպա իւր վիճակը
 չէր վերադարձեր : Քրուսթիյաք ասպետը ինքզինք զաղթականու-
 թեանց մէջ փոխադրեալ կը գտնէր , զորպանին մէջ միայն երեք
 սիւտ ունենալով : Կառապետը և նաորդք պոռոտախօսութիւն
 համարած էին բաղբախնդրին այն խօսքը թէ մէկ ամիս չըլած
 Կապոյտ-Վորուքին ամուսինը պիտի ըլլար ինք :

Ասպետը իւր այս առաջադրութենէն չհրաժարելէ զտտ ,
 Մարթինիքա հասնելէն ի վեր առաւել ևս կը յամառէր անոր վը-
 րայ . կըցաւ տեղեկանալ Կապոյտ-Վորուքին հաբստութեանցը , և
 միանգամայն համազուտեցաւ թէ որչափ որ այս այլանդակ կնոջ

նկատմամբ անթափանցելի դաղտնիք մը կար , և անոր վրայ
 ստամուած բաները խօլ շափազանցութիւններ էին , դէթ ստոյգ
 էր թէ անբաւ հարստութեանց տէր էր նա . խի իւր գէմքը ,
 տարիքը և ինչ ընտանիքէ ըլլալը հայր Արիֆօնի շափ գիացող
 չըլլալով ուրիշներն այս մասին բան մը չէին կրնար յայտնել ,
 Իւր գործակալն անկէ առաջ կղզին գալով գեղեցիկ գետին մը
 գնէր և Գիւարնակ-Բլուրի տունը շինել աուեր էր Մարթինիքայի
 հիւսիսային կողմը ամենէն անմատոյց և ամայի մասին մէջ :

Մէկ քանի ամիս վերջը իմացուեցաւ թէ նոր գաղթականն
 իւր կնոջը հետ եկեր է . մէկ երկու բնակիչներ , հետաքրքրու-
 թեանէ շարժեալ , մինչև Գիւարնակ-Բլուրը գացին . հան աղքայա-
 կան հիւրընկալութիւն մ'եղաւ իրենց . բայց տան տեսրց երեսը
 չէրցան տեսնել :

Այս այցելութենէն վեց ամիս ետքը , այս առաջին ամուսնոյն
 մահը իմացուեցաւ . այս մահը երկու ամուսնոյ Ամերիկայի ցա-
 մաքն ըրած փոքրիկ ուղեորութեան մը մէջ պատահեց էր : Տարի
 մը բացակայ և այրի մնալէ յետոյ , Կապոյտ-Վորուքը Մարթինի-
 քա վերադարձաւ երկրորդ ամուսնոյ մը հետ : Այս վերջին ա-
 մուսնոյն համար կ'ըսեն թէ օր մը իւր կնոջը հետ առանձին
 պտըտելու ելած ժամանակ , ոտըր սահելով անյատակ անգունդի
 մը մէջ ինկեր մեռեր է : Անթիլեանք հրաբխային երկիր մ'ըլլա-
 լով , այսպիսի անգունդներ շատ կը գտնուին ամեն կողմ :

Ահա այս էր այն խորհրդաւոր մահուան նկատմամբ կնոջ
 ցոյց տուած պատճառը : Իսկ Կապոյտ-Վորուքին երրորդ ամուս-
 նոյն և իւր մահուանը վրայօք ստոյգ բան մը գիտցող չէար :
 Քիչ ժամանակի մէջ պատահած այս երեք վախճանումները և կնոջ
 վրայ պտըտիլ սկսող այլանդակ զրոյցները Մարթինիքայի կուսակալ
 Քրիստօլ ասպետին ուշադրութիւնը գրաւեցին . կուսակալը պահ-
 նորդաց ուղեկցութեամբ Գիւարնակ-Բլուրը գնաց . երբ այն ան-
 տառախիտ լերին ստորոտը հասաւ , որուն գագաթը կը բարձրա-
 նար այն դեղեցիկ բնակարանը , Խախչիլ մը նամակ մը տուաւ ի-
 րեն :

Երբ Պ. Քրիստը նստակը կարգաց, ապշեցաւ մնաց. յետոյ իւր պահնորդաց հրամայեց որ սպասեն իրեն, և ինքն առանձին գերիին ետէն գնաց: Չորս ժամ ետքը կուսակալը իւր առաջնորդին հետ վերադառնալով, անմիջապէս Սէն-Փիլէրի ճամբան բռնեց: Իւր ուղեկիցներէն ոմանք նշմարեցին որ շատ դունատ և շատ յուզուած էր: Այն օրէն մինչև իւր մահը, որ Գիւարնակ-Բլուրն ըրած այցելութենէն տաններեք ամիս ետքը ճիշդ նոյն օրը պատահեցաւ, բնաւ անգամ մ'ալ Կապոյտ-Վօրուքին անունը չարտասանեց: Պ. Քրիստը Մարուպայէն հայր Արիֆօնը կանչել տալով երկարօրէն խոստովանեցաւ . . . : Երբ հայր Արիֆօն իւր խոստովանորդոցն քովէն կը բաժնուէր, դէմքը բուրբովին այլայլած էր:

Այն օրէն ի վեր Կապոյտ-Վօրուքին տեսակ մը չարաշշուկ և խորհրդաւոր համբաւը սկսաւ հետզհետէ աւելնալ: Նախապաշարումն առաւել ևս սասակացուց կնոջաղլած երկիւղը, և այնուհետև ահագոգով կ'արտասանէին անունը. հաստատապէս կը հաւատային թէ ինքն սպանած էր իւր երեք ամուսինները, և ոսկիներուն չնորհիւ ազատած էր օրինաց խտու թեւէն՝ ճախ ընծաներով հետզհետէ եկող կուսակալներուն պաշտպանութիւնը գնելով: Բնաւ մէկուն մտքէ չէր անցներ երթալ Կապոյտ-Վօրուքին հանդիստը վրդովել իւր բնակած ամայի լեռնավայրից մէջ, մանաւանդ՝ քանի որ կը լսուէր թէ Քարայիպը, ցլորսը և ծովասպատակը այս այրի կնոջ սեղանակիցներն և մինչև իսկ մտիթարիչներն եղեր էին: Թէպէտև այս մարդիկը օրինաց ձեռքն իյնալու ոճիր մը գործած չէին, սակայն իրենց անդթութեանը վրայօք անհաւատալի բաներ կը պատմուէին. բացէ ի բաց յոյտարարած են թէ, կ'ըսէին, Կապոյտ-Վօրուքին քովն երթալու համարձակող անձինք իրենց անհաշտ ասելութեանն ու վրէժխնդրութեանը պիտի մասնուին:

Այս սպառնալիքներն անդադար կրկնուելով և բարդուելով վերջապէս իրենց պտուղը բերին: Բնակչաց փոյթը չէր երթալ, թերևս՝ կեանքերին վտանգի ենթարկելով, Գիւարնակ-Բլուրին

դաշտնեացը թափանցել: Չքաւորութենէ ճարահափալ Կապոյտի մը յանդգնութիւնն ունենալ պէտք էր Կապոյտ-Վօրուքին գաղտնիքը իմանալու և անոր հետ ամուսնանալու փորձ մը փորձելու համար: Այս էր սակայն Քրուսթիլյաք ասպետին հաստատ և անդառնալի որոշումն. միլիոններու տէր կնոջ մը հետ ամուսնանալու յոյսէն այնչափ զխրաւ հրաժարող մարդ չէր, որչափ ալ խելքի դէմ բան մ'էր ոյս. հսղը չէր թէ գեղեցիկ էր թէ աղեղ, մանկաճարգ էր թէ ստաւ: Յաջողելու յոյսը չիւր տեսքին, խելքին, իրելի ձիրքերուն, միանգամայն քաղցր և գոռող կերպարանքին վրայ դրած էր, վասն զի ասպետը իւր անձին վրայ միշտ մեծ համարում մ'ունէր. ասկէ զատ իւր յոյսը դրած էր նաև իւր ճարտիկութեանը, խորագիտութեանը և արիութեանը վրայ:

Արդարև ժիր և յանդուգն մարդ մը որ բան մը չունի և բանէ մը չվախնար, ինքզինքին և իւր աստղին վրայ մեծ հաւատք ունի և ինքնիրեն կ'ըսէ, ինչպէս Քրուսթիլյաք կ'ըսէր. Վայրկեան մը մնանիլը աչքս առնելով, վասն զի մահը ասկէ աւելի չտեսեր, կրնամ պերճութեանց և ճախութեանց մէջ ապրիլ. այսպիսի մարդ մը կրնայ հրաշքներ գործել, նա մանաւանդ էր Քրուսթիլյաքի նպատակին պէս գեղեցիկ և գրգռիչ նպատակ մը կ'առաջադրէ:

— Հայր Արիֆօն Սէն-Փիլէրի մէջ ունեցած մէկ քանի գործերը լմնեցնելէ ետև առաջարկեց ասպետին որ հետը Մարուպա երթայ և հան մնայ մինչև որ Աիքօրն ճամբայ ելնէ Գաղղիա վերադառնալու համար: Գիւարնակ-Բլուրը Մարուպայէն չորս հինգ փարսան միայն հեռու ըլլալով, ասպետը, որ ունեցած երեք սիււտը ծախք ըրեր էր, և բնաւ տեղէ մը անկալութիւն չունէր, քահանային առաջարկութիւնն րնդունեց, սակայն Կապոյտ-Վօրուքին նկատմամբ իւր ըրած որոշումը չիմացուց անոր. կ'ուզէր որ զայն ի գործ դրած միջոցին յայտնէ:

Ասպետը և հայր Արիֆօն Գանիէլ նաւապետէն բաժնուելով ծառափոր մակոյլի մը նստան, և հարաւային թեթև քամիով մը

առաջատար պարզեցին դէպ ի Մարուպա : Քրուսթիյաք անտարբեր կ'երևէր այն զեղեցիկ և իրեն համար նոր տեսարաններուն զոր Մարթինիքայի սփռուքը կ'ընծայէին . արևադարձի սոյն հրատապ կլինային գրեթէ մետաղազոյն զալարիքը , որք բոցավառ երկինքի մը ներքև կը փայլէին , իւր ուշը չէին զրուեր :

Բաղբանդիրը , իւր աչքերը մակոյկին՝ ծովուն մէջ ձգած շողշողուն հետքին վրայ մեքենարար սևեռած , իրեն այնպէս կը թուէր թէ Ասպոյտ-Մօրուքին արամանդներուն փայլիլը կը տեսնէր անոր մէջ . ներքնածովեան մարդագետիներէն փրժած կանաչ և փայլուն խոտերը որով կրիայք և ջրակովք կը ճարակին , այրոյն զմրտխաները կը յիշեցընէին Աստրօնին , մինչդեռ թիերէն իյնալով արևուն մէջ ծխածանայեալ ջրոյ կաթիլները Գիւարնակ-Բլուրին սոսկալի բնակչուհոյն մարդարտալից քսակները մակաբերել կու տային :

Հայր Արիֆօն ալ խորին մտածութեան մէջ ինկած էր . Գիւարնակ-Բլուրին մէջ ունեցած բարեկամներուն վրայ խորհեւէն ետև , սկսաւ կէս մ'անձկութեամբ , կէս մը բերիբանօք իւր հաւատացելոց փոքրիկ հօտին , պարտեզին , պարզ և աղքատ եկեղեցւոյն , տանը , սիրականն եզոզ ծեր ձիուն , շանը և երկու սևերուն վրայ մտածել . չմոռնանք ըսել թէ այս սևերուն շատ գիւրատար կ'ընէր սարկութիւնք : Ասկէ զատ չմոռնանք ըսել որ իւր մեկնեւէն քանի մ'օր առաջ հաւաքներու բանգակ (conserve) շինած ըլլալով , քիչ մ'ալ անոնց վրայ կը մտածէր թէ ինչեղան : Երեք ժամէն Մարուպա հասան :

Հայր Արիֆօնի սպասող չկար . մակոյկը փոքրիկ խորշի մը մէջ խարխիս նետեց , մօտ այն գետին որ Մարթինիքայի ամենէն արդասանգ կողմերէն մին եզոզ Մարուպայի մէջէն կ'անցնի : Հայր Արիֆօն ասպետին կաթնեղբով քիչ մը ծովկերքէն երթալէ ետև , ուր կու գային , կը գլէին Անթիլեան ծովուն բարձր կահակները , հասան ի Մարուպա , ուր հազիւ հարիւրի չափ տուն կար , փայտաշէն , և եղէգով կամարմառնիլի բարակ աշխատակներով ծածկուած :

Այս տանը Մարուպայի ծովախորշին կորութեամբը կէս բոշորակի ձևով շինուած էր . սոյն խորշն ալ փոքրիկ նաւահանգիստ մ'էր ուր բաղմաթիւ ծառափոր մակոյկներ և ձկնորսաց նաւեր կու գային խարխիս կրնետէին : Աւանը երկայնաձև փայտաշէն եկեղեցի մ'ունէր , մէջտեղէն կը բարձրանային չորս գերան որոց վրայ շինուած քիւին տակէն կախուած էր զանգակը . եկեղեցին իւր բարձրութեամբը բոլոր աւանին վրայ կը նայէր . աւելի հեռուն կը բարձրանային բուսազոյս ընդարձակ բլուրներ զալարազարդ ամփիթատեր ձևով : Արեգակը սկսեր էր դէպ ի հորիզոն արաղել : Հայր Արիֆօն՝ աւանին լայնքէն բացուած և շիտակ եկեղեցի տանող միակ զառիվեր փողոցէն վեր ելաւ : Մի քանի սլամաթ տղայք , բոլորովին մերկ , փոշիին մէջ կը թաւալէին . ասոնք հայր Արիֆօնը տեսնելուն պէս ձիչ բառնալով փախան . բաղում գողթածին կանայք , սպիտակ կամ խառնածին , Հնդիկ կերպակ երկայն և սոյժառեքանց զոյստներ հագած դռները վազեցին , և հայր Արիֆօնը տեսնելով , միանգամայն զարմանք և ուրախութիւն ցոյց տուին . մանկամարդ և ծեր , ամենքն ալ յարգանօք աջը համբուրեցին ըսելով .

— Օրհնեալ ըլլայ ձեր վերագարձը , Հայր սուրբ , Մարուպան զորիկ մնացեր էր ձեռն :

Յետոյ մի քանի մարդիկ գուրս ելնելով , մի և նոյն սիրով և յարգանօք հայր Արիֆօնի զալուստը շնորհաւորեցին : Մինչդեռ քահանայն իւր մեկնեւէն ի վեր Մարուպայի մէջ պատահած դէպքերուն վրայ կը խօսակցէր բնակչաց հետ , և Գաղընոյ վրայ լուրեր կու տար իւր ժողովուրդին , կանայք , վախնալով որ հայր սուրբը երիցատան մէջ ուտելիք չգտնէ , առններին զային , որը զեղեցիկ ձուկ մը ընտրեց , որը աղուոր հաւ մը , ուրիշ մը պարտա ու ի քառօրգ մը , մէկ ուրիշն ալ ստուղու բանջարեղէն , և բաղմաթիւ սևուկներ այս կամաւոր տասանորդը երիցատունը տարին : Հայր Արիֆօն իւր բնակարանը գնաց որ շինուած էր բլուրի մը զառիվայրին միջօրը , աւանէն քիչ մը հեռու և ծովահայեայ :

Փայտաշէն և խիտ սպառնիկ մ'էր, եղէղնապատ տանիքով և միայն մէկ գեանայարկով: Պատուհանները նուրբ կտուէ վարաղայրներ ունէին, որք միանգամայն ասպակի սեղ կը բռնէին, վասն զի դաղթականութեանց մէջ ասպակի գործածութիւնը մեծ պերճանք մը կը համարուէր. ընդարձակ սենեակ մ'ունէր որ միանգամայն սրահ էր և սեղանատուն, ուրիշ կ'երթաւէր քիչ մը դրօք մէկ անկիւնը շինուած խոհանոց մը. այս մեծ սենեկին ձախ կողմն էր հայր Արիֆօնի պառկելու սենեակը, նոյնպէս պարտիզին վրայ դուռ անցող երկու արիշ խցիկներ սահմանեալ օտարականաց կամ Մարթիկոյի ուրիշ ժողովող ապետաց որք երբեմն կու գային իրենց պաշտօնակցին հիւրընկալութիւնը խնդրելու: Ասոնցմէ զատ ունէր նաև հաւնոց մը, ախոռ մը, երկու սենեուն համար պատարան մը, և մի քանի սայլի կայաններ. իսկ կարասիները խիտ սպառն էին և գեղջկական:

Պարտիզին աղէկ խնամք տարուած էր: Չորս մեծ ուղիք նոյնչափ քառակուսի մասերու կը բաժնէին զայն, որոց եզերքը զարդարուած էին թիւով, փաղանդամշիով, ծօթրինով, զոսայտով և ուրիշ անուշահոտ խոտերով: Այս չորս գլխաւոր մասունքը բանջարեղէնի և մրդեղէնի յատկացեալ բազմաթիւ ածուներու բաժնուած էին, սրբ սակայն ծաղիլախա եզերքը շրջապատեալ էին: Վերջապէս Արարիոյ յամբիկով և հոտուէտ պատատուկով ծածկուած երկու կանաչահիւս փոքրիկ հովանոցներէ կը անսնուէին հեռուն ծովը և միւս Անթիլեանց բարձր ցամաքները:

Ասկէ աւելի հեշտալի սպառնէլ մը չէր կրնար ըլլալ, ուր ամենէն գեղեցիկ ծաղիկները աղնիւ ստղոց և բանջարեղէնաց հետ խառն կը տեսնուէին: Հոս սաթաղոյն սխիւ ածու մը զոր կը շրջապատէին ցած նուննիկներ, առսախի սէս գեանէն մէկ սաք բարձրութեամբ յատած, լի ծիրանեղոյն ծաղիկներով և պտուղներով, որք այնչափ ծանր և այնչափ առատ էին որ գեանին կը դպչէին: Անդին՝ կանաչ և երկայն փեճեկով, կապոյտ ծաղիկներով Անիօլի տունիկ երկարածիլ ածու մը Ամերիկեան սոխաակ և վարդաղոյն յամբիկներով շրջապատեալ էր, մատաղատունի ստեպ-

ղիններ, թրթնջուկներ, կէլաճոյճներ, անմեռուկներ երկնաղեղ բրարիոններու չորեքիկն կարգով մը բոլորեալ էին: Ասոնցմէ զատ նարնջաղոյն բաժակով գեղատեսիլ բարձրանալու ցանկ մը անուշահոտ անանասի ածուի մը շուրջը պատած էր:

Տանը ետևի կողմը ընդարձակ մրդատան մը կար, որ կը բաղլանար նարիկիւնիէ, Հնդիկ տանձենիէ, արմա ենիէ և նարնջենիէ, որոց ոտերը ծաղիկներուն և պտուղներուն ծանրութենէն յերկիր խոնարհած էին: հայր Արիֆօն անպատում բերկրութեամբ իւր պարտիզին մէջ ժուռ կու գար, իւրաքանչիւր ծաղիկ, տունկ և ծառ աչքէ անցընելով: Իւր երկու սեերն ետեէն կ'երթային. մէկուն անունն էր Պարոն, միւսինը Յովհաննէս: Այս երկու բարի արարածները տէրերին վերստին տեսնելով օրախութեան արտասուք կը թափէին, սիրտերին այնքան շարժած էր որ, չէին կրնար անոր հարցմանցը պատասխանել, և ձեռքերնին երկինք բարձրացընելով այնչափ միայն կրնային ըսել իրարու.

— Փա՛ռք քեզ Աստուած, եկա՛ւ, եկա՛ւ:

Ասպետը՝ այս անկեղծ ուրախութեանց անաբրբեր՝ մեքենաբար քահանային ետեէն կ'երթար. սաստիկ փափաք մ'ունէր իւր ասպնջականին հարցընելու թէ՛ հեռուն ամիկիթատեր ձևով բարձրացեալ անտաններուն մէջ Գիւարնակ-Բլուրին ճամբան արդեօք կրնա՞ր տեսնուիլ: Բարի քահանայն իւր պարտիզին զննութիւնն ընելէն ետև, գնաց տեսնել իւր ձին, զոր Արքնատիլ կ'անուանէր, և Անդղիացի խոշոր զամիօր զոր Շնօք կը կոչէր. երբ ախոռին դուռը բացու, Շնօկ սկսաւ այնպէս օտոտասել իւր փրօշը բուրբախք որ քիչ մնաց գետինը պիտի պառկեցընէր զայն. չէ թէ կը հաշէր, այլ ուրախութենէն կ'ուռար. իւր սաստիկ սէրէն այնչափ կատրեցաւ որ Պարոնը շանն անուրէն բռնելով հողիւ կրցաւ զպել զայն, մինչդեռ քահանայն Արքնատիլը կը զգուէր, որոյ մարմնոյն մաղերուն փայլէն և պինդ գիրութենէն յայտնի կ'երևէր որ Պարոնը լաւ խնամք տարած էր անոր. մնաց որ ախոռին հողը մասնաւորապէս իրեն յանձնուած էր:

Այս մանրազնին այլեւ թեմէն էս ետե հայր Արիֆօն՝ աստեալը իրեն յատկացեալ սենեակը տարու ուր կաղէ սրսկապանով անկողինէ մը յարէ նստարանէ մը և մահակոնէ մտուկէ մը զատ ուրիշ բան չկար . այս սենեակը պարտիզին վրայ կընայէր : Զարդը լլալով, հաղիւ հարթուած տախտակամածէն Քրիստոսի պատկեր մը կար կախուած :

— Անշուք և պարկեշտ հիւրընկալութիւն մը պիտի տեսնէք հոս, ըսաւ աստեալին հայր Արիֆօն, սակայն հիւրընկալութիւնս սրտանց է :

— Ես ալ երախտագլտ սրտիւ կ'ընդունիմ զայն, հայր, ըսաւ Քրուսթիյաք :

Այն պահուն, Պարոնն եկաւ հայր Արիֆօնի իմացուց թէ կերակուրը պատրաստ է, և քահանայն աստեան առնելով սեղան նստուն մտաւ :

Գ Լ Ո Ւ Ն Զ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ

Զ Ա Ր Մ Ա Ն Ք

Իւրեղեայ մեծ անօթ մը, յորում դեղին մոմ մը կը վառէր, սեղանը կը լուսաւորէր . սպասը դրուած էր սպիտակ հաստ կաււէ սփռոցի մը վրայ . արծաթեղէն չկար : Պողպատէ պատառաքաղները, ցախէ դրդալները մաքրութեամբ կը փայլէին . կատտադոյն բիւրեղեայ շիշ մը լեցուն Քանարեան կղզեաց զինի դրուած էր . անաղեայ մեծ ամանի մը մէջ կը փրփրէր օճիկ ըսուած ըմպելին, շաքարի եղեղան մրուրով շինուած . ասոնցմէ զատ կար նաև դրոշմահար հողէ սափոր մը, որուն մէջի ջուրը սառի պէս

պաղ կը մտար :

Սեւրէն մին, Յովհաննէս պատրաստած էր սեղանը : Գեղեցիկ ոսկեձուկ մը խոր թեփերովը կատարայ եղած ըսա Քարայրեան եղանակի, խորոված թութակ մը փասեանի մեծութեամբ, երկու սրակ խեչեփար իրեց պատեհին մէջ եփած և վրան յեմնաջուր անցուցած, աղցան և ոլուն կարգաւ շարուած էին մէջանդը դրուած մրգանանի մը բոլորափքը, որ կը բաղկանար Քարայրեան կնիւնէ՝ շինուած մեծ կողովէ մը . ասոր մէջ կը բարձրանար զանազան միրգերէ բուրգ մը որուն հիմն էր սեխ մը և երկու ձմերուկ, և զաղաթն ալ անանաս մը . ասոնցմէ զատ, իբր աղանդեր, քոյախի մէջ թթուտա եղած կաղամբ-արմախ շերտեր, գարապղպեղով համեմալ աղաջուրի մէջ պահուած մանարախի սպիտակ ձկներ կընային բազմականաց ախորժակը բանալ և ծարաւը գրգռել :

— Բայց, հայր իմ, արքայական շքեղութեամբ կը վարուիք հետս, ըսաւ աստեղը հայր Արիֆօնին . ձեր կղզին արդեօք Աւետեաց երկիրն է :

— Բայ ի Քանարեան կղզեաց զինիէն, զոր ընծայ ըրին ինձ, այս ամենքը ձեռօքս մշակած պարտիզիս, կամ երկու սեւրոս ըրած որսորդութեանց արդիւնքն են, վասն զի ժողովրդիս բերած ուտեստին պէտք չունիմ, շնորհիւ Պարոնին և Յովհաննէսին կանխաեսութեանը, որք Սէն-Փիէրի մակուկապետէ մը զալս իմացած էին : Այս թութակէն կը հրամէք, տղաս, ըսաւ հայր Արիֆօն աստեալին, որուն ճաշակին կ'երևէր թէ ձուկը շատյարմար եկած էր :

Քրուսթիյաք քիչ մը վարանեցաւ, և անորոշ գեմքով հայր Արիֆօնի երեսը նայեցաւ :

— Թութակ ուտելը քիչ մը տարօրինակ կ'երևի ինձ, ըսաւ աստեղը :

— Փորձեցէք, փորձեցէք անգամ մը, ըսաւ հայր Արիֆօն՝ թութակի թե մը գնելով անոր սկաւառակին մէջ : Տեսէք, փասեանն այսչափ պարարտ և փայլուն միս մ'ունի՞. շատ աղուոր ե-

փած է . հոտն ալ կ'առնէ՞ք , ի՞նչ անուշիկ է :

— Ասանկ պատուական հոտ չլինար ըլլալ , ըսաւ ասպետը՝ ծուծքը բանալով :

— Ասոր պատճառն այն է որ այս թռչունները շատ կ'ախորժին Հնդկածառին մրդիկներէն , զոր անտառներու մէջ կը գտնեն . այս մրդիկները միանգամայն կ'ինամոնի , մեխակի և որպեղի համ ունենալով , հոտերնին այս թռչուններուն մտին կ'անցնի : Իսկ սա արդանա՛կը , տեսէք ի՞նչպէս վէտ վէտ է : Քիչ մ'ալ նարնջի ջուր գրէք մէջը , և պիտի տեսնէք թէ Աստուած ինչէ՛ր պարզեցած է իւր արարածոց :

— Ահնայս մէջ ասանկ փափուկ , ասանկ համով հոտով բան կերած չէի , պատասխանեց ասպետը , բերանը լեցուն , աչքերն ալ կէս մը դոցած , կարծես ուտուածքը մտիկ ընելու համար :

— Այնպէս չէ՞ , ըսաւ քահանայն , որ դանակն ու պատառաքաղը ձեռքը իւր հիւրը կը դիտէր պարծանօք :

Աերակուրը լմրնալէն ետև Պարոնը քանարեանց ղեկին քով աման մը ծխախոտ և երկու ֆէ՛ֆօ դրաւ : Հայր Արիֆօն և Քրօսթիյաք ասանձին մեացին : Քահանայն ասպետին դաւաթը լեցընելով ըսաւ անոր .

— Ձեր կենացը , տղաս :

— Շնորհակալեմ , հայր իմ , ըսաւ ասպետը դաւաթը մօտեցընելով . բաժակ մ'ալ հանդերձեալ ամուսնոյս կենացն առաջարկեցէք . խիստ բարեգուշակ կ'ըլլայ ինձ համար :

— Ի՞նչ , ձեր հանդերձեալ ամուսինը , կրկնեց հայր Արիֆօն , ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Կապոյտ-Մօրուքին համար կ'ըսեմ , հայր :

— Ա՛ , միշտ մի և նոյն կասակարանութիւնը կ'ընէք : Անկեղծաբար խօսելով , այս մասին ձեր երկրին մարդիկը աւելի հնարամիտ կը կարծէի , ըսաւ հայր Արիֆօն հեղնական ժպիտով մը , և մէկմէկ ումպ խմելով դաւաթը պարսեց :

— Ահնայս մէջտակէ աւելի լըջօրէն խօսած չեմ , հայր : Լիքօրնի մէջ ըրած երգումս լսեցիք :

— Ահարելի բանը երգումէ կ'աղատէ զմարդ , զմ'ախս . եթէ Ովկիանոսը լեցընելու երգում՝ ըրած ըլլայիք , սյգ խօստումն կրնա՞ր պարտաւորել զքեզ :

— Ի՞նչ կ'ըսէք , հայր իմ , միթէ Կապոյտ-Մօրուքին սիրտը Ովկիանոսին պէս անյատակ անդո՛ւնդ մ'է , զոչեց Քրօսթիյաք զուարթութեամբ :

— Ալեաց պէս նենդաւոր , ինչպէս ըսաւ Անդղիտայի բանաստեղծ մը :

— Կանանց նենդութեանը զալով , ըսաւ ասպետը սնապարծութեամբ , կրնանք կարձնել զանոնք . . . և մեր այս զօրութիւնը դարձեալ կը փորձենք Կապոյտ-Մօրուքին վրայ :

— Մինչև անգամ չպիտի համարձակիք , այս մասին վտահեմ , զմ'ախս :

— Ներեցէ՛ք , հայր իմ , կը սխալիք դուք : Ազդը՝ առտուն կանուխ ձենէ առաջնորդ մը կ'ուզեմ՝ զիս Գիւարնակ-Բլուրը տանելու համար , մնացածը բազրիս կը թողում :

Ասպետն այնպիսի վտահաթեամբ և լուրջ դէմքով մը խօսեցաւ որ հայր Արիֆօն խիղոյն ձեռքի դաւաթը , զոր բերանը տանելու վրայ էր , սեղանին վրայ դրաւ , և ասպետը դիտեց սաստիկ զարմանօք և կասկածանօք : Մինչև այն ասան այնպէս կարծեր էր թէ ասպետին ըրածը կատակ մը կամ պուտտախօսութիւն մ'էր :

— Ի՞նչ կ'ըսէք , տղաս , իրօք այդպիսի սրտում մ'ըրած էք : Բայց խենդութիւն մ'է այդ , բայց . . . :

— Ներեցէ՛ք , հայր , խօքերնիդ ընդմիջելուս , ըսաւ ասպետը . ձեր դէմը գանաւորն ընտանիքի մը կրտսերն է որ ամեն բաղդ փորձած , ամեն միջոցի ձեռնարկած է , և բնաւ բանի մը մէջ յաջողած չէ : Կապոյտ-Մօրուքը հարուստ է , շատ հարուստ է , միշտ պիտի շահիմ , կորսընչընելու բան մը չունիմ :

— Բան մը չունիք կորսընչընելու :

— Կեանքս պիտի ըսէք : Նախ՝ չեմ ինայեք զայն , երկրորդ՝ մըքան ալ բարբարոս ըլլայ այս երկիրը , ս'ըքան անզօր ըլլայ հոս

արդարութիւնը, չեմ կրնար հաւատալ որ Աստուծոյ Վորուքը մէկէն ի մէկ այնպէս վարուի հետոյ ինչպէս իւր երեք ամսանոց . հարկաւ պիտի հասկընաք մեռած ըլլալ . . . և մահուանս համարը պիտի պահանջէք իրմէ : Հետեւաբար ընելիք կորուստս սն միայն կրնայ ըլլալ որ պիտի մերժուիմ : Եթէ այսպէս ըլլայ, եթէ զիս մերժէ, դարձեալ կ'երթամ Գանիէլ նա ապետը կ'ըզբօսեցընեմ իւր նաւարկութեան ժամանակները, վառած ճրագներ կուտալով, քթիս ծայրը շիշեր կանդնեցընելով, ստուգիւ՛ այս վիճակը պատուաւոր և զուարճալի է, սակայն լաւագոյն կը համարէի ուրիշ վիճակ մ'ունենալ : Այսպէս ուրեմն ինչ որ պէտք է, հայր, որոշած եմ անդամը փորձել, և Գիւարնալ-Բլուրն երթալ : Տեսակ մը գաղտնի կանխազգացումինձ կ'ըսէ թէ պիտի յաջողիմ, և շատ չանցած բազմիս շրջուցիչ եղանակաւ մը բացուելը պիտի տեսնեմ . . . : Գեղածիծաղ աղաղակ մը կարծես կ'ըսու պատէ ինձ, ուրիշ բան չեմ երողեր բայց միայն պալատ և պերճութիւն, հարստութիւն և գեղեցկութիւն . թուի ինձ թէ (ներեցէք սոյն հեթանոսական բազմատութեանս) Սէբը և Բաղը ձեռքերէս բռնած կ'ըսեն ինձ . — Փօլիֆէմ-Քրոսթիյաք, երջանկութիւնը քեզ կ'ըսու պատէ : Թերես պիտի ըսէք ինձ, հայր, յարեց ասպետը իւր գոյնը նետած թիկնոցին վրայ հեղնական ակնարկ մը ձգելով, թէ այսպիսի ողորմելի հաղուստովս ինչպէս պիտի կրնամ ճիսութեան և երջանկութեան այն չնաշխարհիկ և սիրարուզիս ընկերութեան մէջ մանել . բայց Աստուծոյ Վորուքը, որ հարկաւ քաջ կը ճանաչէ իրեն ներկայացողին ինչպիսի մէկն ըլլալը, իւրոյն պիտի գուշակէ թէ սոյն պատասխն ներքին կողմը Ամատիսի մը սիրտը, Աստուծոյ մը խելքը և Արարի մը արիւթութիւնը կայ :

Քահանայն պահ մը լուռ կենալէ ետեւ, փոխանակ ասպետին կատակաբանութեանցը վրայ ինդալու, ծանր կերպով մը պատասխանեց անոր .

- Արողտ մերի հաստմա է :
- Խիտ հաստատ և անփոփոխելի, հայր իմ :

— Մտիկ ըրէք ուրեմն, Այս կղզոյն վերջին կուսակալ Քրիստոսասպետը ևս խոստովանցուցի . այս անձն այն կնոջ երրորդ ամուսնոյն անհետ եղած միջոցին Գիւարնալ-Բլուրը զայցած էր առանձին :

— Յետոյ, հայր իմ :

— Իւր խոստովանութեան գաղտնիքը յարգելովս հանդերձ, կրնամ և պարտիմ ըսել ձեզ թէ, եթէ ձեր անմիտ առաջադրութեանը վրայ յամառիք, մեծ և անխուսափելի վտանգներու կ'ենթարկէք ինքզինքնիդ : Եթէ կեանքերնիդ կորսընցընէք, արդարև սարակոյս չունիմ որ ձեր մահուան պատճառ եղողն անդատիժ չպիտի մնայ, սակայն բնաւ կարելի չպիտի ըլլայ աղատիլ այն սոսկալի վտանգէն որուն մէջ նետուի կ'ուզէք : Ո՛վ կ'ըստիպէ զձեզ Գիւարնալ-Բլուրն երթալու : Այն տեղի բնակչուհին առանձին ասլիլ կ'ուզէ : Այն բնակութեան շրջակայքը այնպիսի արդեւքներ կան, որ առանց բռնութեան չպիտի կրնաք անցնիլ . արդ՛ ամեն երկրի մէջ, և մանաւանդ այս երկրին մէջ, ուրիշին սեփականութիւնը բռնաբարոյները մեծ վտանգներու կ'ենթարկին . և դուք ո՛րչափ անձերնիդ այսպիսի վտանգներու ի զուր մատնած պիտի ըլլաք, քանի որ այն այրի կնոջ հետ ամուսնանալն անկարելի է, մինչև անգամ եթէ ա՛յնքան հարուստ ըլլայիք որքան աղքատ էք, մինչև անգամ եթէ իշխանազուն մ'ըլլայիք :

Այս խօսքերը Աստուծոյն անսահման ինքնատիրութիւնը զրգուեցին, և գոչեց .

- Հայր, այդ կինը կին է . . . և ես Քրոսթիյաքն եմ :
- Ինչ ըսել կ'ուզէք, աղաւս :
- Թէ այդ կինն աղատ է, զիս տեսած չէ . . . և ակնարկ մը . . . միակ ակնարկ մը կրնայ բուրբովին միայրը փոխել :
- Չեմ կարծեր :

— Ա՛րապատուելիս, ձեր խօսքին վրայ շատ մեծ վստահութիւն մը, կոյր վստահութիւն մ'ունիմ, կը ճանաչեմ անոր բարձր արժէքը . . . բայց ինդիլը գեղեցիկ սեռին վրայ է . . . և գուք չէք կրնար ինձ չափ ճանաչել կանանց սիրտը, անոնց ինչ

տարօրինակ և անմեկնելի հաճոյից տէր ըլլալը չէք զիտեր . այսաւուր հաւնածնուն վաղը չին հաւնիր , երէկուան չուզածնին այսօր կ'ուզեն . . . : Շատ զարմանալի արարածներ են կանայք . . . անոնց մօտ յաջողելու համար համարձակութիւն պէտք է . . . : Եթէ եկեղեցական չըլլայիք , իմ հետաքրքրաշարժ և յանդուզն ձեռնարկութիւններս կը սրատեի ձեզ , որոց փոխարէն խիստ կաթողին վարձատրեցայ :

— Տղա՛ս :

— Գիտեմ որ չէք սիրեր այս խօսքերը , հայր : Արդ՝ Կասրոյտ -Պօրուքին դալով , տնգամ մը դէմն ելածիս պէս ոչ միայն խրոխտանօք և իշխանաբար պիտի վարուիմ հետը . . . այլ իբր երկբա-կալ մը . . . Եթէ չըսեմ իբր առիւծ մը որ գողողաբար կ'երթայ իւր որսը յափշտակելու :

Անակնկալ դէպք մը ասպետին խօսքերն ընդմիջեց : Օդը խիստ տաք էր , սեղանատան դուռն որ սարսիղին վրայ կը նա-յէր , կիսաբաց մնացեր էր : Ասպետը կրնակը գրան կողմը դարձուցած նստած էր թիկնաթուփ մը վրայ որուն փայտեայ յե-նարանը շատ բարձր չէր : Բաւական սուր շչիւն մը լսուեցաւ , և ասպետին նստած աթոռին լեցուն մասին մէջ կարծես բան մը խրեցաւ : Հայր Արիֆօն խիղջն աթոռին վրայէն ցատկելով վազեց դնաց իւր սենեկէն հրացանն առաւ և դուրս վազեց դռնելով :

— Յովհաննէս , Պարոն , առէ՛ք հրացաննիդ , հասէ՛ք , տղա՛քս , հասէ՛ք , Քարայիպները կրխեցին մեզ :

Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

Ա Ջ Դ Ա Բ Ա Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս ամենն այնչափ շուտ անցաւ որ ասպետն ապշեցաւ մնաց :

— Ելէ՛ք , գոչեց անոր հայր Արիֆօն , ելէ՛ք , Քարայիպներն են , Քարայիպներն են : Չեր աթոռին յենարանը նայեցէ՛ք , և լոյսին մօտ մի՛ կենաք :

Ասպետն խիղջն ոտք ելաւ , և տեսաւ որ երեք ոտքի չափ երկայնութիւն ունեցող նեւա մը իւր աթոռին յենարանին մէջ բաւա-կան խորունկ մտուած էր : Եթէ երկու մատ վերօք հանդիպէր , նետը ասպետին երկու ուսերուն մէջ տեղէն պիտի թափանցէր : Քրուսթիլաք առաւ իւր սուրը զոր աթոռի մը վրայ դրած էր և քահանային ետեէն վազեց : Քահանայն՝ հրացաններով զինեալ իւր երկու սեւերուն զլուխն անցած և պահապան շունն ալ առջին ձղած ամեն կողմն թշնամին կը փնտռէր . դժբաղդարար սեղանա-տան դուռը մրդաստանին վրայ էր ուր սարփինաներ կային , մու-թը սաստիկ էր . նետը արձակողը կամ արդէն հեռացած էր կամ տերեւախիտ ծառի մը զաղաթը պահուրտած էր : Շնօկ կը հաջէր և աշխուժիւ ամեն կողմ՝ թշնամին կը փնտռէր . հայր Արի-ֆօն երկու սեւերը ետ կանչեց որք մրդաստանէն դուրս ելնելով անդդուշութեամբ յառաջ կ'երթային :

— Բայց ո՛ւր են , հայր , ըսաւ ասպետը սուրը խաղցրնե-լով , պէ՛տք է յարձակիլ վրանին : Լապտեր մը . . . լապտեր մը տուէք ինձ . երթանք մրդաստանը և տանը բոլորախիբը աչքէ ան-ցընենք :

— Ո՛չ , լապտեր առնել չըլլար , տղա՛ս , վասն զի յարձակողք այն ատեն լապտերին նշան կ'առնեն , և դուք մեծ վտանդի մէջ

կ'իյնաք, նեան անվրէպ կը հասնի ձեզ: Երթա՛նք, երթա՛նք, ըստ քահանայն մի քանի վայրկեան սպասելէ ետև հրացանին բլթակն իջեցընելով. զգուշութեան նշան մ'էր այս. երթա՛նք տեղերնիս, և Աստուծոյ փառք տանք այն-կոստաշտին ապիկարութեանը համար, վասն զի քիչ մնաց որ պիտի զարնուէիք: Ես անոր կը զարմանամ և որուն համար գոհութիւն կը մատուցանեմ Աստուծոյ որ չկրցան զարնել ձեզ. մինչև հոս զալու համարձակող-Քարայիս մը հարկաւ աղէկ կրտեսնէ և աղէկ նշան կ'առնէ:

— Բայց ի՞նչ ըրած էք այդ վայրենիներուն, հայր:

— Բնաւ բան մ'ըրած չեմ: Շատ անգամ Սրբոց կղզին իրենց մտա դանուած եմ, և միշտ աղէկ ընդունելութիւն ըրած են ինձ. չեմ հասկընար թէ ի՞նչ նպատակաւ այս յարձակումն ըրին . . . : Բայց անգամ մը տեսնեք սա նետը, վրան անցուցած փետուրներէն կրնամ հասկընալ թէ Քարայիսը՞ նետ է:

— Այս զիշեր աղէկ սրահայնութիւն ընել պէտք է, հայր, և այս մասին վտտահ եղի՛ք ինձ, ըստ Աստուծոյ: Միայն սիրոյ մասին չէ որ ամեն վտանգ աչքս կ'առնեմ:

— Տարակոյս չունիմ, տղաս, և կ'ընդունիմ ձեր առաջարկութիւնը: Ես հիմա երթամ ապսպրեմ որ պատու հանները ժպտաւոր փեղկերով գոցեն և զրան նիզը գնեն: Շնօին ալ գուրսը այս զիշեր սահակ կ'ըլլայ մեզ: Ահ, այս առաջին անգամը չէ որ այս փայտաչէն առնը պաշարման գէմ կը գնէ: Երկու տարի առաջ տասներկու Անգղիայի ծովահէնք այս տանը վրայ յարձակեցան. բայց երկու սեւերովս և այն միջոցին պատահամբ տունս գանուող-Քապէսթէրի արքունի գանձուց զորձակալին օդնութեամբ ըլլա մը զբողմեցինք այն հերետիկոսները:

Այս խօսքերն ընելէն ետև հայր Արիֆօն սեղանատունը մտաւ, և բաւական գծուարութեամբ քաշեց հանեց նետը որուն ատամնաւոր սլաքը թիկնաթուղին մէջխրած էր, և զոչեց զարմանօր:

— Այս ինչ է, նետին թուղթ մը կցեր են:

Յետոյ թուղթը բանալովսա խօսքերը կարգաց, որք զեղեցիկ

զրով մը զբուած էին.

«Առաջին ազգարարութիւն առ աստեան Քրուսթիյաք: — Խորին մեծարանաց ողջոյն առ վերապատուելի հայր Արիֆօն:»

Քահանայն առանց բառ մ'արտասանելու աստեան երեսը նայեցաւ: Աստեղը թուղթն առնելով ինքն ալ կարգաց:

— Ի՞նչ կը նշանակէ այս, զոչեց նա:

— Ար նշանակէ թէ սխալած չէի երբ Քարայիսներուն համար կ'ըսէի թէ աղէկ կը տեսնեն: Այս նեան արձակողը եթէ ուղէր կրնար սպաննել զձեզ: Տես՛ք անգամ մը սա ատամնաւոր սլաքը, որ հարկաւ թունաւոր ալ է: Այս կարծր փայտէ թիկնաթուղին յեարանին մէջմէկ մատնաչափ մտեր է. եթէ զարնուէիք, մեռած էիք: Արչափ ճարպիկութիւն պէտք է նետին այսպէս ուղուած ուղղութիւնը տալու համար:

— Ինձ համար ասկէ աւելի ճարպիկութիւն չկրնար ըլլալ քանի որ նետը չդպաւ ինձ, ըստ Աստուծոյ: Բայց ի՞նչ կ'ուզէ ինէ այդ վայրենին:

Հայր Արիֆօն ձեռքը ճակտին զարկաւ:

— Ձե՛ք ըսեր ձեզ, զոչեց:

— Ի՞նչ, հայր:

«Առաջին ազգարարութիւն առ աստեան Քրուսթիյաք:»

— Բայց ի՞նչ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, այս ազգարարութիւնը Գլաբնակ-Բլուրէն է:

— Կարծե՞ք, հայր:

— Ստոյգ եմ: Գիտաւորութիւննիդ իմացեր են, և հիմա ստիպել կ'ուզեն ձեզ որ ետ կենաք անկէ:

— Ի՞նչպէս կրցեր են իմանալ:

— Լիբօրնի մէջ եղած ատեննիդ յայտնեցիք ձեր զխտաւորութիւնը: Տարակոյս չկայ որ երեք օր առաջ մի քանի նաւորգք Աէն-Փիէր ելած ատեննին անոր խօսքն ըրած են, և այս բանը

մինչև Կապոյտ-Մօրուքին վաճառատունն իւր դործակատարին ա-
կանջը հասած է, և այն ալ իւր տիրուհւոյն իմացուցած է:

— Արդարև, յարեց ասպետը մտածելով, Կապոյտ-Մօրուքը
թղթակցութեան տարօրինակ միջոցներ ունի եղեր: Ինչ զարմանա-
լի սուրհանդակ . . . :

— Հիմա, տղաս, յուսամ որ այս դասէն օգուտ պիտի քաղէք,
ըսաւ քարոզիչը:

Յետոյ երկու սեւերուն գառնալով, որք ժայռաւոր փեղկերը
և գանոնք ամրացընելու լծակները կը բերէին, ըսաւ:

— Պէտք չունինք ադոնց, տղաքս. կըտեսնեմ որ ալ վախնա-
լու բան չկայ:

Երկու սեւերը, որք իրենց տիրոջն ամեն խօսքին առանց դի-
տողութեան հնազանդելու սովորած էին, սոյն պահանջողական
կողմածը տեղը տարին: Ասպետը զարմացմամբ կը դիտէր զՏայր
Արիֆօն:

— Անշուշտ, յարեց այս վերջինը, Գիւարնակ-Բլուրին բնակ-
չաց խօսքը նուիրական է: Ալ անոնցմէ վախնալու բան մը չու-
նիմ ես, նոյնպէս ալ գուք, զաւակս, քանի որ աղբարարութիւն
եղաւ ձեզ, և գուք ալ ստիպուած էք այդ խօս ձեռնարկութենէն
ետ կենալու:

— Ե՛ս, հայր:

— Ի՞նչ կ'ըսէք, տակաւին . . .

— Թող իմ երեսներս ալ երկու սեւերուդ պէս սենան, եթէ
միտքս դրած էս ետ կենամ:

— Այն աղբարարութեան հակառակ:

— Բայց ինչէն գիտնամ որ այս աղբարարութիւնը Կապոյտ-Մօ-
րուքին կողմէն կու գայ: Զկրնար ըլլալ որ հակառակորդի մը կող-
մէն եկած ըլլայ . . . օրինակի համար ցլորսէն, ծովասպտակէն,
Քարայիպէն: Տեսնե՞ք ասոնց մէջէն որմն հետ պիտի տեսնուինք:

— Է՛յ, ինչ փոյժ:

— Ի՞նչ փոյժ մի: Ա՛չ, հայր իմ: Պէտք է որ այդ չարաձճինե-
րուն ցոյց տամ Քրուսթիյաքին ինչպէս մարդ ըլլալը: Խեղճովն զիս

պիտի վախցընեն . . . : Խեղճերը չդիտեն որ այս սուրբ զոր կը
տեսնէք, ինքնիրեն պիտի շարժի իւր պատենին մէջ, և սրտմտու-
թենէն պիտի շուտաւունի եթէ ձեռնարկութենէս հրաժարիմ:

— Տղաս, յիմարութիւն է ըրածնիդ, յիմարութիւն:

— Բայց դիտէ՛ք արդեօք թէ Կապոյտ-Մօրուքին աչքին նրչափ
դձուձ, նրչափ վատասիրտ անձ մը պիտի երեսի Քրուսթիյաք ասպե-
տը, եթէ այսչափ փոքրիկ բանէ մը վախնալով իւր դիտաւորութենէ
ետ կենայ:

— Փորրիկ բան: Բայց եթէ նետը երկու մատ վերօք հանդի-
պէր մտած էիք:

— Բայց որովհետև երկու մատ վարօք արձակեցին, և ես ալ
չմտայ, կեսնքս պիտի նուիրեմ Կապոյտ-Մօրուքին ըմբոստ սիրտը
զսպելու, հակառակորդներս յաղթահարելու, մինչև անգամ եթէ
տասն, քսան, երեսուն, հարիւր, տասն հազար հոգի ըլլան, յարեց
ասպետը հետզհետէ բորբոքելով:

— Բայց եթէ Գիւարնակ-Բլուրին տիրուհւոյն հրամանաւ ը-
րած ըլլան:

— Եթէ իւր հրամանաւ է ըրածնին, այն ասան այն անդուժ
կինը պիտի տեսնէ որ ես առ ոչինչ կը դրամ ինձ գրկած մահը մինչև
իւր սիրտը երթալ հասնելու համար . . . : Աին է նա . . . արիւ-
թեանս չպիտի կրնայ գիտնալ: Չդիտեմ թէ ինքն Ասպիկ մ'է,
բայց դիտեմ որ, առանց Արեսի իրաւոնցը գողցելու, Փօլիֆէմ-Ա-
մատօր Քրուսթիյաք սոսկաւի Արեսեան մ'է . . . : Արդ՝ դեղեյ-
կութենէ արիւթիւն միայն ձեռք մը կայ կարկառելու:

Ասպետին Կապոյտեան չափազանց շարժումներն ու արտասանու-
թիւնը պէտք է երեւակայել, այս տեսարանին վրայ գաղափար մ'ու-
նենալու համար: Հայր Արիֆօն՝ ասպետին յամառ և յանդուգն որո-
շումը տեսնելով չդիտէր թէ ինչպա՞ր էր թէ զարհուրելու: Խոս-
տովանութեան գաղտնիքը թոյլ չէր տար իրեն Գիւարնակ-Բլուրին
վրայօք բան մը յայտնելու, ուրիշ բան չէր կրնար ընել բայց եթէ
աղաչել պաղատիլ ասպետին որ իւր ձախող ձեռնարկութենէն հրա-
ժարի. այս ալ ըրաւ, բայց ի զուր:

— Քանի որ այդպէս անդրդուելի էք, տղաս, չեմ ուզեր որ ըստի թէ ձեր անխորհուրդ ձեռնարկութեան կամակից եղած եմ, մինչև անդամ անուղղակի կերպիւ։ Գիւարենակ-Բլուրին ուր ԸԼԼԱԸ չէք զիտեր. ոչ ես, ոչ սեւերս և ոչ ալ ժողովրդեանս մէջէն մէկը առաջնորդ չպիտի ըլլայ ձեզ. պիտի աղաչեմ անոնց որ մերժեն։ Ասկէ զատ Գիւարենակ-Բլուրն այնչափ ահ և երկիրդ ազդած է որ, ո՞վ իմ պատուէրներուս դէմ պիտի շարժի։

Հայր Արիֆօնի այս յայտարարութիւնը կարծես քիչ մը մտածել տուաւ ասպետը. ի սկզբան զլուրը խոնարհեցուց լռին, ապա յարեց հաստատ ձայնիւ։

— Գիտեմ, Գիւարենակ-Բլուրը ասկէ չորս փարսալս հեռու է. կղզւոյն հիւսիսակողմը կ'իյնայ։ Սիրաս ուղղեցոյց պիտի ըլլայ ինձ, և զիս պիտի առաջնորդէ առ այն կիներն որ մտածմանցս առարկան է . . . արևին և լուսնին աջակցութեամբը։

— Բայց, անմիտ և ողորմելի, գոչեց հայր Արիֆօն, անտառներուն մէջ պիտի իյնաք, ուր ճամբայ չկայ. ծառերն այնչափ խիտ են որ արևը չպիտի կրնաք տեսնել . . . պիտի մոլորիք։

— Շիտակ կ'երթամ, հարկաւ տեղ մը կը հասնիմ . . . ձեր կղզին այնչափ մեծ չէ (Թող այս խօսքս Մարթինիքայի նուաստութիւն չբերէ). այն ատեն նորէն ետ կը դառնամ և կը վնասեմ մինչև որ Գիւարենակ-Բլուրը գտնեմ։

— Բայց շատ անդամ անկարելի է այն անտառներուն մէջէն անցնիլ, խիստ վտանգաւոր օձերով լեյուն են անոնք։ Աերջապէս այն անտառներուն մէջ մոտոզը մահը աչքը առնելու է . . . :

— Ի՛հ, հայր, ո՞վ որ բան մը վտանգի մէջ չգնեք, բան մ'ալ չունենար։ Օձ կայ, կ'ըսէք, շատ աղէկ, ես ալ ոտնայուս կը դործածեմ՝ մեր ճախճախուտ դաշտերուն բնակչացը պէս։

— Գայէք ուրեմն և ոտնայուսով ճամբորդութիւն ըրէք պատաստուկներուն, մորենիներուն, ժայռերուն, արմատախիլ եղած ծառերուն մէջէն։ Գուք մեր անտառներուն ինչ ԸԼԼԱԸ չէք զիտեր կ'ըսեմ ձեզ։

— Հայր իմ, եթէ միշտ վտանգը միտքերնիս բերելու ԸԼԼԱՆք,

բնաւ չենք կրնար բարի բան մ'ընել։ Միթէ դուք ձեր ժողովրդեան մէջէն մէկը Սիամու ախտէն բռնուած ատեն կը վախնա՞ք քոֆն երթալով զինքը խնամելու։

— Բայց իմ նպատակս բարեպաշտական է. ես կրնամ մահը աչքս առնել երբ պարտականութիւնս պիտի կատարեմ . . . Բայց դուք ոչինչ բանի մը համար անձերնիդ ի մահ կը մատնէք։

— Աչի՛նչ բանի մը համար, Բայց, հայր, տաշտակներով աղամանդներ, տուրակներով բարակ մարգարիտներ, և ստոնցմէ զատ թերևս հինգ վեց միլիոնի հարստութիւն ունեցող կին մը ոչի՛նչ բան եղած կ'ըլլայ։

Ա՛լ յոյս չմնաց այս աստիճան յամառութեան մը յաղթելու. եկեղեցականը հարկ չհամարեց նորէն փորձել։ Իւր հիւրն անոր յատկացուցած սենեակը տարաւ, միտքը դնելով որ ամեն խօջընդոտ հանէ ասպետին առաջադրութեանը դէմ։ Քրուսթիյաք անդրդուելի որոշմամբ պատկեցաւ և խորունկ մը քնացաւ։ Իւր բնական յամառութիւնը և իւր բազդին վրայ ունեցած անսասան վստահութիւնը աստիկ հետաքրքրութեամբ մը կրկնապատկեալ էր. սոյն վստահութեան մէջ մինչև այն ատեն խարուած ըլլալուն հակառակ՝ լոռստացեալ ժամունք՝ ընդ հուպ հասնելուն վրայ բազդախնդրին հաւատքը աւելի ևս հաստատուեր էր։

Հեռուեալ օրը, առտուն կանուխ արթնցաւ և ոտիցը մասններուն վրայ կոխելով մինչև հայր Արիֆօնի սենեկին դուռը դնաց։ Սա դեռ ի քուն էր և չէր կարծեր որ ասպետը իւր չլիտցած մէկ երկրին մէջ համարձակի առանց առաջնորդի ճամբայ ելնելու։ Կը սխալէր։

— Քրուսթիյաք իւր հիւրնիկալին թախանձանքէն և յանդիմանութիւններէն աղասելու մտօք իսկոյն ճամբայ ելաւ։ Իւր մեծ սուրբ կապեց, որ մեցառներուն մէջէն անցնողի մը համար բաւական նեղութիւն տուող զէնք մ'է, թաղեայ զլխարկը լաւ մը կոխեց, ձեռքն ալ ձող մ'առաւ օձերը փախցընելու համար, և Մաքուպայի հիւրամեծար ժողովրդապետին բնակարանէն մեկնեցաւ ամբարայլ, բարձրագլուխ և սա՛լաւ ինչ սրտի բախմամբ։ Խիստ թանձր անտա-

ուի մը եղերքը բունելով ուղեորեցաւ դէպ ի հիւսիս. և այսպէս քիչ մ'երթալէն ետև պարտաւորեցաւ թողուչ անտառին եղերքը որ անկիւն մը ձևացընելով իւր ուղղութիւնը հիւսիսէն դէպ ի արևելք կը փոխէր:

Ասպետը երբ անտառը մտաւ, պահ մը վարանեցաւ. հոյր Արիֆօնի իմաստուն խրատները յիշեց. մտածեց այն վտանգներուն վրայ որոց մէջ պիտի դնէր իւր անձը: Մակայն շուտ մը Կապոյտ-Վօրուքին զանձերն օգնութեան կանչելով սիտաւ շքանալ այն զիզագէզ ոսկիներէն, մարգարիտներէն, կարկեհաններէն, ազամանդներէն, որք թուէր թէ իւր աչքին առջև կը փայլէին, կը շողային և կ'ետային: Գիւարնակ-Բլուրին բնակչու հին ամեակատարեալ գեղեցկութեամբ մը երևակայեց: Սոյն տեսիլքէն մզեալ, անտառը մտաւ աներկիւղ, վեր առնելով պատատուներու թանձր քող մը որք ծառերուն փաթթուելով անոնց զաղաթէն մինչև գետին կ'իջնէին:

Ասպետը ձեռքի գաւազանովը մացառներուն զարկաւ, բարձրաձայն գոչելով.

— Գնուրս ելէք, ձներ, գնուրս ելէք:

Կասքօնին աշտղակներէն զատ ուրիշ ձայն չլսուեցաւ:

Արևն ելնելու վրայ էր, զիշերուան առատ շաղէն և ծովէն փչած սիւքէն օդը զովայած էր, յորում ծաղիկներն իրենց զօրաւոր և համեմաւոր հոտերը սփռած էին: Թանձր խաւար մը դրեթէ տակաւն պատած էր անտառը երբ ասպետը հոն մտաւ: Քիչ մ'ատեն, միայն ասպետն եղաւ որ այս ահա որ առանձնութեան մէջ տիրող խոր լուսութիւնը վրդովեց ձեռքի ձողովը մացառները ձեծելով և կրկնելով.

— Գնուրս ելէք, ձներ, գնուրս ելէք:

Կասքօնը քանի՛ յառաջ կ'երթար անտառին մէջ, իւր ձայնն ալ տակաւ առ տակաւ կ'անհետանար, մինչև որ բոլորովին զաղրեցաւ: Յանկարծ՝ ունալու պէս ձայն մը, որ մարդու ձայնի բնաւ չէր նմաներ, այս տխուր և խորին լուսութիւնն ընդմիջեց: Թէ այս ձայնէն և թէ հորիզոնին վրայ արևուն բոցալաւ որայից նման արձակած առաջին ճառագայթներէն կարծես այս ընդարձակ անտառ-

ներուն բնակիչներն արթնցան: Ամենքն ալ այլ և այլ ձայներով պատասխանեցին, որով սանդարամասական աղմուկ մը փրթաւ: Կասպիկներու պատաշխն մը, վազրակատուներու նուալ մը, օձերու շշխն մը, կինձերու գնչիւն մը, ցուլերու բառալ մը ամեն կողմէն միահողոյն սկսան. անտառին և բլուրներուն արձագանքները փոփոխակի իրարու զրկեցին այս անդաշնակ ձայները. . . կարծես սատանայից լեղէնն մ'էր որ զինքը կանչող մեծաւորի մը պատասխան կու տար:

Գ Լ Ո Ւ Ն Ե Ր Թ Ն Ե ր Ր Ր Գ

Ք Ա Ր Ա Յ Ի Ը

Այն ինչ ասպետն անտառին մէջ Գիւարնակ-Բլուրին ճամբան կը փնտռէ, մեք ալ ընթերցողը Մարթինիքայի ծովեզերքին ամենէն աւելի հիւսիսային կողմը կ'առաջնորդենք: Ծովուն ալիքները ծանր ծանր կու դային կը փրփրէին գահաթէժ և խոշոր ժայռերու ստորտը, որք երկու հարիւր ոտք բարձրութեամբ տեսակ մը ուղղաձիգ սարխապ ձևացընելով կղզոյն այս մասին բնական ամրութիւններն եղած էին. ալեաց անբնդհատ բախմանցը պատճառաւ այս ծովեզերքն այնչափ վտանգաւոր եղած էր որ, այս տեղ մերձենալու զող նառակ մը անպատճառ պիտի խորտակէր:

Այն տեղը որու վրայ է խօսքերնիս, վայրի և շքիղ պարզութիւն մ'ունէր. գերբուկ, մարկ և կարմրորակ ապաւածներու զօտի մը կը բարձրանար շտիկայի նման կապուտակ երկնից ներքև. ասոնց ստորտան անհետ եղած էր այն ձիւնաթոյր փրփուրներու մառախուղին մէջ զոր՝ շանթի նման որոտալով անդադար այս ժայռերուն զարնուող լեռնանման կոհակները կը հանէին: Արեգակը շքա-

ցուցիչ և հրատարակ լոյս մը ձգած էր այս ապառաժներուն վրայ : Երկինքը որ արուրի գոյն մ'առած էր, բնառ ամպ չկար : Կիզող շողի մը մէջէն հեռուն հորիզոնին վրայ կ'երեւէին միւս Անթիլեանց բարձր ցամաքները :

Ծովեզերքէն քիչ մը հեռու ծովը թխասեսիլ կախուտակ գոյն մ'առած և հայելոյ նման հանդարտ էր : Զրին երեսը հազիւ նշմարելի բան մը արագութեամբ կը մտնեար կողբոյն այս մասին որ Քապէսթէր կ'անուանի :

Սակառ առ սակառ տեսնուեցաւ պալառ մը, որ ծառափոր նաւակ մ'էր երկայն, թիթեւ, նեղ, որուն թէ առաջքը և թէ խելքը սրածե էր : Այս նաւակը, առանց առաջաստի, թիավարելով կը յառաջանար : Խուժէ ի խուժ մարդ մը կը աեսնուէր որ կորովաբար կը լողար : Թէպէտ ծովեզերքը մինչև երեք փարսախ տեղ այս տեղին չափ անմատչելի էր, սակայն տարակոյս չկար որ պալառն գէպ ի սոյն ապառաժները կու գար :

Չէր կրնար հասկըցուիլ թէ ի՞նչ նպատակաւ այս մարդիկն այսպիսի վտանգաւոր տեղ մը կը մտնեային : Շատ չանցաւ նաւակը խուժերուն զարնուող ահագին ալեաց մէջ բռնուեցաւ : Առանց նաւուղը զարմանալի ճարպիկութեանը, որ անդադար այս դիւրարեկ նաւակին խելաց կողմը սպառնացող լեռնաձև պլեաց առջևէն խոյս կու տար, խելոյն պիտի ընկղմէր նա : Ժայռերէն երկու գնաճնկէց հեռուն, պալառն կանդ առաւ այն վայրկենական հանդարտութեան շնորհիւ որ ամեն անգամ վեց եօթն ալիք փշրուելէն ետե կու գայ : Երկու հոգի, որոց Եւրոպացի ծովաստիներ ըլլալնին իրենց հպուստէն յայտնի էր, գլխարկին լաւ մը հաստատեցին գլխուսուն վրայ և ծովը նետուեցան աներկիւղ, մինչցեա իրենց ընկերներն ալէկոծութիւնը նորէն սկսելու միջոցին նաւակին գլուխը դարձընելով բացուեցան, և զարմանալի ճարպիկութեամբ վերստին գլումարաւելով ալեաց կատաղութեան հեռացան և աներկոյթ եղան :

Սոյն միջոցիս, երկու անվեհեր և քաջ լուղակները պատուելով այն ահագին ալիքները որոց հետ մերթ կը բարձրանային մերթ ի խոր կը դահալիժէին, ժայռերուն ստորտը հասան

փրկուրէ ստանի մը մէջ : Այնպէս կ'երեւէր թէ անխուտափելի մահուան մը կը գիմէին, և քարերուն զարնուելով կտոր կտոր պիտի ըլլային : Բայց այսպէս չեղաւ : Այս մարդիկը կ'երեւէր թէ քաջ գիտէին ծովեզերքին ամեն կողմերը. սկսան դէպ ի այն տեղերթալ ուր ջրոց անդադար և բուռն բաղխմամբը բնական և ընդարձակ քարայր մը բացուած էր : Ալիքները զարհուրելի շառաչմամբ այս կամարին տակէն ներս կը մտնէին և ապա լայն և խորունկ աւազանի մը մէջ կը հոսէին ջրվէժի նման :

Կոհակները քանի մը անգամ ծփալէ ետե կը հանդարտէին, և այն հսկայաձև քարայրին մէջ ստորերկրեայ լճակ մը կը դոյաւցընէին որուն աւելորդ ջուրը ծածուկ անցքէ մը ի ծով կը վերագառնար : Որչափ յանդուպն ըլլալու է այն լուղակը որ զմարդ այսպէս յանդուսդ գահալիժող կատաղի ալիքներէն չվախնալով ինքզինքն անոնց ձեռքը թողու. սակայն այս վայրկենական սուղումն աւելի զարհուրեցուցիչ էր քան թէ վտանգաւոր. քարայրին բերանն այնքան մեծ էր որ ժայռերուն զարնուելով ջախջախուելու վտանգ չկար, և մարդ ջրերէն մղուելով ինքզինք բարակ աւազով շրջապատեալ լճակի մը մէջտեղը կը գտնէր :

Արեգակին ճառագայթները կարծես մաղուելով ջրերուն մէջէն որք այն ահագին կամարին բերնէն ետալով վար կը դահալիժէին, մեզմ և լուսնի նման կապուտակ լոյս մը կը տփուէին : Երկու լուղակները լճակին եզերքն ելան շնչասպառ և պարտասեալ, ուր սաճ մը հանդէցան : Այս երկու մարդոց մեծը, որ թէպէտ ծովաստի պարզ հագուստ մը կրկրէր, Վիթլէր գնդապետն էր, Անդրոյ նոր թաղաւորին, Կիլոմ Թորանժի ջերմ հուսակից, որուն հրամանացը ներքե ծառայած էր երբ Յուսուբ Բ. դժբաղդ թաղաւորին փեսան տակաւին Հոլանտայի հանրապետութեան նախագահ էր :

Վիթլէր գնդապետը բարձրահասակ և ուժեղ էր. դէմքը կը ցուցընէր որ յանդուսն և անդուժ մարդ մ'էր. մաղբը, որոց մէկ քանի ձիւղ և թրջած պտեղներն իւր ծովաստի գլխարկէն դուրս ելած էին, կասկարմիր դոյն մ'ունէին. նոյն պահով

Թանձր պիտերուն տակ իւր լայն բերանը դրեթէ ծածկուած էր . քիթը զիշտափշ թռչնոյ մը կտուցին պէս ծուռ էր : Խիստ հաւատարիմ է իրահամարձակ անձ մ'ըլլալով իւր տիրոջը կրծառայէր կոյր անձնանուիրութեամբ : Ախօմ մ'Օրանձ իւր վստահութիւնը յայտնած էր դժտար և վտանգաւոր սպառածն մը յանձնելով անոր , ինչպէս որ ետքը սիտի տեսնուի : Գնդապետին ընկերացող ծովաստին փոքրահասակ մարդ մ'էր , բոյց ուժեղ , գործօն և յանդուգն : Պահճմը լուռ կենալէ ետեւ , գնդապետը Անդղիարէն լեզուաւ ըսաւ անոր .

— Աղէկ զիտնս գոնէ , չօն , ասկէ դուրս ելնելու անցք մը **ըլլալը :**

— Այո , գնդապետ , ապահով եղիք :

— Սակայն ես բան մը չեմ տեսներ :

— Հիմա , գնդապետ , երբ աչքերսիդ լուսնակի գոյն ունեցող այս տեսակ լոյսին սովորի , երեսի վրայ կու դաք , և հոն , աջկողմը , բնական երկայն անցքի մը ծայրը , որուն մէջէն սուղալով միայն կարելի է յառաջ երթալ , կրնաք տեսնել արեւուն լոյսը որ ժայռի մը ճեղքէն հոն կը թափանցէ :

— Ճամբան ապահով է , բայց հանդիստ չէ :

— Այնչափ հանդիստ չէ որ , գնդապետ , կրնամ ըսել թէ զձեզ ի Պարպատ բերող Քուա-տէզ-Օ (Թաղաւոր Չուրց) երկկայմին նաւապետը իւր խոշոր փորովը չկրնար մտնել այդ խողովակին մէջուրկէ պիտի անցնինք մենք : Հազիւ թէ ես կրցած եմ ուրիշ անգամ սողսկիլ հոն . մէջը ձխանի մը չափ կայ :

— Ա՛ր կ'ե՛նէ . . .

— Գահաւանդի մը յատակը որ Գիւարնակ-Բլուրին համար ամբողջի մը տեղ բռնած է . վասն զի այն գահաւանդը երեք կողմէն ցից ըլլալով ոչ վերէն վար իջնել կարելի է և ոչ վարէն վեր ելնել մագլեղով . իսկ չորրորդ կողմը բոլորովին անկոխ չէ , և ժայռին անհարթութեանց օդնութեամբը կարելի է այն ճամբով հասնիլ մինչև Կապոյտ-Մօրուքին դարաստանին եզերքը :

— Հասկըցայ , այս ստորերկրեայ անցքը զմեզ անդունդի մը

յատակը կը տանի որուն վրայ բարձրացած է Գիւարնակ-Բլուրը :

— Ճիշդ այդպէս է , գնդապետ , երեւակայեցէք թէ այնպիսի փոսի մը մէջ ըլլայինք որուն ստորին կողմերէն մին ցից ըլլաւ , և միւսը շեղ , շեղ ըսածս ալ այնպէս իմացէք որ ժայռին գագաթը հասնելու համար մէկ քանի անգամ սիտի պարտաւորինք պատտուկ մը բռնելով երկնից և անդունդին մէջ կախուած մնալ : Բայց երբ կատարը հասնինք , ինքզինքնիս Գիւարնակ-Բլուրին դարաստանին ծայրը պիտի գտնենք . հոն հասնելուս պէս ծակի մը մէջ կը կծկինք գործելու ժամանակին սպասելով :

— Գործելու ժամանակը չպիտի ուշանայ . հասկըցայ որ իւրօք ծառայած ըլլալու ես Կապոյտ-Մօրուքին քանի որ այդչափ աղէկ զիտնս այն կողմերը :

— Արդէն ըսի ձեզ , գնդապետ , որ իրեն և իւր առաջին ամուսնոյն հետ Յամաք-Երկրէն եկայ . երեք ամիս վերջը զիս ճամբեցին , այն ատեն ես ալ Մուրք Տօմինիկոս գայի , և անկէ ի վեր անոնց վրայօք բան մը չլսեցի :

— Կապոյտ-Մօրուքը տեսնես նէ կը ճանաչես :

— Հասակէն , ձեռն կը ճանաչեմ : Բայց գէմքէն՝ ոչ , ինչու որ Յամաք-Երկրէն զիշերանց մեկնեցանք , և երբ նստէն ելանք , զինքը դեսպակով մինչև Գիւարնակ-Բլուրը տարին : Երբ պատահէր որ ցերեկ ատեն դուրս ելնէր , զիտակ կը դնէր . սմանք կ'ըսէին թէ հրեշտակային գեղեցկութիւն մ'ունի , սչլք թէ ճիւազի չափ սղեղէ : Չզիտեմ թէ ս'ըն է սաչլքր , վասն զի ոչ ես , ոչ ընկերներս տանը ներսի կողմը չէինք կրնար ոտք կոխել , ներքին ծառայութիւնը Խափշտ հէք կ'ընէին , որք ձուկի պէս միշտ համը էին :

— Իսկ ամուսինը :

— Ամուսինը գեղեցիկ , բարձրահասակ և նիհար էր . երեսունվեց տարեկան մը կար . գէմքը թուխ , աչքերն ու պիտերը սև , քիթը կոր :

— Ինքն է , նոյն ինքն է , կ'ըսէր գնդապետն ինքնիրեն քանի որ ճօն այս նկարագրութիւնը կ'ընէր : Միշտ այսպէս նկարա-

գրած են զայն : Ինչպէս մեռած ըլլալը զիտցող չլիջ :

— Ա՛րեւն թէ ուղեորութեան մէջ մեռած է . ասկէ աւելի բան մը զիտցուած չէ :

— Մահուանը վրայ երբէք տարակոյս ունեցող չեղա՞ւ :

— Ա՛չ, զնդապետ, վասն զի անկէ ի վեր Ասպոյտ-Մօրուքն երկու անգամ ամուսնացաւ :

— Այդ երկու ամուսինները տեսնած ես :

— Ա՛չ, զնդապետ, վասն զի ութ օր առաջերբ զիս այս արշաւանքին համար բռնեցիք, ես ալ Սուրբ-Տօմինիկոսէն կու գայի : Յիսուն կիսէ խոտացար ինձ տալ թէ որ զձեզ կղզին մտցընեմ Գաղղիական լրտես նաւերուն հսկողութեան հակառակ որք պատերազմին սկիզբէն ի վեր չեն թողոր որ նաւ մը եղերք մօտենայ . յայտնի է որ խօսքս եզերքին մարտէն կողմերուն վրայ է . ուստի մեր պալատին նեղութիւն տուող չեղաւ, վասն զի՝ Գապէսթէրի ցից ժայտերուն շնորհիւ, մէկուն մտքէն չանցնիր որ այս կողմէն կարելի ըլլայ կղզին ելնել, և այս պատճառաւ հսկողութիւն չեն ըներ այս կողմը :

— Ըսել է որ մեր՝ այս կղզին ըլլալուն մարդ չկասկածիր, և՛ եթէ ըսածիդ պէս է, Ասպոյտ-Մօրուքը տեսակ մը ոստիկանութիւն ունի որմէ օտարականներուն դալը կ'իմանայ, այնպէս չէ :

— Գէթ, ժամանակաւ կ'ըսէին թէ Սէն-Փիէրի կամ Քօր-Բօյալի մէջ ունեցած գործակատարները լրտեսութիւն կ'ընեն և Մարթինիքա եկեղ և ոչ մէկ օտարական անոնց հսկողութենէն չկրնար վրիպիլ :

— Աւրեմն գործը կարդին է, դու յիսուն կիսէդ կ'աւանես : Բայց դարձեալ կ'ըսեմ, վտամհ ես որ այս ստորերկրեայ անցքը . . .

— Անհո՞ց եղիք, զնդապետ, ինչպէս որ ըսի, զիս առաջին անգամ հոս բերող սեամորթին հետ, որ մարդարիտ կը հանէ, անցած եմ անոր մէջէն :

— Բայց դահաւանդէն դուրս ելնելու համար Գիւաբնակ-Բլուրին դարաստանին մէջէն անցնիլ պէտք եղաւ քեզ :

— Հարկաւ, զնդապետ, վասն զի դարաստանը տեսնելու շատ հետաքրքիր էի, ուր չէինք կրնար մտնել, և այս հետաքրքրութիւնս զո՛հ ընելու համար էր որ սեամորթին առաջարկութիւնն ընդունեցի . տունէն ըլլալուս՝ Ասպոյտ-Մօրուքին և իւր ամուսնոյն բացակայ ըլլալը գիտէի . ուստի վտահ էի որ Գահաւանդէն դուրս ելնելէս ետեւ կրնայի պարտէզէն ալ դուրս ելնել : Աւերջապէս յաջողեցանք, բայց հազար վտանդէ անցնելով . ինչ ընէի, տանը ներքին կողմը տեսնելու սաստիկ տեհչմ'ունէի, որ արգիլուած էր մեզ : Շիտակը՝ ճշմարիտ դրախտ մ'էր այն : Ամենէն զուարճալին դահապանի պաշտան վարող Խափշուհոյն զարմանքն եղաւ . երբ զիս և սեր տեսաւ, չկրցաւ հասկընալ թէ ինչպէս կրցեր էինք ներս մտնել, մնք ալ իրեն ըսինք թէ մեր մտնելը չէր կրցեր տեսնել : Խափշուհոյն հաւատօց, և զմեզ շուտ մը դուրս հանեց, սակայն մարդու բան մը չխօսեցաւ վախնալով որ զինքն ալ կը ճամբեն :

— Քանի մը վայրկեան լուռ կիսակէ ետեւ զնդապետը ճծին ըսաւ .

— Ամենն այսչափ չէ, ալ ընկրկիլ չըլլար, պէտք է որ ամեն բան ըսեմ քեզ :

— Ի՞նչ, զնդապետ :

— Գիտարեակ-Բլուրը հասնելուս պէս, հոն մարդ մը կայ զոր պիտի բռնենք և կապենք . ինչ կերպով ալ որ զէմ գնելու ըլլայ, զլիսէն մտղմ'անցամ պէտք չէ որ իյնայ, ուրիշ բան է եթէ կեանքերնիս պաշտպանելու ստիպէ զմեզ . այն ատեն, յարեց զնդապետը սոսկալի ժպիտով մը, այն ատեն . . . քեզի երկու հարկը կիսէ, յաջողինք կամ ոչ :

— Չա՛ր սատանայ, այդ բանը քիչ մը առաջընելու էիք ինձ, զնդապետ : Ինչ և իցէ, խաղի ելնողը խաղալու է :

— Ա՛ա՛ւ, չեմ սխալիր, կտրիճ ես :

— Բայց վնասած մարդերնիդ ուժեղ և սրտո՞տ մէկն է :

— Երեւակայէ՛, ըսաւ Բիթէր պահ մը մտածելէ ետեւ, Ասպոյտ-Մօրուքին առաջին ամուսինը . զրեթէ անոր պէս բարձրա-

Հասակ և վտիտ մարդ մ'է :

— Անոր պէս, արդարեւ անիկա վտիտ էր, պողպատէ դաւաղանն ալ վտիտ է, սակայն անկէ զօրաւոր ինչչկայ : Այն մարդը շատ աղէկ զիտէր կապարն ու երկաթը դործածելու կերպը . այնքան ուժեղէր որ օր մը սեխ մը մէջքէն բռնելուն պէս տանքայլ անդին նետեց, որպէս թէ մանկիկ մ'էր, թէև այն սեւամորթը ձենէ աւելի խոշոր և կորովի էր : Հիմա, եթէ ձեր փնտռած մարդն ալ ա՛նոր կընմանի, կարծեմ բաւական նեղութիւն պիտի քաշենք :

— Ո՛չ այնչափ, ետքը կ'ըսեմ քեզ ասոր պատճառը :

— Աօիէ զատ, ըսաւ ճօն, եթէ ծովասպատակը, ցլորսը կամ ֆարայիպը, որք լրածիս նայելով այրիին սուսը շատ կը յաճախեն, պատահմամբ հոն գտնուին, այն ատեն դործը քիչ մը կը ծանրանայ :

— Իս մտիկ ըրէ, ըսիր թէ դարաստանին ծայրը անտառ մը կայ ուր մարդ կընայ պահուրակ, այնպէս չէ՞ :

— Այո՛, զնդապետ :

— Բայ ի ցլորսէն, ծովասպատակէն կամ ֆարայիպէն, ուրիշ մարդ չը՞կրնար մտնել Ասպոյտ-Մօրուքին յատկացեալ բնակարանը :

— Ոչ ոք, զնդապետ, ի բաց առեալ իրեն ծառայող Խափշուհիները :

— Նաև ի բաց առեալ իմ փնտռած մարդս. վասն զի կը յուսամ որ այն ալ հոն պիտի գտնենք :

— Լաւ, զնդապետ :

— Ուրեմն ընելիքնիս շատ պարզ բան մ'է, անտառին ամենէն թանձր մէկ կողմը դարանամուտ կ'ըլլանք, մինչև որ ուզած մարդս մեր կողմը գայ :

— Հարկաւ այդպէս պիտի ըլլայ, զնդապետ, ինչու որ դարաստանը մեծ չէ, և անոր մէջ պարտող մը անպատճառ մարմարիոնէ աւաղանի մը քովէն պիտի անցնի, մենք ալ անոր մօտ տեղ մը շատ աղէկ կընանք պահուրակ :

— Եթէ մարդը պտըտելու չենէ, զիշերը կ'ըսպասենք մին-

չէ որ պառկի, այն ատեն անկողնոյն մէջ կը բռնենք զայն :

— Այդ աւելի ապահով կ'ըլլայ, զնդապետ, միայն թէ մարդը իրեն օգնութեան չկանչէ : Ասպոյտ-Մօրուքին սփոփիչներէն մին :

— Հոգ մի՛ ըներ, բաւական է որ քու աջակցութեամբք անգամ մ'անոր օձիքը ձեռքս անցընեմ, այն ատեն, եթէ զինու վառեալ հարիւր հօդի ալ անոր շուրջը պատելու ըլլան, ձեռքէս չկրնար ազատիլ, ունիմ զօրաւոր միջոց մը զինքն ստիպելու որ ինձ հնազանդի : Այս իմ դործս է : Քենէ ուզածս սա է որ զիս այնպիսի տեղ մը տանիս ուրկէ կարենամ յանկարծ վրան ցատկել :

— Լաւ, զնդապետ :

— Ուրեմն քալենք, ըսաւ Բիւթլէր ելնելով :

— Շատ աղէկ, զնդապետ, միայն թէ փոխանակ քալենք ըսելու, սողանք պէտք է ըսել : Բայց դարձեալ դիտենք անգամ մը թէ, ըսաւ ճօն խոնարհելով, լոյսը կ'երևի միշտ : Այո՛, այո՛, ահաւասիկ, բայց ս'ըչափ հեռու կ'երևի : Սա ալ կայ որ, զնդապետ, եթէ հոս դալէս ի վեր անցքը փլչելով դոցուած ըլլար, ինչ պիտի ըլլար հիմա մեր վիճակը. հոս մնալու և անօթութենէ մեռնելու պիտի ստիպուէինք, կամ իրար պիտի ուտէինք : Անհնարին պիտի ըլլար այս վիճէն դուրս ելնել, ինչու որ մարդս չկրնար վար դահավիժող ջրէ մ'ի վեր ելնել, ինչպէս կամբախայտը ջրվէժն ի վեր կ'ենէ :

— Ճշմարիտ է, ըսաւ Բիւթլէր, զիս կըսարսափեցընես դու. բարեբաղդաբար անանկ բան մը չկայ : Պարկը քովդ է, այնպէս չէ՞ :

— Այո՛, զնդապետ. փոկերը հաստատուն են, և ջրակովին մորթէն ալ ջուր չանցնիր. մէջը դուրսած առքանակները, դաշտյնները, փամփուշտի տուփերը չոր և մաքուր մնացած պիտի գտնենք :

— Օ՛ն ուրեմն, ճօն, առաջ անցիր, ըսաւ զնդապետը, զլեսանիս չորցընելու ժամանակ պէտք է մեզ :

— Շուտ կը չորնան, զնդապետ, դահաւանդին յատակը հասած

ժամանակինս ինքզինքնիս փառսի մը մէջ պիտի կարծենք, արնը միշտ մէջն է :

Ճօն երեսի վրայ գալով սկսաւ սողակիլ իրաւ նեղանցքի մը մէջ ուր հազիւ կոցաւ մտնել : Խաւարը շատ թանձր էր մէջը, միայն հեռուն դեղին լըյս մը կը նշարուէր : Գնդապետը ճօնին ետեւէն գնաց խոնաւ և ցեխոտ դեմնին երեսէն քսուելով : Քիչ մը ատեն երկու Անդղիացիներն այսպէս յառաջ գացին խոր մթութեան մէջ ծոնդերնուն, ձեռքերնուն և փորերնուն վրայ սողալով : Յանկարծ ճօն կեցաւ և սարսափէ այլայլած ձայնով մը աղաղակեց .

— Գնդապետ . . .

— Ի՞նչ կայ :

— Կծու հոտ մը կ'առնէք :

— Այո՛, դարչնէի հոտ մը :

— Բնաւ մի՛ երերաք, օձ է . . . սլա՛ ըսուած օձն է, կորսուեցանք . . . :

— Օձ, աղաղակեց գնդապետը սոսկմամբ :

— Մեռանք, չեմ համարձակիր յառաջ երթալ . . . հոտը հետզհետէ կը սաստկանայ, մումաց ճօն :

— Լուէ՛ . . . մտիկ ըրէ :

Երկու ուղևորը անհնարին ստգնտայի մէջ շունչերնին բռնեցին : Յանկարծ քանի մը քայլ հեռուն դահալէժ ձայն մը լսեցին, գաւազանով թաց տեղ մը ծեծելու ձայնին նման :

Այն նողկալի հոտը զոր մեծ օձերը կը սփռեն, առաւել ևս սաստկացաւ :

— Օձը կատղած է, կլորցած է. պոչն է որ այսպէս դետունը կը զարնէ, ըսաւ ճօն սկար ձայնով մը : Գնդապետ, ինքզինքնիս Աստուծոյ յանձնենք :

— Պոռալու է որ վախնոյ, ըսաւ Բիւթալէր :

— Ո՛չ, ո՛չ, իսկոյն վրանիս կը յարձակի, ըսաւ ճօն :

Պահ մը լուռ և սարսափահար մնացին : Ոչ կրնային գառնալ, ոչ զիրք փոխել. կուրծքերնին դեմնին դպած էր, կրնակնին

ժայռին : Չէին համարձակեր գէպ ի ետ շարժում մը ընելու՝ վախնալով որ զեռունը ետևուն կ'երթայ : Օգը օձին ժանտ հոտէն հետզհետէ կ'ապականէր և հեղձացիչ կ'ըլլար :

— Ձեռքիդ տակը քար մը չիտ՛յ որ նետես, ըսաւ գնդապետը կամացուկ մը :

Հազիւ այս խօսքն ըսած էր, ճօն սոսկալի ճիչեր արձակեց և սկսաւ թապըլտիլ գոչելով .

— Հասի՛ր, հասի՛ր, մնաց :

Բիւթալէր վախէն այլայլած կանգնիլ ուղեց, բայց զլուխը ուժգին կերպով քարին զարկաւ : Այն ատեն ծունդերուն և ձեռքերուն վրայ կրցածին չափ արագութեամբ ետ ետ սողալով փախչելու աշխատեցաւ, մինչդեռ ճօն օձին հետ բռնուած ըլլալով ցաւէն և սարսափէն կ'ուռար : Յանկարծ ձայնը մարելով սկսաւ կողորդէն խոլ աղաղակներ հանել որպէս թէ կրխեղուէր : Արդարև, մոլեղին օձը ճօնին ձեռքերը, կոկորդը, երեսը մթին մէջ խածնէլէ ետև իւր տափակ և մածանող զլուխը ուղարմելոյն կիսաբաց բերնին մէջ կրխօթէր, և շրթերն ու լեզուն կրխածնէր, և այս վերջին վէրքը մեռուց զայն : Օձը իւր կատաղութիւնը յաղեցընելէ ետև արագութեամբ իւր սոսկալի կապերը քակեց և փախաւ :

Գնդապետը թոյլ և պաղ մարմնոյ մը երեսին քսուիլը զգաց և անշարժ կեցաւ : Օձը այն ստորերկրեայ անցքին մէջն սողակելով խոյս տուաւ : Գնդապետը այս վտանգն անցընելէ ետև վախէն արձան կարեցաւ մնաց մի քանի վայրկեան . այս միջոցին մտիկ ըրաւ ճօնին վերջին խորհումները, որուն հոգեվարք վիճակը շատ կարճ տևեց : Բիւթալէր լսեց անոր մի քանի ջլային ցնցումները և հողին փչելը :

Այն ատեն Բիւթալէր ճօնին մօտեցաւ և սրունքէն բռնեց : Սլաք օձին թոյնը այնչափ արագ ներգործեր էր որ սրունքն արդէն ձգտեր և պաղեր էր : Նոր սարսափ մ'ալ պատեց գնդապետը : Օձը քարայրէն գուրս ելնելու տեղ մը չգտնելով կրնար ըլլալ որ մի և նոյն ձամբէն ետ գառնար : Արդէն ետևի կողմէն՝

քսուելու պէս ձայն մը կու գար ահանջին . չէր կրնար յառաջ երթալով փախչիլ, ճծին մարմինը բոլորովին գոցած էր անցքը . եթէ ետ երթար, օձը գիմառորելու վտանգին մէջ պիտի իյնար :

Այսու ամենայնիւ, զնպատեար, սարսափահար, գիտիին երկու սրունքներէն բռնեց, որպէս զի զայն քաշելով մինչև անցքին բերանը տանի . և քարայրէն դուրս ելնելու միակ ճամբան բանայ : Իւր ճիգերն ի գերեւ ելան :

Մէկ կողմանէ տեղին նեղութենէն Ռիթլէրի սլոյժ կտրելով, միւս կողմանէ թոյնէն ճծին մարմինը արդէն ուռած ըլլալով, չկրցաւ իրեն քաշել զայն : Չուզելով և չհամարձակելով հաւատալ թէ փրկութեան այս միակ և վերջին միջոցն ալ չպիտի յաջողի, գօտին քակեց և մեռելին ոտքերուն կապեց, յետոյ զայն խածնելով և ձեռօքը գետինը հրելով սկսաւ քաշել յուսահատած մարդու մը բոլոր զօրութեամբը : Հսկիւ կրցաւ քիչ մը շարժել գիտիլ : Սոսկումն աւելցաւ, գանակը հանեց որ ճծին մարմինը կարճէ, բայց խոկոյն տեսաւ որ այս ալ անօգուտ փորձ մ'էր :

Գնդապետին ատրճանակներն ու մթերքը ջրակովի մորթէ շինուած պարկի մը մէջ դրուած էին զոր ճծն ուսին վրայ կը կրէր, քաշատեցաւ գոնէ այս պարկն առնելու, և մեծ դժուարութիւններով կրցաւ յաջողիլ, յետոյ ետ ետ քսուելով անցքին բերանը վերադարձաւ : Երբ քարայրը հասաւ, վրան մեծ տկարութիւն մը զգաց, բայց օրը զինքը կապուրեց, ճակատը պաղ ջրին մէջ լսութեց և լճակին եզերքը նստաւ : Օձը զրեթէ մտքէն ելեր էր : Երկար շչիւն մը լսելով գլուխը վեր վերցուց և տեսաւ որ գեռունը քարայրին կամարը կազմող ժայռերուն կէս մը փաթթուած իւր գլխէն քանի մը ոտք վերօք կ'օրուէր :

Գնդապետն այս վտանգը տեսնելուն պէս վերտան իւր անխոռով գիրքն առաւ . անշարժ կենալով և միայն ձեռքերը խաղցընելով պարկին փոկերը քակեց, մէջէն ատրճանակ մը հանեց և զինեց զայն : Բարեբաղդաբար վառօդն ու խայծն անեղձ մնացած էին :

Այնչսպահուն երբ օձը Ռիթլէրի շարժումներէն զրգուտելով

վրան կը նետուէր, Ռիթլէր սարսափեց ատրճանակը, և օձն առջին ինկաւ գլուխը ջախջախեալ : Գոյնը կապուտի զարնող սև էր, վրան գեղին բիծերով, և երկայնութիւնն ինն ոտքի չափ կար : Գնդապետն աղաւթելով այս թշնամոյն ձեռքէն, և քաշալերուելով սոյն յաջողութենէն, վերջին ճիգ մ'ալ ընելու զոյրս ելնելու մէկ հատիկ ելբին խոչընդոտը բառնալու համար : Գարձեալ սողալով անցքին մէջ մտաւ, բայց հակառակ իւր անլուր ճգանցն ու զօրեղ բաղկացը, չկրցաւ ճծին գիտիլ տեղէն խախտել :

Նորէն քարայրը գառնալով, անոր ամեն կողմը պարտեցաւ և տեսաւ որ բնաւ դուրս ելնելու տեղ չկայ : Գրեւն օդնութիւն չէր կրնար յոսալ, իւր աղաղակները չէին կրնար լսուիլ : Երբ միտքը սոյն սոսկալի մտածմամբ պաշարուած էր, օձը աչքին հանդիպեցաւ, տեսաւ որ գէթ վայրկեանակա՛ն դարման մը կրնար ըլլալ . գիտէր որ երբեմն սեւերը, երբ սաստիկ անօթեցած ըլլան, օձին միտք կ'ուտեն, որ թէպէտ զգուշի է բայց վնասակար չէ : Երբ գիշեր եղաւ, թանձր խաւար մը պատեց զինքը : Ալեքները կը մուռնէին և քարայրին բերնին զարնուելով կը ջախջախուէին, ջուրերը վարի աւաղանին մէջ կը զահամլիժէին շառաչմամբ : Նոր սոսկում մ'ալ եկաւ պատեց զՌիթլէր : Գիտէր որ օձերը շատ անգամ գիշերը կը միանան և կը մերձաւորին : Իւր սպաննած օձին արուն կամ էզը կրնար անոր հետքը գտնելով գար զայն փնտուելու :

Գնդապետին դողն ու տարտափն աւելցաւ : Թէև սրտոտ և անդրդուելի, սակայն դոյրն շշունջ մը տարտու կը պատճառէր իւրեն, կը մտածէր թէ՛ եթէ հրաշքով մ'այն սոսկալի տեղէն դուրս ելնելու ըլլար, իւր ձեռնարկն առաջ տանելու էր : Մերթ սոյն արկածին մէջ երկինց մէկ աղպարարութիւնը տեսնել կը կարծէր, մերթ ինքզինք վատ կը համարէր, և կրած երկիւզը գտնուած տկար վիճակին կը վերադրէր :

Գնդապետն այս անհարկին վիճակին մէջ լծուելով, ընթերցողն ի Գիւաբնակ-Բլուր կ'առաջնորդէր :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ

Գ Ի Ի Ա Բ Ն Ա Կ - Բ Լ Ո Ւ Բ Ը

Պայծառ լուսին մը գրեթէ Խորոպայի արեգակին հաւատար լոյս մը սփռած էր, որով կատարելագէտ կ'որոշուէր ամեն կողմէ անտառներով շրջապատեալ բարձր ժայռի մը կատարը շինուած աղիւսէ բնակարան մը այլանդակ ձևով: Հոն երթալու համար այն կոնաձև ժայռին շուրջը պատող ոլորապոյտ նեղ ճամբէ մը անցնիլ պէտք էր, որուն մէկ կողմը գրեթէ ուղղահայեաց դիրքով խտաբար էր, և միւս կողմը գահաւանդ մը, որուն յատակը ցերեկն անդամ չէր տեսնուեր: Այս վտանգաւոր ճամբան սարահարթի մը կը յանդէր որուն մէջէն կ'անցնէր աղիւսէ խիստ բարձր պատ մը, թնդանօթի որմածակերով: Այս զաւիւկայրին ետեւ կը բարձրանային բնակարանին բոլորակի պատերը. ներս մտնելու համար կաղնիէ ցած դուռ մը կար: Այս դռնէն ընդարձակ և քառակուսի բակ մը կ'երթուէր ուր սպասաւորի սենեակներ և ուրիշ շէնքեր կային: Բակն անցնելէ ետեւ կաւարակապ ճամբայ մը կ'ըսկսէր որ սրբավայրը կը տանէր, այն է Կասպյա-Մօրուքին բնակած հովանոցը: Տանը սպասաւորութիւնն ընող բազմաթիւ սեւերէն կամ խառնածիններէն և ոչ մին այս կամարէն անդին չէր կրնար երթալ: Միայն Խափշուհիները կրնային հաղորդակցութիւն ունենալ Կասպյա-Մօրուքին հետ, և ծառայելանոր:

Տունը՝ բլուրին կատարը հանող զաւիւկայրին միւս կողման վրայ շինուած էր: Այս կողման զաւիւկայրը, որ միւսին չափ ձիգ չէր և բազմաթիւ բնական դարատափներ ունէր, հինգ կամ վեց ընդարձակ աստիճաններէ կը բաղկանար որք ամեն կողմէն

գահաւանդներու կը յանդէին: Ինչպէս որ հրաբխային կղզեաց մէջ շատ կը տեսնուի, վերի աստիճաններէն միոյն վրայ իբր երկու արնաւար շրջապատ ունեցող լճակ մը կար, որ այն աստիճանին գրեթէ բոլոր տարածութիւնը բռնած էր: Զուրը վճիտ և մաքուր էր: Կասպյա-Մօրուքին սոււր ուլորի և արծաթափայլ աւաղէ նեղ սալարկով լճակէն բաժնուած էր:

Տունը միայարկ էր: Առաջին անդամ տեսնողը կը կարծէր թէ ծառի կեղևէ շինուած է. սլամպուէ տանիքը որ շատ ծուռ էր, հինգ վեց սաքի մը չափ՝ արտաքին պատէն դուրս վար իջնելով դեպիւր մտուած արմատենաց կոճերու վրայ հաստատուած էր, որով տանը բոլորակը վրան գոյ բակ մը կը ձեւանար: Աճակին երեսէն քիչ մը վեր մեղմ զաւիւկայրի ձեով գալարավայր մը կ'իջնէր որուն խոտը Անդղիսյ ամենէն գեղեցիկ մարգագեթիններուն նման թարմ և կանաչ էր. Անթիլեանց մէջ հազիւ ուրեմն տեսնուած այսպիսի գեղեցիկ գալարավայրի մը դոյա՛նալուն պատճառը լճակէն ելնող անտեսանելի ուռուցմներն էին որք այս գարատանին մէջ թարմութիւն և զովութիւն կը սփռէին: Տեղանդ հասարակածի ծաղիկներով պճնեալ այս գալարավայրէն ետեւ կու գար թանձրախիտ և այլազան թուփերէ բաղկայեալ պարտէզ մը. տեղն այնպիսի կորութիւն մ'ունէր որ անոնց բուեր չէր տեսնուեր, բայց միայն պէս պէս գոյններով փայլող գաղաթներնին. վերջագէտ՝ աւելի ստորին աստիճանի մը վրայ թուփերուն կը յաջորդէր նարնջի և լեմոնի ծառերու ընդարձակ անտառ մը. բոլոր այս ծառերը ծաղիկներով և պտուղներով ծածկուած էին, այնպէս որ ցերեկ աստն բարձրէն դիտողը կարծէր թէ իւր առջև հտուռ էտ ձիւնէ գորգ մը պարզուած և վրան ոտիկ գունտեր ցանուած էր:

Աւելի հեռուն, հորիզնին վրայ կը տեսնուէին սղամաթուզի և հնդիկ ընկուզի ծառերուն բարձրաբերձ բուները որք շքեղ որմած մը կը կազմէին. և որոց ներքև կ'իյնար այն գահաւանդը որուն յատակը կու գար կը համներ այն միջոցին Վիլլէր գնդապետին գտնուած ստորիկընայ անցքը որուն վրայ խօսեցանք:

Հիմա, մահնե՛ք տանը յետին կողմն սենեակներէն միոյն մէջ. հոն պիտի դանենք քսան քսաներէք տարեկան մանկամարդ կին մը, սակայն այնպիսի մանկական գէմք մը, քնքուշ հասակ մը, դեռաբողբոջ մատաղութիւն մ'ունի, որ տեսնողը հազիւ տաննպէս տարեկան պիտի կարծէ զայն:

Բեհեզեզայ լայնաթև պարեգօտ մը հագած՝ թխողոյն և ոսկեմանեալ Հնդկի կերպատէ բաստեռան մը վրայ ընկողմանած էր. իւր ամբիծ և սպիտակ ճակատը ձգած էր իւր ձեռքին վրայ որ մոխրադոյն-խարտեաշ մազերուն ստուար խոպոպեայ մէջ կիսով չամբ ծածկուած էր. բազմաթիւ մետաքսաթիւ օշակներ իւր ձիւնափայլ վզին և ուսերուն վրայ ինկած իւր գեղեցիկ և փոքրիկ դիմաց պատկերը կը շրջապատէին, գէմք մը՝ որ կլոր, սերտ և վարդադոյն էր մանկական գէմքի մը նման: Ընկողմանած բազմոյն եղերքը կարմիր կաշիով կազմուած դիրք մը դրուած էր իւր առջև բացուած: Մանկամարդ կինը մտադրութեամբ կը կարդար զայն երեք անուշահոտ մոմեր կրող ոսկեզօծ և բարակ քանդակով ստեղնաւոր աշտանակի մը լուսով: Այս գեղեցիկ կնոջ արտեանունքն այնքան երկայն էին որ իւր այտերուն վրայ թեթև ստուեր մը ձգած էին, ուր երկու աղբուր փոսիկներ կը նշմարուէին. քնքուշ քիթ մ'ունէր, իւր ծիրանեզոյն բերանը կապոյտ և գեղեցիկ աչքերէն քիչ մեծ էր, անմեղութիւնը չքնաղ դիմացը վրայ կը փայլէր: Իւր բեհեզեզայ պարեգօտին ներքէն ոտքերը կ'երևէին. հագած էր ձերմակ մետաքսէ գուլարայ և կարմիր ստթենէ շուռական, եղերքը բանուած. ոտքերն այնչափ փոքր էին որ ափի մը մէջ կրնային սղմիլ: Այս մանկամարդ կնոջ գիրքէն կրնար գուշակուիլ իւր անձնական կատարեալ բարեձևութիւնները, թէև հասակաւ փոքր էր:

Պարեգօտին թեզանիքը լայն և ինկած ըլլալով, իւր կլոր և փղոսկրի նման փայլուն թևը կ'երևէր, արմուկին վրան ալ սիրուն փոսիկ մ'ունէր: Ձեռքը որով գիրքը կը թղթատէր, գեղեցիկութեան մասին թե՛ն վար չէր մտար. իւր երկայն եղունդները ապառի պէս կը փայլէին. մասներուն շառաղոյն ծայրերը տեսնողը

պիտի կարծէր թէ Հնդկաց հինայով գունաւորեալ էին: Այս չքնաղ արարածը զաղափարեալ Փսիքին կը յիշեցընէր, և պաշտելի բացումն էր այն վայրկենական վաղանցուկ գեղեցիկութեան որ պատանեկութեան առաջին ծաղկին հետ կ'անցնի կ'երթայ: Այսու ամենայնիւ կան այնպիսի կազմութիւններ որք երկար ատեն կը պահեն երիտասարդական առաջին գեղեցիկութիւնն ու պատկերը, և ինչպէս որ ըսինք, Ասպոյտ-Վօրուքը, թէև հասակաւ քսաներեքէն աւելի, այս մենաշնորհեալ կազմութեանց դասէն էր, վասն զի Ասպոյտ-Վօրուքն էր . . . :

Ընթերցողէն այլ ևս չենք պահեր Գիւարնակ-Բլուրին բնակչուհոյն անունը, և կ'ըսենք որ Անժէլ անունը կը կրէր նա: Աւա՛ղ, այս երկնային անունը, ամբծութեան գեղեցիկ տիպարն եղող այս գէմքն արդեօք հակապատկեր մը չէ՞ն ձևացընք այն դիւական համբաւոյն հետ զոր կը վայելէր երեք ամուսիններէ այրիացեալ այս կինը, որուն համար կ'ըսէին նաև թէ ունեցած ամուսնոց թուոյն չափ սիփիլոս ունէր: Գիսպց ընթացքը պիտի դատապարտեն կամ պիտի արդարայնեն Ասպոյտ-Վօրուքը:

Անժէլ քովի սենեկին մէջ թեթև շուռկ մը լսելով իսկոյն գլուխը վերցոյց գարանամուտ եղած վթի մը պէս, և բազմոյն եզերքը նստաւ, շնորհալի շարժմամբ մը մազերն ետին ձգելով: Այն միջոցին երբ սաք կ'ենէր զուշելով. — Ինքն է. մարդ մը սենեկին վարադոյրը կը բանար: Երկաթն այնչափ արագութեամբ չդիմեր առ մագնիսն որչափ Անժէլ գիմեց առ նորեկն: Անոր բազկայր մէջ նետուեցաւ, տեսակ մը գորովալի մուկնութեամբ փաթթուեցաւ անոր, զգուեց և համբուրեց զայն հրատասլ շրթերով, ուրախութեամբ աղաղակելով. — Իմ անուշիկ Յակոբս:

Երբ առաջին խանդն անցաւ, նորեկն Անժէլը տղու մը պէս գրկեց և իւր պատուական բեռովը մինչև բազմոյր գնաց: Այն ատեն Անժէլ Յակոբին մէկ ծնդին վրայ նստաւ, անոր մէկ ձեռքը իւր ձեռացը մէջ առաւ, և գիտեց զայն անյագ ուրախութեամբ մը . . . : Աւա՛ղ, Մարթինիքայի չարախօսներն արդեօք իրաւունք ունէին Ասպոյտ-Վօրուքին բարոյականին վրայ կասկա

ծելու : Այն անձն որուն Անժէլ այսպիսի մտերմական և կախողին ընդունելու թիւն մ'ըրաւ , Խափշիկի մը պէս պղնձադոյն էր . բարձրահասակ և նորր , ժիր և ուժեղ . իւր դէմքը , որուն վըրայ աղնուած թիւնը կը փայլէր , սեւամորթի մը սխալարին նման . զրնաւ տեղ մը չունէր . սուսա և սե սաթի նման մաղերը իւր ճակատը կը բոլորէին . իւր նորր , կարմիր և խնուա շրթանց ներքե կը փայլէին ձիւնի պէս սպիտակ և զեղեցիկ տկոտները : Այս հիանալի և միանգամայն աւելի զեղեցիկութիւնը , ուժի և շնորհալի ձևերու այս միաւորութիւնը Հնդիկ Բաբոսի կամ Անտի-նասոսի զեղեցիկութիւնը կը յիշեցընէին :

Խափշիկին հազուսան էր ծովասպատակաց ուննց ցտմարը գտնուած ժամանակի սովորական հազուսար : Ասկի կաճակներով կարմիր թափէ թիկնոց մը հազած էր , նոյնպէս կարմիր թափէ Քլանարիական լայն տարատ մը նմանօրինակ կաճակներով որք զխան ի վար կը սողակէին . մէջքս կապած էր նորնջադոյն մետաքսեայ դօտի մը , ուր ծանրագին գաշոյն մը կը կրէր . վերջապէս սոյնըդոյն մետաքսներով բանուած սպիտակ մաշիէ զանկապանները մինչև ծունկը կը հասնէին , որոյմէ իւր ուռուցիկ սրունքներուն զեղեցիկութիւնը կ'երևէր : Չկար այնչափ սիրուն , այնչափ ակնհասաճոյ բան մը որչափ այն հակապատկերը զոր Յակոբ և Անժէլ կրնե՞ր իտրոյրնէին այսպէս իրարու . քովեկամ : Աէկ կողմէն խորտեաշ մաղեր , ձիւնաթոյր սպիտակութիւն , վարդագոյն սյուներ , մանկական շնորհալի ձևեր . միւս կողմէն սղնձի գոյն , սեւաթոյր մաղեր , առնական և յանդուգն դէմք :

Անժէլի զգեստին սպիտակութիւնը Յակոբին մթադոյն հազուատներուն քով առաւել ևս կը փայլէր , և Ասպրյոս-Վորուքին նորր և զլուրածեք մարմնոյն բարեձևութիւններն առէր ազէկ կը տեսնուէին : Մանկամարդ կիներ իւր մեծ և կապոյտ աչքերը Խափշիկին սև աչքերուն յառած , անոր շապիկին բանուած օձիկը վար կ'իջեցընէր որպէս զի լաւ ևս զխտէ անոր արևակէզ պարանոցը , որ իւր գոճոմի ու ձևովը Քլորէնտեան զեղեցիկ անագապղնձին կը նմանէր : Այս անպատշաճ տեսարանը բուական երկա-

րելէ ետև , Անժէլ Խափշիկին տկոտջին ներքեկն հրատար շրթներով համրոյր մ'առաւ , գլուխը իւր երկու ձեռացը մէջ բռնեց , մաղերը տակնու վրայ բրաւ և երեսին փոքրիկ տպտակ մը զարնելով գոչեց .

— Ահա այսպէս կը սիրեմ զձեզ , պարոն Փոթորիկ :

Գրանը վարպտարին ետեկն թեթև շշուկ մը լսուելով , Անժէլ բաւ .

— Գո՛ւ ես , Վիրէթ , ինչ կ'ընես հոգ :

— Ծաղիկ բերի , սիրտ հի . . . և գանոնք սնտակներուն մէջ պիտի շարեմ :

— Մեզ լսեց . . . լսաւ Անժէլ Խափշիկին խորհրդաւոր նշան մ'ընելով . յետոյ դարձեալ խենդի մը պէս խնդալով « Փոթորիկին մաղերը խառնակեց :

Պարոն Փոթորիկ հաճաթեամբ թողլու տար որ Անժէլ խելքին փչածն ընէ իրեն , և տարփանօք կը դիտէր զայն : Ժպտելով ըստ . անոր .

— Անժէլ , տարիք միշտ տանակից բլլալուն համար ամեն բան քեզ ներելի կը համարիս :

Յետոյ հեղինական ծանր դէմքով մ'առելցոյց .

— Սա վարդադոյն և անմեղ փոքրիկ դէմք տեսնողին մաքէն կ'անցնէ՞ր արդեօք թէ ծոնդիս վրայ զրկածս Անթիլեանց ամենէն նշանաւոր անդգամուհին է :

— Սա անաշիկ ձայնով խօսող անձը տեսնողին մաքէն կ'անցնէ՞ր արդեօք թէ այն վայրագ Փոթորիկ նաւապեան է , Անդրիապոյց և Ապանիսոցոյ գոլն ու սարսափը , գոչեց Անժէլ քրքիջ բառնալով :

Պարտինք իմացընել ընթերցողին թէ Խափշիկն ու այրին առանց օտար արտասանութեան ընտիր Գաղղիալէն մը կը խօսէին :

— Ինչ տարբերութիւն , գոչեց Խափշիկը խնդալով , իմ վրայ չէ որ սոսկալի և խորհրդամածուկ արկածներ կը պատմուի , Ասպրյոս-Վորուք կոչուողն էս չեմ :

Այս խօսքերուն վրայ , որք կրնային իւր մտացը մէջ զարհու-

րելի յիշատակներ զարթուցանել, այրին սչրանօք լի բուռն շարժմամբ մը Փոթորիկ նաւապետին քթին քնքուշպոնոք մը զարկաւ, նշանայիցոյց աուաւ անոր քովի սենեկին դուռը, իմացընելու համար թէ ձայնը լսող կրնայ ըլլալ, և դէմքը խոժոռելով ըսաւ .

— Էստիցոյցօր հիմա մեռած մարդոց խօսքն ընելը :

— Կորուսէ՛, ճիւղալ, դուն ալ, ըսաւ նաւապետը քրքիջբառօնալով, բայց խղճիկ խայթերը, աիկին :

— Իւրաքանչիւր խղճի խայթիս համար մէյմէկ համբոյր աուր ինձ, և այս կրնայ . . . :

— Ստոնան հետս ըլլայ : Այս աստիճան ոճրագործ միայն կանայք կրնան ըլլալ . . . : Ա՛հ, սիրելիս, անունդ ալ ինչպէս յարմար է . . . կը սոսկայընես դիս . . . : Ճաշէ՞նք :

Անձէլ Բասի մը զարկաւ . խառնածին ազջիկը, որ նախընթաց խօսակցութիւնը լսած էր, ներս մտաւ : Սա ծիրանեղոյն շերտերով կնէ ըստած ճերմակ կառէ զգետս մը հաղած էր, թևերն ու սրունքներն արծաթէ օղամանեակներ ունէր :

— Մի՛րէթ, ծաղիկները շարեցի՛ր մէջը, ըսաւ Կապոյտ-Վօրուքը :

— Ա՛յ, աիրուհիս :

— Մե՛զ մտիկ կ'ընէիր :

— Ո՛չ, աիրուհիս :

— Սակայն հոյ չէ ինձ համար . . . կը խօսիմ, որպէս զժիմանան . . . : Ընթրիքնիս բերել աուր, Մի՛րէթ :

Ապա նաւապետին գառնալով .

— Ի՞նչ գինի կ'ուզես :

— Քսէրէսի գինի, բայց սառով պողեցուցած . կամքս այսպէս ուղեց :

— Մի՛րէթ պահ մը դուրս ելաւ, և իսկոյն վերադարձաւ սեղանը պատրաստելու համար :

— Մնայ որ, ըսաւ Փոթորիկ, մտոյցայ ձեզի խիստ մեծ գէտք մը իմացընելու .

— Ի՞նչ, ողորմած հողիներէս մի՛ն է որ կը վերադառնայ :

— Շիտակը, անոր պէս բան մը :

— Ի՞նչ կ'ըսես . . . : Ա՛հ, պարոն Յակօբ, պարոն Յակօբ, դէշ կատակներ չեմ ուզեր, ըսաւ Անձէլ սարսփահար գեմք մը առնելով :

— Ո՛չ, ոչ հանդուցեալ մ'է, ոչ ուրուական մը, այլ կենդանի հետամտ մը որ ամուսինդ ըլլալ կ'ուզէ :

— Ինձ հետ ամուսնանա՞լ կ'ուզէ :

— Այո՛ :

— Ա՛հ, թշուառականը, կեանքն ձանձրացի՛ր է արդեօք, դոչեց Անձէլ քրքիջ բառնալով :

Մի՛րէթ այս խօսքերը լսելուն պէս խաշ հանեց, աչքերն ուրիշ երկու Խափշուհիներու վրայէն շրամնելով, որք Վրաբացի ոսկեբանդակներով ծածկուած Պօհէմիայի շիշեր և չարոնի դեղեցիկ յախճապակիէ սկաւառակներ կը բերէին : Կապոյտ-Վօրուքը շարունակեց :

— Տարիածուս աստեղացի չէ՞ ուրեմն :

— Ստուգիւ, ո՛չ. վասն զի, սիրելիս, ունեցած բոլոր հարստութեանդ հակառակ, կը համարձակիմ պնդելու որ չորրորդ ամուսին մը չպիտի կրնաս գտնել, շնորհիւ սատանայական համբաւոյդ :

— Ուրեմն նր ծակէն ելաւ այդ մարդը, սիրելի Յակօբս :

— Գաղղիայէն կու գայ :

— Գաղղիայէն . . . Գաղղիայէն կու գայ ինձ հետ ամուսնանալու համար . չա՛ր սատանայ :

— Անձէլ, գիտես որ հոյհոյութիւն չեմ սիրեր, ըսաւ Խափշիկը ծիծաղաշարժ ըջուրեամբ մը :

— Ներեցէ՛ք, պարոն Փոթորիկ, ըսաւ մանկամարդ կինը կեղծաւոր գէմքով մը աչքերը խոնարհեցընելով : Այս բացազանշութիւնը կը նշանակէ թէ աուսած լուրդ շատ զարմանալի թուեցաւ ինձ . . . : Ա՛րեւի թէ համբաւս սկսած է մինչև Խորպա համիլ :

— Այդ անապարծութիւնը մի ունենար, սիրելիս : Այն բաղլախնդիրը Լէւզնի նաւուն մէջ խօսքդ լսեր է, և երբ քու հարստութեանցդ հաշիւն ընելու ելեր են, սիրահարեր է, բայց խնդի պէս սիրահարեր է . . . քեզ . . . կը յուսամ որ այս բանը կրնայ գոռոզութիւնդ քիչ մը կտարել :

— Անտոն թր. բայց ո՞վ կ'ըլլայ այդ . . . Յակոբ :

— Քրուսթիյաք ասպետը :

— Ի՞նչպէս :

— Քրուսթիյաք ասպետը :

— Այդպէս կը կոչուի իմ հետամուտս . . . :

Եւ Անժէլ սկսաւ խնդալէն մարիլ, նոյնպէս Խափշիին ալ սկսաւ խնդալ :

Հազիւ կը հանգարտէին, Միրէթ ներս մտաւ, որուն ետեէն կու դային ուրիշ երկու խառնածին աղջիկներ ոսկեղօծ արծաթէ ամաններով շահուած սեղան մը բերելով : Երկու գերիները սեղանը բազմոյն մօտ վար դրին, նուապետը ելաւ աթու մ'առաւ, մինչպէս Անժէլ բազմոյնն եղբորը ձեռքի մըս կ'իւրեւ կերակուրներուն վրան կը բանար և անօթի կտտուի մը շարժումներով և զէմքով աչքերը սեղանին ամեն կողմը կը պարտցընէր :

— Անօթի ես, Յակոբ . . . ես ահա զազանի մը պէս կ'ուտեմ, քսաւ Անժէլ :

Եւ անշուշտ այս խօսքին ճշմարտութիւնը հաստատելու համար, իւր բուռնի նման շրթունքները կէս մը բացաւ, երկու շարք զեղեցիկ ատամնայր ցայց սուսա զըր երկու անդամ կափկափեց :

— Անժէլ, սիրելիս, դու իրաւ անկիրթ մեծցած ես եղեր, քսաւ նաւապետը խաղի ապախախ հլախով եփած և ախորժելի հոտով ոսկեձկան կտոր մը հրամայեցնելով անոր :

— Փոթորիկ նաւապետ, ձեր յանդիմանութիւնները լսելու համար չէ որ զձեզ սեղանս կ'առնեմ, քսաւ Անժէլ զէմքն աննշմարելի կերպով թթուեցընելով : Յետոյ ձուկը լափելով և հացը թուշունի նման կտցելով յարեց :

— Այնպէս չէ, Միրէթ, եթէ զիս սաստէ, սեղանս չեմ ընդունիր զինքը :

— Այո՛, տիրուհիս, քսաւ Միրէթ :

— Եւ անոր տեղը ցլորսը կ'ընդունիմ :

— Այո՛, տիրուհիս :

— Կամ Եուամալէն, Քարայիպը :

— Այո՛, տիրուհիս :

— Կ'իմանա՞ք, պարոն, քսաւ Անժէլ :

— Ինչպէս կ'ուզէք այնպէս ըրէք, սիրելիս, զիտէք որ ես նախանձուտ մէկը չեմ. գեղեցիկութիւնը արեղական կը նմանի՞, անոր լոյսն ամենուն համար է :

— Քանի որ նախանձուտ չէք, կը ներեմ : Սա առջևինէդ քիչ մը սուր ինձ : Ինչ է այն, Միրէթ :

— Հաւաքի իւղով տապկած կէքի :

— Այդ ի՞նչն ալ լորս նարգի իւղէն վար չմտար, քսաւ Փոթորիկ, բայց տապկէնն ետե տաք տաք լեմոն քամելու է վըրան :

— Որկրամուլ քեզի . . . Բայց սա զիս առնողը, մոռցայ : Միրէթ, զինի մը տուր :

Փոթորիկ, թէև ծովասպատակ մը, գերիէն առաջ շարժելով Անժէլի գաւաթը Քսէրէսի գինի լեցուց :

— Քեզ սիրելուս համար կ'իմեմ այս գինին, ինչու որ Գաղզիոյ գինիները աւելի կը սիրեմ :

Եւ Կապոյտ-Մօրու ք քաջութեան ք երեք մատի չափ Քսէրէսի գինի խոնց որ իւր վարդա այն շրթերուն և կապոյտ աչքերուն նոր փայլ մ'այ տուաւ, և զիրուկ այտերը կարմրուցուց :

— Բայց սա զիս առնողը . . . զիս առնողը, կրկնեց նա, Ինչպէս մարդ է : Շնորհքով մէկն է, միսներուն քաջ երթալու արժանի է . . . :

Միրէթ թէև կոյր հաղանդութեան դատասարտուած, իւր տիրուհւոյ խօսքերու լսած ատեն չկրպա իւր սարսուռը բռնել, թէպէտ խեղճ գերին այսպիսի զարշէլի կատակաբանութիւններ, 11

և անշուշտ ասկէ աւելի գէշերը լսելու վարժուած էր :

— Ի՞նչ եղար, Մի՛րէթ :

— Աչինչ, ամբողջիս :

— Ի՞նչպէս ոչինչ . . . բան մ'եղար դու :

— Ա՛չ, ամբողջիս :

— Թերևս շես ուզեր նորէն ամուսնանալս . . . : Ա՛յն աշտո չտեսներ, հոգ մի՛ ըներ, զմ'աւսիս :

Ապա Փոթորիկ նաւասէտին դառնալով .

— Ի՞նչ ասպետ ըսիր :

— Քրուսթիյար ասպետ :

— Տեսա՞ր զինքը :

— Ա՛չ, բայց երբ իւր դիտաւորութիւնն իմացայ, և տեսայ որ հայր Արիֆօնի յորդորանացը հակառակ ամեն բան աչքն առեր է մինչև հոս դալու համար, Եռամալէ Գարայիպին աղաչեցի, ըսաւ Փոթորիկ տարօրինակ կերպով մը Ամէլի երեսը նայելով, որ անոր փոքրիկ ազգարարութիւն մ'ուզէ որպէս զի իւր գիտումներէն հրաժարելու ստիպուի :

— Բայց ինձ չիմացուցած այսպիսի հրաման մը տալ կ'ըլլայ, պարոն : Թերևս ես չպիտի մերժէի այդ հետամուտը : Ասան զի Քրուսթիյար ըսածդ Կասթօն մ'ըլլալու է, և ես երբէք Կասթօնի հետ ամուսնացած չեմ :

— Օ՛, աշխարհիս ամենէն պոռոտախօս մէկ Կասթօնն է, այսու հանդերձ դէմք մը՝ զոր կարելի չէ երեակայել, յանդգնութիւն մը՝ որ լսուած բան չէ . սակայն բաւական քաջասիրտ :

— Իսկ Եռամալէի ազգարարութիւնը, հարցուց Ամէլ :

— Արգիւնք մը չիրցաւ ունենալ, այն պարծուկին անդրդուելի հողոյն վրայէն սահեցաւ ինչպէս գնտակը կոկորդիլոսին թեփերուն վրայէն կը սահի : Այս ատու կանուխ ճամբայ ելաւ քաջութեամբ անտառին մէջէն անցնելով, մետաքէ կարմիր գուլպաներով, թուրը մէջքը, և ձեռքն ալ ձող մը օձերը վանելու համար : Հիմա տակալին անտառին մէջ ըլլալու է, վասն զի Գիւարնակ-Բլուրին ճամբան ամեն մարդ չպիտի :

— Յակոբ, միտքս բան մ'ինկաւ, դուցեց այրին ուրախութեամբ, հոս բերել տանք զայն, կ'ըբօսնուէք . . . կը շարձրկենք զինքը : Ա՛հ, իմ գանձերս և ոչ թէ ինձ սիրահարեր է . . . : Ե՛մ հ, զիս առնել կ'ուզէ այդ թափառայած ասպետը : Տեսնենք ուրեմն . . . : Բայց առաջագործութիւնս հաճոյ չթուեցաւ քեզ, Յակոբ : Չես խնդար . ի՞նչ եղար . . . : Դախ և առաջ, որոնք, դիտէք որ ուզածս պիտի ըլլայ, այդ Կասթօնը կ'ուզեմ որ զբօսնուի : Եթէ օձերը խայթած կամ վագրակատուները կերած չեն զինքը, պէտք է որ վաղը հոս քովս դառուի . . . : Աւագը նաւ կընստիս . . . Գարայիպին կամ Հոգեկորդին կ'ըսես որ ինձ բերեն զայն :

Փոթորիկ փոխանակ Կասթոյտ-Վօրուքին ուրախութեամբ մասնակցելու ըստ իւր սովորութեան, ծանր կերպարանք մ'առած կարծես խորունկ խորունկ կը մտածէր :

— Յակոբ, Յակոբ . . . չի՞ս լսեր, դուցեց Ամէլ անհամբերութեամբ և ոտքը դետինը զարնելով : Կասթօնը կ'ուզեմ . անպատճառ կ'ուզեմ :

Խափշիկը չարտասխանեց, իւր աջ ձեռքին ցուցամատովը դիտէն վեր շրջանակ մը դժեց, և մանկամարդ կնոջերեսը նայեցաւ այնպիսի դէմքով մը որմէ կ'երևեր թէ բան մ'ըսել կ'ուզէր : Այնը հասկըցաւ այս խորհրդաւոր նշանը : Յանկարծ տխրութիւնն ու երկիւզը պատեցին իւր դէմքը . իսկոյն սեղեն ելնելով Խափշիկին քով վաղեց, և ծունցի վրայ գալով սրտատուչ ձայնով մ'աղաղակեց .

— Իրաւունք ունիս, շատ իրաւունք ունիս . . . յիմարութիւն մ'էր մտաբերածս, հասկըցայ ի՞նչ ըսել ուզելի :

— Ե՛լ, հանգարտէ՛, Ամէլ, ըսաւ Խափշիկը : Չեմ կարծեր որ վախցուելու մարդ մ'ըլլայ այն, բայց վերջապէս օտարական մ'է . . . կրնայ ըլլալ որ Անգղիայէն և Գաղղիոյէն եկած ըլլայ, և . . . :

— Դարձեալ կ'ըսեմ, յիմարութիւն ըրի . . . կատակ ըրի, սերելիք իմ Յակոբս . . . մուցայ ինչ որ երբէք մոռնալու չէի :

• • սոսկալի բան է այս :

Եւ մանկամարդ կնոջ գեղեցիկ աչքերն արտասուօք լեցուեցան, զլուխը խնարհեցուց. Խափշիին ձեռքը բռնեց որուն վրայ քանի մը վայրկեան արտասուեց լոկն : Փութորիկ գորովանօք համբուրեց Անժէլի ճակատն ու մազերը, և կաթոպին ձայնով մ'ըսաւ անոր .

— Ա՛րչափ կը ջարխմայս դժնդակ յիշատակները զարթուցանելու համար, բան մը խօսելու չ'ի քեզ, ապահով ըլլալու էի թէ այն ապուշն իբրև խաղալիկ քեզ բերելուս մէջ ամենևին վտանգ մը չկար . . . և այն ատեն . . .

— Յակոբ, բարեկամս, գոչեց ախրութեամբ Անժէլ Խափշիկին խօսքն ընդմիջելով, տարփածուդ իմ, ինչ կ'ըսես, սղայական հաճոյքի մը համար վտանգի ենթարկել . . . աշխարհիս վրայ ինձ համար ամենէն սիրելի բանը :

— Բայց հանդարտե՛ կ'ըսեմ քեզ, հանդարտ!՝, ըսաւ Խափշիկ զայն վերջընելով և քովը նստեցընելով, մի՛ վախճար, հայր Արիֆօն սեղեկութիւն ստացաւ այն կասքօնին վրայօք, ծաղրելի մէկը կ'երևի . . . ա ելի սպահով ըլլալու համար վաղը Մտքուպա կ'երթամ և իրեն հետ անոր վրայօք կ'խօսիմ, և որովհետև Հոգեկորզն այն կողմը որսի սիտի ելնէ, անոր ալ կ'ըսեմ որ գտնէ այն թշուառականը անտասին մէջ, ուր անշուշտ ճամբան կորսընցուցած ըլլալու է : Եթէ վտանգաւոր անձ մ'է, ըսաւ Խափշիկը Անժէլին նշան մ'ընելով, ինչու որ գերիններն հոն էին և ընթրեաց վախճանին կ'ըստատին, եթէ վտանգաւոր անձ մ'է, ցլորը կ'ընայ զմեզ անկէ աղատել և զքեզ ճանաչելու համար ունեցած տենչը բժշկել : Իսկ եթէ վախցուելու մէկը չէ . . . քանի որ զբօսանք չունիս հոս . . . կ'առնէ քեզի կ'բերէ զայն :

— Ա՛չ, ո՛չ, չեմ ուզեր . . . ըսաւ Անժէլ : Ինչաւ տխուր մտածումներ սկսան միտքս պաշարել, հոգերս երևան ելան :

Անժէլերը պեսաւ որ Խափշիին այլևս բան չէր ուտեր, տնդէն ելաւ . ծովասպատակն ալ ելաւ և ըսաւ անոր .

— Ապահով եղիր, Անժէլ, վախճալու բան չկայ . . . Եկ՛ուր, պարտեզ երթանք, շատ գեղեցիկ դիշեր մ'է, լուսինը խիստ պայծառ . . . Ըսէ՛ Միրէթին որ վինս բերէ, այդ դառն մտածումներդ մոռցընելու համար քու սիրած Ակովտական երգերդ պիտի երգեմ քեզ :

Խափշիին այս խօսքերն ըսելէն յետոյ մէկ ձեռքով Անժէլը մէջքէն գրկեց և մի քանի ոտք սանդուղէ մը վար լջաւ ուրկէ պարտեզ կ'երթուէր : Այս միջոցին կապույտ-Մօրուքն իւր գերիին ըսաւ .

— Միրէթ, վիճը պարտեզը բեր, պառկելու սենեկիս սպիտակ կճեաց կանթեղը վառէ՛ . . . Գեզի սէտք չպիտի ունենամ . . . Զմոռնաս ըսել Բօրային և երկու խառնածին աղախիններուն թէ վաղը սպասուարութեան կարգն իրենցն է . . . :

Ետոյ աներևոյթ եղաւ, Խափշիին թեկն կրթնած : Անժէլը այս վերջին պատուէրին պատճառն այն էր որ վերջին անգամայրի մնալէն ի վեր իւր գերիններուն երեքական օր փոխն ի փոխը ծառայութիւն ընել կու տար :

Միրէթ ոսկում և ստտափով գրտաբալ խիստ գեղեցիկ վին մը բերաւ պարտեզ : Պահ մը ետքը ծովասպատակը շնորհալի կերպով մը սկսաւ գեղգեղել այն տաղերէն մի քանին զոր թաղաւորութեան կուսակից եղող Ակովտացի ցեղայեաները կրտիւնէին երգել Բրօնվիլի կառավարութեան ատենը : Խափշիին ձայնը միանդամայն քաղցր, գոգրջուն և սրտաշարժ էր : Միրէթ և երկու գերինները պահ մը հիացմամբ ունկնդիր եղան : Երկին վերջերը հասած ատեն ծովասպատակին ձայնը սկսաւ փոճկիլ, կարծես աչքերն ալ արտասուօք լցուեցան . . . և երգերը դադարեցան :

Միրէթ կապույտ-Մօրուքին սենեակը գնաց ուխտակ կճեաց գունտի մը մէջ գրտած կանթեղը վառելու համար, այս գունտը մեղմ և դքողեալ լոյս մը կը սփռէր բոլոր առարկայից վրայ : Սենեակը ճիւղակի վրայ ծաղիկ բանուած Հեղեանտանի կերպասով շտկուած էր, սարդի ոտայիքի հիւստածքով քի հեղեայ սրակապան մը կը պարփակէր ոսկեղօծ փայտեայ մեծ անկողին մը որուն

ղլխուն կողմը հայելիէ կը բազկանար, և կարծես թե՛ թե մտա-
խուզի մը մջէն կ'երևէր:

Միքէթ իւր տիրուհոյն հրամանները կատարելէ ետև խոհե-
մութեամբ ետ քաշուեցաւ, և շարալից ժպիտով մը երկու դերձ-
ներուն ըսաւ:

— Միքէթ կանթեղը կը վառէ նաւասպետին համար . . . Բո-
րա՛ցըրսին համար . . . և Նաուն՝ Գարայիտին համար . . . :

Երկու սրաւա գերիները, զլուինին երեքցոյցին Միքէթին
միտքը հասկընալով, և երեքն ալ դուրս ելան զգուշութեամբ զո-
ցեւով և սյարղունակելով այն ամեն դռներն որոցմէ արտաքին շէն-
քերէն անցնելով Ասպոյշա-Մօրուքին մասնաւոր տունը կ'երթուէր:

Գ Լ Ո Ւ Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ

Գ Ի Է Լ Ի Բ

Քրուսթիյար ասպետը թողուցինք. երբ նա անտառին խորերը
կը յառաջանար և մէջի բոլոր կենդանիները միաձայն կ'աղաղակե-
ին:

Այս աղմուկէն պահ մը զլուխը թմրած, Կասթօնն արիւ-
թեամբ ճամբան շարունակեց միշտ հիւսիսի կողմը բռնելով,
գէթ որչափ որ կրնար իւր քիչ մը զիտցած աստղաբաշխութեան
շնորհիւր: Ինչպէս որ հայր Կրիֆօն ըսած էր իրեն, անտառին
մէջ բնաւ ճամբայ մը չկար բացուած. բոյսերու կոյտերով,
բարձր խոտերով, պատատուկներով, ծառի կոճկերով, խիտ մա-
ցառներով զեանին երեսը խճողուած էր. ծառերն այնքան խիտ
էին որ օդը, լոյսը և արևը զժուարութեամբ կը թափանցէին այն

սաղարթեայ թանձրախիտ կամարներուն ներքև, ուր դրեթէ հեղ-
ձամղձուկ ջերմ խոնաւութիւն մը կը տիրէր. այս խոնաւութիւնը՝
բաւական թանձրութեամբ դեանին երեսը ծածկող բուսարքեր հո-
ղին խոտրմանէն յառաջ կու գար:

Այս կլիմային անուշահոտ ծաղիկներն իրենց բարկ հոտերու-
վը սոյն նեղիչ մթնալոբալը կը լեցընէին. ուստի ասպետը տեսակ
մը գինովութիւն և ծանրութիւն կ'զգար. առած քայլերը շատ
կանոնաւոր չէին, զլուխը ծանրացեր էր. շուրջը պատող աւար-
կաններն աչքին չէին երևեր: Այլ ևս չէր զարմանար անտառին
թերաստուերին մէջ տարածուող այն սաղարթաղուարձ սիւնաշարին
վրայ որուն ծայրը չէր տեսնուեր: Անտաքերը ակնարկ մը կը
ձգէր հրացայա և գայնղոյն փետուրներով երկայնագէտ և խոշոր
թութակներուն, արոքիղմաններուն վրայ, որք հաղարումէկ ցնծու-
թեան աղաղակներ արձակելով ոսկե թև որդերը կը կոտէին, կամ
հնդկաձուռին համեմաւոր մրդիկները կը մանրէին: Փասիփլօրի գիւ-
րաթեք շամփրակներէն օրուող կամ ծառէ ծառ յատկող կապիկնե-
րուն ոստուկները հաղիւ կրնային ժպիտ մը փրցունել իրմէ: Բո-
լորովին մտազբաղ, մի միայն իւր վտանգաւոր ուղեորութեան
վախճանին վրայ կրնար մտածել . . . : Կեկքը միտքը միայն
Ասպոյշա-Մօրուքին և անոր զանձերուն վրայ էր:

Քանի մը ժամ քաշէլէ ետև սևաւ որ մետաքէ գուլպանե-
րով անտառի մը մջէն անցնիլը զժուար բան էր: Տատասկա-
թղի փշալից մեծ ստո մը իւր բաձկոնին կառչելով պատուեր էր
զայն. տարատն ալ շատ նոր չէր մնայեր. քանի անգամ որ պա-
տաղիճներն իւր երկայն արին փաթթուելով յառաջանալու ար-
դեւք կ'ըլլային, ասպետը ետին կը գտնար իբր թէ զինքը կե-
ցընելու համարձակողը պատժելու համար: Կամ ըստ զիպաց,
կամ ձեռքի ձողովը մայաուններն անպապար ձեծելուն շնորհիւ,
ասպետն օձի չղատահեցաւ:

Շատ յողնած ըլլալով, կէսօրուան ատենները կանգ առաւ,
քանի մը հատ ապամաթուղ ժողվեց, և յամ ծառի մը վրայ կե-
լաւ հանդիստ նախաձաշիկ մ'ընելու համար: Զարմայմամբ սե-

սաւ որ այս ծառին տերեւներն եղջիւրի ձև դալարուած ըլլալով,
յստակ, պաղուկ և անոյշ ջրով լցուած էին. ասպետն այս ջրէն
մի քանի եղջիւր խմեց. յետոյ աւելցած աղամաթուղերը զբարձր
զնելով սկսաւ ճամբան շարունակել:

Ըստ իր կարծեաց, չորս փարսախի չափ ճամբայ քալած և
Գիւարնակ-Բլուրին մտակցած էր: Ասպետին կարծիքը թէև ը-
րած ճամբուն նկատմամբ ճիշդ էր, բայց դժբաղդարար, բոնած
ուղլութեան նկատմամբ շատ ճիշդ չէր: Հետեւաբար, կէսօրին
անտառը մտած ժամանակէն քիչ մ'աւելի հեռացած էր Գիւա-
րնակ-Բլուրէն:

Արեգակը չկորսնցնելու համար (որ թանձր տերեւերուն
մէջէն հազու կը տեսնուէր) պէտք էր աչքերը միշտ դէպ ի եր-
կինք բարձրացուցած ըլլալ: Բայց ճամբան անոխ էր, և միշտ
պէտք էր օձերուն ուղլութիւն ընել, ուստի ասպետը միանգա-
մայն երկինքը և գետինը նայելու ստիպեալ ըլլալով քիչ մը սխա-
լեր էր բռնած ուղլութեանը մէջ: Սակայն և այնպէս, որովհե-
տե իւր հաշիւներուն մէջ մանրերկրորդի մը չափ անգամ սխալած
ըլլալ բնաւ չէր կրնար մտքէն անցնել, սիրա առաւ, գրեթէ
վշտահ իւր արշաւանաց նպատակն հասնելու: Երեկոյեան ժամը
էրեքին տանները սկսաւ կասկածիլ թէ քանի կը մտենար, Գիւա-
րնակ-Բլուրին, նա իրմէ կը հեռանար: Քրոսթիյաք շատ յոյնած
էր, բայց զիշերն անտառին մէջ անցնելու գաղափարը երկխղ կը
սլաւաճուէր իրեն, քաշելով, քաշելով, վերջապէս հասաւ երկու
ժայռերուն մշտնադր բացուած խորունկ փոսի մը եզերքը:

— Ահա, վերջապէս եկայ Գիւարնակ-Բլուրը, գոչեց լա-
ղեայ զլեարկիմն ինքզինք հողմահարելով: Ինձ պնդէս կը թուի
թէ այս տեղերը գիտեմ, թէև բնաւ եկած չեմ: Սակայն չէի
կրնար ճամբան կորսնցնել քանի որ սէրը բնեռացոյց ունիմ
ինձ. այս կերպով մարդ կրնայ մինչև հակամտեայ երթալ առանց
մազի չափ խոտորելու: Ըստ բնական բան մ'է այս, սիրտս
դէպ ի ոսկին և ի գեղեցկութիւն կը դառնայ, ինչպէս մազնիսը
դէպ ի հիւսիս. վասն զի քանի որ Ասպետ-Վորուքը հարուստ

է, հարկաւ գեղեցիկ ալ է. ասոնցմէ դատ կին մը որ այս աս-
տիճան լեկտեթեալ երեք ամուսնոց զուլոր կերած է, ըսելէ
որ փոփ խոթիւնը կը սիրէ. հեռեւարար ես իրեն համար նոր
սպառու մը պիտի բլլամ. . . : Եւ ինչ մտաւ: Մնաց որ այն ե-
րեք ուղորմած հոգիներն արժանի էին իրենց զխոն եկածին,
քանի որ տեղի կու տան ինձ: Ասպետ-Վորուքին գեղեցկութեա-
նը մասին զիս հաստատուն այն է որ խիստ գեղեցիկ կին մը մի-
այն կրնայ համարձա ի այ օրինակ ան ազգութիւններ գործելու,
ամուսնական կասն այսօր ի ի խա ելաւ ալա, քակելու: Հիմա
պիտի տեսնեմ զի՞նքը. հաճելի պիտի ըլլամ իրեն և նա ինձմէ պի-
տի հրապարտի: Ինձ կին, մտքէն անգամ չանցնիր, որ իրեն
յաղթողը մինչև իւր գուռը հասած է: Բայց ինչու չէ. . .
գրաւ կը գնեմ որ իւր փորրիկ սրտին այս վայրկենիս ուժգին կը
արօրիէ: Երթալս կը գուշակէ, կ'զոյս, սպասածը պիտի տեսնէ,
պիտի շրանայ. . . երջանկութիւնը սիրոյ թեկնով իրեն կը դիմէ:

Ասպետն այս խօսքերն ըսելով իւր հագուստներն աչքէ ան-
ցուց և քիչ մ'անշնորհք վիճակի մէջ գտաւ զանոնք. գուլպաներն
որ ի սկզբան ծիրանեղջիւր ըլլալով, յետոյ գետնած վարդի գոյն
առած էին, անտառին մէջ ըրած ուղեորութիւնէն ի վեր հազար-
ուամէկ կամաչ գիծեր տանալով վազրաձիւ մորթ դարձեր էին.
բաճկոնն ալ պատտաւատուն վիճակի մը հասեր էր. բայց Ասպետը
բարձրաձայն սա խորհրդածութիւնն ըրաւ, որ թէպէտ շատ
պարկեշտ չէր, սակայն մոխրաւոր կար էր:

— Ինչ փոյթ: Ատշիկն աշխաց մէջէն գուռս ելած ատեն
բաճկոն չունէր, նոյնպէս ճշմարտութիւնն ալ հորէն ելած ատեն
քան մը հազած չէր: Արդ՝ քա ի որ գեղեցկութիւնն ու ճշմար-
տութիւնը կրնան առանց ք զի երևիլ, ինչու ուրեմն սէրը. . . :
Մնաց որ Ասպետ Վորուքը զիս հասկըցող կին մ'ըլլալու է:

Սիրտը բոլորովին հանդարտած, ասպետը փութացուց իւր
քայլերը. խոռոչին միւս կողմէն մաղբելով վեր ելաւ և ինքզինքն
անտառին աւելի մոթ և աւելի ծառախիտ մէկ կողմը գտաւ:
Եւր տեղն ուրիշ մ'ըլլար պիտի վճատը, բայց ընդհակառակն

Քրուսթիյաք գոչեց .

— Արդարև, Կապոյտ-Մօրուքը շատ խելացի կլին մ'է եղեր, որ իւր բնակարանն անտառին ամենէն թանձր և ամենէն ծածուկ կողմը հաստատեր է . վստահ եմ . . . այս ժայռերուն մէջ ոտք կոխելու տեղ չգտնելէս կը հասկընամ որ շատ մօտեցած եմ տանը . . . արդէն հասած կը համարիմ ինքզինքս . Կապոյտ-Մօրուք, ա՛հ, Կապոյտ-Մօրուք, վերջապէս օձիքդ ձեռքս անցուցի .

Ասպետն այս խելքին վրայ էր քանի որ լոյս էր, բայց մութ թը շուտ կոխեց, վասն զի արևադարձի կողմերը վերջալոյս չկայ .

Շատ չանցաւ, ասպետը դարմաջուամբ տեսաւ որ ծառերուն պարթններուն մէջէն անցնող նշոյլները կ'սկսէին տակաւ առ տակաւ նուազիլ, և նուազելով ուրուական երևոյթ մը կու տային անտառին . Քանի մը վայրկեան կէս խաւարի մը մէջ մնաց նա, տեղ տեղ արևուն, որ հնոցի նման կարմիր կ'երևէր, հրանշոյլ ցոլացմամբը լուսաորուած . Վասն զի, ինչպէս Անթիլեան կղզեաց մէջ սովորութիւն է ըսել, արևն ի հողմ կը մտնէ . վայրկեան մ'ալ բոլոր բոյսերը ծիրանի գոյն մ'առին . ասպետը կարծես կարմիր ապակիի մը մէջէն կը դիտէր բնութիւնը . այն թանձր անտառին մէջէն երկնից երևցող մասերը հրահալ լուայի կը նմանէին .

— Ճշմարիտ է, գոչեց ասպետը, չեմ սխալեր, դիւական բլուրին շատ մօտեցած եմ . այս ցոլացումն ապացոյց մ'է . Անշուշտ սանդարամետն այս ժամուս այցելութիւն կու տայ Կապոյտ-Մօրուքին, որ զայն ընդունելու համար իւր խոհանոցին բոլոր հնոյնները վառել տուեր է .

Տակաւ առ տակաւ երկնից հրատեսիլ կարմրութիւնը սկսաւ նախ դեղինի, յետոյ մանուշագոյնի դառնալ, որոց հուսկ ուրեմն յաջորդեց դիշերուան մութ կասպուտակը . Երբ խաւարը պատեց անտառը, անեկներու աղիողորմ ձիւները, բուերու աղէտաղոյծ դոջիւնները աղջամղջին վերադարձը ողջունեցին . Ծովուն սիւքը, որ միշտ արևուն մարը մտնելէն ետև կ'ենէ, ծառերուն

վրայէն անցաւ իբրև ահագին շունչ մը, բոլոր սերունդերը սարսուռեցան . Ամեն կողմէ սկսան այն հապարուակէ անորոշ, հեռաւոր և խուլ ձայները որք միայն գիշերը կը լսուին .

— Շիտակը, գիմանալու բան չէ այս, գոչեց ասպետը . Դիւարակ-Բլուրը համեմուտ գրեթէ հարիւր քայլ մնացած ատեն այսպէս բացօթեայ ըլլալու ստիպուիլ .

Քրուսթիյաք օձերէն վախնալով մտածեց որ ծառի մը վրայ ելնէ, ուստի մեծ մահակոն մը տեսնելով մօտեցաւ անոր, և ամեն կողմէն այն ծառին փաթթուած պատատուկներուն օգնութեամբը հասաւ ծառին այնպիսի մէկ տեղը ուր երկու մեծ ուտեր երկժանոյ ձև մ'առած էին . հոն բաւական հանդիստ ըլլալու չափ տեղաւորցաւ, սուրը ծունդերուն մէջ առաւ, և զրպանը պահած աղամաթուզերը հանելով սկսաւ երեկոյեան ճաշն ընել . Երբէք չլրեց այն սարսափներէն և ոչ մին զոր իւր տեղ ուրիշները, մինչև անգամ սրտոտ մարդիկ, այսպիսի վտանգաւոր դիրքի մը մէջ գտնուած ատեննին պիտի կրէին . Սակայն պէտք է գիտնալ որ անհնարին պարագաներու մէջ ասպետը սովոր էր զանազան պատճառաբանութիւններ ընելու . մերթ կը գոչէր .

— Բաղդն ինձ դեմ կը զայրանայ, լաւ ընտրութիւն կ'ընէ . . . գձուձ մտորը գործին չգար . Փոխանակ վասի մը, երկչոտի մը դիմելու, ի՞նչ կ'ընէ . Քրուսթիյաք ասպետը կը տեսնէ ըսելով . Ահա՛ ուզած մարդս, արժանի է նա ինձ դեմ մաքառելու .

Սոյն պարագային մէջ ասպետը նախախնամական ուրիշ կարգաբերութիւն մ'ալ տեսաւ, որ ոչ նուազ հաճելի էր իրեն .

— Երջանկութիւնս տարակուսելի չէ, ըսաւ ինքն իրեն, Կապոյտ-Մօրուքին գանձերը քիչ ատենէն իմս պիտի ըլլան, այս վերջին փորձանքն է զոր բաղբը կրելու տայ ինձ . անոր շնորհքը վայելելու համար պէտք չէ որ ասպետարիմ . . . տրտունջը վեհանձն մարդու գործ չէ . պէտք է համբերեմ, որպէս զի արժանի ըլլամ ինձ սպասող անդին վարձատրութեան .

Այս խորհրդածութեանց օգնութեամբն ասպետը քունին դեմ լալթական կերպով մաքառեցաւ . կը վախնար որ, եթէ քունը

տանէր, ծառէն վար կ'իջնար: վերջապէս շատ սրանչազատ մտա-
 ծեւով որ կապոյտ-Մօրուքին հասնելու համար թեթև արդեւքներ
 մնացած էին յաղթելու: Կը կարծէր թէ իւր քաջութեանը պիտի
 հաւնէր, և իւր անձնանուիրութիւնն անոր սիրտը պիտի շար-
 ժէր: Մերթ ինքզինքն ասպետական արիութեամբ վառեալ կարծե-
 լով, կը ցաւէր թէ մինչև այն ատեն զօրաւոր թշնամի մը չէր
 ունեցեր կռուելու, և միայն մացառներու, տատասխներու և ծա-
 ուի կռճղերու հետ մաքառեր էր: Սոյն միջոցին տարօրինակ
 շնկոց մը բաղպխնդրին ուշադրութիւնը գրաւեց, ականջ դրաւ և
 դռնէն:

— Այս ինչ է: Կարծես կատուններն եկեր իրենց զիշերային
 կռիւը կ'ընեն հոս: Աղէկ մտածեր եմ, քանի որ հոս այսչափ
 կատու կայ, տունը շատ մօտ ըլլալու է:

Քրուսթիլյաք կը սխալէր: Ասոնք ոչ թէ ընտանի, այլ վայրի
 կատուններ էին, և ասոնց չափ կատաղի վագրակատուններ տես-
 նուած չէր. իրենց դժուարային աղմուկը շարունակեցին: Զանոնք
 լռեցընելու համար ասպետը ձողն սուս և ծառին զարկաւ: Կա-
 տունները փոխանակ փախչելու աւելի մօտեցան սուր մօրեղին ճի-
 շերնին սաստկացընելով: Երկար ժամանակէ ի վեր այս կենդա-
 նիները խմբովին անտառաց մշջ կը պտըռակէին, որք իրենց մեծու-
 թեամբը, ուժովը և զիշախանձութեամբը Ամերիկեան յովազներէն
 շատ վար չէին մնար, ու յերու, այծերու և մինչև անգամ մա-
 տող երինջներու վրայ յարձակելով կերեր էին զանոնք:

Իրենց նուրը հոտառութեամբն ասպետը գտնելով, անոր բո-
 լորտիքը թափառող այս զիշատիչ զազաններուն ինչ չար դիտառ-
 րութիւն ունենալն ընթաց դին հասկրցրելու համար պ տք է
 Բիթլէր զնդապետին գտնուած քարայրը վերադառնալ: Արդէն
 գիտենք որ օձէն խայթուելով մտնող զձօնի դիակը բոլորովին գո-
 ցած էր այն տողերկրեայ անցքն ուրիշ միտն կարեւի էր քար-
 այրէն դուրս ելնել: Ապրապատունները գահաւանդին մշջ իջնե-
 լով ձօնի դիակին հետքը գտան. ի ս'զրան երկիսդիւ մօտեցան
 անոր, բայց յետոյ յանդգնութեամբ վրան ինկան և կերան զայն:

Գնդապետը լսեց ասոնց կատաղի ձայները, բայց ինչ ըլլային
 չկրցաւ հասկընալ. երբ առաւօտ եղաւ, այս կենդանեաց անյա-
 գութեանը շնորհիւ, Բիթլէրին դուրս ելնելն արգիւղ խոչընդ-
 ոտն բոլորովին անհետ եղած էր. այն նեղ անցքին մշջ ձօնի ու-
 կորները միայն մնացեր էին, և զնդապետը կրնար դիւրութեամբ
 տեղէն վերցընել զանոնք:

Այս սոսկալի խնձոյքէն ետև, որ վագրակատուններուն հա-
 մար խիստ նոր էր, ակտորժակնին աւելի զրգոտած քան թէ
 կշտացած ըլլալով, մարդու միտ ուտելու տենչերնին սաստկա-
 ցաւ. դահաւանդէն վեր ելնելով անտառը մտան, և հոն ասպե-
 տը գտնելով բոլորովին կատղեցան: Պահ մը վախերնուն կասե-
 ցան, բայց Քրուսթիլյաքի անշարժութենէն խրախուսեալ, մշջեր-
 նէն աներկիւղն և անօթին ծառն ի վեր շուրջուեցաւ, և Կապոնն
 իսկոյն իւր մօտը երկու փայլուն և կանաչագոյն խոշոր աչքեր
 տեսաւ, որք խաւարին մշջ կը շողային: Նոյն վայրկեանին իւր
 սրունքին շարաշար խածնուիլը զգաց և իսկոյն ոտքը քաշեց,
 բայց վագրակատուն բռնեց զայն իւր ճիրանները խորախոյն մխե-
 լով մտն մշջ, և խուլու կատաղի մռնչիւն մը հանեց, որ յար-
 ձակման նշանն եղաւ. յարձակողք ամեն կողմէն ծառն ի վեր
 մաղլցեցին, ասպետն իւր շուրջը բոցավառ աչքերէ զատ ուրիշ
 բան չտեսաւ, և մարմնոյն զսնազան կողմերէն մրանդամայն խած-
 նուիլն զգաց:

Այս յարձակումն սոյնքան յեղակարծ եղաւ, և յարձակողք այն-
 քան տարօրինակ սեռակէ էին, որ Քրուսթիլյաք, թիւ քաջա-
 սիրտ, պահ մը բոլորովին սպառն մնաց. բայց կատուններուն
 խածատանքը, և մանաւանդ այսչափ զձուձ կենդանիներու հետ
 մաքառելու չափ նուաստանալու սրտմտութիւն զինքը կատղեցու-
 ցին:

Բռնեց կրնակէն ամենէն վայրագը (սրունքը խածնողը), և
 անոր ճիրանի հարուածներուն ջնայելով, ուժգնութեամբ ծառի
 մը կռճղին նետեց զայն և աղիքը դուրս թափեց: Կատուն սոս-
 կալի ճիշեր արձակեց: Ասպետը նոյն բանն ըրաւ ուրիշի մ'ալ

որ իւր կրնալը ցատկելով երեսն ուտելու կը պատրաստուէր : Կատուները վարանեցան . Բրուսթիյաք սուրը գաշոյնի մը պէս բռնելով մի քանին շամփրեց : — Տէ՛ր Աստուած , ըսաւ , արդեօք ի՞նչ պիտի ըսէր Կապոյտ-Մօրուքը , երբ իմանար թէ քիչ մնաց որ կտրիճն Բրուսթիյաք շտեմարանի մը մէջ կախուած հաւու մը պէս կերակուր պիտի ըլլար կատուներուն :

Գիշերուան մնացած մասն խաղաղութեամբ անցաւ , ասպետը քիչ մը մրափեց . առտուն կանուխ ծառէն վար իջաւ , և իւր զիշերային թշնամիներէն հինգը ոտքին տակ փռուած տեսաւ . արտորնօք հեռացաւ իւր շահատակութեանց ասպարէզէն զոր կարմրելով կը լիշէր , և Գիւարնակ-Բլուրին մօտեցած ըլլալուն համոզուած , ճամբայ ելաւ : Առջի օրուան պէս դարձեալ ի զուր քալելէ ետեւ , չեքաղցէ մը յառաջ եկած ստամբսի ձգտումներէն ասպետը գուշակեց որ կէսօր ըլլալու էր . կարելի չէ նկարագրել իւր զգացած ուրախութիւնը երբ սիւքը խորովածի մը պատուական հոտը բերաւ , բայց այնչափ քաղցր , այնչափ ազդու , այնչափ ախորժելի հաս մը , որ ասպետին բերնին ջուրերը վազեց : Քայլերը փութացուց , և այս անգամ իւր տառապանաց վախճանը հասած ըլլալուն բնաւ չտարակուսեցաւ : Սակայն և այնպէս ամենեւին չէնք չէր տեսներ . ուստի ի՞նչ մեկնութիւն կրնար տալ այս առանձնութեան մինչդեռ խորովածին անոյշ հոտերը հետզհետէ շասնալով իւր քիթն ի վեր կը բուրէին : Թեթեալ քայլ հասաւ առանց մէկէ մը տեսնուելու՝ անտառին մէկ բացօթեայ վայրը , ուր պահ մը կանգ առաւ . աչքին առջև պարզուած տեսարանն անոր ուշադրութիւնը գրաւելու արժանի տեսարան մ'էր :

Գ Լ Ո Ւ Խ Ց Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

Խ Ո Ւ Ե Ր Ա Ն Յ Լ Ո Ր Ս Ե Ց

Անտառին ծառախիտ մէկ տեղոյն մէջ երկայն քառակուսի ձևով բացօթեայ վայր մը կար . ասոր մէկ ծայրը կը բարձրանար առաջ մը , որ տեսակ մը հիւղէ , ոստերէ շինուած և արմաւնուոյ մը կոճղին յեցած , վրան ալ պիտի ելերկայն տերեւներով ծածկուած : Այս հիւղին մէջ , ուր մտնողներն արևուն ճառագայթներէն կրնային ազատ մնալ , տերեւներէ բաղկացեալ անկողնոյ մը վրայ ընկողմանած մարդ մը կար . ոտքին տակը քսանի չափ որսի շուններ պառկած կը քնանային : Այս շուները ձերմակ և նարնջագոյն պիտի ըլլային եթէ մորթերնին ծածկող արեան ներքև իրենց նախնական գոյնն անհետացած չըլլար : Որսի առատ բաժին մ'ունեցած ըլլալուն պատճառաւ գլուխին և լանջքերնին բոլորովին արիւնլուայ եղած էին :

Ասպետը չկրցաւ աղէկ մը տեսնել թարմ տերեւներէ շինուած անկողնոյն մէջ կէս մը պահուած մարդուն գէմքը : Աժուփային մօտ ծածկուած կրակ մը կար որուն վրայ յլորսաց ոճով կամայ կամայ մէկ տարեկան խոճկոր մը կ'եփէր : Երեակայէ՛ տեսակ մը կասկարայ , գետինը մտուած չորս ժանիքաւոր փայտերէ շինուած , որոց վրայ պահանգներ և պահանգներուն վրայ ալ մանր ձուլեր դրուած էին , ամենքն ալ դալար փայտէ : Խոճկորն իւր մորթովն ու սակովը ծածկուած , կրնալի վրայ դրուած էր , փորը բացուած և պարպուած . ոտքերը պատատուկներով իրարու կապուած էին , որպէս զի կրակին ջերմութենէն զիրքը չաւրուի : Կասկարան կը բարձրանար չորս ոտք երկայնութիւն և երեք ոտք լայնութիւն և խորութիւն ունեցող փոսի մը վրայ , որ հրահրած

ածուխով լցուած էր . խոճկորն այս կրակին հառասար ջերմու-
 թեամբ կամաց կամաց կեփուր : Կենդանոյն որովայնին խոռոչա-
 ւոր տեղը կիսով չափ լցուած էր լեմնի ջրով և ջարդած գարա-
 պղպեղով որք , տափէն յուլարար հալող ճարպին հետ խառնուե-
 լով տեսակ մը ներքին համեմ կը կաղմէին խիստ ախորժելի հո-
 տով :

Այս մեծ խորովածը գրեթէ եփած էր . մորթը կ'սկսէր
 կարմրիլ և ճաթիլ . համեմն մէջէն տեսնուող միւր վարդի գոյն մը
 առած էր : Ատէէ զատ դեղին և համուղ մտով տափերիւ հաս
 Էրմի խոշոր արմատներ մոխրին մէջ թաղուած կեփէին և անյշ
 հոտ մը կրտփէին : Ասիտին խելքը գլխէն դնայ . ախորժակէն
 մղուած՝ մացառները կտարտելով շրջափակին մէջ մտաւ . շուներէն
 մէկ երկուքն արթննալով սպառնալից գեմքով մը վրան վազեցին :
 Քնացող մարդը յա՛հարժ ելաւ . զարմանօք բարձրախիւր նայեցաւ
 մինչդեռ թոյր շուները զարհուրելի ահաաներնին ցուցնելով աս-
 պետը բզբանելու գիտաւորութիւն մ'ունենալին կը յայտնէին :
 Քրուսթիյաք ցլորս Հսդեկորգին աշկերտին պատմութիւնը յիշեց ,
 զոր իւր շուները լափեր էին . բոյց չլսեցաւ . սպառնալից
 շարժմամբ մը ձողը բարձրացոյց ըսելով .

— Արջերնի՛ց քաշուցէք , որջերնի՛ց :

Եւրոպական որսորդութենէն առնուած այս խօսքը բնաւ աչ-
 դեցութիւն չըրաւ շուներուն վրայ : ասոնք այն աստիճան սոյառ-
 նական դիրք մ'առին որ ասպետը ստիպուեցաւ ձողը մի քանի
 անգամ շուներուն իջեցնել : Աչքերնին կատաղութենէ կը վայելե-
 ին . Քրուսթիյաքի վրայ արձակելու կրպտարաստուէին երբ ցլորն
 ածուփայէն դուրս ելաւ , ձեռքը երկայն հրացանով մը , և կէն
 մը Թափշկերէն , կէս մը Գաղղիարէն գաւառական քարբառով մը
 դռնց .

— Ո՛վ է շուներուս գոյշողը : Ո՛վ ես գու՛ :

Ասպետը ձեռքը սուրին տարաւ արիարար և ցլորսին ըսաւ .

— Շուներդ զիս պիտի խածնեն , և ես ահա կը ձողկեմ դա-
 նոնք . . . : Ակուանին վրաս փորձել կ'ուզեն ինչպէս որ ես աչ

նոյնը պիտի ընէի եթէ այդ պատուական խոճկորէն կտորիկ մը
 մօտս ըլլար , ինչու որ երէկուրն էի վեր անտառին մէջ մոլորած
 եմ , և անօթի կը մեռնիմ . . . :

Յլորսը փոխանակ ասպետին պատասխանելու , ապէս մնացեր
 էր անսնելով այսպիսի այլանդակ հազուաուով մարդ մը , որ ձեռքը
 ձող մ'առած անտառներու մէջէ կ'անցնէր վարդապոյն մննաբոնայ
 գուրպաներով , մնուսէ թիկնոցով և բանուած կամարով : Միս
 կողմանէ՝ Քրուսթիյաք , թէև սովալլուկ , ոչ նոնաղ հետաքրքրու-
 թեամբ ցլորսը կրդիտէր : Այս որսորդը միջահասակ , բայց ժիր
 և ուժեղ էր . կարճ վարտիքէ մը և բաղէնի պէս ծածանող շա-
 պիկէ մը զատ ուրիշ բան հագած չէր : Եւ որովհետեւ ցլորսաց
 գլխաւոր առուտուրն էր իրենց որսացած ցուլերուն կամ վարապ-
 ներուն մորթը հանելով և միւր չորցընելով ծախել , այս մարդուն
 հագուստներն այնչափ արիւն ծծեր էին , որ կուպրի մէջ թաթ-
 խուած կ'երևէին , այնպսն սև և ձիգ էին : Յլորսը շապիկին
 վրայէն ցլու մորթէ գօտի մը կապած էր մէջքը : Գօտիէն կա-
 խուած էր բազմախորշ պատեան մը որ զանազան երկայնութեամբ
 և ձևերով գանտիներ կրպարունակէր , միս կեղմէն աչ կախուած
 էր վամփշտանոց մը :

Յլորսին սրունքները ծունկէն վար մերկ էին . ոտնամաններն
 առանց կարի և միակտուր : Յլորսը միշտ այսպէս կը շինէին զաւ-
 նոնք : Յուլի մը կամ մեծ վարաղի մը մորթը հանելէ ետև ,
 զուշուրթեամբ առջևի ոտքերէն միոյն մորթը , լանջքէն մինչև
 ծունդը , կը կտրէին կ'առնէին , այնպէս վար իջեցընելով զայն ինչ-
 պէս մէկը ոտքէն գուրպան հանած ատեն կ'ընէ . յետոյ զայն բո-
 լորովին ոսկորէն բաժնելէ ետև ոտքերնին այս գիւրաթեք և
 թարմկաշիին մէջ կ'անցընէին , այնպէս որ մեծ մատերնին գրեթէ
 կենդանոյն գուճը ծածկող տեղը կու գար : այսպէս հագնելէ ե-
 տև ոտքին ծայրէն դուրս ինկած մասը ջիղով մը կը կապէին և ա-
 ւելորդը կը կտրէին . յետոյ մորթին մնացած մասը վեր կը քաշէին
 մինչև սրունքներնուն կէսը և փոկով մը կը կապէին : Այս ոտնա-
 մանը չորնալով ոտքի ձև կ'առնէր , միշտ կալուղ և գիւրաթեք

կըմնար, խիստ երկար ատեն կը գիմանար, որմէ ոչ ջուր կ'անցնէր և ոչ օձերուն խայթուածքը:

Յլորսը, որ հետաքրքրութեամբ Գրուսթիյաքը կը զննէր, ելկայն և լայն բերանով մեծ հրացանի մը կը թնամ էր որ ցլորսի հրացան կը կոչուէր: այս զէնքերը Տիէփի և Սէն-Մալօյի մէջ կը շինուէին: Արտորգին դէմքը կոշտ էր և անսովոր երեւոյթ մը չունէր: Ղլուխը վարազի մորթէ գդակ մը դրած էր: երկայն և ջցուած մաղերով մօրուք մ'ունէր: նայուածքը խիստ կատաղէ էր: Գրուսթիյաք հաստատ ձայնով ըսաւ անոր.

— Ընկեր, արդեօք այդ խորովածէն կտոր մը կը շնորհէ՞ք սոգատանջ ագնուականի մը:

— Ե, ին խորովածն իմն չէ, ըսաւ ջլորսը:

— Ձերը չէ, ուրեմն որո՞նն է:

— Հողեկորդ վարպետինն է, սր կաշիի և մթած մսի համբարանոց մ'ունի Նհանգաց խորշին ծայրը:

— Ե, յի խորովածը Հողեկորդ վարպետինն է, դռչեց աստեալ: զարմանալով որ դիտուածը ղի՛քը Պապոյտ-Մօրուքին տարփածուներէն միոյն կը մտայնընէր, եթէ այս կնոջ վրայ եղած շարխօսութիւններն ստոյգ էին: Ե, յի խորովածը Հողեկորդինն է, կը կնեց անգամ մ'ալ Գրուսթիյաք . . . :

— Ե, յո՛, անորն է, սրա առաջանեց լակնական ոճով երկայն հրացան կրող մարդը:

Սոյն միջոցին հրացանի սլայթիւն մը լտոնցաւ որ ընդերկար թնաացուց անտառը:

— Վարպետը կու գայ, ըսաւ աշկերտը:

Հուններն անշուշտ հասկրցան իրենց տիրոջ մօտենալը, վսն զի ուրախութենէ ունալ սկսան և մացառներուն մէջէն առաջ նետուեցան ցլորսը դիմաւորելու համար: Աշկերտը զոր Վետրոս պիտի անուանենք, իմանալով իր տիրոջ վերադարձը, մեծ զանակներէն մին հանեց, խոճկորին մօտեցաւ, և զայն տամկեցընելու համար սկսաւ խորունկ ձեղքատել, առանց մորթը ֆրասելու, ապա թէ ոչ լեմոնի ջրին, դարապղպեղին և ճարպին առատ խառ-

նուրդը արագ խոճկորին փորը լցուած էր, դուրս պիտի վաղէր: Ճեղքերուն իւրաքանչիւրին մէջէն այնքան ակործելի հոտեր կը բուրէին, որ աստեան այս անուշիկ հոտերն առեւելով գրեթէ կը մոռնար Հողեկորդին ընդհուպ երեւիլը: Վերջապէս այս վերջինն երևեցաւ, հետն ալ իւր շուները որք իւր բուրոտիքը խօհրուած էին:

Հողեկորդ վարպետը բարձրահասակ էր և կորովի: Իւր ի բնէ սպիտակ գոյնն արեւն և անցուցած վայրենական կեանքէն սկսել էր, իւր թուխ և թանձր մօրուքը մինչև կուրծքը կ'իջնէր: Իւր դիմաց գիծերը կանոնաւոր, բայց ձիւ և կարծր էին: Չպետները, թէպէտ նուազ կցիր քան զիւր աշկերտինները, դրեթէ մի և նոյն ձևն ունէին: Անոր պէս իւր զօտիէն դանակներով լի պատեան մը կախուած էր: մի միայն սրունքները, փոխանակ կիսամերկ ըլլալու, վարազի կաշուով պատած և ջեղերով կապուած էին: չալաղուած կաշիէ խոշոր կօշիկներ հագած էր: Իւր Սպանիական լայնածիր գլխարկին անցուցած էր երկայնադէս թուխակի մէկ քանի փետուրներ: վերջապէս իւր երկայն հրացանին դաստապանն ու բերնի երկաթը փայտին կցող օշակն արձած էին: Այսչափ միայն էր Հողեկորդին և իւր աշկերտին հագուստներուն և զէնքերուն մէջ եղած տարբերութիւնը:

Անտառին բացօթեայ վայրը մտած ժամանակ հրացանը թեկն մէջ առած էր և անհոգ կերպով հաւփալ մը կրփետէր, զոր նոր զարկած էր: այս թուչունէն ուրիշ երեք հատ ալ զօտիէն կախուած էին: զանոնք Պետրոսին նետեց, որ սկսաւ զարմանալ յաջողակութեամբ և արագութեամբ փետեղ և փորերնին մաքրել: Այս հաւփալները, որոց մեծութիւնը կաքաւի չափ կար, սիրամարդի նման կ'ըր, նորբ և պարարտ էին: Պետրոս մաքրածին վիզն ու թաթիկները կը կտրէր և զայն եփելու համար կը նետէր այն թանձր և առատ համովին մէջ որով խոճկորին փորը լցուած էր: Հողեկորդ ալ իրենը փետելէ ետն անոր մէջը ձգեց: Պետրոս հարցուց անոր.

— Վարպետ, սանին բերանը դոցե՞մ:

— Գոցէ՛, ըսաւ վարպետը :

Պետրոս իսկոյն կտրեց այն պատաստուկները որք խոճկորին անդամները կարելի եղածին շտի իրարմէ հեռու բռնած էին, փորը բոլորովին փոցուեցաւ, և հաւփալներն սկսան եփիլ այս նորձե պտուկին մէջ : Արաւիրոյն պատրաստութեան միջոցին կարծես ցլորսը նշմարած չէր պստեալին ներկայութիւնը . սա գուռը դիրք մ'առած, ձեռքը սուրին դատապանին վրայ, կը պատրաստուէր սիգանօք պատասխանել իրեն ուղղուելիք հարցմանց, և թերևս ինքն հարցափորձել Հոգեկորը վարպետը : Այս վերջինն իւր փետած հաւփալին գլուխն ու թաթերը կտրելէ ետև հանդարտութեամբ դանակը սրբեց և պատենին մէջ դրաւ :

Յլորսին անտարբերութիւնը մեկնելու համար կ'ըսենք թէ շատ սովորական բան մ'էր քնակչայ՝ հետաքրքրութեամբ ցլորսներուն խոհարանը տեսնելու գալը : Յլորսը իրենց սովորութիւններովը քարայրայններուն շատ կը նմանէին : Անոնց պէս՝ իբրև հիւրասէր կը պարծենային, անոնց պէս՝ անօթի և ծարսու եղողին թոյլ կու տային իրենց սեղանին մասնակցելու . բայց քարայրայններուն սովորութեանը համաձայն, հրաւերն աւելորդ բան մը կը համարէին . կերակուրը պատրաստուելն ետև ուզողը կրնար ուտել : Հոգեկորը դօտին և հրացանը մէկ կողմն դնելէ յետոյ, ածուփային ներքև ընկողմանեցաւ, զով մնալու համար տերևներու մէջ պահուած օղիով լի դդումէ աման մը հանելով խմեց ճաշի պատրաստուելու համար :

Քրուսթիյաք մը և նոյն գուռը դիրքը բռնած կը կենար, ձեռքը սուրին դատապանին վրայ . բարկութենէն կրակ կտրեր էր, Հոգեկորսին իրեն նկատմամբ այս աստիճան անտարբերութիւնն անհանդուրժելի թնամանք կը համարէր : Արդեօք կապոյտ-Մօրուրը ծովասպառակ նաւապետին միջոցաւ ցլորսին պատուիրած էր թէ ասպետին պատահած ժամանակ այսպէս վարուի հէտը : Յլորսին անտարբերութիւնն իրական էր : Այս կէտերը տարբեր : Յլորսին անտարբերութիւնն իրական էր : Այս կէտերը տարբեր : Յլորսին անտարբերութիւնն իրական էր : Այս կէտերը տարբեր : Յլորսին անտարբերութիւնն իրական էր : Այս կէտերը տարբեր :

Թէ և յանդուպն, բայց չլիտէր թէ ինչ կերպով սկսի խօսակցութեան : Աւերջապէս, ճիշդ մ'ընելով ածուփային մօտեցաւ և ցլորսին ըսաւ .

— Ընկեր, կոյր ես :

— Պատասխանէ՛, Պետրոս, քեզի հետ կը խօսին, ըսաւ Հոգեկորը իւր աշկերտին անտարբեր կերպով :

— Ա՛յ . . . ձեզի՛ հետ կը խօսիմ՛, ըսաւ կատթօնը չլրնալով համբերել :

— Ա՛յ, ըսաւ ցլորսը :

— Ի՞նչպէս ոչ, գոչեց ասպետը :

— Ընկեր կ'ըսէք, ես ձեր ընկերը չեմ . աշկերտս կարելի է ըլլայ . . . :

— Ջարմանալի՛ բան :

— Ես ցլորսութեան վարպետ եմ, դուք չէք . միայն իմ որսորդ եղբայրներս կրնան ընկերներս ըլլալ, ըսաւ Հոգեկորը ընդմիջելով զՔրուսթիյաք :

— Արեմն ինչպէս պէտք է անուանել զձեզ որպէս զի պատասխան մ'ընդունելու պատիւն ունենանք, գոչեց ասպետը բարկութեամբ :

— Եթէ ինէ մորթ կամ միսած միս գնելու կու գաք, ինչպէս որ կ'ուզէք այնպէս անուանեցէ՛ք զիս . եթէ խոհարան մը տեսնելու կու գաք, զիտեղէ՛ք . . . եթէ անօթի էք, երբ խոճկորն եփի՛ կերէ՛ք :

— Այս մարդիկն իրօք տ'րան և վայրենի են, ըսաւ ասպետը մտքէն . ինչդուրսին մ'ըրած կ'ըլլամ եթէ իւր տմարդութենէն վշտանամ . սրդէն անօթի կը մեռնիմ, ճամբաս կորուսած եմ, այս անասունը կրնայ ուտելիք տալ ինձ . և եթէ վարպետութեամբ շարժելու ըլլամ, Դիւաբակ-Բլուրին ճամբան ալ կրնայ քոյց տալ . չղպչի՛ք իրեն :

Յետոյ Քրուսթիյաք՝ արիւնաթաթախ գլխաններով այս կէս բարբարոս մարդը լաւ մը զիտելով ուտելը բարձրացուց և ըսաւ ինքնիրեն .

— Ինչպէս կրնայ ըլլալ որ այսօրին վարազ մը կատարուի—Մօ-
թո՞քին պէս գեղեցիկ և պաշտելի կնոջ մը տարիածուն ըլլայ .
. . . Հիտակը, մարդ վարազ կը կտրի մտածելով :

Պետրոս տեսնելով որ խոճկորը պէտք եղածին չափ եփած է ,
տկուաւ փոթով սպասը գնելու . աժուփային ներքե սփռոցի տեղ
պալիզիէի լայն և դալարապեղ տերեւներ տարածեց գետինը . յետոյ
Կոնստանտինոպոլիս լայն տերեւ մը փրցուց , և եղբրքը չորս ծակ բանալով
պատաստուկ մ'անցուց և սեղմելով քսակի նման բան մը շինեց ու
բուն մէջ լեմններ քամեց , և յետոյ քարով տրորուած դարա-
պղպեղ և աղ լեցնելով իրար խառնեց և համեմ'մը շինեց . այս
համեմը շատ զօրաւոր էր . ցլորսներն ու ծովասպատակները շատ
կըզործածէին զայն : Համեմին դիմացը , ուրիշ տերեւի մը մէջ իկ-
նամբուած տունկին մաղմաղի մէջ եփած արմատները գրաւ . ա-
տոնց պատանը քիչ մ'այրած ըլլալով ճաթեր էր և սաթի նման
գեղին մանրին կը տեսնուէր :

Ասպետն անձիւթեամբ կ'սպասէր տեսնել թէ ինչ պիտի
խմեն , վասն զի ինքն ալ կըպապակէր . մէկ մ'ալաշկերտը ջինջ և
վարդագոյն հեղուկով մը լցուած գուշ մը բերաւ . այս հեղուկը
գինեհամ ցախի հիւթն էր որ այս ծառէն առատութեամբ կը վա-
զէ երբ խորունկ ճեղք մը բացուի վրան : Այս զով և առողջա-
բար բնակին շաքարով և ջրով խառնուած Պորտոյի թեթեւ գի-
նոյն համն ունի : Աշկերտը ձեռքի գուշը սփռոցի տեղ ծառայող
տերեւներուն վրայ գնելէ ետեւ , ծիրանոյ պտուղներով և ծաղիկ-
ներով լի ճիւղ մը կտրեց և զայն պալիզիէի տերեւներուն մէջտեղ
գետինը սոկեց իբր սեղանին մրգամանը :

— Այս վայրենիները կարծուածին չափ անբան չեն , ըսաւ
ինքնիրեն ասպետը : Ահա առիկ սեղան մը որուն բոլոր ծախքը
բնութիւնը կը քաշէ , և վստահ եմ որ ամենէն որկրամոլներն ալ
գոհ պիտի կրնայ ընել : Քրուսթիյաք սեղան նստելու ժամանակին
կ'սպասէր անհամբերութեամբ : Աերջապէս աշկերտը վարժ աչ-
քով մը խոճկորին փորը դիտելէ ետեւ ցլորսին ըսաւ .

— Աւարպետ , եփեցաւ :

— Ատենք , ըսաւ այս վերջինը :
Աշկերտը կաշնիէ կտրուած փայտէ պատառաքաղով մը նախ
հաւփալներուն մէկ հատը առնելով թարմ տերեւի մը վրայ գրաւ
և ցլորսին տուաւ . յետոյ իրեն համար ալ առնելով պատառաքաղը
խոճկորին փորը ձգեց : Ասպետը տեսնելով որ զինքը մտածող
չկայ , հաւփալ մ'ու արմատ մ'առնելով զնաց վարպետին և աշ-
կերտին մօտ նստաւ , և սկսաւ անոնց պէս ախորժակով ուտել :
Այս կերպով եփած հաւփալը շատ սքանչելի էր . իկնամները
գետնահինձորին ամենէն ընտիր տեսակին չափ համեղ էին : Երբ
հաւփալները ներս դրկեցին , Պետրոս գնաց թէ՛ իրեն և թէ՛
վարպետին համար խոճկորէն երկու երկայն և թանձրկեկ կտոր
կտրեց : Ասպետն ալ նոյնպէս ըրաւ և տեսաւ որ խիստ պատուա-
կան , սննդարար և պարարտ միս մ'էր . առիկ զատ համեմն ա-
նոր համն ու հոտն աւելցուցիւ էր :

Քրուսթիյաք մի քանի անգամ իւր սեղանակցաց պէս ցախի
հիւթով լցուած գուշն առնելով խմեց , և կերակուրը լմնցուց
վեց հատի չափ ծիրան ուտելով , որք խիստ պատուական հոտ մը
ունէին և Եւրոպայի ծիրաններէն շատ ընտիր էին : Յետոյ Պետ-
րոս օղիով լի գուշ մը բերաւ . վարպետը զայն առնելով խմեց և
աշկերտին տուաւ . նա ալ խմեց և ապա զուշութեամբ խցեց ա-
մանը , ի մեծ դժգոհութիւն ասպետին որ արդէն ձեռքը կ'երկըն-
ցընէր զայն ստնելու համար :

Այս բանը ցլորսներուն կողմանէ տմարդութիւն մը չէր հա-
մարուեր : Ասոնք ալ Քարայիպներուն պէս շատ կը զանազանէին
բնութեան պարզեաները , որք ձրի ըլլալով ամենուն էին , ստու-
կով զնուած բաներէն որք մասնաւորապէս իրենց արեւը կը վերա-
բերէին : Օղին , վառօղը , կապարը , վէնքերը , կաշին , վաճա-
ռուելու համար միսած որսի միսը վերջիններուն կարգէն էին .
ընդ հակառակն միրգերը , երէն , ձուկը հասարակաց կը համա-
րուէին : Սակայն և այնպէս ասպետը յօնքը պատեց ոչ այնչափ
որկրամոլութենէն որչափ հպարտութենէն : Մաղ մնաց որ աշկեր-
տին անբողաքաւարութեանը մասին տրտուել պիտի ընէր . բայց

մտածելով որ, ինչ որ ալ ըլլար, այսպիսի պատճառակա՛ն սեղան մը շնորհիւ Հոգեկորդ վարպետին գտած էր, և այս վերջինը միայն կրնար Դիւաքնակ-Բլուրին ճամբան դնել զինքը, զսպեց իւր բարկութիւնը, և ցլորսին ըսաւ զուարթ զինքը.

— Աւարպետ, գիտէ՞ք թէ ինչպէս լաւ կը մեծարէք ձեզի եկողը:

— Մարդ գտածը կրնայ ուտել, վարազներն ու ցուլերը տակաին պակաս չեն կղզոյն մէջ և մորթի առուտուրը աղէկ վիճակի մէջ է, ըսաւ ցլորսը ծխափողը լեցընելով:

Գ Լ Ո Ւ Ն Մ Ե Ճ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Հ Ո Գ Ե Կ Ո Ր Զ Ա Ա Ր Պ Ե Տ Բ

Ասպետը սրչափ կը դնէր Հոգեկորդ վարպետը, այնչափ կը զարմանար և չէր կրնար հաւատալ թէ այսպիսի կէս բարբարոս մարդ մը ինչպէս կրնար կապոյտ-Մօրուքին սիրելին ըլլալ: Զլորսը ծխափողը վառելէն ետեւ կրնակի վրայ պառկեցաւ, ձեռքերը գլխուն ներքեւ դրաւ, և ծխելով, աչքերն ածուփային ծածկոյթին յառած, մարտական մեծ գոհունակութեան մ'երեւութով ասպետին ըսաւ.

— Այդ կարմիր գուլպաներովիդ գահաւորակով եկաք հոս:

— Ո՛չ, բարեկամս, հետի եկայ, և մինչև անգամ գլխու վըրայ ալ կու գայի Անթիլեան կղզեաց ամենէն անուանիցլորսը տեսնելու համար, որուն անունը մինչև Եւրոպա հասած է:

— Եթէ մորթ կ'ուզէք, յարեց ցլորսը, երկստանեակ մը ցլու մորթ ունիմ այնքան գեղեցիկ, որ տեսնողը գոմէշի մորթ կը

կարծէ . . . : Ունիմ նաև շարք մը միած վարազի ապուխտ:

— Ո՛չ, ո՛չ, բարեկամս, ձեր համբարը, ձեր համբարը միայն զիս հոս բերաւ: Հինգ օր է որ Գաղղիայէն եկած եմ Լիւքօրն նստով. . . և առաջին այցելութիւնս ձեզ ըրի, կիանալով ձեր արժանիքը:

— Մտուցի՛ւ:

— Այնչափ ստոյգ սրչափ ստոյգ եմ որ անունս Քրուսթիյաք ասպետ է . . . վասն զի չէք նեղանար կարծեմ եթէ գիտնաք թէ ս'վ է ձեր զիմացինը: Անունս Քրուսթիյաք է . . . :

— Ինձ համար ամեն անուն մէկ է, բայց ի Քրուսթիյաք:

— Իսկ զարմացողը, ազնիւ բարեկամ, զարմացողը բան մը չէ՞ ձեզի համար. ես որ յատկապէս ձեզ տեսնելու համար եկայ Եւրոպայէն:

— Ուրեմն գիտէ՛ք որ հոս եմ:

— Ճշիւ չէի գիտեր, բայց Նախախնամութիւնը միջամտեց, և անոր շնորհիւ հոչակաւոր Հոգեկորդին պատահեցայ:

— Տարակոյտ չունիմ որ ապուշ է, ըսաւ ասպետը մտքէն: Այսպիսի հակառակորդէ մը վախնալու բան մը չունիմ. եթէ միւսներն ալ ասոր պէս են, զի բոլորեմա՛ք պիտի կրնամ զիս Ապոյա-Մօրուքին պաշտել տալ. բայց պէտք է որ Դիւաքնակ-Բլուրին ճամբան գիտնամ. շատ զուարճալի բան մը կ'ըլլայ եթէ այս առջը զիս հոս տանի . . . : Յետոյ ըսաւ բարձր.

— Բայց, քա՛ջ որսորդ, ձեզ տեսնելու փառքը ձեռք բերել ուղեցի. աշխատեցայ և ձեզ տեսայ:

— Ուրեմն դայէ՛ք, ըսաւ ցլորսը ծխափողին մուկը բերնէն հանելով:

— Չեր խիստ աղատախօսութիւնը սիրելի է ինձ, քա՛ջ Ներքովդ, բայց երթալու համար ճամբայ գիտնալ պէտք է, և ես բնաւ չգիտեմ:

— Ո՛ր կէ կու գար:

— Մաքուպայէն, ուր գիշերը վերապատուելի հայր կրիֆօնի տունը պառկեցայ:

— Հոսկէ Մաքուպա երկու փարսախ է, աշկերտս ձեզ կը տանի հոն :

— Երկու փարսախ, գոչեց ասպետը, այդ անկարելի է : Իս երէկ առաւօտէն մինչև գիշեր և այս առաւօտէն մինչև հիմա քալեցի, միթէ ընդ ամենը երկու փարսախ տեղ քալած եմ :

— Շատ անգամ կը սրտահար որ վարադները, մանաւանդ մատաղ ցուլերն ալ խուսխուսելով շատ ճամբայ կ'ընեն բայց մի և նոյն շրջափակին մէջ կը մնան, ըսաւ ցլորսը :

— Քանի որ ձեր բաղդատութիւնը որսորդութեան պէս սպնիւտ արուեստէ մ'առնուած է, չկրնար աշնուականի մը դպչել . արդ՝ դիցուք թէ ձեր ըսածին համեմատ ցուլի մը պէս խուսխուսած ըլլամ, ասկէ չհեանիր թէ Մաքուպա վերադառնալ կ'ուզեմ, և կը յուսամ որ երթալիք ճամբաս ցոյց կու տաք ինձ :

— Ա՛ր երթալ կ'ուզէք :

Հոս ասպետը քիչ մը շփոթեցաւ, ինչ պատասխանելիքը չէր գիտեր . պէտք էր արդեօք բացէ ի բաց խոստովանիլ Գիւարնակ-Բլուրն երթալու գիտաւորութիւնը : Քրուսթիլաք հնարք մը գտաւ և պատասխանեց .

— Գիւարնակ-Բլուրին ճամբան երթալ կ'ուզեմ :

— Գիւարնակ-Բլուրին ճամբան՝ միայն Գիւարնակ-Բլուր կը տանի, և . . . :

Ցլորսը շտապեց, բայց գէմերը թթուեցաւ և սպառնալից կերպարանք մ'առաւ :

— Ի. . . , տակաւին ո՛ւր կը տանի Գիւարնակ-Բլուրին ճամբան, հարցուց ասպետը :

— Մեղաւորները դժոխք և սուրբերն արքայութիւն կը տանի :

— Աւրեմն եթէ հետաքրքիր մը, ուզես մը Գիւարնակ-Բլուրն երթալու ըլլայ . . .

— Ա՛լ չվերադառնար :

— Գէթ վերադարձին՝ ճամբան չկորսընցըներ, ըսաւ ասպետն անտարբերութեամբ : Այդ լաւ է, բարեկամս, որ մնացոյց տուէք ինձ ճամբան :

— Մի և նոյն ամուսնային ներքև ճաշեցինք, մի և նոյն ամանէն խմեցինք . չեմ ուզեր կամաւ պատճառ ըլլալ ձեր մահուանը :

— Աւրեմն զիս Գիւարնակ-Բլուրը տանելը, կամ . . . զիս սպաննելը . . .

— Նոյն բանն է :

— Թէպէտ ձեր սեղանին խօսք չունիմ, թէպէտ ուրիշ եմ որ զձեզ ճանչցայ, սակայն, քաջդ ներքովդ, շատ պիտի ցախիմ եթէ ասոնց պատճառաւ չկարենաք փափաքս կատարել : Բայց ի՞նչ վտանգ կայ ինձ համար :

— Մահուան բոլոր վտանգներն աչք առնել պէտք է :

— Այդ բոլոր վտանգները միայն մէկ վտանգ ըսել է, վաճառելի մարդ միայն մէկ անգամ կը մեռնի, ըսաւ Կապրօնն անտարբերութեամբ :

Ցլորսն ուշադրութեամբ դիտեց ասպետը և կարծես զարմացաւ տեսնելով անոր արիւթիւնը, ազատախօսութիւնն ու զուարթութիւնն որ իւր մեծաբանութեանց հակառակ կը տեսնուէր վրան : Ասպետը շարունակեց .

— Երբէք Քրուսթիլաք ասպետը երկիւզ ըսուած բանը գիտցած չէ, քանի որ իւր քոյրը միշտ իւր քոյրն ունեցած է :

— Իւր քոյրը :

— Ահա՛ այս, որ կոյս չէ, գոչեց ասպետը սուրը քաշելով և շողայրնելով : Տուած համոզոյրները խիստ հրատապ են, և ամենէն յանդուզն մարդիկ անգամ զըջացած են անոր ծանօթանալնուն :

— Միտու . . . միտու . . . ըրաւ աշկերտը որ մտիկ կ'ընէր այս խօսքերը :

Այս ձայնէն Կապրօնը սարսուեցաւ և իւր գիշերուան շահատակութիւնները յիշեց : Բարկութենէն շիկնեցաւ, սուրը բարձրացրնելով աշկերտին վրայ քալեց երկաթին տափակ կողմովը զայն պատժելու համար, բայց Աետրոս ցատկեց և հարուածէն խոյս տուաւ, մինչդեռ ցլորսը ինդալէն կը մարէր : Այս քրքիջէն ասպետը Աւելի ևս կատրելով Հոլեկորդին ըսաւ .

— Եթէ կը համարձակիք յարձակիլ մարդու մը վրայ այնպէս

ինչպէս ցուլի մը վրայ, զյուշացէ՛ք :

— Գիտեցէ՛ք անգամ մը ձեր սուրբ, պիտի անձնէք որ վրան արեան բլծեր և վազրակատուի մաղեր կայ. ահա՛ ատոր համար է որ Պետրոս միառ պուսայ :

— Զգուշացէ՛ք, կրկնեց սաստիսը մոլեղին :

— Երբ չորս թաթիկ, ճիրաններ և սոյ մ'ունենամ, այն ատեն ձեզի հետ կը կուռիմ, ըսաւ ցլորսը հանդարտութեամբ ոտք ելնելով :

— Ուրեմն երեսօ պիտի դրոշմեմ, զոչեց սաստիսը Հոգեկորչին վրայ քալելով :

— Կամայ եկու, կատուիկս, ըսաւ ցլորսը խնկալով և հրացանին երկաթովը խուսափելով սոսկալի հարուածէ մը զոր. սաստիսը սուսաւ իրեն կրակ կտրած :

Այն ինչ աշկերտն օգնութեան կու դար իւր տիրոջը, սա կեցուց զայն գոչելով :

— Դու մի շարժիր, ես կը հասկըցընեմ այդ սոսկալի ընկերին. տաք ջուրն ինկած կատուն պաղ ջրէն կը վախնայ, կ'ըսեն. Ես հիմա անոր լաւ դաս մը կու տամ :

Այս հեղութիւնները սաստիսին մոլեղնութիւնը սաստիսացուցին. մինչև անգամ մոռնալով թէ իւր հակառակորդն ինքզինք հրացանով մը կը պաշտպանէր, մի քանի յուսահատ հարուածներ սուսաւ անոր որոյմէ ցլորսը խոյս կու տար զարմանալի ճարտարութիւն մը և հսկայական ոյժ մը ցոյց տալով, սյուպէս որ ձեռքի ծանր հրացանը մահակի մը պէս կը դործածէր : Այս անհասարկաւոր կուռոյն մէջ, ցլորսը կը յանդգնէր մինչև անգամ ծաղրելաստիսը զայրացած կատուներու խուլ ձայնը հանելով : Այս վերջին թշնամանքէն Կասթօնին մոլեղնութիւնն անդիի ծայրը հասաւ. բայց իւր ակնկալութեանը հակառակ, տեսաւ որ ցլորսն առաջին կարգի սուսերամարա մ'էր, և շատ չանցաւ զէնընկէց եղաւ. սուրբ քան քայլանդին թուա : Յլորսը Կասթօնին վրայ յարձակեցաւ հրացանը լախտի մը նման բարձրացընելով, և սաստիսին օձիքէն ըռնելով գոչեց :

— Կեանքդ ձեռքս է, հիմա զլուխդ հակիթի մը պէս պիտի ջախջախեմ :

« Բրուսթիյաք առանց այլայլելու երեսը նայեցաւ և պաղութեամբ պատասխանեց :

— Երեք անգամ իրաւունք ունիք, ինչու որ երրակի դաւաճան մ'եմ :

Յլորսը քայլ մը նահանջեց :

— Անօթի էի, ուտելիք սուր ինձ. ծարաւ էի, ըմպելիք սուրք. դուք զէնք չունէիք, և ես ձեր վրայ յարձակեցայ. ջախջախեցէ՛ք զլուխս, ջախջախեցէ՛ք, իրաւունք ունիք, « Բրուսթիյաք պատիւը կորսընցուց :

— Չարագործ մը, լրտես մը այդպէս չպիտի խօսէր. յետոյ ձեռքն սաստիսին երկընցուց և խիստ ձայնով մ'ըսաւ. — Տուէ՛ք ուրեմն ձեռքերնիդ. . . մի և նոյն աժուփային ներքև նստանք, ի միասին կուռեցանք, ա՛լ եղբայր ենք :

Աստիտը ցլորին ձեռքը բռնելու վրայ էր, բայց յանկարծ մտորը փոխեց և ծանր ձայնով մ'ըսաւ անոր.

— Ես ալ ձեզի պէս համարձակ պիտի վարուիմ : Ձեռքս տալէ առաջ ձեզի ըսելիք մ'ունիմ :

— Ի՛նչ :

— Ձեր հակառակորդն եմ :

— Հակառակորդս էք. ի՛նչ խօսք է այդ :

— Կապոյտ-Վօրուքը կը սիրեմ, և որոշած եմ զինքը գտնել և անոր հաճելի ըլլալ :

— Տուէ՛ք ձեռքերնիդ. . . Ե՛ղբայր :

— Վայրկեան մը սպասեցէ՛ք, բացէ ի բաց կ'ըսեմ ձեզ թէ, երբ փօլիֆէմ Բրուսթիյաք հաճելի ըլլալ ուզէ, հաճելի կ'ըլլայ. երբ հաճելի կ'ըլլայ, կը սիրուի. . . և երբ կը սիրուի, զինքը սիրողը մինչև անգամ կը մեռնի անոր համար :

— Տուէ՛ք ձեռքերնիդ, Ե՛ղբայր :

— Չպիտի տամ մինչև որ չըսէք թէ զիս անկեղծաբար կ'ընդունիք իբր ձեր հակառակորդ :

- Եթէ ս'չ :
- Եթէ ոչ, ջախջախեցէ՛ք գլուխս, վասն զի իրաւունք ունիք. ահա մինակ ենք. աշկերտնիդ չմասնէր զձեզ. բայց կապոյտ-Մօրուքին հաճելի ըլլալու յոյսէս, ստուգութենէս չպիտի հրաժարիմ :
- Ա՛, այդ ուրիշ :
- Ա՛ երջին հարցում մ'ալ ունիմ, ըսաւ ասպետը. Ստէպ կ'երթա՞ք Գիւարնակ-Բլուրը :
- Ստէպ կ'երթամ :
- Կապոյտ-Մօրուքը կը տեսնէ՞ք հոն :
- Կը տեսնեմ :
- Կը սիրէ՞ք լայն :
- Կը սիրեմ :
- Ա՛յն ալ ձեզ կը սիրէ՞ :
- Կը սիրէ :
- Ձե՞զ :
- Ձիս :
- Նա կը սիրէ՞ ձեզ :
- Խենդի պէս :
- Ի՛նքն ըսաւ :
- Փորձով ցուցուց :
- Ա՛ երջապէս . . . Կապոյտ-Մօրուքը :
- Իմ սիրուհիս է :
- Կ'երբնուք ձեր ցլորսական սրտուոյն վրայ :
- Կ'երբնում :
- Ա՛րեմն, ըսաւ ասպետն ինքնիրեն, բարբարոսաց մէջ քաղաքակիրթ մարդոյմէ աւելի խորհրդապահութիւն չկայ եղեր. ո՞վ կ'ըսէ թէ տյսպիսի բիրտ մարդ մը սպարծուկ կրնայ ըլլալ. . . : Յետոյ յարեց բարձրաձայն.
- Ա՛րեմն կը կրկնեմ խօսքս. Ջախջախեցէ՛ք գլուխս, վասն զի, եթէ կեանքս ինձ թողուք, ամեն ջանք ի դործ պիտի դնեմ Գիւարնակ-Բլուրն երթալու համար. ամեն ջանք ի դործ պիտի

- դնեմ կապոյտ-Մօրուքին հաճելի ըլլալու համար, և հաճելի պիտի ըլլամ, դիպցած ըլլաք :
- Ահա գարձեալ կ'ըսեմ, ջախջախեցէ՛ք գլուխս, կամ յա՛նձն տուէք տեսնել զիս ձեր հակառակորդը, և շատ չանցած բողբոսոր հակառակորդը :
- Ձեռքերնիդ տուէ՛ք, կ'ըսեմ, Եղբայր :
- Ի՛նչ, ըսածներո՞ւս հակառակ :
- Ա՛յո՛ :
- Ձե՛ք վախնար :
- Ո՛չ :
- Գիւարնակ-Բլուրն երթալու հոգեւորիդ չէ՞ :
- Ես անձամբ կը տանիմ ձեզ հոն :
- Գո՞ւք :
- Ա՛յսօր :
- Պիտի տեսնե՞մ Կապոյտ-Մօրուքը :
- Ազրածնուդ չափ պիտի տեսնէք :
- Ասպետը ցլորսին կողմէն իրեն ցոյց տրուած վստահութենէն զբաժուելով, չուզեց շարուար դործածել լայն. ծանր դէմքով մը ըսաւ տնօր.
- Յը՛րս, մտիկ ըրէք. դուք վայրենուց մը պէս վեհանձն էք. թնձայն խօսքս չվշտացրնէ զձեզ. բայց, ազնիւ բարեկամն, անկեղծ լիճնամիս, դուք նաևս վայրենուց մը պէս տղետ էք. անտառներու մէջ մեծցած ըլլալով, չէք կրնար դադափար մ'ունենալ այնպիսի անձի մը վրայ որ իւր կեանքը հաճելի ըլլալով և հրատարակելով անցուցած է. դուք չէք կրնար զիտնալ այն հրաշալի միջոցները զոր այն անձն իւր ի բնէ հրատարակ յատկութեանցը մէջ կը գտնէ. դուք չէք կրնար զիտնալ խօսքի մը, շարժման մը, ժպտի մը, ակնարկի մը անդիմադրելի գորութիւնը :
- Այն խեղճ Կապոյտ-Մօրուքն ալ չպիտի ասոնք. եթէ իւր երեք ախտնոց նկատմամբ ստըտած զրոյցներուն նայինք, Ասոնց երեքն ալ անսխիան և զձուձ մարդիկ էին, զոր նա իրաւունք ունէր զլիսէն հեռացընելու : Եւ ինչո՞ւ համար հեռացուց. վասն զի դաղափարեալ էակ մը, անծանօթ էակ մը, իւր երազներուն երա-

զը կը փնտռէր նա : Արդ , բարեկամ , առանց վշտանալու դիտ-
ցած ըլլաք որ շատ կը սխալիք եթէ կը կարծէք թէ դուք կրնաք
Կապոյտ-Մօրուքին սոյն երազն իրադործել : Արդարեւ չէք կրնար
ինքզինքնիդ Սէլաանն մը կամ օգային ուրի մը համարիլ . . . :

Յլորսն ապշած՝ Քրուսթիյաքի երեսը կը նայէր , և կարծես
ըսածները չէր հասկընար . սա արեղակը ցուցնելով ըսաւ անոր .

— Արեղակը կը խոնարհի , Գիւարնակ-Բլուրը հասնելու հա-
մար չորս փարսախ տեղ ունինք քաշելու . օ՛ն ուրեմն , ճամբայ
եղնենք :

— Այս օղորմելին բնաւ չլիտեր գլխուն դալէքը , իւր միա-
մտութիւնն այսչափ չարաչար վարելը խճիս կը դպչի , տղայ մը
ծեծելու , քնացող մարդ մը սպաննելու պէս բան մ'է այս . ար-
գարեւ այս բանը խիղճս կը տանջէ : Յետոյ յարեց բարձր ձայնով .

— Տակալին չհասկըցածք , բարեկամ , թէ հրապուրիչ և ան-
դիմադրելի ըսած մարդս ես եմ :

— Ա՛հ , այդ անկարելի է . . . :

— Ձեր զարմանքը հաճոյ չթափիր ինձ . . . քաջ որսորդ .
. . . բայց ձեզ այսպէս խօսելուս պատճառն սոյն է որ պատիւս կը
կը հրամայէ ինձ ճշմարտութիւնն բռնի ձեզ , բացարձակ ճշմարտու-
թիւնը և ոչ ուրիշ բան : Արեմն չէք հասկընար որ Կապոյտ-Մօ-
րուքը զիս տեսնելուն պէս սիրտի սիրէ զիս և այլ ևս չսիրտի սի-
րէ զձեզ , խեղճ Հոյեկորդը : Գիտցէք ուրեմն որ վատութիւն
մը , գաւաճանութիւն մ'ըրած սիրտի ըլլայի եթէ կանխաւ զոյս
չիմացընէի ձեզ , քանի որ գիտեմ Կապոյտ-Մօրուքին հետ ունե-
ցած յարաբերութիւննիդ . . . : Ահա կ'երկրորդեմ ձեզ , անգամ
մ'որ Գիւարնակ-Բլուրն ոտք կոխեմ , անգամ մ'որ զիս տեսնէ ,
անգամ մ'որ ձայնս առնէ , ձեր սիրոյն դործը լիքնցած է : Ահա
պէտք եղածն իմացուցի ձեզ անկեղծաբար . . . հիմա խորհեցէք
թէ սոյն վտանգն աչքերնիդ կ'առնէք :

— Տուէք ձեռքերնիդ , եղբայր , ըսաւ ցլորսը՝ բոլորովին
անտարբեր ասպետին սպառնալեացը : Մեկնինք , գիշերէն առաջ
չպիտի կրնանք հասնիլ Գիւարնակ-Բլուրը , և դահաւանդին ոս-

տուները գիշեր ատեն շատ դիւրին բան չէն :

— Հասկըցայ . . . կը յամառիք . . . թող այդպէս ըլլայ .
. . . ես ձեզ իմացուցի , մեղքն ինչ ելաւ , ըսաւ ասպետը :
Յլորսը չպատասխանեց ասպետին , և աչկերտին դառնալով ը-
սաւ .

— Ըռնները հիւզը տար , և ցուրի մորթերը որ քսանչորս
հաս են , պատրաստ պահէ , վաղը Գաս-Թէրէն զանոնք առնե-
լու պիտի գան . ես այս գիշեր չպիտի գամ :

— Հաշիւը ձիւղ է , ըսաւ աչկերտը մեղմաձայն . միշտ երեք
գիշերն անգամ մը հիւզը չպառկիր :

Մինչպէս ցլորսը գօսին կը կապէր , ասպետը կարեկցութեամբ
որսորդը գիտեցով ըսաւ ինքնիրեն .

— Քանի որ ինքն իր ձեռքը խեղը վիզը կ'անցընէ , քանի
որ ազդարարութեանց չանտար , թող ուրեմն պատրաստուի : Ահե-
րեի թէ այս մասին տարիաձուներն ալ ամուսիններուն խելքէն
ին : Բացց ինչպէս կրնաց ըլլալ որ Կապոյտ-Մօրուքը , եթէ գե-
ղեցիկ է . . . հարկաւ գեղեցիկ է . . . այսպիսի գեղջուկէ
մը գոհ կ'ըլլայ : Ինչո՞ք . . . շատ բնական բան է այս . . .
չլիտեր թէ բազմն ինչ հատուցում վերապահած է իրեն . . . :
Պեցցէ՛ Աստուած , Քրուսթիյաք , ասողդ սկսաւ փայլիլ , յարեց
ասպետը մի քանի վայրկեան մտածելէ ետե :

— Օ՛ն , եղբայր , ճամբայ եղնենք . . . ըսաւ ցլորսը . բաց
ատաջ Պետրոս ունեցած աւելուրդ կաշիովը սրունքներնիս պիտի
փամթէ , վասն զի գէշ արտավայրէ մը պիտի անցնինք ուր օձ
շատ կայ :

Ասպետը շնորհակալ եղաւ ցլորսին , կարեկցութեամբ ուսերը
գարձարցընելով և ինքնիրեն ըսելով .

— Խեղճ մարդ , սրունքներս կը հոգայ , ես ալ իւր սիրականը
պիտի հոգամ :

Այս անմիտ կատակն անպատիժ չպիտի մնար և շատ աղէտա-
ղի պիտի ըլլար Քրուսթիյաքի համար , որ նոր ետանդով մը իւր
առաջնորդին ետեւէն դնաց , վասն զի վերջապէս պիտի տեսնէր
Կապոյտ-Մօրուքը :

ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԻ

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՑԱՍԱՆՆԵՐՈՐԴ

ԱՄՈՒՍ ՆՈՒԹԻՒՒՆ

Չորս ժամ քաշելէ ետև, տասննոց ու ցորսը բաական մտեցան Գիւարնակ-Բլուրին: Ճամբան այնքան դժուար և այնքան անհարթ էր որ, հազիւ կրցան երկու խօսք փոխանակել: Քրուսթիլյաք քանի կը մօտենար Ասպրյոտ-Մօրուքին բնակարանին, մտախոհ կերպարանք մը կ'առնէր. ինքն իւր վրայ ունեցած բարձր կարծեացը հակառակ, Աստղկան և Քշմարտութեան այլաբաննալ մերկութեանը վրայ ըրած մոխթարական խորհրդածութեանցը հակառակ, իւր բնական գեղեցկութիւնն առաւել ևս փայլեցնող ճոխ զգեստներ հագած շրջալուսն վրայ կը վշտանար: Առտի, բաական վարաններէ ետև, հետեւալսուտը դըրեց ցլորսին:

— Այլ խոստովանիմ, ա՛գնի հակառակորդս, որ սղառաւորներս և մտաւիներս Սէն-Փիէր մնալով, շատ վայելուչ կերպով հաղուած չեմ. . . մեր միտքը սաշարող թագուհւոյն ներկայանալու համար:

— Ինչ ըսել կ'ուզէք, ըսաւ ցլորսը:

— Ըսել կ'ուզեմ, քաջ Երբբովք, թէ մարայկանի կերպարանք մ'ունիմ, և կօշիկներս, որ երէկ գրեթէ նոր էին, այս վայրկենիս ողորմելի վիճակի մը հասած են, և անսնողը . . . վնց ամսուան կը կարծէ:

— Վեց ամսուան: Օ, աեւլի տարեօք կ'երևին, ե՛ղբայր:

— Ազի՛ն յայտնի է թէ ո՛րքան կիզլւարև մ'ունիք: Մէկ աւուր մէջ զգեստներուս գոյնը լափեց, որք երէկ անուշիկ, քնքօշիկ բաց կանաչ գոյն մ'ունէին . . . մինչեւ հիմա . . .

— Սատկած գորտի գոյն առած են, ըսաւ ցլորսը: Ա՛յլքի կամարդ ալ այնպէս եղեր է. մեր սովալլուկ արևն անոր գոյնը լափեր և միայն կարմիր թելը թողուցեր է:

— Ամա՛նն ով կը մտածէ, բաական է որ սուրն ազատութեամբ և արիութեամբ դուրս ելնէ պատենէն, ըսաւ Քրուսթիլյաք սիզանօք: Յետոյ՛ ձայնը մեղմացընելով յարեց.

— Առ այժմ իմ աստիճանիս յարմար կերպով հագուած չըլլալուս համար է որ կ'ուզեմ գիտնալ թէ Գիւարնակ-Բլուրը հասած ժամանակեկա արդեօք կրնամ աեւլի վայելուչ զգեստներ գտնել:

— Չարմանալի՛ բան. միթէ կը կարծէք թէ Ասպրյոտ-Մօրուքը հնավաճառի խանութք բացած է հոն:

— Բա՛ւ լիցի ինձ ըսել թէ այդպիսի գձուձ առուտուր մը կ'ընէ նա: Բայց կարելի է որ սլատահմամբ . . . և այս ալ զարմանալի բան մը չէ, կարելի է որ պատահմամբ, կ'ըսեմ, զգեստանոցի մը մէկ անկիւնը, մեր իշխանուհւոյն հանգուցեալ ամուսիններուն մէկէն ծնացած զգեստ մը մոռցուած ըլլայ:

— Է՛, ե՛տքը, ըսաւ ցլորսը:

— Ետքը, յարեց Քրուսթիլյաք առանց շփոթելու, թէպէտ ինձ համար ծանր բան է ուրիշին հանդերձներովը զարգարուիլ, որք կարելի է վրայիս ալ չյարմարին, սակայն կամայ ակամայ գոհ սիտի ըլլամ քանի որ իմ փառաւոր հազուատներս Սէն-Փիէր ծնացած են . . . և միանդամայն գիտեմ որ դիպուածին հայթայթած հանդերձներն հագնելով թերևս կերպարանքէ ալ ելնեմ. . . աեւլցուց արհամարհոտ գէմքով մը:

Յըրսը չլրցաւ քրքիջը զսպել իւր ընկերին տարօրինակ մտածութեանը վրայ: Քրուսթիլյաք բարկութենէն շառագունեցաւ և ըսաւ.

— Այդ ինչ է, բա՛րեկամ, որչափ զուարթ էք:

— Ար ինդամ, վասն զի կրտեմնեմ որ մորթի սառուտուր ըսու-

ըը մինակ ես չիմ, ըստ Հոգեկորդ: Արդարև իրօք եղբայր ենք եղեր. եթէ ես ցլու կաշի կը կարտիմ, դուք ալ այլուոյն մէկ հանգուցեալ ամուսնոյն կողուպտը չէք արհամարհեր: Բայց ահա բլուրին ստորտը հասանք. ուշագրութիւն ըրէք, եղբայր, այս սեպաձև շաւիղէն վեր մագլեւու համար պէտք է որ ամուր կուսեպաձև շաւիղէն չորս բանաք. եթէ չէք համարձակիր, հոս կեցէք, ես հիմա ձեզի առաջնորդ մը կը դրկեմ որ զձեզ Մաքուպա տանի:

— Հո՞ս կենամ . . . այնքան նեղութիւններ կը կրուի մինչև ճամբուն վերջը հասնելէ՞ս ետև, մանաւանդ այն պահո՞ւն երբ Աստուծոյ Մարտիկան անուանեալ յաւերժահարսը պիտի անենեմ և պիտի հրապուրեմ, աղաղակեց ասպետը, կը ցնորիք . . . Օն, օն, ընկեր, դուք ինչպէս ընէք, ես ալ այնպէս պիտի ընեմ:

Արդարև Քրուսթիյաք շնորհիւ իւր հրկայն սրունքներուն, իւր բնական դիւրաշարժութեան և անխռով բարուց ցլորսին ետևէն գնաց այն վտանգաւոր ճամբէն որ Գիւարնակ-Բլուրին սոսկալի գահաւանդներուն մէջէն Աստուծոյ Մարտիկան բնակարանը կը տանէր: Երբ ցլորը ձայն մը հանեց, սարահարթէն վար սանդուղ մ'իջեցուցին. երկուքն ալ վեր ելան և արտաքին շէնքերէն ներս մտան: Երբ Աստուծոյ Մարտիկան մանաւոր բնակարանին հաղորդող կամարակապ անցքին բերանը հասան, ցլորը պատահափառօրէն մ'ակնառն ի վար բան մ'ըստ: Խափշուհին ասպետին ձեռքէն բռնելով կամարին պատին մէջէն բայտած սանդուղ մը տարազայն: Քրուսթիյաք երբ կը վարանէր գերիին ետևէն երթալու, ցլորն ըստ անոր.

— Գացէք, գացէք, եղբայր, այդ հագուստներով չէք կրնար Աստուծոյ Մարտիկան ներկայանալ. ես ծանկթին պատուիրեցի հիմա. նա ձեզի պիտի տայ ինչ որ պէտք է ասաղէ մ'ակնի փայլուն ըլլալու համար: Ես երթամ Աստուծոյ Մարտիկան ձեր գալուստն իմացընեմ:

Այս ըսելով ցլորը կամարակապ անցքին մէջէն աներևոյթ եղաւ: Քրուսթիյաք Խափշուհոյն առաջնորդութեամբ խիստ

շքեղ կերպով զարդարուած սենեակ մը հասաւ:

— Աստուած իմ, դո՞ւնց բաղդախնդիրը՝ ձեռքերն իրար շփելով և մեծաբայլ յառաջանալով, գործս յաջողելու վրայ է Մինայն թէ տղեղ չերևիմ, միայն թէ ողորմած հողիներէն մէկը մարդու հասակ և զէմք ունենայ միայն և իւր զգեստները զեղեցկութիւնս շատ չայլայլեն, կ'երևիմ . . . հաճելի կ'ըլլամ. . . կը հրապարակեմ այրին, և այն անբան ցլորն ալ Աստուծոյ Մարտիկան սրտէն արտաբուրելով ինէ՛ վաղը թերևս այս իրիկուն իւր անտանները կը վերադառնայ:

Իսկոյն բաղմամբի սևեր Քրուսթիյաքի քո՞նք եկան. Մին ծանր և խոշոր ծրար մը կը կրէր, ուրիշ մը արծաթէ քանդակազեղ արտաբայ մը կը բերէր որուն վրայ դրուած էր ոսկեզօծ տաշտակ մը պատուական արդանակով լի. երկու բլբերեղեայ սրուակներ, մին Պօղոսոյ սուտակադոյն հին գինիով, միւսը Մատեյայի տպազիտի դոյն դիտիով լցուած, տաշտակին հակու կողմը դրուած էին, և տիկնոջ կողմէն ասպետին ընծայուած սոյն թեթև ճաշը կը լրացընէին: Մինչդեռ գերիներէն մին ընտիր փայտէ վղոսկրազարդ փոքրիկ սեղան մը կը դնէր ասպետին առջև, ծրարը բերող գերին սև թաշէ ոսկեճամուկ շիզոյցներով պճնեալ ձեռք մը զգեստ կը տարածէր անկողին վրայ:

Ջարմանալին այն է որ թիկնոցին ձախ թեղանիքը բոսորագոյն սակէնէ էր. Այս թեղանիքը դաստակէն քիչ մը վերք գոմէշի տեսակ մը լայն արեզովը գոցուած էր. սակայն՝ բաց խոյն անսուքը թեղանիքէն, թիկնոցը խիստ վայելուչ ձև մ'ունէր. մետաքսեայ նուրբ գուլպաներ, Բենիական տաքամներ, գեղեցիկ տանթէլաներ, թագեայ լայն դիւխարկ մը ոսկեհոտ և փետրազարդ, բոլորովին կերպարանափոխ պիտի ընէին զՔրուսթիյաք: Մինչդեռ ասպետը միտքը կը յոգնեցընէր սև թաշէ թիկնոցին ձախ թեղանիքին բոսորագոյն սակէնէ ըլլալուն պատճառը գտնելու, երկու սև գերիներ սենեկին մտ ուրիշ խոյլ մը մէջ լուգանք մը կը պատրաստէին. միւս գերին եկաւ և բաւական լաւ Գաղղիարէն լեզու մը Քրուսթիյաքի հարցոց թէ անիւրի և

տանդրուիլ կ'ուզէ՝ Բրուսթիյաք հաճեցաւ :

Ասպետը քաղցրաբայր լողանք մ'առնելէ ետև , զերկները զինքը Հոլանտայի նուրբ կտակէ անուշահոտ փածանելիներով փաթկեցին . բաղրախնդիրն այսպէս զովացած և հանդ չած , կա- կուղ բազմոցի մը վրայ երկընցաւ փափկութեամբ , մինչդեռ իւր օկամորթ ծառաները փետրէ խոշոր աւելներով ղինքը կը հողմա- հարէին : Ասպետը թէպէտ կոյր վտատհոյ թիւն մ'ունէր իւր ճա- կատագրին վրայ , որ , ըստ իւր կարծեաց , ս'յնքան երջանիկ պի- տի ըլլար որքան դժբաղդ եղած էր մինչև այն ատեն , ասպետը մերթ կը կարծէր թէ կ'երազէր . իւր յուսացածէն շատ աւելի կը գտնէր . զուարթ ակնարկ մը ձգելով այն ճոխ հանդերձներուն վրայ , զոր պիտի հաղնէր և որք իւր զեղեցկութիւնն այնքան պիտի փայլեցընէին որ տեսնողն անմիջապէս անձնատուր պիտի ըլլար , սկսաւ ցլորոր մեղքընալ , որ մեծ անխոհեմութեամբ դայ- լը իւր սիրոյ փարախին մէջ մտցուցեր էր :

Այս խորհրդածութիւնը Բրուսթիյաքին ծիծաղը շարժեց . սիրոյ քնքուշ լեղուաւ մը կը պատրաստուէր Կապոյտ-Մօրուքին ուշն և ուրուշը դրաւել , և աներկբայ էր թէ այս լեզուն ան- հուն կերպով պիտի գերազանցէր իւր վայրենի տարփածուններու քիրտ լեզուն : Յանկարծ սոսկալի երկիւղ մը Կասթօնին ծիծաղա- տիպ տեսիլները նսեմացուց : Աւիցաւ թէ մի գուցէ Կապոյտ- Մօրուքը զգուանք պատճառելու չափ սղեղ կին մ'ըլլայ , սակայն և այնպէս կը մտածէր թէ ուզել որ Կապոյտ-Մօրուքն անզուգա- կան զեղեցկութիւն մ'ունենայ , այս ալ չափէն աւելի քան մը պահանջել էր բաղդէն : Հետևաբար Բրուսթիյաք որոշեց որ պէտք չէր այնչափ իտտապահանջ ըլլալ , և իւր պահանջումներն իմաստութեամբ չափաւորելու կարող անձի մը համոզմամբ ըսաւ ինքնիրեն .

— Միայն թէ այրին քառասուն յիսուն տարեկանէն աւելի չըլլայ , միայն թէ միականի կամ չափազանց սապատող չըլլայ , միայն թէ բերնին մէջ քանի մ'ակուայ և գլուխն ալ քիչ մը մազ օւնենայ , շիտակը իւր զինն այնչափ ընտիր է , անթիւնէն այն-

չափ փառաւոր , սոցտատորներն այնչափ վտխաւան են , որ եթէ ևրեք չորս միլիոնի տէր ըլլալն ալ ստոյգ է , շիտակը կը հաւա- նիմ . . . նախորդաց վտանգներն աչքս առնելու և այրին երջա- նիկ ընելու , կ'երգնում Բրուսթիյաքի պատուոյն վրայ , վան զի լաւ է ինձ ամուսնական արհեստիս բոլոր հետեանքը կրել . . . քան թէ Լիւթըն վերադառնալ , վառած ճրագներ կընել Գանիէլ նաւապետ անուանեալ երկակենցաղ անասունը պօսեցընելու հա- մար : Այսպէս ուրեմն , Կապոյտ-Մօրուքը սղեղ ալ ըլլայ , տա- րուօք ալ ըլլայ , միլիոններու տէր է , գործիս կու գայ , և այնչափ սիրելի պիտի ըլլամ իրեն որ , զիս միտ հանգուցելոց քով չըրկիլէ գատ , ուրիշ բան չպիտի մտածէ բայց միայն գուր- գուրալով պահել զիս , և հազար տեսակ փափկութիւններ հնարե- լով կեանքս վեղալարելէ . . . : Են ուրեմն , Բրուսթիյաք , յա- րեց բաղդախնդիրը նոր ախնով մը , ինչպէս որ ըսի , ահա աստղ կ'երևի այժմ , այնչափ աւելի պայծառ որչափ ընդերկար նսեմաստուեր էր . . . : Այժմ . . . աստղ կ'երևի :

Այս խօսքերն արտասանելէ ետև՝ ասպետը կանչեց սևերէն մին որ մօտակայ սենեկին մէջ իւր հրամանացը կ'ստատէր , և ա- նոր օգնութեամբը բոսորագոյն լնկանկրով սև լծաշէ թիկնոցը հաղաւ :

Կասթօնը բարձրահասակ էր , բայց սկրուտ և նիհար . հա- ցած զգեստները նոյնպէս բարձրահասակ , բայց լայն կուրծքով և նուրբ կոճկէնով մարդու մը համար շինուած էին . այնպէս որ թիկնոցը Բրուսթիյաքի իրանին բոլորախոր մի քանի շնորհալի ծալքեր թողուց . նոյնպէս բոսորագոյն գուլշաններն իւր երկայն , չոր ու ջլատ սրունքներուն շուրջը ոչ նուազ շնորհալի ծալքեր թողուցին : Բրուսթիյաք այս պոյն անկատարել լնեանց մտադրու- թիւն չըրաւ . գերիին բռնած Աւենտական հայրւոյն վրայ վեր- ջին ակնարկ մը ձգեց . իւր թուխ և լմաւ մաղերը շակեց , եր- կայն ընչացքը սլորեց , ահագին սուրը կախեց գոմշի կաշիէ փառաւոր կամարէ մը զոր իրեն բերին , սոկեհուն և սպիտակ փետուրներով պճնեալ լծաղեայ զլխարկը սիլանօք գլուխը դրաւ :

աննկին մէջ յաղթական դէմքով մը փերեթեւում անհամբերութեամբ սպասեց Կապոյտ-Մօրուքին ներկայանալու վայրկենին ։ Այս վայրկեանը շատ չուշայաւ ։

Քրուսթիյաքն ընդունող ձեր Խափշուհին եկաւ և սղաչեց անոր որ իւր հետը գայ , և զայն տարաւ այն ներքին շէնքին մէջ որ արդէն ծանօթ է մեզ ։ Այն սրահակն ուր Քրուսթիյաք պարտաւորեցաւ պահ մը սպասել , այնպիսի ճոխ կարտսեօք զարդաբուսած էր , որ կեանքին մէջ տեսած բանը չէր . սակայն սքանչաշաւ անսնեղով հին և հոյակապ պատկերներ , զեղեցիկ յախճապակներ , ոսկեղէն և արծաթեղէն ծանրազին և հազուապիտ անօթներ որք արհեստական նուրբ ճաշակի արդիւնք էին ։ Ատնցմէքտա փղօսկրեայ և ոսկեղէն նրբաքանդակ զարդերով գեղեցիկ վին մը և բամբակին մը Քրուսթիյաքի ուշը դրսեցին , որ շատ ուրախացաւ մտածելով թէ իւր հարսնացուն երածչուութիւն ալ դիտէր ։

— Տէր Ատուած , ըսաւ ասպետն ինքնիրեն , միթէ կարելի է որ այսքան հարստութեանց տիրուհին հրեշտակային գեղեցկութիւն մ'ունենայ . . . ։ Ա՛յ , ո՛չ , չափազանց երջանիկ կ'ըլլայի . . . թէպէտ արժանի եմ այսպիսի երջանկութեան մը ։

Ընթերցողը թող երևակայէ Կատրօնին զարմանքը , չըսենք ասլուութիւնը , երբ Անժէլ սրահակը մտաւ ։ Այս քնքուշ կինն իւր մատաղ հասակաւ , շնորհալի ձևերովը , գեղեցկութեամբն ու զարդերովը զինքը անսնողը կը շլօցընէր . Լուգովիկոս Թ.Գ.Ի Ժամանակին նորաձևութեանը համեմտ հայուած և զլուխը վարդարուած էր . երկնազոյն սնդուսէ շրջազգեստ մը հաղած էր , որուն երկայն կոճիկներն վրայի անհամար աղամանդները , մարդաբիաները , կարկեսաններն այնպիսի նուրբ ճաշակով յետևալէին որ կարծես քոյրը կոճիկէնր սոյն պատուական քարերով բանուած էր ։ Քրուսթիյաք , իւր համարձակութեանը հակառակ , այս անսնեղուն պէս քայլ մը նահանջեց ։ Իւր կենացը մէջ այսքան հրաշագեղ և թագուհոյ մը պէս զարդարեալ կին մը տեսած չէր . աչքերուն չէր կրնար հաւատալ , և ապուշկրթած Կապոյտ-Մօրու

քը կը դիտէր ։

Ի դովեստ ասպետին պարտինք ըսել լծեյանկարծ անկեղծ համետութիւն մ'եկաւ վրան , բայց դժբաղդարար երկար շունեց . մաածեց թէ այսպիսի շքնաղ արարած մը թերևս պիտի վարանի իրեն պէս բաղդախնդրի մը հետ ամուսնանալու , բայց ցլուրտին յանդգնութեամբ և պարծանօք իրեն յայանած գաղտնիքները յիշելով , ինքնիրեն ըսաւ թէ ինչ որ ալ ըլլայ , իբր մարդ , ինքն ալ այլոց պէս արժէք մ'ունի , և իսկոյն իւր անդրգուելի համարձակութիւնն առաւ ։ Քրուսթիյաք իրարու վրայ երեք անգամ խոնարհութիւն ըրաւ . յետոյ բարձրազլուխ կանգնեցաւ իւր հասակին ազնուութիւնը ցոյց տալու համար , իւր երկայն սրունքներէն մին յառաջ քշեց , միւսն ալ քիչ մը ետ քաշեց և սունեքամարտի մը դիրքն առաւ , աջ ձեռքը զլիսարկը բռնած և ձախ ձեռքն ալ սուրին դաստապանին վրայ դրած ։

Անշուշտ Կապոյտ-Մօրուքին մէկ քանի սիրահարակն խօսքեր ուղղելու վրայ էր , վասն զի արդէն մէկ ձեռքը կուրծքին տարած երբ իւր մեծ բերանը կը բանար , սյրին ասպետին այլանդակ դէմքը տեսնելով չկրցաւ իւր ծիծաղը բռնել և սկսաւ բրբիջ բառնալ ։ Այս բրբիջը Քրուսթիյաքի բերանը փակեց , և ինքն ալ աշխատեցաւ ինկալու , յուսալով որ այս կերպով կրնայ հաճելի երևիլ Կապոյտ-Մօրուքին . սակայն սոյն բռնի ծիծաղէն Քրուսթիյաքի դէմքն այնքան անձուռնի կերպարանք մ'առաւ , որ Անժէլ բազմոցի մը վրայ ինկաւ , և ամեն պատշաճութիւն մտնալով իւր բրբիջը շարունակեց մոլեգնաբար , իւր կապոյտ և հրացայտ աչքիւրը զուարթութեան արտասուօք սքողեցան , ուսուցիկ այտերը շառագունեցան , երեսին քնքուշ փոսիկներն այնչափ խորունկցան որ իւր փոքր մատին վարդազոյն ծայրը կրնար մշջը մտնել ։

Քրուսթիյաք այն անդադար խնդացող զեղադէմ կնոջ գէմը բոլորովն շփոթած կեցիւր մնացեր էր . մերթ յօքքը կը պատէր զայրաղին դիմօք , մերթ , ընդ հակառակն , բռնի ծիծաղով մը կը ճղնէր իւր նիհար և երկայն դէմքն ընդլայնելու ։ Ասպետը երբ

մէկ կողմէն իւր դիմաց այլ և այլ ձևեր կու տար, որք բաւական չէին կասպոյտ-Մօրուքին քրքիջները դադրեցընելու, միւս կողմանէ ինքնիրեն կ'ըսէր թէ՛ ինչոր ալ ըլլար, այրին մարդասպան մը ըլլալու չափ ահարկու դէմք մը չունէր: Սակայն և այնպէս բաղդախնդիրը կնոջ վրայ ըրած տարօրինակ ներգործութենէն գոհ չէր: Սիրտը հանդարտեցընելու համար աւելի զօրաւոր պատճառ մը չկրնալով գտնել, վերջապէս ինքնիրեն ըսաւ թէ ամեն բանէ առաջ պէտք է կանանց երեւակայութիւնը ցնցել, զանոնք նստի և առաջ հիացընել և տակնուվրայ ընել, և թէ այս մասին կասպոյտ-Մօրուքին հետ իւր առաջին տեսակցութիւնը գոհացուցիչ վիճակի մէջէր: Երբ կինը քիչ մը հանդարտած տեսաւ, սիրահարական պաճուճազարդ ոճով մ'ըսաւ.

— Եներկբայ եմ, տիկին, որ կը ծիծաղիք այն յուսահատական ջանքերուս վրայ զոր ի գործ կը դնեմի գուճս ձեր խոյացող հէք սրտիկս սանձահարելու համար . . . : Նա է որ զիս մինչև հոս բերաւ, անոր հետեւէ զատ ուրիշ բան չկրցայ ընել, և այս ալ՝ ակամայ . . . այո՛, տիկին, ակամայ. հանդարտե՛, սիրտ իմ, հանդարտե՛, կ'ըսէի, հրեշտակային զեղեցիկութեան մը հաճելի ըլլալու համար բաւական չէ մութիւն սէրը . . . : Բայց իմ սրտիկս, կամ մանաւանդ իմ տիւմար սրտիկս իւր բոլոր զօրութեամբը զիս միշտ գէպ ի ձեզ մը լելով կը սրտասխանէր ինձ . . . իբր թէ նա պողպատէ և Գիւաբնակ-Բլուրն ալ մագնիս մ'ըլլար. սրտիկս, կ'ըսեմ, կը պատասխանէր ինձ. Եներկեան եղիր, քեզի պէս սիրուն, փափուկ և արի անձ մը պէտք չէ որ երկնչի. քու զյացած սէրդ պիտի ծնանի սէր մը զոր պիտի զղան. բայց ներքեք, տիկին, սրտիս լեզուն չափազանց յանդուգն կը թուի ինձ . . . և անշուշտ այս յանդգնութիւնն է որ զձեզ դարձեալ կը խնդայրնէ, այնպէս չէ՞:

— Ո՛չ, պարոն, ձեր ներկայութիւնն է որ ծիծաղս այս աստիճան կը շարժէ, վասն զի դուք զարմանալի կերպով մը, հա. . . հա . . . հա, երկրորդ ամուսնոյս կը նմանիք. քիթերնիդ մի և նոյնն է, հա . . . հա . . . և ներս մտած ասաննիդ կար-

ծեցի թէ ուրուական մը կը տեսնեմ, հա՛ . . . հա՛ . . . հա՛ . . . որ կու գայ զիս յանդիմանել, հա՛ . . . հա՛ . . . հա՛ . . . իւր դմդակ վախճանին համար . . . հա՛ . . . հա՛ . . . հա՛ . . . :

— Ենձէլի քրքիջները կրկնապատկեցան: Ասպետը դիտէր կասպոյտ-Մօրուքին անցելոյն վրայ պատուած իրողութիւնները, բայց չկրցաւ իւր խորին զարմանքը ծածկել երբ տեսաւ որ այսպիսի զեղեցիկ և քրքուշարարած մը անլուր յանդգնութեամբ իւր մարդասպան մ'ըլլալը կը խոստովանէր . . . : Սակայն և այնպէս ասպետը կատարեալ հանդարտութեամբ և քաղցրութեամբ պատասխանեց.

— Շատ ուրախ եմ, տիկին, ձեր հանդուցեալ ամուսիններէն մին յիշեցընելուս և ներկայութեամբս ձեր որ և է մէկ յիշատակը զարթուցանելուս: Միայն թէ, յարեց Քրուսթիյաք, կը փափաքիմ որ ուրիշ կողմերէ ալ նմանէի այն հանդուցելոյն . . . զոր յիշելով այսչափ կ'ուրախանաք . . . :

— Ըսել կ'ուզէք թէ հետս ամուսնանայիք, հարցուց կասպոյտ-Մօրուքը:

Ասպետն այս յեղակարծ հարցումը լսելուն պէս պահ մը ապշեցաւ մնաց: Ենձէլ շարունակեց.

— Մտքէս կ'անցնէր այդ. Լողեկորզն արդէն իմացուցած է ինձ իմ մասին ձեր ունեցած յօժարամտութիւնը. արդեօք զիս խաբելով ուրախացընելուզնց, յարեց այրին պշրանօք ասպետը զիտելով:

Զարմանքը ևս քան զէս կը պատէր զՔրուսթիյաք:

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, գուցե, ցլորսը ձեզ ըսաւ թէ . . .

— Գողղիայէն յատկապէս եկած էք ինձի հետ ամուսնանալու համար, ստոյգ է: Օ՛ն, համարձակ խօսեցէք, զիս մի խաբէք: Նախ և առաջ սա ըսեմ ձեզ թէ՛ եթէ փափաք մ'ունենամ, պէտք է որ անպատճառ կատարուի . . . եթէ անգամ մը միտքս դրած եմ որ ամուսինս ըլլաք, պիտի ըլլաք:

— Տիկին, կ'աղաչեմ, կը պաղատիմ, զիս ասուշի, անբանի

տեղ մի՛ դնէք . . . եթէ չեմխօսիր . . . այս ալ յուզմունքս . . . զարմանքս կը նշանակէ . . . Գրութիւնք իւր շուրջը կը դիտէր անձկութեամբ և կարծես երազի մը խաղալիկ չըլլալը հասկընալ և ապահով ըլլալ կ'ուզէր: Թողուամբի մը սէս սայտ թիմ, տիկին, ըսաւ, եթէ այսպիսի ընդունելութիւն մը գտնել կը յուսայի:

— Է՛հ, Աստուած իմ, այնքան ձեերու հարկ չկայ, յարեց այրին, իմացայ թէ ինձի հետ ամուսնանալ կ'ուզէք եղբր, ճշմարիտ է:

— Այնչափ ճշմարիտ որչափ ճշմարիտ է թէ կենացս մէջ ձեզի նման հրաշագեղ կին մը տեսած չեմ երբէք, զոչեց ասպետը ձեռքը սրտին տանելով:

— Ստուզի՛ւ, ո՛հ, ստուզիւ որոշած էք զիս կին առնել, զոչեց Ասպետ—Մօրուքը ձեռքերն իրար զարնելով զուարթացին:

— Որոշումս այնքան հաստատ է որ այժմ իմ միակ երկկողջ այս բաղձանքիս կատարումը չտեսնելու է, բաղձանք մը որ, կը խոստովանիմ, տարապայման մեծութիւն մ'ունի . . . տիտանեան երազ մ'է, և . . .

— Բայց լուցէ՛ք, ըսաւ Ասպետ—Մօրուքը՝ ասպետին խօսքն, ընդմիջելով տղայական միամտութեամբ մը: Ի՞նչ հարկ կայ այդպէս խոշոր բառերու . . . : Զիս կնութեան առնուլ կ'ուզէք . . . ինչո՞ւ համար պիտի մերժեմ . . . :

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, կրնամ հաւատալ . . . : Ա՛հ, մտիկ ըրէք, դեղանի՛ց իմ. ես կենացս մէջ շատ յաղթանակներ տարած եմ . . . իշխանուհիք իրենց սէրը յայտնեցին ինձ . . . Թագուհիք զիս դիտեցին և հառաչեցին . . . բայց երբէք, տիկին, երբէք այնքան սքանչացած չէի . . . : Այո՛, տիկին, կրնաք ուրախանալ, կրնաք պարծենալ իմ հիացումս, ուրախութիւնս և երախտագիտութիւնս ցկատար հացընեցող համար . . . : Անգամ մ'ալ կրկնեցէք, կրպաղատիմ, անգամ մ'ալ կրկնեցէք այն սիրուն խօսքերը. կը հաճիք զիս ձեզ ամուսին ընելու, զիս, Փօլէֆէմ տը Գրութիւնք:

— Ուղածնուդ չափ կը կրկնեմ, ասկէյ աեւլի բնական բան չկրնար ըլլալ. շատ աղէկ կրնաք հասկընալ թէ ամուսին գտնելու մասին այնքան դժուարութիւն կը կրեմ որ ձեր առաջարկութիւնը յօժար սրտիւ կը փութամ ընդունիլ:

— Ա՛հ, տիկին, պատասխանեց ասպետը նպզանօք, եթէ ըրածս լրբութիւն մ'ալ ըլլայ, կը համարձակիմ բացէ ի բաց ըսել թէ կը սխալիք . . . : Ո՛չ, բնաւ երբէք չեմ կրնալ հաւատալ թէ ամուսին գտնելը ձեզի համար դժուար բան մ'ըլլայ. նա մանաւանդ համոզուած եմ թէ վերջին սնդամ ձեր այրի մնալէն ի վեր միայն ընտրութեան մասին մեծ դժուարութիւններ կրած էք ? . . . բայց այս ալ շատ պարզ բան մ'է, ընտրել չէք ուզած . . . : Դուք խիստ բարձր ճաշակի մը տէր ըլլալով, ըսաւ Գրութիւնք յանդընութեամբ, կ'սպասէիք . . .

— Կրնայի՛ ձեզ խօսիլ և այդպէս կարծեցընել . . . ասպետ, բայց ձեզի պէս պատուազոր անձի մը հետ չեմ թկրնար այսպէս վարուիլ . . . : Բանի որ այս աստիճան մտեցած ենք իրարու, յարեց Անժէլ մտերմական և շնորհալի կերպով մը, քանի որ այս աստիճան մտեցած ենք իրարու, կրնամ ամին բան ըսել ձեզ . . . : Մտիկ ըրէք ուրե՛մ. Երբ առաջին անգամ ամուսնացայ, գործս միայն ընտրութիւն ընել եղաւ, այս ստոյգ է: Ո՛հ, Աստուած իմ, ցանկացողք բազմութեամբ կը ներկայանային, և ես ընտրեցի . . . և շատ լաւ ընտրեցի . . . : Երկրորդ ամուսնութեանս ասեմ . . . գործն արդէն բոլորովին փոխուած էր . . . : Առաջին ամուսնոյս տարօրինակ մահուանը վրայ կը շողփաղփէին, և ցանկացողք իրենց կամքը յայտնելէ առաջ կը մտածէին . . . : Յակայն որովհետեւ ասու չ չէի, փաղաքշանաց և սյրանաց միջոցաւ վերջապէս յաջողեցայ երկրորդ ամուսին մ'ալ ձեռք ձգելու . . . : Աւա՛ղ, զի բաւական նեղութիւն կրեցի . . . : Բայց երրորդին զալով, կրած տառապանքս չէք կրնար մակարեւրել, ստուգիւ յուսահատելու բան էր:

— Ա՛հ, տիկին, ես ինչպէս հոս չէի:

— Անշուշտ, ասպետ, բայց գժխողգարար հոս չէիք: Ա՛

ուաջնոյն մահուանը վրայ շաղփաղփեցին, ասկէջ կրնաք հասկընալ թէ երկրորդին վրայ ալ շաղփաղփեցին թէ ոչ: Ամեն մարդ կ'սկսէր ինէ կասկածիլ և վստահութիւնը վրայէս վերցընել, յարեց այրին իւր գեղեցիկ և փոքրիկ գլուխն երեքցընելով արտագին, ինչ ընենք, աշխարհքս քսուներով և շարախօսներով լի է, ինչ արտաուոց բաներ կը հնարեն մարդիկ:

— Աշխարհք ասուշ է, սխմար է, գոչեց ասպետը այսպիսի զրպարտութեան մը զոհ գացող կնոջ վրայ գութը շարժելով: Մարդիկ վատ են, անմիտ են, ամեն բանի կը հաւատան:

— Ըսածնիդ շատ ճշմարիտ է: Գուք այնպէս չէք . . . քարեկամ:

— Զիս բարեկամ կ'անուանէ, ըսաւ Քրուսթիյաք չափազանց ուրախացած: Եւ յարեց. Ո՛չ, ո՛չ, արդարեւ ես այնպէս չեմ:

— Անշուշտ, ըսաւ այրին, դուք ո՛րչափ տարբեր էք. և գիտէք որ այսբան յօժարութեամբ առաջարկութիւնս ընդունելով ո՛րքան կը հրապուրէք զիս:

— Իսկ ես ալ ինքզինքս անհուն երջանկութեան մը մէջ կը գտնեմ, տիկին:

— Այո՛, զիս կը հրապուրէք, յարեց Ասպետ—Մօրուքը յանկուցիչ ժպիտով մը, և ասպետին վրայ շնորհազարդ ակնարկ մը ձգելով, այո՛, հաւաստի եղիք որ զիս կը հրապուրէք, գլխէ կը հանէք. ո՛րքան հեղահամբոյր բնաւորութիւն մ'ունիք: Սակայն կը մտածեմ թէ օր մը ինչպէս պիտի կրնամ ձեզ յաջորդ մը գտնել:

— Ինչ յաջորդ մը գտնէք:

— Այո՛ . . . ձենէ ետեւ:

— Ինէ՞ ետեւ:

— Հարկաւ, ձենէ ետեւ:

— Տիկին, չեմ հասկընար ըսածնիդ, և չեմ ուզեր հասկընալ:

— Բայց չհասկընալու բան մը չկայ. միթէ ամեն ատեն կրնամ ձեզի չափ գիւրութեամբ ամուսնացող մէկը գտնել: Ո՛հ,

ո՛չ, ձեզի պէս մարդիկ հազուայիտ են:

— Բայց ի՛նչ կ'ըսէք, տիկին, գոչեց ասպետը պակուցեալ, այժմէն յաջորդս կը մտածէք:

— Այո՛, բա՛րեկամ, այո՛, պատասխանեց այրին սրտաշարժ և ցաւաղին զիմօք. այո՛, երբ դուք մեռնիք, հինգերորդ ամուսին մը գտնելու համար պիտի պարտաւորիմ չորս գին իյնալ, հարցընել, փնտռել: Երեւակայեցէ՛ք անգամ մը թէ ո՛րքան դժուարութեանց պիտի հանդիպիմ, ո՛րքափ կանխակալ կարծիքներ գիմացս պիտի ելնեն, ինչպէս պիտի կրնամ յաղթել այս ամենը, կարելի է որ չյաջողիմս: Մտածեցէ՛ք և դատեցէ՛ք. չորրորդ անգամ այրի պիտի մնամ. դուք այս կէտը կը մոռնաք, սակայն իրողութիւն մի՞ է այս, բա՛րեկամ, ձենէ ետքը չորրորդ անգամը պիտի ըլլայ որ—այրի պիտի մնամ:

— Բնաւ չեմ մոռնար այդ, տիկին, ըսաւ Ասպետը քիչ մը պաղտութեամբ և միանգամայն մտածելով թէ կինը փախուկ էր արդեօք, արդարեւ չեմ մոռնար, տիկին, թէ՛ եթէ ձեզի հետ ամուսնանալու պատիւն ունենամ և զիս կործնեցընէք, չորրորդ անգամ այրի պիտի մնաք. միայն կը տեսնեմ թէ սիրոյս շատ կարճ պայմանաժամ մը կը շնորհէք:

— Այո՛, աւա՛ղ, բա՛րեկամ, ըսաւ այրին փղձկեալ ձայնով մը, տարի մը . . . տարի մը, որ շատ քիչ է: Ճշմարիտ սիրոյ մէջ մէկ տարին ո՛րչափ շուտ կ'անցնի կ'երթայ, յարեց Ասպետ—Մօրուքը ասպետին վրայ արիւնասանձ ակնարկ մը ձգելով:

— Տարե՛ մը, կ'ըսէք, տիկին, տարի մը, գոչեց ասպետը. քայց մտածելով որ Ասպետ—Մօրուքն այս խօսքերով դուչէ իւր արիւթիւնը փորձել ուզէ, ասպետական եղանակաւ մը գոչեց. Ի՛հ, թո՛ղ այդպէս ըլլայ, տիկին, թո՛ղ իմեղջանկութիւնս տարի մը, օր մը, ժամ մը, վայրկեան մը տեսէ, հոգ չէ, ամեն բան աչքս կ'առնեմ, միայն թէ կարենամ ըսել որ ձեզի հետ ամուսնանալու երջանկութիւնը վայելեցի:

— Ճշմարիտ ասպետ մ'էք եղեր, ըսաւ այրին ուրախացած, ես ալ այսպէս կը յուսայի. հիմա զործը որոշուած է, միայն թէ

սրտաշաճութեամբ վարուելու համար սկսեք է որ Հոգեկորդիս իմաց տամ, վասն զի ամուսնանամ, չամուսնանամ, իրեն համար ինչ որ էի նշոյր պիտի մնամ:

— Բայց, տիկին, ըսաւ ասպետը քիչ մը շփոթելով, կրնամ արդեօք ձեզ հարցընել թէ . . . այն ցլորսին հետ ի՞նչ դործ ունիք . . . թէ ի՞նչ է իւր գիրքը ձեր քով: Կամ կը հաճի՞ք ըսել թէ ի՞նչ տեսակ մտերմութեամբ ինքզինքնիդ պարտաւոր կը համարէք ձեր գիտաւորութեան վրայ անոր խօսք բանալու:

— Մտազիւ . . . եթէ ձեզի չըսեմ, որո՞ւ պիտի ըսեմ հիմա, բարեկամ: Ահա կը յայտնեմ ձեզ ձեզ Հոգեկորդին իմ սիրահաններէս մին է:

Այս խօսքին վրայ Քրուսթիյաք երկու երէք անդամ հողաց և գէմքն այնպէս ծումակեց, որ Անժէլ քրքիջը փրցուց: Քրուսթիյաք պահ մը շփոթած կենալէ հունև սա իմաստուն խորհրդածութիւնն ըրաւ .

— Արդարև խենդ եմ ես: Գործը սա է. այն կոշտ մարդը քիչ մը ճաշակին յարմար եկած էր, բայց զիս տեսնելուն պէս ուրոշեց որ զայն ինձ զօճէ. զգուշութեամբ կը վարուի . . . խեղճ ցլորս: Բայց . . . ինչո՞ւ համար կ'ըսէ թէ մէկ տարիէն ետև ինձ յաջորդ գտնելու պիտի պարտաւորի . . . :

— Տեսէք, ահա ասիկ Հոգեկորդը եկաւ, ըսաւ Անժէլ, հիմա մեր գիտաւորութիւնը կ'իմացընենք իրեն, և յետոյ երեքս ալ իրր բարեկամ սեղան կը նստինք:

— Հոգ չէ, ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն՝ ցլորսը տեսնելով որ ներս կը մտնէր, այս կի՞նը կրնայ պարծենալ իբր առաջին կարգի տարօրինակ էակ մը:

Գ Լ Ո Ւ Ն Ե Ի Բ Բ Տ Ա Ս Ա Ն Ե Բ Ո Ր Դ

Բ Ն Թ Ի Բ

Երբ ցլորսը ներս մտաւ, ասպետը հազիւ կրցաւ զայն ճանաչել: Հոգեկորդը որսի հազուատները հանած և հագած էր՝ տաւառակ մը, ձերմակ և աշխէտ շերտերով կ'էլէ ըսուած մետաքսեայ կերպասէ լայն վարտիք մը. իւր թուխ մօրուքը տարածուած էր ձիւնի պէս ձերմակ շալիկին վրայ որ բաճկոնի մը պէս բուստէ կոճակներով վերէն վար գոցուած էր. ուսը ձգած էր մտաբեկ աշխէտ լաճակամար մը, դաւլայները նոյն գունէն էին, կոշիկներն սյծեամի կաշիէ շինուած և ժապաւէնէ լայն ծոպերով զարդարուած: Այս գեղեցիկ հագուստը ցլորսին հուժկու և բարձր հասակն առաւել ևս կը փայլեցընէր. ձրայնբուն լոյսը խիստ սրայծաւ ըլլալով, իւր դէմքը ցերեկուան չափ արևակեղ չէր երևեր. թուխ և ի բնէ պանրագեղ մազերը մինչև ուսերը կ'իջնէին. ասկէ գատ, որսորդութեան պէս տաժանելի արհեստի մը հակառակ, իւր ձեռքերուն գեղեցկութիւնն անպարտ մնացեր էր: Երբ ասպետը ցլորսը տեսաւ այսպէս փոխուած և գրեթէ անճանաչելի, թէև իւր թաւ մօրուքին պատճառաւ դէմքին խոժուտութիւնը միշտ նոյնն էր, ըսաւ ինքնիրեն .

— Արդարև կ'ազնոր այս անձը քիչ մը մարդու կերպարանք ունենայ. եթէ այնքան աղեղ ըլլար որչափ ի սկզբան երևեցաւ ինձ, այնպիսի տղեղ հակառակորդի մը վրայ յաղթանակ տանիլը խիստ մեծ նուաստութիւն մը պիտի ըլլար Փօլիֆէմ սը Քրուսթիյաքի նման անձի մը համար: Միայն թէ՛ թէ պէտ չեմ վախնար այս Ներբովլէն, սակայն Կապոյտ-Մօրուքի ընթացքը շատ տարօրինակ կ'երևի ինձ. ինչո՞ւ արդեօք իմ ներկայութեանս կը

Ճամբէ զայն : Չեմ ուզեր որ իմ առաւելութիւններս զինքն այս ան-
տիճան անողորմաբար զչեանելու ծառայեն . . . վասն զի , ինչ
որ ըլլայ , վերջապէս մարդ է . խեղճ ցլորսին վիճակը շատ ողոր-
մելի պիտի ըլլայ հիմա : Բայց պէտք չէ որ տկարանամ . իւր
հանդուցեալ ամուսնոց նկատմամբ յայտնած զաղտնիքներէն խա-
բուող մարդ չըլլալս և անոնց պէս աներկիւզ մեռնելու պատրաստ
ըլլալս պէտք է որ ցոյց տամ իրեն :

Քրուսթիյաք սոյն խորհրդածութիւնը կ'աւարտէր , երբ Ան-
ժէլ յաղթական դիմօք ասպետը ցուցնելով ըսաւ ցլորսին .

— Պ . ասպետը ձեռքս կը խնդրէ . . . : Հիմա կը տեսնե՞ս
թէ ո՞րչափ կը սխալէիր երբ կը սնդէիր թէ չպիտի կրնամ չոր-
րորդ ամուսին մը դանել : Հարկաւ կրնաս հասկընալ թէ ինչո՞ւ
համար այսչափ շուտով ընդունեցի ասպետին առաջարկութիւնը .
այսպիսի գեղեցիկ պատահութիւն մը չէի կրնար փախցընել :

Յլորսն անմիջապէս չպատասխանեց : Քրուսթիյաք ձեռքը սու-
րին դատտապանին տարաւ որպէս զի պատրաստ գտնուի եթէ
պատահի որ որսորդը սաստիկ նախանձէ մը գրգռեալ վրան յար-
ձակի : Բայց ո՞րչափ զարմացաւ բաղդախնդիրը երբ տեսաւ որ
Հոգեկորզն իւր թիկնաթուին մէջ լարուելով պատասխանեց :

— Սիրելիս , Փոթորիկ բարեկամին ըսածը ես ալ միշտ ըսած
եմ քեզ . Ամուսնացիր . . . եթէ առիթ մը գտնես , մի նայիր ,
ամուսնացիր : Քեզ առնող մարդ շատ չգտնուիր , վասն զի առած
ամուսիններդ ինչ ընելդ մարդ չգիտեր . սա յայտնի է որ շատ չեն
գիմանար . . . : Եթէ ինձ կը հարցընես , սատանութիւն մ'ու-
նիս դու . . . : Շատ անգամ տեսած եմ որ սա քնքուշ ձեռքե-
րովդ տեսակ մ'ըմպելի կը պատրաստես :

— Է՛հ , դե՛ս բանդ , ինչ շատախօս մարդ ես դու ալ , ըսաւ
Անժէլ փոքրիկ մատին ծայրովը ցլորսին սպառնալով :

— Բայց սո՞ւտ է ըսածս , յարե՞ց ցլորսը : Խնչէ այն մոխրա-
դոյն փոշին զաղտնիքը որմէ միայն պտեղ մը բան կերուցի աչ-
կերտին զոր յետոյ շուներս լափեցին : Խնչ տեսակ սատանայական
բաղադրութիւն մ'է այն :

— Օ՛ն ուրե՛մ , տիկին . ինչ փոշի է այդ , հարցուց Քրուս-
թիյաք , կրնա՞նք իմանալ անոր հրաշալի զօրութիւնը :

— Ո՛հ , ինչ թոյլ բերան ես , գոչեց Անժէլ ցլորսին երեսը
նայելով նեղացած : Պ . ասպետը հիմա զիս տղու տեղ պիտի դնէ .
երբ այդպիսի սնտախ բաներով գբօսնուլս իմանայ ինչ աչքով կրնա-
յի վրաս :

— Այդ մատին անհո՞ղ եղիք , ըսաւ Քրուսթիյաք . կ'երդ-
նում որ շատ ուրախ կ'ըլլամ երբ ձեր մանկական անբժութեան
նոր ապացոյցները ստանամ : Ըտէ՛ք ուրե՛մ , քաջ ներքովդ , ինչ
է այդ մոխրագոյն փոշին . . . :

— Ճշմարիտ կ'ըսեմ որ զիս պիտի ամէցունէք , ըսաւ Անժէլ
աչքերը խոնարհեցընելով և դէմքը նաղելի կերպով մը թթուեցը-
նելով :

— Մտածեցէ՛ք անգամ մը որ , ըսաւ ցլորսը , օղիի դաւածով
միայն մէկ պտեղ մը փոշի առի աշկերտիս :

— Յետո՞յ , ըսաւ Քրուսթիյաք ուշադրութեամբ :

— Յետոյ , երկու՞ օր շարունակ վրան զուարթութիւն մը կու
զար , անանկ որ իրիկուրնէ մինչև առտու , և առտուրնէ մինչև
իրիկուն կը խնդար . . . :

— Եթէ ամենը այդ է՝ բան մը չէ , ըսաւ Քրուսթիյաք . . . :

— Բայց մտիկ ըրէք , ըսաւ որսորդը . պէտք չէ կարծել թէ
այս բանը հաճելի էր աշկերտիս . . . զարհուրելի կերպով մը
կը տանջուէր , աչքերը դուրս կ'իյնային , և խնդացած ատենը
կ'ըսէր թէ բնաւ տանջանք մը չէր կրնար իւր կրածին հաւասա-
րիւ . . . երբորդ օրը ցաւն այնքան սաստիկ էր որ նուաղեալ ին-
կաւ , և տիկնոջ պտեղ մը փոշին համը բերանը մնաց : Ուտի
պէտք չէ զարմանաք . երբ լսէք թէ տիկնոջ երկրորդ ամուսինը
սարեկի պէս զուարթ էր , և մեռաւ խնդաղին :

— Ո՛հ , տէ՛ր Աստուած , փոքրիկ կատակ մ'անգամ ընելու
չէ , անմիջապէս երեսիդ կը զարնեն , ըսաւ Անժէլ կամշոտ աղ-
ջկան մը պէս նստած աթոռին վրայ տատանելով :

— Ասո՞ր ինչ կ'ըսէք , ընկեր , ըրածը կաղտակ կ'անուանէ : Ե-

ընակայեցե՛ք անգամ մ'որ տիկնոջ մոխրագոյն փոշիին շնորհիւ իւր երկրորդ ամուսինն այնչափ սաստիկ կը խնդար, որ արիւնը քթին, աչքերուն և ականջներուն մէջէն կը ժայթքէր . . .

Իսկ խնդումին զալով, այնպէս կը խնդար որ կարծես աշխարհիս ամենէն խեղկատակ մէկ բանը կը տեսնէր . . . սակայն և այնպէս նա ալ . . . աշկերտիս պէս . . . կ'ըսէր թէ կրակի մէջ ողջ ողջ այրելն այս խնդումէն լրացոյցն կը համարէր . վերջապէս խնդայէն պատատուելով և սոսկալի կերպով հայհոյելով այն ալ շուեց :

— Է՛հ . . . բասկան և այդչափ, ըսաւ Կապոյտ-Վօրուքը ուտերը բարձրացընելով : Յետոյ Կապոնին ականջին մտնեալով ըսաւ . Բա՛րեկամ, հանգա՛րտ եղիք . մոխրագոյն փոշիին զաղտնիքը մտոյայ . . . :

Ասպետը ժպտիլ ուզելով դէմքը սոսկալի կերպով ծռմուկեց . Գաղղիայէն մեկնած ասենը թոյներուն զարհուրելի դորձը դեռ ամենուն բերանն էր, և ամեն տեղ ժառանգութեան փոշիի, ծեղութեան փոշիի, այրութեան փոշիի, և այլն խօսքը կ'ընէին : Մինչև անգամ մի քանի թունաւորիչ կանանց անունը կու տային սոսկմամբ . ուստի Կապոյտ-Վօրուքին զուարթութեան փոշին կրնար սեւթոյր խորհրդածութիւններ ընել տալ ասպետին . ուստի Անժէլի վրայ կասկածոտ ակնարկ մը ձգելով ըսաւ ինքնիրեն .

— Արդեօք այս կինն իրօք տարբարանական բաղադրութիւններէ կը հասկընայ, այս պատմութիւնը ստոյգ է արդեօք :

— Ի՞նչ եղաք, ե՛ղբայր, ըսաւ ցլորսը զարմանալով Գրուսթիյաքի լուութեանը վրայ :

— Աը տեսնէ՛ք, աչքը վախոյոցիբ ինէ, ըսաւ այրին :

— Ո՛չ, գեղանի՛ տիկին, ոչ, ըսաւ Գրուսթիյաք . կրմաճեմ թէ խնդայէն մեռնիլը շատ զուարճալի բան մ'ըլլալու է :

— Շիտակը, իրաւունք ունիք, ե՛ղբայր . . . այս տեսակ մահը վերջին ամուսնոյն մահէն լրացոյցն է . . . ըսաւ ցլորսը սոսկմամբ :

— Ա՛նքեի թէ այս վերջնոյն մահն աւելի լուրջ եղած է, ը-

սաւ Գրուսթիյաք հանդարտութիւն ցոյց տալով :

— Չեմ ուզեր անոր պատմութիւնն ընել ձեզ, ընկեր, որովհետեւ շատ պիտի վախնայ . . . :

— Ե՛ս պիտի վախնամ, ըսաւ Կապոնը և ուտերը թոթուեց : Կապոյտ-Վօրուքը դարձեալ մօտեցաւ ասպետին ականջին և ըսաւ .

— Թո՛ղ պատմէ, բա՛րեկամ, այս պատմութիւնը դէժ կ'արժէ որ պատմուի . . . հիմա Հոգեկորդին օձիքը ձեռքս պիտի անցընեմ :

Այս ցլորսին դառնալով . — Օ՛ն ուրեմն, պատմեցէ՛ք նաւինք . կտրելու տեղը չէ . . . չէ՛ք տեսներ որ ասպետը բոլորովին ականջ կտրեր է ձեզ մտիկ ընելու համար . օ՛ն, սկսեցէ՛ք կ'ըսեմ . կ'ուզեմ որ ի՛նչ ըլլալս հասկընայ . . .

— Ինչ հրէշ մ'ըլլալը, յարեց ցլորսը խնդալով . հիմա, մտիկ ըրէ՛ք, բա՛րեկամ, ըսաւ Գրուսթիյաքին . այս երրորդ ամուսինն աղլաւ Սպանիացի, երեսունվեց տարեկան թխորակ և գեղեցիկ մարդ մ'էր . Հաւանայի մէջ որսացինք զինքը :

— Բայց շո՛ւտ ըրէ, Հոգեկորդ, շո՛ւտ ըրէ . ասպետը կը ձանձրանայ :

— Այս մարդուն ճաշակածը մոխրագոյն փոշին չէր, յարեց ցլորսը, այլ տեսակ մը կանաչ և գեղեցիկ հեղուկի կաթիլ մը միայն . և այս հեղուկն այնքան փոքրիկ սրուակի մը մէջ պահուած է որ կենացս մէջ նմանը տեսած չեմ ընաւ . մէջը փորուած միակտոր կարկեսանէ շինուած է :

— Բայց այդ բան մը չէ, ըսաւ Վնիէլ, այս հեղուկն այնպիսի զօրութիւն մ'ունի որ կարկեսանէ կամ աղամանդէ զատ ուրիշ ինչ տեսակ սրուակի մէջ դրուի, կը հալեցընէ կամ կը կոտորուէ զայն :

— Ասկէ կրնար հասկընող, ասպետ, ըսաւ որսորդը, թէ այս հեղուկն ի՛նչ հաճոյք պատճառած է մեր երրորդ ամուսնոյն : Թէպէտ ես փափուկ և երկչուտ մէկը չեմ, բայց վերջապէս մարդ բաւական գծուարութիւն կը կրէ մինչև որ վարժուի այնպիսի մէ-

կու մը երեսը նայելու որ զքեզ կը գիտէ կանաչախայտ և փառփուռն աչքերով, որք այնչափ խորունկ կերպով ներս քաշուած են, որ կարծես թէ մութ փոսի մը յատակը փոսուաներ կը տեսնես:

— Ինչոր ալ ըլլայ, ըսաւ Քրուսթիյաք, չլրնալով իւր մէկ թեթեւ սարսուռը բռնել, ինչ որ ալ ըլլայ, այս բանն առաջինն անգամ քիչ մը տարօրինակ կ'երևի . . .

— Այս բան մը չէ գեու, բարեկամ . . . : Գործին վերջն առէ՛ք, ըսաւ այրին կամայ մը, որուն գէմքէն կ'երևէր թէ այս պատմութիւնն իրեն փառք ու սրտիւ կը բերէր:

Յլորսը շարունակեց.

— Փոսուսոյի նման աչքեր ունենալն այն խեղճ մարդուն սովորական վիճակն էր միայն, և սոսկալին այն ատենն էր երբ տիկինը խնջոյք մը կու տար մեզ, այսինքն ինձ, Փոթորիկին և Մարգակերին: Այն ատեն տիկինը կարկէ-հանէ փորրիկ սրուակին մէջ արթնիզոսի փետուր մը կը թափէր և խեղճ Սպանիացին կանչելով փետուրը յօնքերուն կը քսէր . . . : Այն ատեն կարծես թէ խեղճին յօնքերէն անհամար կայծեր կը ցայտէին. իւր կանաչախայտ աչքերը, որք մինչև գանկին մէջ քաշուած էին, հետզհետէ դուրս կ'երևէին երկու հրեղէն գունտերու պէս կապիճներուն մէջ գլորուելով, և այնչափ պայծառ ըլլալ մը կը սփռէին, որ մեր խնջոյքը լուսաւորելու բաւական էին. սոյն միջոցին հանգուցեալը կանցուն և արձանի պէս անշարժ կը կենար ցաւաղին ձայնով մ'ըսելով. — Ուղեղս հալելով աչացս կանթեղներուն իւր կ'ըլլայ . . . : աչացս կանթեղներուն: Ասկէ կը հետևի որ խեղճ մարդը բոցէն զատ ուրիշ բան չէր տեսներ, ըսաւ ցլորսը սոյն գծնալ կատակին վրայ քրքիջ բառնալով: Եւ որովհետև իւր հատած ատեն կանթեղը կը մարի, յարեց նա, տիկինը ամուսինն ալ իւր նախորդայ քովը դնաց, որպէս զի ասպարէզը ձեզ թողու . . . :

— Հոգեկորզին քուրը ըսածները ճշմարիտ են, ըսաւ Ասպոյտ-Մօրուք սլորանօք: Թէպէտ գաղտնիք պահել չցիտեր, ինչ

պէս որ կը տեսնէք, բայց ստախօս չէ . . . : ինչպէս որ ես ալ չեմ: Հիմա կը տեսնէ՛ք, բարեկամ . . . : այլանդակ հաճոյնց տէր եմ, ծաղրելի բաները կը սիրեմ, ես ալ գիտեմ այսպէս ըլլալ . . . : բայց ի՛նչ ընեմ, փոխուիլ ալ չեմ ուզեր: Այսու ամենայնիւ կ'ուզեմ որ ամեն բան համարձակ ըսեմ և բան մը չպահեմ . . . : Հիմա պիտի հարցընէք ինձ թէ ինչո՞ւ համար միայն ամուսիններս զո՛հ կ'երթան տղայական խաղերու: Ասոր պատճառը շատ յայտնի է. միայն անո՛նց վրայ իշխանութիւն ունիմ . . . : և ասկէ զատ պէտք է որ առաջուց իմացընեմ իրենց զլխուն գալիքը . . . : Ահա այս պատճառաւ ամուսնանալը շատ դժուար է ինձ համար . . . : Ահա միայն այս պայմաններով կարմիր մարդը ամուսնութեանս դաշնագիրը կ'ստորագրէ. և այն ատեն իւր ստորագրած դաշնագիրը հրաշալի և միանգամայն խորհրդաւոր գորութիւն մը կ'ստանայ: Ո՛հ . . . : բարեկամ . . . : երանի թէ ժամանակ չանցած մեր նոր դաշնագիրն ալ ստորագրէր: Երկու ուրիշնոր բաղադրութիւններ ալ գտած եմ որք միւսներուն քով բան մը չեն, և կը յուսամ որ իրօք մողական արդիւնքներ պիտի ունենան:

Քրուսթիյաք բռնուեց մնացեր էր. ասոր պատճառ կը համարէր երկու օրէ ի վեր կրած յոգնութիւնները. կարծես միտքը թմրելով, Ասպոյտ-Մօրուքին և ցլորսին արտաուոյ պատմութիւնները տրամաբանօրէն հերքելու կարողութիւնը կորուսեր էր: Թէպէտ չէր հաւատար այս առասպելներուն, սակայն դէշ երազ մը տեսնող մարդու մը պէս վրան սոսկում մ'եկեր էր. չէր գիտեր թէ քո՛նն էր թէ արթուն. ասու զիմօք մէկ մը Ասպոյտ-Մօրուքին երեսը կը նայէր, մէկ մը ցլորսին, գրեթէ զարհուրած. սակայն իւր զիւրահաւանութիւնէն ամնալով, յանկարծ նստած տեղէն ելաւ և սկսաւ աշխուժիլ մը երթալ գալ, որպէս թէ շարժումը զինքը նեղող թմրութիւնը պիտի փարատէր:

Քրուսթիյաք չէր ուզեր այս երկու անձանց խաղալիքն ըլլալ, և գրեթէ կը զըջար այս արկածն անխոհեմութեամբ իւր ձեռօքն իւր գլխուն քրտելուն վրայ: Ուստի խիստ ձայնով մ'ըսաւ

Աստուծոյ Մօրուքին .

— Կ'իմանամ, տիկին, կ'իմանամ, զիս ծաղրել կ'ուզէք . պարտադ տեղը մի՛ յոյնիք, ըրածնուդ կատակ ըլլալը կը հասկընամ . . . չեմ հաւատար որ դուք այն աստիճան կատաղի և կախարդ ըլլաք որչափ կ'ուզէք կարծեցընել . աներկբայ եմ որ վաղը այս կատակերդու թեան պատնիքը պիտի հասկընամ . . . շիտակը խօսելով, այդ խաղը այս վայրկենիս սեռակ մը մըձաւանջ կը պատճառէ ինձ :

Այս խօսքերը, զոր Քրուսթիյաք ուրիշ նպատակաւ չըսաւ բայց միայն Կիւսքնակ-Բլուրին այս երկու բնակիչներուն հասկըցընելու համար թէ գիւրու թեամբ քի՞ն բռնուող մարդ չէր ինքը, տարօրինակ ազդեցութիւն մ'ըրին Աստուծոյ Մօրուքին վրայ : Սա զարհուրելով ցլորսին երեսը նայեցաւ, և ապա Քրուսթիյաքին դառնալով ըսաւ խորխոսածայն .

— Աստակ չեմ բնէր, պարոն . դուք ինձի հետ ամուսնանալու դիտաւորութեամբ հոս եկաք . ես ալ կը յօժարիմ, և սոյնաններս կ'իմացընեմ ձեզ . եթէ զանոնք կ'ընդունիք, ութ օրէն այս գործը կը բլրեցընենք . հոս մատուռ մը կայ . Մաքուսայի թաղին քարոզիչ հայր Արիփօն կու գայ և զմեզ կը ստանի . եթէ առաջարկութիւններս ձեր գործին չգան, կը մեկնիք այս սուրեն ուր գալու գործ մը չունէիք :

Աստուծոյ Մօրուքը քանի կը խօսէր իւր հեղինակ և զուարթ գէմը տխուր և դրեթէ սպառնալից երեւոյթ մը կ'առնէր :

— Ատակերդութիւն կը կարծէք այս ամենը, կրկնեց նա, եթէ այսպէս կարծելիք գիտնայի, դուք այս տանը մէջ վայրկեան մ'աւելի չպիտի կենայիք, պարոն, յարեց յուզուած ձայնով մը որմէ կ'երևէր թէ կ'ընը սաստիկ զղածուած էր :

— Ա՛յ . . . ասպետը չկրնար խաղ մը համարիլ այս, յարեց ցլորսը հարցախորձիչ գէմքով մը Աստուծոյն երեսը նայելով :

Քրուսթիյաք ի բնէ անհամբեր և աշխոյժ ըլլալով, այս տարօրինակ արկածին մէջ ճշմարիտն ու կեղծը չկրնալ հասկընալուն վրայ շատ կը սրտմտէր . ուստի գոչեց .

— Ա՛հ, հապա ինչ ըսեմ, տիկին . . . Անտառին մէջ ցլորսին պատահեցայ, ձեզ ճանաչելու համար ունեցած փափաքս իմացուցի անոր . նա ալ համարձակ ըսաւ ինձ ինչպէս որ դուք ալ ըսիք թէ ձեր սիրելին ըլլալու բաղաւորութիւնն ունիմ . . .

— Եւրը, պարոն .
— Եւրը, տիկին, ցլորսն իմ ըսածներուս չնայելով զիս հոս բերելու հաճեցաւ, կը խոստովանիմ որ խիստ փառաւոր կերպով հիւրընկալեցայ . զիս ձեզի ներկայացուցին . դուք ալ իմ բաղձանայս անդեկանալնուդ պէս յօժարեցաք ինձի հետ ամուսնանալու, յետոյ ակնկալութիւններս ձեր ցլորս բարեկամին իմացուցի : Մինչև այն ատեն գործն աղէկ կ'երթար . . . : Բայց յետոյ՞ ցլորսն ելաւ և ինձ հասկըցընել ուզեց, ձեզի հետ խօսք մէկ ըրած . թէ ես սահմանուած եմ չորրորդ հանդուցեալ մ'ըլլալու և խնդրէն մեռնող կամ ձեր տանդարամետական խնջոյնց մէջ աչքերը ջանք պաշտօն վարող մարդուն յաջորդելու :

— Այդ ըսածնիդ ճշմարիտ է, ըսաւ ցլորսը .
— Ինչպէս ճշմարիտ կրնայ ըլլալ, յարեց Քրուսթիյաք իւր թմրութենէն սթափելով և պահ մը կորուսած աշխոյժը վերստին գտնելով, միթէ ցլորից աշխարհին մէջ կ'այրիք : Միթէ Քրուսթիյաք սուպեան անբանի տեղ կը դնէք : Միթէ սատանային հաւատացող ակարամիտներն եմ ես : Ա՛յ, սպառ չեմ ես, և քսանչորս ժամ չանցած կրնամ այս անհեթեթութեանց ներքև ծածկուած պաղտնիքը երեսն հանել :

Անձէլի գոյնը նեանց, անձկութեամբ և երկիւղալից դիմաց ցլորսին երեսը նայեցաւ, և յետոյ զայրոյթը զսպելով պատասխանեց ասպետին .

— Բայց ս'ի՛ կ'ըսէ ձեզ, պարոն, թէ հոս պատահած բաները բնական են : Ես որ մանկամարդ եմ և հարուստ, գիտե՛ք ինչու համար ձեզ անսամ վայրկենիս ձեռքս նուիրեցի ձեզ : Գիտե՛ք արդեօք ինչ բանի փոխարեն կրնամ ընդունիլ այս ամուսնութիւնը : Գուք զձեզ լուսամիտ մէկը կը կարծէք . բայց ս'ի՛ ըսաւ ձեզ թէ ձեր իմացական կարողութենէն վեր երևոյթներ չ'ան :

Գիտէ՞ք ով ըլլալս, գիտէ՞ք ուր ըլլալնիդ, գիտէ՞ք արդեօք թէ ձեռքս ձեզի նուիրելուս մէջ ի՞նչ տարօրինակ դադանիք մը կայ: Պատակերգութիւն կը համարիք: . . . կրկնեց Ասպոյտ-Մօրուքը դառնութեամբ, դարձեալ ցլորսին երեսը նայելով սարսափահար դիմօք. երանի՛ թէ, պարոն, այս ամենուն խաղ մը չըլլալը հասկընալու շտիպուէիք: Գէթ, մի կարծէք թէ ձեր պահապան հրեշտակը ձեզ հոս բերաւ:

— Ասկէ զատ ձեզ ո՞վ ըսաւ թէ երբեք հասկէ գուրս պիտի ելնէք, յարեց ցլորսը պաղութեամբ:

Ասպետը քայլ մը նահանջեց, սարսուեցաւ և գոչեց.

— Բայց բռնութիւն պէտք չէ . . . գոնէ . . . եթէ ոչ . . .

— Եթէ ոչ ի՞նչ պիտի ընէք, ըսաւ Ասպոյտ-Մօրուքը այնպիսի ժպիտով մը յորում Աստրօնն անողորք անգթութիւն մը նշմարեց:

Քրուսթիյոսը շատ ուշ յիշեց որ իւր ներս մտնելէս հակ դռները վրայէն գոցուած էին, թէ մինչև այս դիտական տունը հասնելու համար թանձր կամարներու մէջէն անցած էր: Կրտսենէր սը Ասպոյտ-Մօրուքին, ցլորսին և իրենց բազմաթիւ գերիներուն իշխանութեան ներքև կը դատուէր: Գարձեալ և այս անգամ աւելի լուրջ կերպով ստիջացաւ, կոյրվուրայն այսպիսի փորձանքի մը մէջ նետուելուն համար: Սակայն և այնպէս Քրուսթիյոսը Ասպոյտ-Մօրուքին հիանալի դէմքը գիտելով, չէր կրնար հաստատաւ որ այս մանկամարդ կիին արիւնախանձ նենգաւոր մ'ըլլայ: Այսու ամենայնիւ կնոջ խոստովանած տարօրինակ դործերը, իւր վրայ պտըտած զարհուրելի գրոյցները, ցլորսին սպառնալիքները կ'սկսէին ասպետին վրայ տպուորութիւն մ'ընել: Խափշուհի մ'եկաւ իմացուց թէ ընթրիքը պատրաստ է: Այն միջոցին երբ ասպետը գլխուն գալիքին վրայ կը մտածէր, Անժէլ ցլորսին հետ ցած ձայնով վայրկենի մը չափ խօսակցեցաւ: Այս խօսակցութեանէն Ասպոյտ-Մօրուքը գոհ և մանաւանդ սիրտը հանգարտած կ'երևէր, վասն զի զուարթութիւնն սկսաւ իւր գիմաց դրայ փայլիլ, ժպիտը վերստին իւր շրթանց վրայ երևեցաւ:

— Երթանք, ապաք, ըսաւ Քրուսթիյոսը ուրախ դիմօք,

ալ ինէ մի վախնաք. գիտ դե մի կարծէք, և պատուեցէ՛ք այն համետ ընթրիքը զոր ինձ նման խեղճ այրի մը մեծ ուրախութեամբ կ'ընծայէ ձեզ:

» Այս խօսքերն ըսելէ յետոյ իւր ձեռքը շնորհալի կերպով մը Քրուսթիյոսին երկընցուց: Ընթրիքն այնքան շքեղ և այնքան ինամօք պատրաստուած էր, որ ասպետը ընաւ չէր կրնար տարակուսիլ Ասպոյտ-Մօրուքին ահապին հարստութեանը վրայ: Չենք մոռնար ըսել ընթրեցողաց թէ ոսկեզօծ արծաթէ անօթներն Անգղիոյ արքայական զինանշանը չէին կրեր, որն որ Ասպոյտ-Մօրուքին մասնաւոր փորճիկ սեղանին անօթներուն վրայ միայն կը տեսնուէր: Թէպէտ Անժէլ իւր շնորհալի ձեւերուն վրայ մեծ զուարթութիւն մ'ալ աւելցուցեր էր, թէպէտ ցլորսը զուարճալի հանձարարանութիւններ կ'ընէր, սակայն ընթրիքը շատ տխուր եղաւ Քրուսթիյոսի համար. իւր սովորական անխուովութեան յաջորդեր էր սեսակ մ'անորոշ անհանգստութիւն: Անժէլ որչափ դեղեցիկ կ'երևէր իւր աչքին, որչափ հրապոյր կը սփռէր, որչափ իւր շուրջը պատող պերճանքն ակնախտիղ էր, այնչափ ալ բազդախնդրին անվստահութիւնը կ'աւելնար: Յլորսին ըրած արտառոց պատմութիւնները, թէև անհետեւ, անդադար Քրուսթիյոսի մտքը կու գային, ինչպէս օրինակի համար մոխրադոյն փոշին որ դմարդ խնդալէն կը մնացրնէր, կարկեհանէ սրուակին պարունակած հեղանիթը որ մարդուն աչքերը բոցավառ կանխեղներու կը վերածէր: Թէպէտ այս պատմութիւնները դէշերագէ մ'աւելի իրականութիւն չունեցան, սակայն Աստրօնը վախճալով թէ մի գուցէ զինքը թունաւորելուզն, իրեն տրուած կերակուրներուն և զիններուն վրայ կը կասկածէր: Աչքը Ասպոյտ-Մօրուքին և ցլորսին վրայ էր. անոնց վարմանը մէջ անշնորհք բան մը չտեսաւ. Հոգեկորզը Ասպոյտ-Մօրուքին հետ այնքան ազատօրէն կը վարուէր որքան որ ամուսին մը իւր կնոջը հետ օտարականի մը առջև կ'ընայ վարուիլ պատշաճութենէ չհեղելով:

— Բայց ի՞նչպէս կրնայ ըլլալ որ, ըսաւ ասպետն ինքնիրեն, ցլորսն այս աստիճան զուշութեամբ շարժի, և ընաւ նախանձ

չ յայտնէ այնպիսի կնոջ մը վրայ որ անքան յայրատ լեզուաւ մը համարձակ կը խոստովանէր թէ Բարայիպն ու ծովասպատակը ցլորսին հետ հաստարապէս իւր սէրը կը վայելին :

Կասքօնն ինքնիշեան կը հարցընէր նաև թէ Կապոյտ-Վօրուքն ի՞նչ նպատակաւ ձեռքն իրեն կընուիրէր և ինչի՞ փոխարէն կընար ընդունիլ այս ամուսնութիւնը : Թէպէտ յանդուգն և ինքնահաւան , սակայն Բրուսթիյաք բաւական կորովամիտ ըլլալով կըցաւ նշմարել Անժէլի բուռն և անկեղծ սրտայուզութիւնն այն միջոցին երբ կիներ սաստիկ բարկացաւ բաղլախնդրին այն խօսքին վրայ թէ Կապոյտ-Վօրուքը իրեն հետ ամուսնանալու համանելով զինչը ծաղրել և կատակերգութիւն մը խաղալ կ'ուզէր : Այս մասին Բրուսթիյաք սխալած չէր . արդարև այն միջոցին Կապոյտ-Վօրուքին յուզմունքը մեծ էր , կարծես կը յուսահատէր սեննելով որ Կասքօնը Դիւաբնակ-Բլուրը պատահած բաները խաղ մը կամ կատակերգութիւն մը կը համարէր : Սակայն սիրտը հանդարտեր էր Կասքօնին դէմքէն անոր ներքին անհանգստութիւնը տեսնելով : Բրուսթիյաք երբէք այս աստիճան տարօրինակ վիճակի մը մէջ գտնուած չէր որ գերբնական ազդեցութեան մը կամ զօրութեան մը գաղափարն իւր մտայ ներկայանար : Այսու ամենայնիւ ինքնիշեան հարցուց թէ բոլոր լսածն ու տեսածը խիստ բնական բան չէ՞ր :

Նախապաշարումէ մը յառաջ եկած սոսկման սկզբնական տաղանայնները զոր Բրուսթիյաք կը կրէր , բաւական եղան զինքն աւելի սարսափահար ընելու : Չէր համարձակիր խոստովանիլ թէ իրմէ աւելի հանձարամիտ , իրմէ աւելի իմաստուն և գիտուն անձինք նոյն դարուն մէջ և դեռ այն ատենները գեներու իրական ներկայութեան հաւատք ընծայած էին : Ասկէ զատ բաղլախնդիրը մինչև այն ատեն կրօնից նկատմամբ ինչ աստիճան անտարբեր գտնուած էր որ վաղ կամ անուշան սատանային գոյութեանը պիտի հաւատար : Այս առաջին երկիւղը դէթ վայրկեան մը միայն՝ սպայեան սիրտը մտաւ և անցաւ , բայց սպառազային համար անջնջելի հետք մը թողուց հոն . սակայն և այնպէս սիրուն կնոջ արտա-

ծակովուտելը տեսնելով սկսաւ տակաւ առ տակաւ բացուիլ , այսպիսի փափկակեր մը չէր կընար խոտարի ոչի մ'ըլլալ :

Ընթրիքն աւարտելէ ետև , երբ սեղանակիցները նորէն սրահը քաջին . Կապոյտ-Վօրուքը հանդիսատէր ձայնով մ'արտեալին ըստաւ .

— Ամուսնութեանս պայմանները վաղը կ'իմացընեմ ձեզ . եթէ չընդունիք , Գիւարնակ-Բլուրէն կը մեկնիք : Չեք վրայ տ'ընեցած մտահոլութեանս ապացոյց մը տալու համար կը հաճիմ որ այս գիշեր այս տանը ներքին կողմը մնաք . թէպէտ բնաւ այսպիսի շնորհք մը չեմ ընէր օտարականայ , Հողեկորզը ձեզի յատկացեալ սենեակը պիտի տանի զձեզ :

— Կապոյտ-Վօրուքն այս խօսքերն րօտելէ ետև իւր սենեակը գնաց : Բրուսթիյաք մնաց թախծայից և մտախոհ :

— Ե՛հ , բարեկամ , ըսէ՛ք նայի՛ժ , ի՞նչպէս գտար Կապոյտ-Վօրուքը , ըսաւ ցլորան ասպետին :

— Ի՞նչ մտօք այդ հարցումը կ'ընէք ինձ , պա՛րոն . զիս ծաղրե՞լ կ'ուզէք , գոչեց ասպետը :

— Սա մտօք թէ մեր տան տիրուհոյն ձեր աչքին ինչպէս երևիլը հասկընալ կ'ուզեմ :

— Հըմ . . . հըմ . . . ըսելս պարսաւանք չըլլայ , կարծեմ դուք ալ կը խոստովանիք թէ այնպիսի կին մ'է զոր առաջին անգամ տեսնելով շատ դժուար է ինչ ըլլալը հասկընալ , ըսաւ Բրուսթիյաք քիչ մը դառնութեամբ : Ուստի մի՛ զարմանար , կարծիքս յայտնելէ առաջ քիչ մը մտածել կ'ուզեմ : Վաղը ձեզի պատասխան մը կու տամ եթէ ինքզինքիս աւելիք պատասխան մը գտնեմ :

— Եթէ ես ձեր սեղն ըլլայի , ըսաւ ցլորսը , ամենին չէի մտածեր . աչքս դոյնելով ամեն առաջարկութիւնները կ'ընդունի և իրեն հետ կ'ամուսնանայի , վասն զի , շխտակը խօսելով , մարդ չցիտեր թէ ո՛վ պիտի մեռնի , ո՛վ պիտի մնայ . մարդս քանի տարիքն առնէ ճաշակն ու ախորժակն ալ կը փոխուի . օրերն իրարու կը յաջորդեն և մէկ մէկու չեն նմանիր :

— Ա՛Տ, Տիմա կը հասկընամ թէ այդ առածներովու առակներով ինչ ըսել կ'ուզէք եղեր, դուք ասպետը բարկութեամբ: Ա՛դոնք ինչ ըսելուդ դո՛ւք ամուսնացէք անոր հետ:

— Ե՛ս:

— Ա՛յո՛, դուք:

— Ա՛յան զի ես ինդայէն մեռնելու կամ վառած կանթղի փոխուելու միտք չունիմ:

— Է՛Տ, կը կարծէ՞ք թէ ես ունենամ:

— Ա՛յո՛, քանի որ դուք չէք ուզեր կարմիր Գարդուն ձեր ամուսնութեան գաշնագիրն ստորագրելը, ինչպէս ըսաւ այլանդակ կինը, ե՛ս ինչու պիտի ուզեմ:

— Ա՛րեմն, մի ամուսնանաք, այդ ձեր զիտնալու բանն է:

— Հարկաւ այդ իմ զիտնալու բանն է, եթէ ուզեմ կ'առնեմ այն կինը, գուցե ասպետը, որ կ'սկսէր վախնալ թէ այս արտաւոյ մտածութեանց քառսին մէջ մի գուցէ խելքը շիտի:

— Ա՛րեմն, հանդարտեցէ՛ք, Ե՛ղբայր, ըսաւ ցլորսը, մի՛ բարկանաք, վասն զի իրաւունք չունիք: Մի՛թէ խոստումն չկատարեցի՞. Դիւաբնակ-Բլուրը բերի ձեզ, աշխարհիս ամենէն գեղեցիկ կինը կը յօծարի ձեզի հետ ամուսնանալու, իւր սիրտը և բոլոր հարստութիւնը ձեզ կը նուիրէ, ասկէց աւելի ինչ կ'ուզէք:

— Հաս ինչ որ կ'ըլլայ հասկընալ կ'ուզեմ, երկու օրէ ի վեր գլուխս եկածը, այս իրիկուան բոլոր տեսածներս ու լսածներս հասկընալ կ'ուզեմ, գուցե Բրուսթիյաք զայրադին, պիտի հասկընամ թէ արթուն եմ թէ հրազ կը տեսնեմ:

— Արտեսնեմ որ դուք գէշրան չէք սիրեր, Ե՛ղբայր, թերևս այս գիշեր այնպիսի երազ մը տեսնէք որ դձեղ լուսաւորէ: Բայց, շատ ուշ է, այսօրուան որսորդութենէն շատ յողնեցանք, հետս եկէք:

Այս խօսքերն ըսելէն ետև ցլորսը ճրաղ մ'առաւ և ասպետին ըսաւ որ ետէն գայ: Ըքեղ կերպով զարգարուած բազմաթիւ սենեակներու և փոքրիկ սրահի մը մէջէն անցան, այս սրահին ծայրը գտնուող գեղեցիկ սենեակ մը դացին որուն պատուհաններն

այն հեշտաչի պարտէզին վրայ կընայէին որուն վրայ արդէն խօսեցանք:

— Զինուորութիւն կամ որսորդութիւն ըրած էք հարկաւ, Ե՛ղբայր, ըսաւ ցլորսը, ուստի կը յուսամ որ առանց սպասաորի կրնաք ըլլալ, ինչու որ էրիկ մարդ ըլլալով ինէ, Փոթորիկէն և Քարայիպէն զատ ոչ որ կրնայ այս տանը առաջին գունէն ներս մտնել. մեր գեղեցիկ տանտիրուհին ձեզի համար բացառութիւն մ'ըրաւ. և այս ալ առաջին և վերջին բացառութիւնը պիտի ըլլայ: Ա՛րեմն, Ե՛ղբայր, Աստուած կամ սատանան հետդ ըլլայ:

Ցլորսը գուրս ելաւ և սենեկին դուռը Բրուսթիյաքի վրայէն դուրս բանալին երկու անգամ դարձընելով: Բրուսթիյաք շատ նեղացած ըլլալով փոքրիկ դարաստանին վրայ նայող պատուհաններուն մէկը բացաւ, որք պողպատէ հիւստած անբեկանելի վանդակներ ունէին. սակայն այս վանդակներէն պարտէզը շատ ազէկ կը տեսնուէր զոր լուսինը նոյն միջոցին մղմ'լուսով մը լուսաւորած էր: Բրուսթիյաք, որուն սիրտը տակաւին դողի մէջ էր, սենեկին բոլոր փայտակոյտներն ու տախտակամածն ու շի ուշով զննեց որպէս զի չըլլայ թէ որոգայթ մը լարուած ըլլայ. անկողնին տակը նայեցաւ, սուրին ծայրովը ձեղունը քննեց, բայց կասկածելի բան մը չգտաւ: Այսու ամենայնիւ խօհեմութիւն համարեց հաշուած պառկիլ և իւր հաւատարիմ սուրը քովը դրաւ: Թէպէտ միտքը գրած էր արթուն մնալ, բայց նոյն օրը կրած յոգնութիւններն և յուզմունքներն իսկոյն գինքն ի խոր քուն ձեցին:

Անմէկ նստած այն սրահին մէջ, որուն վրայ արդէն խօսեցանք, ցլորսին կ'ըսէր:

— Դժբաղդարար այս մարդը մեր կարծածին չափ տխուր և զիւրահաւատ չէ եղեր . . . : Իսաական է որ վառագատ որ մէկը չըլլայ:

— Ա՛յ, ո՛չ, մի վախար, ըսաւ ցլորսը: Ինքդինքը փիլիսոփայ կարծեցընել ուզեց . . . բայց մեր երկու պատմութիւններն ապշեցուցին զինքը: Այս իրիկուան լսածն ու տեսածները բնաւ

մարէն չպիտի ելնեն . . . և որ լատագոյն է, ուրիշներու ալ պիտի պատմէ. աներկբայ եղիւ որ պատմելիք բոլոր շափազանց բաներն արդէն Գիւարնակ-Բլուրին վրայ ամենուն ըրած խորհրդաւոր պատմութիւններէն յառաջ եկած տպաւորութիւնները պիտի վերանորոգեն :

— Ա՛Տ, գոչեց այրին սակաւին գող ի սիրտ, երբ բաղդախնդիրն ըսաւ թէ այս ամենը կատակերգութիւն մ'է, և անոր ներքեւ ծածկուած գաղանփքը պիտի հասկընայ . . . ակամայ ստեղծ մ'եկաւ վրաս . . . :

— Աւինալու բան չկայ, կ'ըսեմ ձեզ, տիկին Ասպոյտ-Վօրուք, ըստ ցլորսն Անժէլի ծօնկերուն փայելով և գողովալիբ ու զուարթ գիմօք երեսը նայելով, ձեր սատանայական համբաւն ախբան ամուր կերպով հաստատուած է որ ամենին ֆեսս մը չկրնար դարանոր, բայց իմ սքանչելի գիտերս ալ կարծեմ չէք ուրանար. մտերագոյն փոշին և կանաչ հեղուկը հրաշք գործեցին . . . :

— Ի՞նչ իմ երեւակոյցած կարմիր մարդս որ դաշնագիրս կ'ստորագրէ, ըսաւ Անժէլ խնդալն մարելով, ասոր ինչ կ'ըսես :

— Ըսելիք չկայ . . . և ահա կուզեմ որ միշտ այսպէս զուարթ և խնդամբես ըլլաս, ըստ ցլորսր: Երբ կրտենեմ որ տխուր ես և կրմտածես, կրվախմամ որ չըլլայ թէ այս առանձնարանն անտանելի ըլլայ քեզ . . .

— Հրահանքնիդ կրուէք, պարոն Հոգեկարդ. . . միթէ ձեր քովը ձանձրանալու կերպարանք մ'ունիմ: Արդիօք հակաապարհներնիդ ձեր նախանձը կր գրգռեն: Հարցուցէք անոնց թէ զձեզ անոնցմէ աւելի չեմ սիրեր . . . : Կասօրը հոս բերելով մեծ զրօսանք մը չհայթայթեցիք ինձ, սրտն պատճառաւ այնքան խնդացի և զուարճացոյ: Աւրջապէս եթէ սղայական երկկողներս չըլլային, երեկ յիմին խիստ սքանչելի շքուպիտի ըլլար . . . և այնպէս չէ, քանի որ դուք հոս էք, աչքերնիդ աչացս ներքեւ, ասարփածո՞ւղ իմ. . . : Բայց ինչ գեղեցիկ լուսնակ մը կայ . . . : Երթանք քիչ մը պտրտինք գուրսը . . . :

— Տունէն դուրս ելինք :

— Այո՛. . . մեծ ժայռին վրայ կ'երթանք զոր դիտես . . . հոնկէ ծովը կ'երևի հեռուն . . . : Ասանկ գեղեցիկ զիշեր մը տեսարանը շատ սքանչելի կ'ըլլայ :

— Ե՛լ ուրեմն, ս'ըջափ կամ շոտ ես, ան կրկնոյդ, ըստ ցլորսնը ելնելով :

— Օ՛ն, պարոն Սև-Վօրուք, գու ալ Սպանիական գլխարկդ ան և պատրաստուէ՞ զիս գրկելու, վասն զի քիչ մը դանդաղ եմ, և պիտի զգոշանաս որ չտահիս :

— Երթանք, տիկին Ասպոյտ-Վօրուք . . . բայց չէ՞ս ուզեր որ հիւրերնիս անդամ մը տեսնենք :

— Աներկբայ եմ որ խեղճը սոսկալի երազներ կրտեսնէ այս միջոցիս . . . : Ասղը իրեն սուսջնորդ մը կու տանք և զինքը կը ձամբենք, այնպէս չէ՞ :

— Ա՛յ. որ մ'ալ վար դնենք, ես քեզի կ'իմացընեմ թէ հայր Կրիֆօն ինչ կը խորհի այս մարդուն համար, զրօսանքները հաղուպիտ են, քեզ կը զուարճացընէ . . . :

— Տէ՛ր Աստուած, ինչ գեղեցիկ զիշեր մ'է, ըսաւ Անժէլ, վարագոյր մը բանալով, շրջապայութիւննիս մեծ ուրախութիւն մ'է ինձ :

Գիւարնակ-Բլուրին արտաքին դռները բանալ տալով ցլորսը և այրին գուրս ելան . . . :

Քրուսթիլաք զիշերը շատ հանդիստ քնացաւ թէ և չէր յուսար: Երբ արթնցաւ, արևն արդէն ծագեր էր, սենեկին պատահաններուն արտաքին վարագոյրները գոցեր էին արևուն լոյսը մեղմապընելու համար: Ասպետը զլետաները չհանած պակեր էր, անկողինէն իջնելով գնաց պատահանին վարագոյրը քիչ մը վեր առաւ :

Մըջափ զարմացաւ երբ երկայն ծառուղիի մը ծայրը, որուն երկու կողմի Հնդիկ արմատենիներն այնպիսի կամար մը ձևացուցեր էին ուրկէ արևուն ձառագայթները գրեթէ չէին կրնար թափանցել, տեսաւ որ Ասպոյտ-Վօրուքը հոսկու և բարձրահասակ Բարայիպի մը թեւը մտած կը շրջէր սիղաձեմ: Քարայիսը

վայրենեաց սովորութեանը համեմատ հրուկ ըստած տեսակ մը փայտուն և թուխ կարմիր ներկով ներկուած էր. իւր ողորկ և սև մաղերը, ճակտին մէջտեղէն բաժնուած, այսերն ի վար լճած էին. մօրուքը խնամօք փետուած էր. իւր գեղեցիկ գէմբին վըրայ վայրենեաց յատակ հանդարտութիւն մը և խառնութիւն մը կ'երևէր. սպարանոյն շուրջը կը փայլէին բարբառէ (տեսակ մը մետաղ որուն զաղանկը, կ'ըսեն թէ, միայն Հնդկիները գիտեն, և ոսկիէ, պղինձէ և արծաթէ կը բաղանայ եզեր) լայն մահիկներ: Այս մահիկները, որք շատադոյն էին, զարմանալի ճարտարութեամբ մը շինուած, և վրանին ալ մուրշաբարի դոյն ունեցող տեսակ մը կանաչագոյն պատուական քարեր պատուած էին. Հնդկիներն այս քարերուն համար կ'ըսէին թէ հրաշալի զօրութիւններ ունին:

Քարայիպը կապոյտ ծոցերով եզերեալ բամբակէ ձերմակ ղենջակի մը մէջ փաթթուած էր. այս մեծ ղենջակին լայն, պարզ և շնորհալի ծալքերը կրնային օրինակ ըլլալ արձանագործի մը: Բաց ի սպարանոյէն, մինչև ուր մերկ եղող աջ թևէն, և ձախ սրունքէն, այս ղենջակն ամբողջացէս սպարած էր զՔարայիպ: Թևերն ունէր քարաքօլի բտած մետաղէն ասպրաջաններ որոց վրայ նոյնպէս կանաչ քարեր պատուած էին. կտուի զոյնդոյն շերտերէ շինուած տեսակ մը տրիխտոր կոչիկներ հաղած էր, որք մինչև սրունքներուն կէտը կ'երևէին և զեղեցիկ տեսք մ'ունէին:

Անձէլ և Կումայէ, զան զի Քարայիպը Կումայէն էր, ծանր ծանր քաղցրով շիտակ ա՛յն սատահանին գիտացք կու գային որուն ետևէն Կապոնը զիրենք կը գիտէր: Անձէլ ձերմակ շարքէ առաօտեան երկար զլիստ մը հաղած և իւր բարակ մէջքն ալ վարդագոյն դօտի մը կապած էր. իւր գեղձան մաղերը մատաղաղեղ գէմբին շուրջը կը խոյոտէին, զոր բազմախնդիրը տակալին լոյս աչքով տեսած չէր: Անդադար կը հիանար գիտելով անոր սպիտակութիւնը, վարդագոյն այտերը և կապուտաղեղ աչքերը: Առջի իրիկունը Անձէլ շքեղ կերպով զարդարուած և

այնպէս Քրուսթիլյաքի երեցած էր, լայց Կապոյտ-Մօրուքին և ցլորսին յայնանած տարօրինակ դաղանիքներէն միտքը պաշարուելով իւր զարմանքը սրամտութեան ու երկիւղի հետ խառնուած էր, որով Անձէլի գեղեցիկութիւնը յաւէտ զինքը շլացուցած քան թէ սիրտը դրսուած էր. լայց երբ առաօտուն անոր սիրուն գէմբն իւր սարդ վիճակին մէջ տեսաւ, խորին տալուորութիւն մը զգալով սիրտը թունդ ելաւ, և Գիւսաբնակ-Բլուրն ու մարդակերն այլ ևս մտնալով, խելքն ու միտքն իւր աչքին առջև դանուող այն չքնաղ արարածին դնաց:

Սէրը . . . ճշմարիտ սէրը յանկարծ դրաւեց բաղդախնդրին սիրտը . . . որ մինչև այն ատեն այնքան սաստիկ սէր մը զգացած չէր: Այս յանկարծական սիրոյն արժարձումը թէև արագ և վայրկեական կ'երևէր, սակայն իրական և անկեղծ սէր մ'էր: Ստուգիւ՛ Քրուսթիլյաք առջի օրն ա՛յնքան սաստիկ յուզմանց, յեղակարծ զարմացմանց, տարօրինակ մտածութեանց ենթարկուեր էր, որ չէր կրցեր հանգարտ մտօք Կապոյտ-Մօրուքին գեղեցիկութիւնը դնահատել. սակայն գիշերուան քունէն և հանդատութենէն ինքզինքը գտնելով, անցեալը երազ մը կը թուէր իրեն, կարծես թէ առաջին անգամ կրտսնէր Անձէլը. հիանալով այն զիրարթեք և բարեձև հասակին վրայ զոր ձերմակ շղարչէ առաօտեան երկար զլետտը կը կազապարէր, այլ ևս չյիշեց այն անանկուռ շրջագետտը զոր առջի իրիկունը տեսնելով խելքը գլխէն դացած էր. աչքին առջև դանուող այն անմեղ և չքնաղ գէմբին վրայ ընդունայն կ'որոնէր իւր երեք հանդուցեալ տմուսնոց վրայ մահաշլակ կատակներ ընող այլանդակ կնոջ զինական ժողանները. . . : Ահրջմայէս Քրուսթիլյաք սիրահարած էր . . . : Թերևս ինքն էր փոխուողը, և ոչ թէ Կապոյտ-Մօրուքը. . . լայց սիրոյ հետ նախանձու անողոք կիրքն ալ մտաւ իւր սրտին մէջ:

Բազմախնդիրն երբ տեսաւ որ Անձէլ և Կումայէ երկու մտերիմներու պէս կը պտրաին, սաստիկ հետաքրքրութեան մը հետ սկսաւ նոր անձկութիւն մը, անհանդատութիւն մը զգալ: Կեղծին համար հանդուրժելի տեսարան մը չէր այս: Սերթ Անձէլ Գա-

բայիպին թեր կը թողոր և մանկական եռանդով ու հրճուանօք ոսկեթե միջաաներու ետևէն կը վազէր, կամ անուշահաս ծաղիկ մը փրցընելու կ'երթար, և ապա խտրոյն նումայէի քով կը վերադառնար, որուն հանգաբառութենէն և պատկառելի կերպարանքին այնպէս կ'երևէր թէ սոյն մանկամարդ կնոջ վրայ լորջ գորով մը և հոգածութիւն մ'ունէր: Մերթ ֆարայիսը ձեռքն Անժէլի կուտար որ համբուրէ: Անժ լայս շնորհքն իրեն համար մեծ ուրախութիւն մ'ու պարծանք մը համարելով, ֆարայիպին ձեռքը շրթանցը կը մօտեցընէր յարգանօք և միանգամայն սաստիկ սիրով. . . տեսնողն այնպէս կը կարծէր թէ իւր տիրոջ առջև հնազանդ և անձնանուէր գերիի մը պէս ապրելու վարժուած ֆարայիպ կին մ'էր նա: Եռամալէի ձեռքը սիրուն ծաղիկ մը կար զոր այրին տուած էր անոր. ծաղիկը ձեռքէն խնկաւ: Անժէլ խտրոյն ծուլով ծաղիկն առաւ և անոր տուաւ, բայց Եռամալէ բնաւ շնորհակալութեան նշան մը ցոյց չտուաւ կնոջ ու շաղբութեան համար:

— Ինչ ապուշ և անբան է, գոչեց ֆրուսթիյաք զայրադին: Բռնաւորի պէս կը վարուի: Ինչպէս այս հրաշաղեղ կինը կը հաւանի այսպիսի մարդակերի մը ձեռքը համբուրելու, որ սրբաւորն և առաքինի հայր Սիմօնի համար իբր միակ գովեստ ըսաւ թէ միտը շատ համով եկեր էր իրեն: Երեկ ցլորան էր, այսօր մարդակերը, վաղն ալ անշուշտ ծովասպատակ մը: Բայց այս կինը Մէսալին մ'ըլլալու է, յարեց ֆրուսթիյաք յուսահատութեամբ և սոսկիմամբ, վասն զի իւր սլալն մէջ իրական սիրոյ մը կայծերուն արագութեամբ արծարծիլը կ'զլար:

Այրին և ֆարայիսը հետզհետէ առելի մօտեցած ըլլալովայն պատահանին ուրկէ ասպետը զիրենք կը լրտեսէր, անոնց խօսակցութիւնը լսեց: Եռամալէ իւր ցեղին բնական եղած կոկորդային թեթեւ հնչմամբ մը զաղղիւարէն կը խօսէր. իւր խօսքերը հաուկաուր և կարճ էին: Քրուսթիյաք անոնց նոր սկսած մէկ խօսակցութենէն սա խօսքերը լսեց:

— Եռամալէ, կ'ըսէր քնքուշ կինը, որ ֆարայիպին թնկն կը թնամ իրենց կը նայեր կաթողին, Եռամալէ, դուք իմ տէրս

էք, պիտի հնազանդիմ ձեզ, իմ պարտականութիւնս, քաղցրիկ պարտականութիւնս չէ՛ հնազանդիլ ձեզ:

— Պարտականութիւնդ է, ըսաւ ֆարայիպ, որ կը դուրէր զԱնժէլ, բայց Անժէլ չէր դուրէր զայն: Երիկ մարդուն արժանապատուութիւնն այսպէս կը պահանջէր:

— Եռամալէ, կեանքս ձեր կեանքն է, խելքս միտքս ձեզի է, յարեց Անժէլ. ըսէ՛ր ինձ թէ սա ժանտախնձորին մահացուցիչ հիւթը շրթանցդ գայցուր, անմիջապէս հրամաննիդ պիտի կատարեմ ապացուցանելու համար թէ ձեր աղեղին, ձեր հիւղին, ձեր ծառափոր մակոյկին պէս ես ալ ձեր մէկ ինչքն եմ:

Այս խօսքերն ըսած ատեն Անժէլ ցոցոց ֆարայիպին, որ լուռ կեցեր էր, դեղնադոյն պտուղ մը զոր ձեռքը բռնած էր և որ ամենէն զօրաւոր թոյնը կը պարունակէր: Եռամալէ մի քանի վայրկեան տուր նայուածքով մ'Անժէլը դիտելէ ետև, իւր սջձեռքին ցուցամատը բարձրացընելով հրամայական նշան մ'ըրաւ: Այս նշանը տեսնելուն պէս՝ այրին մահացուցիչ պտուղն այնպիսի արագութեամբ շրթանցը մօտեցուց, որ եթէ ֆարայիսն առելի արագութեամբ չչարժէր, թերևս Անժէլ իւր տիրոջն ամենափոքր հաճոյց կոյր հնազանդութեան մ'աղէտալի ապացոյցը պիտի տար: Այն վայրկեանին երբ Անժէլ ժանտախնձորը շրթանցը մօտեցուց, կայծակի նման արագ սարսափ մը ֆարայիպին անտարբեր գէմքը պատեց. բայց խտրոյն հանդարտելով Անժէլի ձեռքը վար քաշեց, ճակատը համբուրեց, և քաղցր ձայնով մ'ըսաւ անոր. — Լաւ էր ըրածդ . . . :

Այս միջոցին Անժէլն ու ֆարայիսը ֆրուսթիյաքի պատահանին այնքան մօտեցած էին, որ սա խտրոյն ներս քաշուեցաւ վախաւալով որ չըլլայ թէ մտիկ ընելը տեսնեն, և գոչեց.

— Արչափ վախոյց կնոջն ըրածէն . . . : Բայց սա վայրի կենդանիին ինչ բտենք, որ թէ՛ իւր մորթին գոյնովը և թէ՛ յոյլ շարժումներովը խեղդեանի կը նմանի, և — Լաւ էր ըրածդ — կ'ըսէ, մինչդեռ հրաշաղեղ կինն անոր մէկ նշանին վրայ թերևս ինքզինքը պիտի թուճաւորէր, վասն զի յիմարական սէրը կանանց

ամեն բան ընել կու տայ : Յետոյ՝ սրահ մը վշտադին մտածելէ ետեւ , Աստուծոյ զօշոյց . Բայց սա՛ շեմ կրնար հասկընալ . . . կին մը թող մարդու մը վրայ խելքը թոցընէ , չըլլալու բան մը չէ այս . երկու մարդու վրայ , այս ալ տեսնուած է , թէև արդէն արտաուոց բան մ'է . բայց անկարելի է որ երեք մարդ մէկէն սիրէ , այս առասպելական է . . . :

Կնչ զարմանալի բան , ցլորսն ու ծովասպատակը քիչ դալով քարոզիչ օտոող սոսկալի մարդակի՛րն ալ աեւցուցեր է անոնց վըրայ , թողո՛ւնք որ ինձ ալ կ'առաջարկէ հետս ամուսնանալ : Բայց ո՛չ , ո՛չ , մարդուս խելքին դաշելու բան է այս . ինչ որ ալ ըլլայ , շեմ ուղեր հոս մնալ . ո՛չ , ո՛չ , բնաւ երբէք . տեսածներս զիմանալու բան չէ . կարելի է որ այս կնոջ լըջօրէն սիրահարելու չափ տխմարութիւն մ'ընեմ , բոլոր սուտելութիւններս կորսընցընեմ . Ճշմարիտ սէրը մարդս սաղի պէս անբան կ'ընէ . քիչ մ'առաջ տեսածներէս ի վեր կ'զգամ որ հոս եկած ատեն ունեցած արիւթիւնս շատ պակտեցաւ . մեղկանալ կ'սկսիմ , կըտեսնեմ որ ծագրելի փափկութիւն մ'ու դիւրազածութիւն մը կու դան վրաս : Պախի՛նք , փախչի՛նք , ըրածս յիմարութիւն մ'էր , տեսածս երաղ մ'էր . աղքատ ծնայ , աղքատ սպրեցայ , աղքատ պիտի մեռնիմ . կ'երթամ Վիքորնի նուաստը կըզանեմ , որ աղէկ մարդ մ'է : Կնչ որ ալ ըլլայ , ըսաւ Քրուսթիյաք այնպիսի վճատութեամբ որ իրեն պէս բնաւորութեան աէր եղողանձի մը համար ասորինակ կ'երնի , Կանիւլ նուաստը զրօնցընելու համար վտուած ճրագներ կ'ընէլէ աեւլի դձուձ վիճակներ կրնան ըլլալ :

Երբ աստեան այսպիսի տիւր խորհրդածութիւններ կ'ընէր , պառաւ Խափշուհին եկաւ սենեկին դուռը քերեց և իրեն խնացոց որ առջի իրիկունն իրեն սպասաւորութիւն ընող սև դերին դուրսի շէնքին մէջ իրեն կ'սպասէր : Քրուսթիյաք դերիին ետեւէն դնաց , մաղերը շակեց առաւ , ամիւռեցաւ , հագտեցաւ , և յետոյ դնայ Աստուծոյ զօշոյցին սպասելու այն սրահակին մէջ ուր արդէն առջի օրը սպասեր էր անոր : Շատ չանցաւ այրին եկաւ :

Գ Լ Ո Ւ Յ ՉՈՐԵՔՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Ս Ե Ի Բ

Քրուսթիյաք երբ Աստուծոյ զօշոյցը տեսաւ , զպրոցի աշակերտի մը պէս կարմրեցաւ :

— Երէկ ձեր առջև շատ անշարժք դանտեցայ , այնպէս չէ՞ , ըսաւ Անժէլասպետին հրապուրիչ ժպիտով մը , ինձ նկատմամբ դէշ դաղափար մը առի ձեզ , թոյլ աալով Հոգեկորդին որ խնդախնչաւու բաներ պատմէ . բայց ա՛լ չխաւինք ասոնց վրայ : Կ'իտե՛ք որ Եուսմալէ քարայրը հոս է :

— Պատահանէն տեսայ զինքը որ ձեզի հետ էր , աիկին , պատասխանեց բազրանցիբը դաւնութեամբ , և յետոյ մտքէն ըստաւ . Արդարև ամենին ամաշել չգիտեր այս կինը : Մե՛զք որ այսչափ ալ գեղեցիկ է : Բայց ո՛չ , Քրուսթիյաք , մի՛ տկարանար :

— Շատ գեղեցիկ չէ՞ Եուսմալէն , հարցուց այրին յաղթական զիմօք .

— Հըմ . . . հըմ . . . իբր վայրենի շատ գեղեցիկ կրնայ համարուիլ , պատասխանեց ասպետը նեղանալով . բայց ըստ որում առանձին ենք հոս , բռե՛ք ինձ , աիկին , թէ ի՞նչպէս կրնաք օրը (մի՛ վիրաւորիք այս հարցումէս , զոր պարագաները կ'ստիպեն զիս ուղլել ձեզ) ի՞նչպէս կրնաք օրը այսպէս սիրահար մը փոխել :

— Ո՛հ , այդ ալ հարցընելու բան է , ըսաւ այրին առանց քաշուելու , մէկը կու դոյ , միւսը կ'երթայ , շատ պարզ բան մի է այս :

— Մէկը կու դայ , միւսը կ'երթայ . . . արդարև ըստ ինքեան շատ սխալ բան մ'է այս . . . : Բայց , աիկին , ընու-

Թիւնն ու բարոյականը օրէնքներ ունին . . .

— Երեքն ալ զիս կը սիրեն, ես ինչու երեքը մէկէն չսիրեմ :
Կասոյտ-Մօրուքն այս խօսքերն այնպիսի միամտութեամբ մ'ը-
բաւ, որ աստիան ըսաւ իւրովի.

— Այս խեղճն անպատճառ անապատի մը կամ քարայրի մը
մէջ մեծցած ըլլալու է, բարոյն և չարին վրայ բնաւ գաղափար
չունի, զինքն հիմնովին գաստիարակել հարկ պիտի ըլլայ : Յետոյ
քիչ մը շփոթելով յարեց բարձրաձայն .

— Տիկին, այս առտու քարայրային հետ շրջապայծ ժամա-
նակնիդ զձեզ տեսայ և ձեր խօսակցութիւնը լսեցի, այս ըսելուս
համար կ'ողէք զիս անխոհեմ համարեցէք, կ'ողէք զլիսու ցաւ .
ինչպէս կրնայ ըլլալ որ քարայրային հրամայական մէկ նշանը
տեսնելուդ պէս ժանտախնձորը ձեր շրթանց մտեցուցիք թունա-
ւորութիւն աչքերնիդ առնելով :

— Եռամալէ եթէ, մտիք, ըսէ ինձ, կը մեռնիմ, պատաս-
խանեց այրին ախնով մը :

— Բայցցլորսն ու ծովասպտակն ինչ կ'ըսեն եթէ դուք քա-
րայրային համար մեռնիք :

— Շատ աղէկ ըրեր է, պիտի բռնն :

— Եթէ անոնք ալ ողեն որ իրենց համար մեռնիք :

— Անոնց համար ալ կը մեռնիմ :

— Ինչպէս որ կը մեռնիք Եռամալէի համար :

— Ինչպէս որ կը մեռնիմ Եռամալէի համար :

— Արեան երեքն ալ հաւատար սիրով կը սիրէք :

— Այո, ըստ որում երեքն ալ զիս հաւատար սիրով կը սիրեն :

— Քանի որ միտքն այսպէս հաստատ զրեր է, բնաւ անկե-
խախտելիք չունի, ըսաւ մտքէն Կառքօնը, այս բանին խելքս
չհասնիր. խօսուածքին անմեղութենէն յայտնի է որ չկեղծեր :
Թերևս չար լեզուներ այս մանկամարդ կնոջ երեք աւաղակներուն
վրայ ցոյց առած եղբայրական սիրոյն գեշ մեկնութիւններ ստած
ըլլան : Սակայն ցլորսը կերպով մ'ինձ հասկըցուց որ . . . :
Բայց կարելի է որ ես սխալ հասկըցած ըլլամ, և որովհետև

պիտի բաժնուիմ իրմէ, լաւազոյն կը համարիմ զինքն անմեղ կարծել-
քան թէ մեղապարս, թէև շիտակը խօսելով անմեղի մը վարմուն-
քը բնաւ չեմ տեսներ : Յետոյ յարեց .

— Վերջին հարցում մ'ալունիմ, տիկին, ինչնպատակաւ ե-
րէկ ցլորսին հետ այն գեշ կատակաբանութիւններն ըրիք ձեր եր-
կու ամուսնոց վրայ, որոց մին իբր թէ խնդալէն մեռեր է, և
միւսը վատած կանթեղի փոխուեր է, շնորհիւ այն կարմիր մար-
դուն որ ձեր գաշնազիրը կ'ստորագրէ եւեր : Կարծեմ չէք վշտա-
նար, տիկին, եթէ ըսեմ թէ այսպիսի խենդութեամբ խօսքերը
չեմ կրնար լուրջ բան մը համարիլ :

— Խենդութեամբ խօսքեր չեն անոնք :

— Ինչ, կ'ողէք որ հաւատամ . . . :

— Ահ, պէտք է որ ասոնց և ուրիշ շատ բաներու հաւա-
տաք, վերջապէս պէտք է որ ասոնց ամենուն ակներև ճշմարտու-
թեանը համոզուիք, ըսաւ սլորին տարօրինակ ձայնով մը :

— Ե՞րբ պիտի բացատրէք ինձ այդ գեղեցիկ գաղտնիքը, տի-
կին :

— Երբ ամուսնութեանս պայմաններն ըսեմ ձեզ :

— Ա, մի և նոյն կատակը կ'սկսի, ըսաւ Կառքօնն ինքնիրեն :
Խարուի ձեպընենք և տեսնենք թէ տակաւին ինչե՞ր ունի ըսե-
լիք. երանի թէ տղայական սէրս բոլորովին մարելու չափ նոր
այլանդակութիւններ ընէր : Ապա յարեց բարձրաձայն . Այդ պայ-
մաններն այսօր պիտի իմացընէք ինձ, այնպէս չէ, տիկին :

— Այո :

— Ժամը քանիին :

— Իրիկանը, երբ լուսինն ելնէ :

— Ինչո՞ւ համար այն ատեն, տիկին :

— Այս ալ գաղտնիք մ'է զոր միւսներուն հետ կ'իմանաք :

— Եւ եթէ ձեզի հետ ամուսնանալու ըլլամ, իրօք մէկ տա-
րիէն աւելի կեանք չպիտի շնորհէք ինձ :

Կասոյտ-Մօրուքը հառաչեց և իւր գեղեցիկ գլուխն երեւը-
նելով ըսաւ տխրազին .

— Աւա՛ղ, կը յաւիմ ըսել թէ մէկ տարիէն աւելի չեմ կրնար տալ :

— Միշտ խաբուիլ ձեացընե՛նք, ըսաւ Ասաբօնն ինքնիրեն . և յարեց . Չեր կամօքն է որ կենացս վախճանն այդչափ շուտ պիտի հասնի :

— Ա՛չ, ո՛հ, ո՛չ, զոչեց այրին :

— Ըսել է որ դուք անձամբ չէք առեր զիս, ըսաւ Քրուս-թիյաք :

Այս հարցման վրայ Ասպոյտ-Մօրուքին դէմքը բոլորովին փոխուեցաւ և լուրջ ու ծանր կերպարանք մ'առաւ . իւր սիրուն զլուխը բարձրացուց, և ասպետը զարմանօք տեսաւ որ կնոջ դէմքին վրայ քաղցրութիւն մը և աղնուութիւն մը սկսեր էր փայլիլ :

— Մտի՛կ ըրէք, ըսաւ սիրալիր րայց տիրական ձայնով մը . Ահնացս ինչ ինչ պարազաններուն պատճառաւ շատ անդամտարօրինակ ընթացք մը բռնելու ստիպուած ըլլալէս, և ունեցած աղա-տութիւնս թերևս չարաչար գործածելէս պէտք չէ կարծել թէ աղնուասիրտ անձինքը չեմ ճանաչեր :

Քրուսթիյաք անհնարին զարմացմամբ այրին կը դիտէր : Արօծես մի և նոյն կինը չէր խօսողը : Սոյն միջոցին Ասպոյտ-Մօրուքն աղնուատոհմ տիկին մը կ'երևէր իւր աչքին : Ասպետն այն աստիճան խռովեցաւ որ խօսքը բերնին մէջ կապուեցաւ : Ասպոյտ-Մօրուքը յարեց .

— Ինձ կը հարցընէք, պարոն, թէ կ'ատեմ՞ ձեզ . մենք տա-կալին այնպիսի յարաբերութեան մը մէջ չենք որ իրար ատելու և կամ չատելու բան մ'ունենանք, րայց բնաւ չեմտտեր զձեզ . . . ստուգիւ դուք խիստ պարծուի, խիստ մեծարան, խիստ յանդուգն մէկն էք . . . :

— Տիկին . . . :

— Բայց բարեսիրտ էք, կտրիճ էք, և աներկբայ եմ որ ի հարկին կրնաք վեհանձնութեամբ նուիրել անձերնիդ . դուք աղքատ և աննշան տոհմէ էք . . . :

— Տիկին, կարծեմ Քրուսթիյաք տոհմին անունը կրնայ որ և է արժէք մ'ունենալ, զոչեց ասպետը չկրնալով յաղթել հսար-տութեան ոգին :

Այրին ասպետին խօսքը չլսելու դարնելով շարունակեց .

— Եթէ դուք զօրաւոր և հարուստ ծնած ըլլայիք, ձեր զօրութիւնն ու հարստութիւնը խիստ օգտակար կերպով պիտի գործածէիք . չքաւորութիւնը կրնար աւելի գէշքաներ թելադրել ձեզ, քայց կը անսնեմ որ այնպէս ըրած չէ, վասն զի դուք շատ տա-ռապանք և զրկանք կրած էք :

— Բայց, տիկին . . . :

— Ինչպէս որ ձեր աղքատ վիճակին մէջ անհոգ և անարտունջ եղած էք, հարստութեան մէջալ առատաձեռն և բարե-գործ անձ մը պիտի ըլլայիք . ըսել կ'ուզեմ թէ ինչպէս որ չքաւորութիւնը ձեր բարքն ասպականած չէ, նոյնպէս ալ հարստութիւնը չպիտի կրնար եղծել զայն, և այս ալ հաղուազիւտ բան է : Եթէ ձեր լաւ յատկութիւններն երիտասարդական անխորհուրդ գործերնէդ աւելի ծանր չլլուէին, զիսցամ եղիք, պարոն, որ ասնը դուր ձեզի չէր բացուեր : Եթէ այս իրիկուն ձեզ ընելիք առաջարկութիւնս ձեր գործին չգայ . . . գէթ աներկբայ եմ որ Ասպոյտ-Մօրուքին մէկ չար յիշատակը չպիտի տանիք հետերնիդ : Ինդրեմ, քիչ մը սպասեցէք հոս, յարեց Անժէլ ժպտելով, երթամ Եուճալէին ճաշն անդամ մ'աչքէ անցընեմ, վասն զի Քարայիպնե-րուն մէջ սովորութիւն է որ այս պաշտօնը միայն կանանց կրվե-րաբերի, և կ'ուզեմ որ գէթ այս նկատմամբ Եուճալէ ինքզինք իւր սանը մէջ կարծէ . . . :

Այս ըսելով այրին դուրս ելաւ : Սոյն խօսակցութենէն, ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, ասպետին գործը լմնցաւ : Այրին Քրուսթիյաքի բարուց նկարագրութիւնն ըրած ասեն համակրա-կան, շնորհալի և վսեմ կերպով մը խօսած էր : Արջպէս այն-քան նոր կերպարանք մ'առած էր, որ ասպետին բոլոր ենթա-դրութիւնները շփոթեցան : Անժէլի պարզ և խանդաղատական խօսքերուն հետ իւր քաղցր և վեհ նայուածքը մեծարանաց խօս-

քերէ շատ աւելի պարծանք և ուրախութիւն պատճառեցին ասպետին : Սիրտը բերկրութեան և միանգամայն երկի զի խառն զգայմամբ լցուած, այնքան սաստիկ և հաստատուն սէր մը զգաց Անժէլի վրայ, որ եթէ աղքատ և լքեալ կին մ'ալ ըլլար, իւր անձն արիութեամբ և վեհանձնութեամբ պիտի նուիրէր անոր : Այս ալ ահա ճշմարիտ սիրոյ մէկ ճշմարիտ նշանն է :

Ասպետին իւր անձին վրայ ունեցած անտանելի համարումը յանկարծ ոչնչացաւ . կ'նշ ծաղրելի գրից մէջ գտնուած ըլլալն իմացաւ, և կարծես թէ ճշմարիտ զգայմանց յատկութիւնը զմեզ ուղղել, մեր խոհականութիւնն ու սրամտութիւնն աւելցընել ըլլալով . . . ասպետը՝ Անժէլի խոստովանութիւններէն և վարմունքէն բնականաբար յառաջ եկած հակասութեանց քառսին մէջէն գուշակեց թէ այս արտաքին երևութից ներքե լուրջ և ծանրակշիռ զաղանկը մը սքողեալ ըլլալու էր . մտածեց թէ Կապոյտ-Վորուքին իւր սիրականներուն հետ, ինչպէս կ'անուանէր զանոնք, ունեցած մտերմութեան ներքե ալ անշուշտ ուրիշ զաղանկը մը կար ծածկուած, և թէ այս զեռահաս կիներն անպատճառ վատօրէն զրպարտուած ըլլալու էր . ասկէ զատ ինքնիրեն ըսաւ, և այս ալ շատ հաւանական կրթութիւն, թէ Անժէլ օտարականի մ'առջեւ այնքան սոսկալի լրբութեան օրինակ մը չպիտի ասար եթէ խիտ մեծ և կարեւոր պատճառ մը չունենար : Կապոյտ-Վորուքը Քրուսթիյաքի մտայը մէջ այսպէս մարբուելով, իւր երեք ամուսնոց սպանութենէն բոլորովին անպարտ երևեցաւ անոր :

Աերջապէս սէրն այն աստիճան փոխեց բաղախնդիրը, որ սկսաւ կասկածիլ թէ Գիարնակ-Քլուրի մնակեցուհին զինքը ծաղրել ուզած ըլլալու էր . և միտքը դրաւ որ իրիկունն այրին իւր ամուսնութեան պայմաններուն կ'նշ ըլլալն իմացուցած ատեն այս կասկածն ստուգէ : Բան մը կար սրուն Քրուսթիյաքի խելքը չէր հասներ . այրին ինչպէս կրցեր էր իւր վարած կեանքին վրայ տեղեկութիւններ ստանալ : Սակայն յիշեց որ Աբեգնի նաւուն մէջ գտնուած ատեն՝ իւր անցելոյն մէջ ըրած գործերուն մեծագոյն մասը, մի քանի մանրամասն պարագաներէ զտտ, ամու-

նուն ալ պատմած էր, և թէ Կապոյտ-Վորուքին Աէն-Պիէրի մէջ ունեցած գործակատարը կրնար Գանիէլ նապետին նաւորդներէն իմացած ըլլալ : Աերջապէս Քրուսթիյաք իւր նոր զգացման պատիւ բերող իմաստութեամբ և ողջմտութեամբ սա երկու հնթադրութիւններն ըրաւ .

— Կամայն է որ Կապոյտ-Վորուքը զուարճանալ ուղած է, և այս իրիկուն բացէ ի բաց պիտի բռնէ ինձ . «Պարոն տասկետ, ձեր ըրածը հետաքրքիր և յանդուգն մարդու մը գործ էր . սնապարծութենէ մնրբեալ, ընչաքաղցութենէ շարժեալ, մէկ ամուսէն ամուսինս ըլլալու խօսք տուիր . ուղեցի որ ձեզ քիչ մը չարչարեմ, և վայրագութեան համբառոյս մէկ փորձը սամ ձեզ . ցլորսր, ծովասպատակը և Քարայիսը իմ երեք ծառաներս են, միայն անոնց վրայ կատարեալ վատահոթութիւն մ'ունիմ, և որովհետեւ բնակութենէ խիտ հեռու գտնուող տան մը մէջ առանձին կ'ապրիմ . . . իւրաքանչիւրը կարգաւ վրաս հսկողութիւն ընելու գայ . . . : Իմ մասիս պարտողանհեթեթ զրոյցները զիտնալով, ձեր զիւրահաւանութենէն ինձ դրօսանք մը հանել ուղեցի . այս առաւօտ ծառուղոյն ծայրէն զիս լրտեսելնիդ տեսայ, և ժանտախնձորին խաղը Կուճալէի հետ կարգադրուած գործ էր, իսկ ճակատէս սուած համրոյրին զալով . . . »

Այս մասին ասպետը պահ մը շփոթած մնաց, վասն զի չէր զխտեր թէ իւր ենթադրած խաղին այս պարագային կ'նշ մեկնութիւն տալու էր, բայց խնդիրը լուծեց ինքնիրեն ըսելով թէ այսպիսի մտերմական համրոյրներն անշուշտ Քարայիսներուն մէջ անպատեհ բան մը չեն համարուիր : Ասպետն այս բացատրութիւնը զոհարարեց իր համարէր . և իւր պակասութիւնը ճանաչելով (թէ և քիչ մ'ուշ) միտքը դրաւ որ իւր խօշականյոյսէն հրաժարի, աղաչէ կնոջ որ իւր ընթացից նկատմամբ անյիշաչար գանուի, անոր ձեռքը համբուրէ, ուղեցոյց մը խնդրէ, իւր հին և զոյնը նետած թիկնոցն ու գուրպաները հաղնի, և Աբեգնի նաւապետնի սենեկակից ըլլալով աւելի երջանիկ վիճակի մը սպասէ : Եթէ, ընդ հակառակն, այրին ասպետին նկատմամբ լուրջ զիտաւորու-

Թիւններ ունենայ (որուն հաւատալը չէր դար իւր արժանեաց չափը ճանաչելէն ի վեր), այս երջանկութեան համար մինչև անդամ իւր կեանքը վրայ տալու ալ ստիպուի, երախտադիտութեամբ ընդունի այս ամուսնութիւնը, միայն թէ իւր կնոջ պահանջութեան գործն ինք ստանձնէ, հաստատապէս որոշելով որ ցլորսն իւր խոհարանը, ֆարայխայն իւր հիւղը և ծովասպատակն իւր նաւը ճամբէ, եթէ այրին լաւադոյն չհամարի իրեն հետ Գաղղիա վերադառնալով հոն բնակիլ:

Ի դովեստ խեղճ ասպետին պարտինք ըսել թէ իւր այս վերջին կենթադրութեան ինքն ալ չէր հաւատար. Ապոլոյտ-Մօրուքին ըրածնեբուն նկատմամբ իւր տուած առաջին մեկնութիւնն աւելի խոհական և աւելի հաւանական կը համարէր: Ա երջապէս բարոյականին՝ Ֆիլիքականին վրայ բնականաբար ըրած ներգործութեամբը, ասպետին գոռոզ և պարծուկ կերպարանքն իւր յանդգնութեան և ինքնահաւանութեան հետ անհետացաւ . . . : Իւր դէմքն՝ այլ ևս տարապայման սնապարծութեամբ մը չփրանալով, եթէ չզեղեցկացաւ նէ ալ, գէթ շնորհք մ'առաւ, վասն զի անոր վրայ այլ ևս ասպետին՝ միայն լաւ յատկութիւնները կը տեսնուէին, այս է իւր հաստատմութիւնը, արիտ թիւնը, մինչև անգամ ուղղամտութիւնը, վասն զի առանց ասոր անկարելի էր որ Աստուծոյ իւր մեծարանութեանց մէջ այնքան ազատ և համարձակ խօսէր:

Մինչդեռ Գրոսթիյաք անհամբերութեամբ կ'սպասէ որ իրիկուն ըլլայ և տեսնէ թէ տակալին ինչե՛ր սլիտի պատահի իրեն, վասն զի Ապոլոյտ-Մօրուքը իւր վերջին դիտասրութիւնները պիտի իմացընէ, մենք ընթերցողը Մարթինիքայի Փօր-Բօայալ քաղաքը կը տանինք, որ կղզւոյն գլխաւոր նաւահանգիստն է, և կուսակալը սովորաբար հոն կընստի: Այս միջոցիս մեր պատմութեան հետ սերտ կապակցութիւն ունեցող դէպք մը կը պատահի: Սէն-Փիէրի նաւահանգիստը ուր Աիքօրն նաւը մօտեցած էր, վաճառաբարձ նաւերու յատկացած էր, ինչպէս որ Փօր-Բօայալի նաւահանգիստն ալ պատերազմական նաւերու յատկացած էր:

Գրեթէ այն պահուն՝ երբ Եուսալէ Ապոլոյտ-Մօրուքին հետ Դիւարնակ-Բլաբը պարտելու ելած էր, Փօր-Բօայալի մէջ կուսակալին ասպարանաց վրայ շինուած պահականոցին պահնորդը Գաղղիական Փրքաթօնի մը գալուն նշանը տուաւ. իսկոյն պահնորդն իւր օգնականը բերդին մարտկոցին հրամանատար յիննապետին դրկելով նաւուն գալը իմացուց անոր, որպէս զի արքայական դրօշակն ըստ սովորութեան սղջունեն, վասն զի նաւահանգիստը հասնող պատերազմական նաւերուն համար տասներկու թնդանօթ կ'արձակուէր բերդէն: Բայց ո՛րչափ զարմացաւ պահնորդը և միանգամայն զյջաց իւր օգնականը փութով յիննապետին դրկելուն վրայ, երբ տեսաւ որ Փրքաթօնը նաւահանգիստը չմտած առագաստներուն հովը պարպեց և մակոյկ մ'իջեցուց ծովը. մակոյկը դէպ ի նաւահանգստին բերանը կը դիմէր բռնաթի, մինչդեռ Փրքաթօնը վեր վար երթալ գալով անոր կ'սպասէր:

Նաւուն այսպէս ընելն այնքան անսովոր բան մ'էր որ պահնորդը կուսակալին պահասան զօքաց հարիւրապետին երթալով իրողութիւնն իմացուց անոր, որպէս զի մարտկոցէն թնդանօթ արձակուելու համար տրուած հրամանը ետ առնուի: Այս հրամանը ետ առնուելով, հարիւրապետն իսկոյն կուսակալին գնաց և Փրքաթօնին տարօրինակ շարժումն իմացուց անոր: Թամ մը ետքը մակոյկը Փօր-Բօայալ հասաւ և ազնուականի հաղուստով մարդ մը ցամաք հանեց, որուն հետ նաև Փրքաթօնին տեղակալը: Այս անձը Մարթինիքայի կուսակալ Բիւփինէլ սեպուհին քովը գնաց:

Տեղակալը Ֆիլիքականի հրամանատար նաւապետին մէկ նամակը յանձնեց սեպուհին: Իւր նաւը հրաման ընդունած էր մեկնելու պատրաստ սպասել Պ. տը Շէմրօյի յանձնուած պաշտօնին արդեանցը և անմիջապէս ճամբայ ելնել. նաւուն մարդոցը համար քիչ մը թարմութեամբ և ջուր սլիտի առնուէր շտապաւ: Տեղակալը գնաց Փրքաթօնին համար պէտք եղած նպարը շուտով հայթայթելու. Պ. տը Շէմրօ և կուսակալն առանձին մնացին: Պ. տը Շէմրօ քառասունհինգ յիսուն տարեկան մարդ մ'էր. դէմ

քը թուխ և ձիթադոյն ըլլալով, իւր կատուտակ աչքերն աւելի նս փայլուն կ'երևէին. սև կեղծամ մը գրած և բողբոսիքը ոսկի ժապաւենով թխադոյն թիկնոց մը հապած էր. ուշիմ անձի մը կերպարանքն ունէր, խօսուածքը յստակ և կարճ էր, նայուածքը սուր և թափանցող. շրթունքներն սխրան նուրբ ու ներս քաշուած էին, որ բերանն առանց շրթունքի կ'երևէր և բնաւ չէր ժայտեր. եթէ հեղինարանութիւն մ'ընէր, այն որ երբեմն կը սրատահէր, գէմքը սովորականէն աւելի լուրջ տեսք մը կ'առնէր. սակայն և այնպէս խիստ բարձր բնկերութեան մը վերաբերող անձի մը վառքն ու քաղաքավար ձևերն ունէր: Այնպիսի արիւթ թիւն մը, իւր խօսքերուն և գործերուն մէջ պարզաբարութիւն մը և անխռով հանդարտութիւն մ'ունէր, որ Պ. տը Լուվուս զայն շատ անգամամենն զժուար և ամենն վասնդաւոր պաշտօններու մէջ գործածեւր էր:

Պ. տը Շէմրօ զարմանալի հակապատկեր մը կը ներկայացընէր կըլըոյն կուսակալ Բիւփինէլ սեպուհին հետ, որ մեծափոր, ծանրամարմին ու խոշոր մարդ մ'էր. միայն մէկ հոգ և մտմտութիւն մ'ունէր, այս է իւր անձը ջերմութենէն սզատ պահել. գէմքը գիրուկ, ուսուցիկ և շառագոյն էր. աչքերուն չափազանց կըլըութենէն՝ զարմացած մարդու մը կերպարանքն ունէր միշտ: Սեպուհը բարի և արգարատէր, բայց ոչինչ մարդ մ'էր. իւր պաշտօնը Բօլսլէր բնասնիքին հզօր պաշտպանութեանը շնորհիւ ընդունած էր, վասն զի այս բնասնիքին հետ իւր մօրը կողմէն ազդակցութիւն ունէր: Քրքթթիմնի տեղակալին և Պ. տը Շէմրօյի լաւ ընդունելութիւն մ'ընելու համար, կուսակալը ցաօք սրտի իւր բամբակէ սպիտակ տուտառին ու Բարայիպներուն գործածած յարգէ գլխարկը հանել, և գլուխը խարտեաշ մազէ ահագին կեղծամ մը գրեւ, ոսկեճամուկ ժապաւենով պալատականի կապոյտ թիկնոց մը հագեր, մէջքը ծանր կամար մը կապեր և սուր մը կախեր էր: Տաքը չափազանց էր, և կուսակալը կ'անշիճէր այս էթիքէթը որուն պատճառաւ իւր անձը կը տանջուէր:

— Պարոն, ըսաւ անոր Պ. տը Շէմրօ, որ կը թուէր թէ

այս արեւադարձի ջերմութիւնը բնաւ չէր զցար, կրնանք խօսիլ առանց մէկէ մը լսուելու:

— Այդ մասին բնաւ վտանդ մը չկայ, պարոն. այդ բաց դուռն իմսենեկինս է, ուր մարդ չկայ, և միւս դուռն ալ սրահինն է, որ նոյնպէս ամայի է:

Պ. տը Շէմրօ ելնելով դնաց այն սենեակն ու սրահն աչքէ անցուց և դռները լաւ մը զոցեց . . . :

— Ներեցէ՛ք, պարոն, ըսաւ կուսակալը, եթէ միայն այս երկու պատահանները բաց մնան . . . :

— Իրաւունք ունիք, պարոն սեպուհ, ըսաւ Պ. տը Շէմրօ ընդմիջելով կուսակալին խօսքը, և այն երկու պատահաններն ալ զոցելու երթալով, այս աւելի մեծ խոհեմութիւն մ'է, զրտէն կրնան մեր խօսքերը լսել:

— Բայց, պարոն, եթէ տեղաց մը հով չբանի, կը խեղճ դուինք հոս. բաղնիքի պէս սլտի տաքնայ հիւսա:

— Չեզի ըսելիքս շատ երկար տևելու բան մը չէ. պարոն սեպուհ, խնդիրն առաջին աստիճանի կարեւորութիւն ունեցող պետական գաղտնիքի մը վրայ է. թաղաւորին հրամանաւր կատարելիք պաշտօն մ'ունենալով, զոյն անպղուշութիւն մը կրնայ պաշտօնիս յաջողութիւնը վտանգի ենթարկել: Կարծեմ հոս այսպէս փակուած մնալու շնորհք կ'ընէք ինձ մինչև որ խօսակցութիւնս նիս աւարտի:

— Եթէ Նորին Ա. Ն. հափառութեան հրամանն է, պարտիմ հնազանդիլ, պարոն, ըսաւ Պ. տը Բիւփինէլ երկար հառաչանք մ'արձակելով և ճակատը սրբելով. կրնամ անձս նուիրել անոր համար:

— Հաճեցէ՛ք նախ աչքէ անցընել Նորին Ա. Ն. հափառութեան ինձ տուած իշխանութեան վաւերացիրը, ըսաւ Պ. տը Շէմրօ, և թուղթ մը հանեց արկղիկի մը մէջէն զոր մասնաւոր խնամքով մը ինք կը կրէր, և մէկու մը յանձնել ուղած չէր:

ԳԼՈՒԽ ԿՆԳԵՏԱԿԱՆԵՐՈՐԳ

Գ Ա Ղ Ղ Ի Ո Յ Ն Ո Ի Ի Բ Ը Կ Ը

Երբ կուսակալն իւր թուղթը կը կարգար, Պ. տը Շէմրօ արկղիկին մէջ դանուող ուրիշ առարկայի մը վրայ գոհ ակնարկ մը ձգելով ինքնիրեն ըստ .

— Եթէ զայն դործածելու պատահութիւն ունենամ, դործս անթերի պիտի ըլլայ . այս բանը շատ աղէկ մտածեցի :

— Այս վաւերացիրն ըստ օրինի է, պարոն . ձեր ինձ տալիք բոլոր հրամանները պիտի կատարեմ, ըստ կուսակալը Պ. տը Շէմրօյի երեսը նայելով խորին զարմացմամբ : Յետոյ յարեց . Պարոն, տաքն այնքան սաստիկ է որ, կեղծամտ հանելու թշուուութիւն ընենիկ կը խնդրեմ, թէ և պատշաճութեան գէմբան մ'է :

— Ձեր հանգիստը նայեցէք, պարոն սեպուհ, ձեր հանգիստը նայեցէք, այս մասին կ'ստիպեմ զձեզ :

Կուսակալն իւր կեղծամը հանելով սեղանին վրայ նետեց, և կարծես սկստ աւելի հանգիստ շունչ տանուլ :

— Հիմա, պարոն սեպուհ, կը խնդրեմ որ ձեզ ուղղելիք հարցմանցս հաճիք պատասխանել :

Եւ Պ. տը Շէմրօ արկղիկին մէջէն թուղթ մը հանեց, որուն մէջ անշուշտ կուսակալին ուղղելիք հարցումները դրուած ըլլալու էին :

— Մտքուպոյի թաղին մօտ, անտառներու և ժայռերու մջ տեղը Գիւարնակ-Բլուր կոչուած տեսակ մը բերդատուն կայ :

— Այո՛, պարոն, և այն տունը շատ բարի համբաւ մը չունի : Իմ նախորդս, Պ. տը-Քրիւսօլ ասպետը հոն այցելութիւն մ'ըրաւ որպէս զի այն տանը վրայ պտրտող զրոյցներուն ինչ հիմու-

նենայր հասկընայ . ևս ալ իւր թղթակցութեան ստուերադրոց մէջ այս մասին գրած նամակները փնտրեցի բայց բան մը չկրցայ գտնել :

Պ. տը Շէմրօ շարունակեց .

— Այն տանը մէջ կին մը, այրի կի՛ն մը կը բնակի, պարոն սեպուհ :

— Այսպիսի այրի մը որ, պարոն, Մարթինիքայի մէջ Կապոյտ-Վօրուք մականունը տուած են անոր, իւր ունեցած երեք ամուսիններուն հեաղհետէ խիստ կարճ միջոցի մէջ անհետ ըլլալու նուն պատճառաւ : Բայց . . . կարծեմ զիս չէք մեղադրեր եթէ ըսեմ ձեզ թէ վրնոցս ինչ սոսկալի կերպով մը զիս կը տաքցընէ . յարեց խեղճ կուսակալը, մենք հաս սովորաբար վրնոց չենք գործածեր, և եթէ կը ներէք . . . :

— Հսնեցէք, հոգ չէ, պարոն սեպուհ, ագիէ թագաւորին գործին փնտ մը չկրնար գալ : Ըսել կ'ուզէք թէ նախորդ կուսակալ Քրիւսօլ ասպետը Կապոյտ-Վօրուքին երեք ամուսնոց անհետ ըլլալուն վրայ տեսակ մը քննութիւն սկսեր էր ընել :

Այսպէս ըսին ինձ, պարոն, վասն զի ես բնա այսպիսի քննութեան մը հետքը գտած չեմ :

— Յէն-Սիմոն հրամանատարը, որ Քրիւսօլ ասպետին մահուանէն ետե և ձեր հոս գալէն առաջ կուսակալի պաշտօն վարեց, սոյն Քրիւսօլի մէկ մտերմական նամակը չտուաւ ձեզ :

— Այո՛ . . . այո՛, պարոն . . . ըստ կուսակալը Պ. տը Շէմրօյի երեսը նայելով խորին զարմացմամբ :

— Իւր մահուանէն քիչ ժամանակ առաջ Պ. տը-Քրիւսօլ գրած չէ՛ր այն նամակը, պարոն սեպուհ :

— Այո՛, պարոն . . . :

— Այն նամակը Գիւարնակ-Բլուրին կը վերաբերէր, այնպէս չէ՛ :

— Այո՛, պարոն, ըստ կուսակալը որուն զարմանքը հետզհետէ կ'աւելնար Պ. տը Շէմրօյի այսչափ լաւ տեղեկութիւն ունենայր տեսնելով :

— Այն նամակին մէջ Պ. տը Բրիւսոլ իւր պատուոյն վրայ երդնելով կը հաւատարմէր ձեզ թէ Կապոյտ-Մօրու ք մականուանեալ կինն անաբար է բոլոր այն ոճիրներէն որով զինքը կ'ամբաստանեն, ստոյգ է այս :

— Այո՛, պարոն . . . : Բայց ի՞նչպէս դիտէք . . . :

Պ. տը Շէմրօ ընդմիջեց կուսակալին խօսքը և ըստ անոր .

— Ներեցէ՛ք ինձ ըսել, պարոն, թէ թագաւորը հրամայած է ինձ հարցումներ ընել ձեզ, և ոչ պատասխան տուլ . . . : Առաջի պատիւ ունէի ձեզ հարցընել թէ, այն նամակին մէջ, հանգուցեալ Պ. տը Բրիւսոլ Կապոյտ-Մօրու ք անուանեալ այրի կ'նոջ բոլորովին անմեղ ըլլալը չէ՞ր երաշխաւորեր ձեզ :

— Այո՛, պարոն . . . :

— Երդնելով ձեզ իւր Բրիտանական հաւատքին վրայ, և այն պահունքորով Աստուծոյ ատենին պիտի ներկայանար, նոյնպէս և իւր ազնուականութեան պատուոյն վրայ թէ դուք, առանց թափառորին շահուցը մնաս պատճառելու, կրնար այն կինն աղատ և խաղաղ թողուլ . . . :

— Այո՛, պարոն . . . :

— Եւ ասկէ զատ Բարոզիչ եղբարց կարգէն վերադասուելի հայր Արիֆօն, որ իւր բարեպաշտութեամբը հանրածանօթ, և խիստ պարկեշտ բնաւորութեան տէր անձ մ'է, ուզած ժամանակնիդ յիշեալ կ'նոջ երաշխաւոր պիտի ըլլայ եղեր :

— Այո՛, պարոն . . . և յիրատի, առանձին և խիստ դաղանի տեսակցութեան մը մէջ . . . :

— Ձոր ունեցար հայր Արիֆօնի հետ, պարոն սեպուհ, այս կրօնաւորը Պ. տը Բրիւսոլի իւր վերջին նամակով ձեզ ըսածները հաստատեց, և դուք ալ իրեն խօստացաք թէ բնաւ այն կինը չպիտի նեղէք, այնպէս չէ՞ :

Կուսակալը Պ. տը Շէմրօյի երեսն ի վեր կը նայէր բոլորովին ապշած և կըմտածէր թէ ո՞րքէ կրցեր էր այսչափ ճիշդ տեղեկութիւն առնուլ : Մէկ կողմէն սոյն հարցաբնութեան պատճառած յուզմունքէն, միւս կողմէն օղին անօտրութենէն քիչ մնաց որ

պիտի մարէր : Քիչ մը վարանելու պէս ըլլալէ ետեւ, Պ. տը Շէմրօյի համարձակ ըստ .

— Ալ ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ, ներեցէ՛ք որ թիկնոցս ալ հանեմ . . . : Սա ոսկիէ և արծաթէ ժողովները կարծես հարիւր լիպրայի չափ ծանրութիւն կու տան ինձ :

— Հանեցէ՛ք, պարոն սեպուհ, հանեցէ՛ք, կուսակալութիւնը հազուստին վրայ չէ, ըստ Պ. տը Շէմրօ խոնարհելով. յետոյ շարունակեց .

— Պ. տը Բրիւսոլի և վերապատուելի հայր Արիֆօնի յանձնարարութեանց չորհիւ Գիւարնակ-Բշուրի բնակչու հին այլ ևս հանգիստ թողուցաւ, պարոն սեպուհ : Այն տանը վրայ պարտող զրոյցները լսելով հանդերձ անդամ մ'այցելելութեան չդացիք հոն :

— Ա՛յ, պարոն . . . կը խոստովանիմ որ հայր Արիֆօնի և հանդուցեալ Պ. տը Բրիւսոլի պէս յարգի սնձանց յանձնարարութիւնները բաւական համարեցի . . . : Ասկէ զատ Գիւարնակ-Բշուրին ճամբան անկոխ է . . . մերկ և պատառատուն ժայռերէ կը բողկանայ . . . երկու երեք ժամ անդունդներու մէջէն վեր ելնելու է. ուստի շիտակը խօսելով, այսքան տաք արևուն մէջէն այսպիսի արշաւանք մ'ընելը, ըստ սեպուհը ճակատը սրբելով ուրկէ ջուրի պէս քրտնք կը վազէր լսկ այն անդունդներէն վեր ելնելը յիշելով, այսքան տաք արևու մը մէջէն այսպիսի արշաւանք մ'ընելը բոլորովին անօրոտ թուեցաւ ինձ . . . վասն զի բարոյապէս համազուած էի թէ այն զրոյցները բոլորովին անհիմն էին . . . չեմ կարծեր, պարոն, որ այս մասին յանցանք մ'ունեցած ըլլամ :

— Ներեցէ՛ք ինձ, պարոն սեպուհ, որ ձեզի ուրիշ մի քանի հարցումներ ալ ընեմ :

— Պատրաստ եմ պատասխանելու, պարոն :

— Կապոյտ-Մօրու ք մականուանեալ կինը Սէն-Ֆիլէրի մէջ վաճառատուն մ'ունի՞ :

— Այո՛, պարոն :

— Այս կնոջ գործակատարն անոր նաւերը ճամբայ կը հանէ, որք միշտ Գաղղիա կ'երթան, այնպէս չէ:

— Այդ ստուգելը շատ դիւրին է, պարոն, նաւապետներուն մէկնէլու յայտագրաց տօմարէն:

— Քեր է այդ տօմարը:

— Հոս դարակն է:

— Եթէ ձեզի ձանձրութիւն չըլլար, պարոն սեպուհ, այդ տօմարը բերէք, ինչու որ ձեզի հարցընելիք մի քանի թուականներ ունիմ վոր կը խնդրեմ որ գտնէք:

Կուսակալը մեծ գծուարութեամբ աթոռի մը վրայ ելաւ և կանաչ մաղաղաթէ կազմուած ցողխոշոր զիրք մ'իջեցընելով դրասեղանին վրայ դրաւ. յետոյ իւր անձին շարժումէն իբր թէ զգացած ջերմութիւնն աւելցած և ուժը սպառած ըլլալով, Պ. ար Շէմրոյի ըսաւ.

— Պարոն, հարկաւ զինուորութիւն ըրած էք և աղատօրէն շարժիչն ինչէ գիտէք. ուստի արարողութիւնը մէկդի գնելով, և միանգամայն ներողամիտ ըլլալիդ խնդրելով բաձկնս ալ պիտի հանեմ, եթէ կը հաճիք . . . բանուած կոհակաւոր սնդուսէ է և զրահի չափ ձանձրութիւն ունի:

— Հանեցէ՛ք . . . պարոն սեպուհ, այն ալ հանեցէ՛ք, ինչ որ կ'ուզէք հանեցէ՛ք, պատասխանեց Պ. ար Շէմրո անողբ ըջուրութեամբ մը. այնչափ քիչ բան մնաց ձեզ հարցընելիք որ, կարծեմ, պէտք չպիտի ունենաք ուրիշ բաներ ալ հանելու . . . = Ար խնդրեմ, նախ սա նայեցէ՛ք թէ կնոջ վարձած նաւերը միշտ Գաղղիա երթալու տահմանուած էին:

— Այո՛, պարոն, ըսաւ կուսակալը տօմարը բանալով. յետոյ մատը վրան պարտքընելով ըսաւ.

— Բօշէլ երթալու համար . . . Բօշէլ երթալու համար . . . Պօրտօ երթալու համար . . . Պօրտօ երթալու համար . . . Բօշէլ երթալու, Բօշէլ երթալու համար . . . Հավրը-տը-Արաս երթալու համար: Ինչպէս որ կը տեսնէք, պարոն, նաւերը միշտ Գաղղիա գացած են:

— Շատ լաւ, սարոն սեպուհ . . . : Այդ վաճառատան կողմէն մեկնած նաւերուն յաճախութենէն կը հետեւի թէ Կապոյտ-Վօրուքը (մենք ալ այս ժողովրդական մականունը գործածենք) կրնայ խիստ շուտով նաւ մը ճամբայ հանել:

— Անշուշտ, պարոն:

— Միշտ առաջատար պարզելու ստորատտ երկկայմ մը չունի . . . որ կրնայ երկու ժամուան մէջ Գիւարնակ-Ելուրին մօտ Նհանդայ խորշն երթալ, ուր փաքրիկ նաւահանգիստ մը կայ, ըսաւ Պ. ար Շէմրո պարձեալ հարցումներ նշանակուած թուղթին վրայ նայելով:

— Այո՛, պարոն . . . այն երկկայմին անունը Քամէլէն է. այս օրերս Կապոյտ-Վօրուքը վեհանախարար հաճեցաւ գայն փոխ տալ ինձ (իւր գործակատար Վօրիտի միջնորդութեամբ), Սպանիայի ծովահանէն մը հալածելու համար . . . և Քամէլիոնի հրամանատարը Փ-Ք-Քէլ անուանեալ ծովասպասակ նաւապետ մ'էր . . . :

— Այդ ծովասպասակին վրայ հիմա կը խօսինք, պարոն սեպուհ . . . բայց ծովահան նաւն ինչ եղաւ . . . :

— Սրբոց կղզոյն բացերն ընկոմեցաւ . . . :

— Իսկ այն ծովասպասակը, պարոն սեպուհ, Կապոյտ-Վօրուքի տունը շատ կը յաճախէ՞ . . . :

— Այո՛, պարոն . . . :

— Նաև արհեստով յլորս եղող արիշտտիկ մ'ալ կը յաճախէ՞ հոն:

— Այո՛, պարոն, բոստ կուսակալը ցամաք կերպով մը և Պ. ար Շէմրոյի աօջէ բոնելու ստիպուած երկրորդական զիրքէն զուրս չեղնելով:

— Երբեմն Քարայիպ մ'ալ կ'երթայ հոն:

— Այո՛, պարոն:

— Վաղմուց է որ այն մարդիկն այս կըլըոյս մէջ են, պարոն սեպուհ:

— Չդիտեմ, պարոն. իմ Մարթինիքա եկած ժամանակս հոս

էին : Ա՛րսեն թէ ծովասպատակը ժամանակաւ Անթիլեանց Տիրութեան կողմը և Հարաւային ծովուն մէջ արշաւանքներ ըրած է : Ուրիշ շատ նաւապետներու պէս ինքն ալ ծովասպատակութենէ ստակ շահելով, կղզւոյն ծայրը գետին մը գնեց, ուր առանձին կ'ապրի :

— Իսկ ցլը՞սը, պարոն սեպուհ :

— Այդ անձինքն այսօր հոս են, վաղն ուրիշ տեղ . որն ուր որ առատ է հոն կ'երթան . երբեմն կը պատահի որ ցլորսը դացած տեղէն ամիս մը չվերադառնար, Քարայիսն ալ նշնպէս է :

— Այդ սեղեկութիւններն ինձ արուածներուն բոլորովին համաձայն են : Այսու ամենայնիւ այդ մարդոց խօսքն ընելուս պատճառը միայն չնունալու համար է : Ասոնք իմ կատարելիք պաշտօնէս դուրս երկրորդական անձինք ըլլալով, հարկ չկայ անոնց վրայ աւելի խօսք ընելու Անոնք շատ հըռ գործիքներ են միայն, յարեց Պ. տը Շէմրօ ինքնիրեն խօսելով, և այս ծանրակշիւ գործին հետ ունեցած յարաբերութիւնին՝ տարակոյս չկայ որ շատ անսպասելի է :

Յետոյ՝ պահ մը մտածելէ ետև դարձրաձայն յարեց .

— Հիմա վերջին հարցում մ'ալ մնաց, պարոն սեպուհ : Չեր գալանի ստիկանութիւնը չիմացո՞ւց ձեզ թէ պատերազմն ի վեր Անդղիայիք կղզին մտնելու փորձեր ըրած ըլլան :

— Քիչտոտնէ ի վեր երկու տեղամ մեր լրտես նաւերը կատարածելի նաւ մը հալածեցին որ Պարպատն գալով կը ջանար Հողմին ծովեզերքը մերձենալու . . . կղզւոյն մի միայն այն տեղերը մատչելի են . միւս ամեն կողմերը ծովեզերքը ցից ապառաժներէ բաղկացած է և արտնքն ամենին տաղ չկայ :

— Շատ աղէկ, ըսաւ Պ. տը Շէմրօ :

Յետոյ՝ պահ մը լրտ. կենալէ ետև յարեց .

— Ասկէ մինչև Գիւարնակ-Բլուր ո՞րչափ ժամանակն կ'երթաի :

— Հիմա ժամը գրեթէ տասնմէկն է, ըսաւ կուտակալը, ձաւ բաները շատ դժուար են . կրնամ ըսել թէ մութը չկոխած կարեւ

լի չէ հասնիլ հոն :

— Ուրեմն, պարոն սեպուհ, ըսաւ Պ. տը Շէմրօ ժամացոյցը նայելով, ասկէ երկու ժամն, այսինքն կէսօրէն մէկ ժամ ետքը, հաճեցէ՛ք հրաման տալ որ ձեր պահապան զինուորաց ամենէն քաջերէն երեսուն հողի լաւ մը զինին, սանդուղ մը և մէկ երկու հատ փլուզիչ անօթ pétard առնուն և պատրաստ դանուին հետս գալու և հրամանացս հնազանդելու ինչպէս որ ձեզ կը հնազանդին :

— Բայց, պարոն, եթէ Գիւարնակ-Բլուր երթալ կ'ուզէք, զիշեր չեղած հոն հասնելու համար հիմա ձամբայ ելնելու էք :

— Հարկաւ այդպէս է, պարոն սեպուհ, բայց որովհետև ես կ'ուզեմ որ զիշերը հասնիմ հոն, կարծեմ երկու ժամն ձամբայ ելնելու աղէկ է :

— Այդ ուրիշ, պարոն :

— Արնա՞ք զոյ գեսպակ մը ձարել ինձ :

— Այո՛, պարոն, իմն կու տամ :

— Այդ զեսպակով մինչև Գիւարնակ-Բլուր կ'երթաի, պարոն սեպուհ . . . :

— Միայն մինչև լերանը ստորտը, անկէ անդին չերթաի, վասն զի կ'ըսին թէ այն դէզագէղ և պատառատուն ժայռերէն վեր ձի չկրնար ելնել :

— Շատ աղէկ . ուրեմն, պարոն սեպուհ, հաճեցէ՛ք պատրաստել տալ այն գեսպակը, նշնպէս և ձի մը ինձի համար, լերան ստորտը հասած առենս ձիէն կ'իջնեմ :

— Ատ, պարոն :

— Ահա ձեզի կ'իմացընեմ, պարոն սեպուհ, այս գործը բնաւ մէկը զիսմալու չէ . եթէ իմ Գիւարնակ-Բլուրն երթալու իմացուի, ամեն բան կը կորսուի . ուղեկից պահապանաց ալ Քոր-Բօայալէն դուրս ելնելէ ետև կ'իմացընենք ուր երթալիքին, և յուսամ որ ձամբաներուն ներածին չափ կը վտրմանք շուտ հասնելու : Վերջապէս, պարոն սեպուհ, յարեց Պ. տը Շէմրօ պաշտնի բան մը խօսողի մը զէմբով զոր մինչև այն առնն ունեցած

չէր, այս դործը շատ դաղանի պահել պէտք է ինչու որ պետա-
կան դործ մ'է, և խնդիրը երկու մեծ աղցաց ապագային վրայ
է . . . :

— Կապոյտ-Մօրուքին համար, ըստ կուսակալը հետա-
քրքրութեամբ Պ. տը Շէմրօյի լուրջ և պաղ գէմքը գիտելով:

— Կապոյտ-Մօրուքին համար:

— Ինչպէս կրնայ ըլլալ որ, կրկնեց կուսակալը, Կապոյտ-
Մօրուքը պետական գաղտնիքի մը և երկու մեծ աղցաց ապագա-
յին հետ դործ կ'ունենայ:

Պ. տը Շէմրօ, որ ըսածը կրկնել չէր սիրեր, հաստատական
նշան մ'ըբաւ և կրկնեց.

— Կ'աղաչեմ նաև, պարոն սեպուհ, որ Փրքաթօնին մակոյ-
կին նաւամատոյցէն չբաժնուելուն հոգ տանիք, որպէս զի եթէ
պաշտօնս յաջողելք մ'ունենայ, ինչպէս որ կը յուսամ, կարենամ
նաւը վերագառնալ և առանց վայրկեան մ'անդամ հոս կենալու
ճամբայ ելնել . . . : Ա', մտցայ ըսելու որ պետակալը կարելի
եղածին չափ գոցուելու յարմար ըլլալու է:

— Բայց, պարոն, արգեօք կալանաորու հի մը գտնելու
կ'երթաք:

— Պարոն սեպուհ, ըստ Պ. տը Շէմրօ ոտք ելնելով, նե-
րողամիտ ըլլալնիք կր ինդրեմ և դարձեալ կ'ըսեմ ձեզ թէ թաղա-
ւորն հրամայած է ինձ հարցումներ ընել ձեզ և ոչ . . . :

— Լաւ, շտտ լաւ, պարոն, ըստ կուսակալը: Հիմա
կրնամ պատահանները բանալ, հարցուց սեպուհը որ կեցած
տեղը կը մարէր:

— Անպատահութիւն չեմ տեսներ այդ մասին, պարոն սե-
պուհ, ըստ Պ. տը Շէմրօ:

Կուսակալը ոտք ելաւ:

— Այսպէս ուրեմն, պարոն սեպուհ, ըստ անոր Պ. տը
Շէմրօ, պէտք է գիտնալ որ զիս առաջնորդող ուղեցոյցին ճամբայ
ելած առննիս միայն պիտի իմացնէք ուր երթալիքնիս:

— Բայց՝ եթէ կանչել տամ, մինչև այն ատեն ինչ ըսեմ'իրեն:

Պ. տը Շէմրօ կուսակալին պարզամտութեանը վրայ զարմա-
ցաւ, և ըստ անոր.

— Ա՛յլ է այդ ուղեցոյցը, պարոն:

— Սե գերիներէս մին է, որ ասկէ փարսախ մը հեռու
թաղաւորին ունեցած կալուածին մէջ կ'աշխատի: Սատանին մէկն
ըլլալով, այնչափ անդամ անտառները փախած է, որ շիտակ
ճամբաներէն աւելի՝ կողոյն անմատոյց կողմերուն վարժուած է:

— Այդ գերիին կրնաք վտահիլ, պարոն սեպուհ:

— Ինչու չէ, պարոն. եթէ ձեզ մուրեցընէ, ինչ կ'անցնի
ձեռքը: Այսու ամենայնիւ կ'իմացնեմ'իրեն որ եթէ ձեզ մուրե-
ցընէ, քիթն ու ախանջները կտրել կու տամ:

— Անկարելի է որ այդպիսի սպառնալիք մը առ ոչինչ գրէ,
պարոն սեպուհ: Հիմա գանք ձեր այն առարկութեան թէ այդ
գերիին ինչ ըսելով սպասեցընելու է մինչև ճամբայ ելնելու ժա-
մանակնիս . . . :

— Գտայ, գոցեց սեպուհը յաղթական գէմքով մը. ձաղիկ կու
տամ՝ զինքը, ասկէ բոլորովին կը շիթի և կը կարծէ թէ ասոր
համար կանչուած է հոս:

— Ստուգիւ, պարոն սեպուհ, զինքը շիթեցընելու համար
շտտ լաւ միջոց մ'է այդ, բայց կարծեմ բաւական է զինքը
բանտարկել մինչև մեկնելու ժամանակնիս: Ա', ինչպէս մտցայ
ըսելու որ իմ բացակայութեան ատենս հոգ տանիք ամենէն ընտիր
տեսակէն հաւ, թռչուն, երէ, բանջարեղէն, զինի, քաղցրաւե-
նի և այլն, և այլն առնել տալով նաւ դրկել, ամենեւին ծախք մի՛
ինայէք, ես ամենն ալ կը վճարեմ:

— Իմացոյ ըսածնիք, պարոն, նստք ըլլալով՝ նաւարկու-
թեան մ'առջի օրերը նաւուն մէջ պահուելու ինչ որ կրնայ ըլլալ
նէ առնելու է, ճիշդ այնպէս համարելով թէ բարձրատիճան
անձ մը նաւ պիտի նստի, ըստ կուսակալը հետաքրքիր գէմքով
մը:

— Միտքս սղէկ հասկըցաք, պարոն սեպուհ: Բայց սա ալ
կ'ուզեմ գիտնալ թէ այդ սէը, որ միջի ուղեցոյց պիտի ըլլայ.

Գիւարնակ-Բլուրի տան դռնէ դրսի կողմերը տեսած է :

— Ենչուչա, պարոն. ինչու որ այդ դերին թէ այն տանը և թէ զանուած տեղին ամայութեանը վրայ արտաուոյ բաներ կը պատմէ :

— Աւրեմն, պարոն սեպուհ, դերին համար շատ լաւ դործ մը գտանք. հրաման տուէք որ քովս բերեն զինքը. հասկընալիք բաներս կը հարցընեմ իրեն մինչև որ ճամբայ ելնենք :

— Հիմա կ'երթամ կանչել կու տամ զինքը, ըսաւ կուսակալը դուրս ելնելով :

— Աստուած կամսատանան յաջողցընէ այս գործը, ըսաւ Պ. տը Շէմրո երբ առանձին մնաց : Բարեբաղդաբար այս սպուշ կուսակալին օգնութեանը կարօտութիւն չունիմ. դործին դժուարագոյն մասը տակաւին գլուխ ելած չէ, բայց հոգ չէ, իմ աստղը շատ բարձր է, անոր կ'սպաւինիմ : Ֆայրիքօ-Շիճիի գործն աւելի դժուար էր. ասկէ զատ եթէ ոչ թողի մը, գէթ դահու մը յայտը . . . մեծ աղդի մը շարժման գլուխն անցնելու փառասիրութիւնը, իւր աղցականն եղող թաղաւորի մը վերտոնն աչքը մտնելու տենչը միթէ բաւական զօրաւոր պատճառներ չե՞ն ամենէնյամաւ անձը համոզելու. և եթէ այս պատճառներն ալ չբաւեն . . . ըսաւ Պ. տը Շէմրո մի քանի վայրկեան լուռ կենալէ ետև ձեռքն արկղիկին կախարիչին զարնելով, տհաւասիկ ուրիշ միջոց մը որ թերեւս աւելի աղգու և վճաւական պիտի ըլլայ . . . :

Երկու ժամ ետքը Պ. տը Շէմրո ճամբայ կ'ելնէր Գիւարնակ-Բլուրը երթալու համար, կուսակալին երեսուն պահասպանաց գլուխն անցած, որը յոտից ցղուխ զինեալ էին : Սոյն փոքրիկ ջուկաւին ետևէն կ'երթար երկու ջորի լծեալ գետպակ մը, և առջեւէն ուղեցոյցը : Այս դերին երկար խօսակցութիւն մ'ունեցեր էր Պ. տը Շէմրոյի հետ, և այս խօսակցութենէն ետև Պ. տը Շէմրո պատուիրեր էր որ երկու սանդուղէն և փլուզիչ անօթիներէն զատ, զոր ձիու վրայ բեռցուցեր էին, ծայրերնին ակիչներ ունեցող հաստ շուաններ և երկու տասար ալ առնեն հետերնին : Ասկէ զատ Փրքաթօնին տեղակալին ալ հրամայեր էր որ Փօր-

Բօայալի նաւամատոյցը այն արշաւանաց ելքին սպասող մակոյկին մէջի տանհինդ նաւաստիներուն մէջէն երկու քաջ նաւաստի շրկէ իրեն : Աւերջապէս այս փոքրիկ գունդը ճամբայ ելաւ. գունդին առջևէն և Պ. տը Շէմրոյի մօտէն կը քալէր ուղեցոյց դերին որու երկու կողմէն կ'երթային նաւաստիները : Գունդը բաւական ատեն ծովեղերքէն երթալէ ետև՝ բարձրկէկ բլուրէ մը վեր ելաւ և շուտ մը կղզոյն խորը մտաւ :

Թողլովոր Պ. տը Շէմրոյամբաքայլ յառաջանայ գէպ ի Գիւարնակ-Բլուրը, մենք պիտի երթանք գանել զհայր Արիֆօն Մաքուպայի մէջ, և Բիւթէր գնդապետն այն դահաւանդին յատակը ուր գետնափոր անցքէն ելած էր, երբ վաղրակատուները ճօնի դիակը լսիւնելով մշտնեղէն վերցոյցին այն արդելքը որուն պատճառաւ Անդղիացի նուիրակը ստիպուեր էր Բարայիսլին քարայրին մէջ մնալ :

Գ Լ Ո Ւ Ն Վ Ե Յ Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Մ Բ Բ Ի Կ

Պ. տը Շէմրո իւր պահնորդաց գլուխն անցած՝ հաղիւ թէ Փօր-Բօայալէն մեկնած էր, իրր տանհինդ տարեկան դեռահաս Խափշիկ մը ետևնուն կ'երթար մերթ ձորերուն, մերթ անասուններուն մէջ պահուրտելով. բայց երբ տեսաւ որ գունդը Գիւարնակ-Բլուրին ճամբան կը բռնէ, ինքն ալ աճապարանօք Մաքուպայի ճամբան բռնց : Այս դերին կղզոյն ամեն կողմերն ու անհարթ ճամբաները քաջ դիտնալով, շուտ մը Մաքուպա հասաւ : Ահսօրը դրեթէ չորս ժամ անցեր էր. հայր Արիֆօն իւր միջօրեայ

քունը կը քնանար կնիսէ կախորանի մը մէջ, զոր քարայրայնեքը զարմանալի ճարտարութեամբ կը հիւսեն : Գեռահաս Խափշիկին հողին բերանն եկաւ մինչև որ ժողովրդագետին երկու սև գերիները համոզեց թէ երթան տէրերնին արթնցորեն : Հայր Արիֆօն այնչափ անոյշ և խորունկ քուն մը կը քնանար որ Պարոնը բաւական վարանելէ յետոյ գնաց արթնցորնելու :

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես, ըսաւ հայր Արիֆօն :

— Տէ՛ր, Քօր-Բօայալէն աճապարանօք խափշիկ մ'եկաւ և հիմա ձեզի հետ խօսիլ կ'ուզէ :

— Քօր-Բօայալէն Խափշիկ մ'եկաւ, ըսաւ հայր Արիֆօն կախորանէն ցատկելով, թողնե՛րս դայ, թողնե՛րս դայ : Ի՞նչ կայ, տղա՛ս, յարեց քահանայն երբ Խափշիկը ներս մտաւ : Պարոն Մօրի՛ս զբկեց քեզ :

— Այո՛, հայր : Եւ ահա նամակ մ'ալ տուաւ : Ինձ պատուիրեց որ այս առտու Քօր-Բօայալէն մեկնող գունդի մը ետևէն երթամ, և այն գունդին Գիւարնակ-Բլուրին ճամբան բռնելը տեսնելուս պէս դամ ձեզի իմաց տամ : Մնացածը պարոն Մօրիսի նամակէն կրնաք հասկընալ :

— Գունդը ո՞ր կողմ գնաց . . . :

— Տանձենեաց ձորը մտաւ . Սև-Ժայռերու հեղեղատին ճամբան բռնեց . . . տարակոյս չկայ որ Գիւարնակ-Բլուր կերթայ :

Հայր Արիֆօն խռովելով նամակը բացաւ, որուն պարունակութիւնը կարծես տաղնայ պատճառեց իրեն : Երկու անգամ կարգաց դայն անհնարին զարմացմամբ, յետոյ Խափշիկին ըսաւ .

— Շուտով գնա՛ Պարոնը կանչէ : Խափշիկը դուրս ելաւ :

— Գաղղիոյ նուիրակ մ'եկաւ, կուսակալին հետ ընդերկար խօսակցեցաւ, և վախճամ իւր գնդին հետ ճամբայ ելաւ Գիւարնակ-Բլուրը երթալու համար, կը գրէ ինձ պարոն Մօրիս, գոչեց կրօնաւորը արագ արագ քալելով : Մօրիս ասկէ աւելի բան չգիտեր և չկրնար գիտնալ : Բայց ես քանի մտածեմ այս այցելութեան հետևանայը վրայ, կը գողամ : Անշուշտ այս գաղտնիքն իմացուեր է : Բայց ի՞նչպէս :

Միթէ այս գաղտնիքը Պ. ար Բրիւսօլի հետ չմտա՞ւ : Իւր նամակն իմերաշխարութիւնս է : Մշապաքէն ներկայ կուսակալն ապահովեցին և այն տարաբաղդ կնոջ գլմ ամեն հալածանք գաղրեցընել տուին : Յետոյ պարոն Մօրիսի նամակը վերստին կարգալով յարեց . Գաղղիական Ֆրքաթօն մը՝ որ նաահանգստէն գալը՝ մեկնելու պատրաստ վիճակի մէջ կեցեր է . . . նուիրակ մը՝ որ երկու ժամ շարունակ կը խօսակցի կուսակալին հետ և այս խօսակցութենէն ետև ուղեկից պահապաններով կը մեկնի ի Գիւարնակ-Բլուր . ա՛լ այս գործը կանկած չվերցընէր, սառգութիւն մ'է : Զինքը տանելու կու գան . . . Տէ՛ր Աստուած, ճշմարիտ է արդեօք : Բայց այս գաղտնիքը զոր հիմա ես միայն գիտեմ . . . վստն զի միայն ես գիտեմ զայն, մ'հ, այո՛, միայն ես ? Եթէ երբէք սոսկալի սրբապղծութիւն մը . . . : Բայց ո՛չ, ո՛չ, ըսաւ հայր Արիֆօն ձեռքերն իրար կցելով սոսկմամբ, իմ կողմէս այսպիսի մտածութիւն մը ոճիր մ'է : Մշ, անկարելի է . . . աւելի կ'ուզեմ հաւատալ թէ այս գաղտնի գործին մէջ կնայց և մահու շահ մ'ունեցող անձին կողմէն անխոհեմութիւն մը յառաջեկած ըլլայ, քան թէ սոսկալի մասնութեան մը կասկածներն ընել : Մշ, բնա՛ւ երբէք, անկարելի է . պէտք է որ անմիջապէս Գիւարնակ-Բլուր երթամ : Թերևս Քօր-Բօայալէն ուղեկից պահապաններով ճամբայ ելնող նուիրակէն առաջ հասնիմ . այո՛, եթէ աճապարեմ կարելի է որ անցնիմ գինքը : Հսն պիտի գտնեմ դժբաղդ Աստօնը, անկէ վախնալու բան մը չունին : Կառուն մէջ խիստ տարօրինակ կերպով երևան երևելէն քիչ մը վախցայ թէ մի գուցէ այն չուառականը Լոնտոնի կամ Սէն-Ժէրմէնի մէկ լրտեսն եղած ըլլայ . բայց շատ փորձեցի գինքը, իւր սովն յանկարծ այնպիսի անուններ տուի որ, եթէ գաղտնիքն տեղեակ ըլլար, անպատճառ պիտի սարսէր որչափ ալ անխոռով մէկն եղած ըլլար, բայց անտարբեր կեցաւ : Մարդիկն ո՛յնչափ աղէկ կը ճանաչեմ որ այս մասին չեմ սխալիր, ասպետն ուրիշ բան չէ բայց խօլ բողբոխնդիր մը, կորուսեալ որդի մը, այսու ամենայնիւ իւր բարի յատկութիւնները չեն թողուր որ չարեք մը գործէ :

Այս միջոցին Պարոնը ներս մտաւ : — Հուսով Արընատիյը թամբէ' :

— Լաւ , տէ'ր իմ' :

— Քօլան ալ քակէ' :

— Լաւ , տէ'ր իմ' :

— Չմոռնաս , ճամբու մեծ վերարկուս ալ թամբին ետև'ը դիր :

— Լաւ , տէ'ր իմ' :

Սևը դուրս ելաւ , յետոյ շուտ մը վերագտնալով ըսաւ .

— Տէ'ր , Քօլան զինե'մ' :

— Անշուշտ , ինչու որ անտառին մջէն պիտի անցնիմ' :

Երբ սևը ձին կը պատրաստէր , եկեղեցականը շարունակ կը պարտէր խուզված . յանկարծ միտքը բան մը իննալով դռնեց սոսկ-մամբ .

— Այդեօք սխալեցա՞յ , արդեօք այն բաղլախնդիրն ապուշ ձեւանալով նի թուած մեքենայութիւն մը , սոսկալի գիտաւորութիւն մը ծածո՞ւկ պահել կ'ուզէր : Բայց , ո՛չ , ո՛չ , խորամանկութիւնն ու կեղծիքը չեն կրնար մինչև այս աստիճան կատարելագործուած ըլլալ : Սակայն ի՞նչ ընելու է եթէ իւր պաշտօնը ուղեկից պահպաններով դացող մարդուն պաշտօնին հետ համադէպ դայ : Ա՛հ , ե՛ս երաշխաւորեցի այն բաղլախնդիրը , ե՛ս էի որ երէկուան նամակիս մէջ հտանութիւն ցոյց տուի անոր նկատմամբ իրենց ըրած որոշմանցը , իրենց պէս կարծելով թէ Կաթօնին՝ Գիւարնակ-Բլուրին զաղանեայը վրայօք ըսելիք և պատմելիք ամեն բաները հոն ընտելող կնոջ նպատակին պիտի ծառայեն : Սակայն եթէ սխալած ըլլամ , եթէ իմ պատճառաւ վտանգաւոր թշնամբ մը մէջերնին մտած ըլլայ . . . : Բայց , ո՛չ , եթէ զաղանիքը զիտանար , մինչև հիմա կը դօրծէր : Ս՛նայ որ . . . ո՛չ , ո՛չ . . . արդեօք ֆրքաթօնին և նուիրակին գալո՞ւն կ'սպասէր զործելու համար . արդեօք խօսքերնին մէկ է : Ա՛հ , սիրտս սոսկալի անձա կու՞թեան մէջ է :

Այս ըսելով հայր Արիֆօն աճապարանօք դուրս ելաւ ճամբու

պատրաստութիւնները փութացընելու համար : Պարոնը Արընատիյը թամբելու և Յովհաննէսը Քօլան զինելու գործողութիւններն աւարտելու վրայ էին :

Հարկ է մէկ երկու խօսք ընել որպէս զի ընթերցողաց ճանչցընենք այն նոր եակը որուն վրայ մինչև ցարդ պատեհութիւն չունեցանք խօսելու : Քօլան ընտանեցած վարազ մ'էր և զարմանալի ուշիմութիւն մ'ունէր . հայր Արիֆօն անտառաց մէջ արշաւանքի ելած աստե՛ն միշտ հետը կրտանէր զայն և առջեկն կը քալեցընէր : Այս վարազները կարծր ստեղծած կուսած մորթ մը և թանձր ճարպ մը ունենալով , կ'ըսեն թէ օձերուն թոյնը անոնց մորթէն ներս չկրնալով թափանցել կը թանձրանայ կրմնայ , այս պատճառաւ թէ՛ այս կենդանիները և թէ՛ ընտանի խողերն անդամ գաղթականութեանց մէջ սոսկալի կերպով կը պատերազմին սողնոց դէմ : Քօլան անոնց ամենէն աներկիւզ թշնամիներէն մին էր : Ասոր գէնքն ուրիշ բան չէր բայց եթէ երկաթէ ցուկակապ մը որ մանր ծակեր ունէր և ծայրն ալ մահահաճ և դանակի պէս սուր էր . և որովհետեւ վարազը իւր խալամին ծայրէն զատ վերաւորուելու տղմը չունէր , այս կերպով այն մասն ալ կը պաշտպանուէր , և օձերուն դէմ սոսկալի զէնք մը կը տրուէր իրեն : Քօլան միշտ Արընատիյէն մէկ քանի քայլ առաջ երթալով ճամբայ կը բանար անոր և օձերը փախցընելով չէր թողուր որ զայն խայթեն :

Հայր Արիֆօն , որ չէր կարծեր թէ Քրուսթիյաք անակնկալ կերպով պիտի մեկնէր (ընթերցողք արդէն զիտեն թէ բաղլախնդիրն առանց իւր հիւրընկալին հրամարական ողջնը տալու մեկնէր էր) , հայր Արիֆօն տեսնելով որ ասպետը բայարձակապէս որոշած է անտառին ճամբան ընելու , Քօլան անոր յանձնելու գամ էր . եկեղեցականին միտքն այն էր թէ վարազը կրնար Քրուսթիյաքի պատահելիք վտանգներէն ոմանց առաջին առնուլ , բայց բաղլախնդիրն առտուն կանուխ խոյս տուած ըլլալով , հայր Արիֆօնի նախատեսութիւնն ի դերև ելած էր : Սա իւր երկու սևերուն պատուիրելով սր տանը վրայ լաւ հսկողութիւն ը-

նեն, որոյ հաւատարմութեանը վրայ կրնար վտաճիլ, իւր ձին հեծաւ, Քօլային սուրեց, որ զուարթ խանչիւնով մը պատասխանեց, և իբրու նոր սուրբ Անտօն, փութաց Գլուարնակ-Բլուրին ճամբան բռնելու, վախճալով որ դուրս շատ ուշ համարի, և ճամբան Պ. աը Շէմրոյի պատահի, զոր այն ատեն դժուարութեամբ պիտի կրնար անցնիլ . . . :

Ընթերցողք կը յիշեն թէ վաղրակատուները ճօնին դիակը լափած ըլլալով, Բիւթէր գնդապետը կրցեր էր մարդարտի որսորդին քարայրին մէջի ստորերկրեայ անցքէն դուրս ելնել: Գնդապետին փորձելիք ձեռնարկութեան ծայրադոյն կարեւորութիւնն ու դժուարութիւնը հասկրցընելու համար կը յիշեցընենք ընթերցողաց թէ Կապոյտ-Մօրուքին տանը գաբաստանը հարաւէն հիւսիս կը յառաջանար անգունդներով շրջապատեալ սնասի մը պարանոցի պէս: Արեւելքէն և արեւմուտքէն այս անդունդները գրեթէ անյատակ էին, վասն զի այս մասերուն մէջ՝ պարտէզին վերջին ծառերն ահագին բարձրութեամբ խոտաքարէ պարսպի մը վրայէն ցից կերպով գուրս ինկած էին, և այն պարիսպը երկու արագընթաց ու խորունկ հեղեղներու ջրերով ողողեալ էր: Բայց հիւսիսային կողմէն գարատանին ծայրը թէև ցից զտրիթափ էր, սակայն մարդ կրնար ամեն վտանգ աչքն առնելով անկէ վեր ելնել: Այսու ամենայնիւ պարտէզն այս կողմէն ամենևին վախ չունէր, վասն զի այս ապառաժներէն մաղլելով վեր ելնելու համար, որք արեւելեան կամ արեւմտեան կողմի ապառաժներուն չափ ուղղաձիգ չէին, նախ պէտք էր գիմացի կողմի ապառաժներէն վար մինչև անգունդին յատակը իջնել որ նիւթապէս անկարելի ձեռնարկութիւն մ'էր մինչև անգամ եթէ տարապայման երկայնաբանութեամբ պարան մ'ալ ըլլար, վասն զի որ տեղ տեղ ցից էր, նոթեամբ պարան մ'ալ ըլլար, վասն զի որ տեղ տեղ ցից էր, որ տեղ ալ ժայռերը դուրս ինկած և անկիւններ ձևացած էին:

Բիւթէր գնդապետն ընդ հակառակն ստորերկրեայ ուղիէն անցնելով նախ զահաւանդին յատակը հասեր էր, այնուհետև Գիւարնակ-Բլուրին մինչև ներքին կողմը հասնելու համար ուրիշ բան չունէր ընելիք ըստ բնութեան և անկիւններ ձևացած էին:

ուրէն վեր մաղլել, և այս ալ մէկ ժամու գործ էր. և որովհետև մութը չկոխած չէր ուզեր տանը պարտէզը մտնել, սպասեց որ արևն սկսի խոնարհիլ և այնպէս ճամբայ ելնէ: Գնդապետը ճօնին կամաքն անցքէն դուրս հանած էր: Իւր ահա Կիլոմ տ'Օրանժի գաղտնի նուիրակը այն ոսկորներուն քով, վայրենական և խոր առանձնութեան մը մէջ, բնութեան սասանութիւններէն զիջուած կրանիդեան ահագին զանգուածներու ճշմարիտ քասին կեդրոնը մի քանի ժամ սպասեց, ժայռի մը խոռոչին մէջ կիծկուած, արեւուն կիզիչ ջերմութենէն իւր անձը պահպանելու համար:

— Այս անդունդին գերեզմանական լուծեանը մէջ հեռուն գողացող ծովին ձայնէն զատ ուրիշ բան չէր լսուեր: Շատ քանցաւ արևուն հրատապ պայծառութիւնը սկսաւ կարմիր գոյն մը առնուլ. ժայռերուն զագաթներէն, ուր Կապոյտ-Մօրուքին տանը գարատանին ծայրի ծառերը կը տեսնուէին, լոյսը տակաւ առ տակաւ նուազեցաւ. նեմազոյն մշուշ մը սկսաւ Բիւթէրի գտնուած անգունդին խորը պատել . . . : Գնդապետը մտածեց որ ճամբայ ելնելու ժամանակը հասած է: Իւր կարգէ դուրս արիութեանը հակառակ, այս երկաթէ մարդուն սիրտը սկսաւ մտապաշտական վախ մը մտնել. իւր ընկերին սոսկալի մահը բուսկան սարսափ պատճառած էր իրեն. առջի օրուրնէ ի վեր բերանը բան մը դրած չըլլալով (օձ ուտելու չէր համարձակած) և այս բռնի ծումապահութիւնն իւր ուղեղին վրայ ներգործելով, իւր միտքը տարօրինակ և զարհուրելի զագափարնրով կը պաշարուէր . . . բայց այս տկարութեանց յաղթելով սկսաւ ժայռերէն վեր մաղլել:

Ի սկզբան Բիւթէր բաւական յենակէտ գտնելով կրցաւ ապառաժին բարձրութեան առաջին երրորդ մասէն արագութեամբ վեր մաղլել: Հոն մեծ դժուարութեանց պատահեցաւ, բայց իւր արիութեամբն ու յոմառութեամբը յաղթեց անոնց. այն պահուն երբ արեւը մարը մտնելով բոլորովին աներեւոյթ կ'ըլլար, գնդապետը ժայռին կատարը հասաւ. խոնջութենէ և անօթութենէ պարտա-

սեալ, Գիււթնակ-Բլուրին գարատանին յետին ծառերուն ստորոտը կնկաւ գրեթէ մարած . այս ծառերուն մէջ բարեբաղլարար հնդկընկուղի ծառեր ալ գտնուելով, դեռինը բաւական քանակութեամբ ընկոյղ թափած էին . Բիւթլէր հաստ մ'առնելով գաշոյնովը բացաւ և այս պտուղներուն պարունակած թարմ հեղուկը խմելով սաստիկ ծարաւն անցուց, և սննդարար մտաքն ալ անօթութիւնն ամոքեց :

Այս անակնկալ ճաշը զնդայետին ուժը կաղզուրելով, սկսաւ համարձակ յառաջ երթալ անտառին մէջ . չափազանց զուշութեամբ քալելով, իւր ընթացքը ճօնէն առած տեղեկութեանցը համեմատ կ'ուղղէր սխիտակ մարմարիոնէ աւազանը պտնելու համար, որուն մօտ դարանամուտ ըլլալ կ'ուղէր . Բաւական ատեն խաւարին մէջ և բարձրաբերձ նարնջենեաց անտառի մը ներքև թափառելէ ետև . հեռուն շատրուանի մը ջրերուն աւազանի մը մէջ թափելուն ձայնը լսեց, իսկոյն նարնջենեաց անտառին եզրը հասաւ, և աստղերուն աղօտ լուսովը, ինչու որ լուսինը շատ ուշ կ'ելնէր, ամեն կողմէն ծառերով շրջապատեալ բոլորալայրի մը մէջտեղը ձերմակ մարմարիոնէ ընդարձակ աւազան մը տեսաւ . յետոյ այն խոնաւ տեղերն առատութեամբ բուսնող ահագին եղէգնեղութեանք փունջ մը բանալով մէջը պահուրտեցաւ աւազանէն քանի մը քայլ հեռու, և դէպքերուն սպասեց :

Հարկ համարելով համառօտիւ երկրորդել այն փրկութեան և կորստեան հաւանականութիւնները որոց Գիւարնակ-Բլուրին խորհրդաւոր բնակիչները ենթարկեալ կը թուին, ընթերցողաց կը յիշեցընենք Պ. տը Շէմրոյի՝ առտուն Քոր-Քոսյալէն ճամբայ ելնելով փութանակի յառաջանալը, հայր կրթիճանի շտապու Մարտպայէն մեկնիլը որպէս զի Գաղլիոյ նոյնրակէն ստաջ հասնի, Բիւթլէր զնդայետին գաղտուկ պարտեղ մտնելը : Հի'ա պիտի պատմենք առաւօտէն ի վեր Եռամալին, կապոյտ-Մօրուքին և Քրուսթիյաք ասպետին մէջ պատահած բաները :

Գ Լ Ո Ւ Ն Ե Ր Ե Ն Ի Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

Յ Ե Ղ Ա Կ Ա Ր Ծ Պ Ա Տ Ա Հ Ա Ր Մ Ը

Այն պահուն երբ բաղդախնդիրը թողոյնը, յանկարծական և անկեղծ սիրով մը բորբոքեր էր, և անհամբերութեամբ կ'սպասէր կապոյտ-Մօրուքին իրեն տալիք բացատրութեան . թերևս յոյսներուն : Քարայիպը եբբ ճաշն ըրաւ, զոր Անժէլ մեծարանօջ տուաւ անոր ի մեծ յուսահատութիւն ասպետին, ծանրութեամբ զնաց լճին եղերքը ծառի մը շուքը նստաւ . յետոյ արմուկները ծոնդերուն վրայ դրած, կըսին ալափերուն մէջ առած, կարծես աչացը ներքև ինկած առարկաները կը դիտէր, և ընդ երկար այսպէս անշարժ մնաց վայրենի ժողովրդոց յատուկ եղող տեսակ մը հայեցական ծուլութեան մէջ : Անժէլ իւր սենեակը պացի էր : Ասպետը մտախոհ կը շրջէր պարտեղին մէջ, մերթ նախանձու և սրտմտութեան ակնարկ մը ձգելով Եռամալէի վրայ :

Իւր հակառակորդին լուծիւնն ու անշարժութիւնը տեսնելով համբերութիւնը հատած, և թերևս անկէ տեղեկութիւն առնելու յուսով, Քրուսթիյաք զնաց Եռամալէի մօտ նստաւ : Եռամալէ չտեսնելու զարկաւ : Քրուսթիյաք հազաց, շարժումներ ըրաւ . Քարայիպը տեղէն չխախտեցաւ : Ա երջապէս ասպետը շատ համբերող մէկը չըլլալով, կամաց մը ձեռքը ուսին գպցուց բսելով .

— Ի՞նչ կը դիտէք հօգ երկու ժամէ ի վեր, արևը մտրը մանելու վրայ է, և դուք տակաին անշարժ կեցեր մնացեր էք : Քարայիպը գլուխն ասպետին կողմը դարձուց յուրաբար, զիտեց զայն ակնասիլ շառանց կըսին ակներուն մէջէն բաժնելու . յետոյ դարձեալ առջի դիրքն առաւ և այնպէս մնաց լուռ ու մունչ : Բաղդախնդիրը բարկութենէն կարմրեցաւ և ըսաւ .

դինքը չտեսնելուս կը զարմանամ: Սակայն եթէ ուզէք՝ կրնաք զայն մոռցընել տալ ինձ:

— Հնչանուագս տեղաւորելու համար ասկէ աւելի յարմար առիթ չկրնար ըլլալ, ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն: Եթէ ներէք, ավիկին, մի քանի փոքրիկ տաղեր կ'արտասանեմ ձեզ, որք թերեւս կրնան ձեր տխրութիւնը փարատել . . . :

— Տաղեր . . . ի՞նչ կ'ըսէք, բանաստեղծ էք, ասպետ:

— Ամեն սիրահար բանաստեղծ է . . . ավիկին:

— Ըսել է որ սիրահարեր էք . . . բանաստեղծ ըլլալու իրաւունք ունենալու համար:

— Ո՛չ, ըսաւ Քրուսթիյաք տիրադին, տանջուելու իրաւունք ունենալու համար սիրահարեալ եմ . . . :

— Եւ ձեր նահատակութիւնը երգելու . . . : Տեսնենք տաղերնիդ . . . :

— Այս տաղերով, ավիկին, ամեն ջանք ի գործ դրած եմ երկու կապտադեղ աչեր նկարագրելու . . . կապտադեղ . . . ձեր աչացը պէս . . . հնչանուագ մ'է . . . :

— Տեսնենք այդ հնչանուագը:

Քրուսթիյաք հետեւեալ տաղերն արտասանեց մերթ մեղի, մերթ սիրարուխ ձայնով մը.

Ոչ աչեր են դորա, այլ աստուածք են յաւէտ,
Իշխանաց ունին վրայ զօրութիւն բացարձակ:

Աստուածք . . . ո՛չ, այլ երկինք . . . դոյն ունին կապուտակ
Եւ երկնից համաքիպ, սուր շարժում որպէս նետ:

— Սակայն, ասպետ, պէտք էր որ ընտրէիք, ըսաւ Կապոյտ-Փօրուքը: Աչեր են, աստուածք են, չէ՞նէ երկինք:

Քրուսթիյաք շարունակեց, պատասխանը ոտքովն եկածի պէս.

Երկինք, ո՛չ, այլ երկու լուսափայլ արեգակ,
Որոց շողք հրարոց խտրղիչ են աչաց:

Արե . . . ո՛չ, այլ փայլակք, զօրութեամբ անիմաց,
Կայծակք որ սիրոյ բորբոքման են զուշակ:

— Ստուղիւ, ասպետ, կ'ուզէի դիտնալ թէ ասոնց որո՞ւն ուրոշում պիտի տաք . . . արեգակն հաւեցայ . . . նոյնպէս ալ ~~աստուածքն~~ . . . :

Քրուսթիյաք շարունակեց մեղի թուլութեամբ մը.

Բայց աստուածք ոչ այնքան կը տա՛ջն չարաչար .
Եւ երկինք ունին միշտ մի շարժում հաւասար .
Միակ է արեգակ, և չըլլար երկու հատ . . . :

— Ա՛հ, ասպետ, հիմա ալ բոլոր այդ գեղեցիկ նմանութիւնները խլելիք ինէ . . . միայն փայլակը մնաց . . . :
Քրուսթիյաք գլուխը թոթուեց . . . :

Փայլակք . . . ո՛չ, զի սորա կը տեսն շատ երկար .
Այլ զանոնք կ'անուանեմ, զի միտքս առնեմ յայտ,
Աչեր ու աստուածներ, արեներ, փայլակներ:

— Քա՛ջ է . . . ասպետ, ըսաւ Անժէլ ծիծաղելով, դէթ այդ գեղեցիկ նմանութեանց փունջը ինձ կը վերագործընէք, և ինձ կը մնայ ընտրել . . . ուստի ամենքն ալ կ'ընդունին . . . աստուած . . . երկինք . . . արեգակ . . . փայլակ . . . :

Բազդախնդիրը պահ մը Կապոյտ-Փօրուքը դիտեց լրին, յետոյ տրամագին ձայնով մը Կապոյտ-Փօրուքին ըսաւ .

— Իրաւո՞նք ունիք . . . ավիկին . . . հնչանուագս ծաղրելի է . . . հոգ չէ, ծաղրեցէ՛ք զայն . . . : Բայց ի՞նչ ընեմ . . . զժրաղդ եմ. իմ խօլ ինքնահաւանութեանս . . . տխմարութեանս պատիժն է որ կը կրեմ . . . :

— Ա՛հ, ասպետ, պատասխանեց Անժէլ զգածուելով, պատուէրս մոռցար . . . ես ձեզ ըսի որ զիս խնդացընէք . . .

գրօսեցրնէք . . . :

— Բայց երբ ես կը տանջուիմ . . . երբ՝ արտաքին այլանդակ կերպարանքիս հակառակ, դժնդակ ցաւ մը կ'ըզամ . . . ինչպէս կրնամ խեղկատակութիւն ընել :

Բազդախնդիրն այս խօսքերն այնպիսի ձայնով մ'արտասանեց, որմէ կ'երևէր թէ սիրաբ թունդ ելած էր . . . : Անձէլ զարմանօք երեսը նայեցաւ, և զրեթէ արդահատեցաւ : Այսպիսի անձ մը՝ որ իւր ինքնահասանութեամբն հանդերձ աղնուսիրտ և արի կ'երևէր, իրեն խաղաղի ընելուն վրայ զգջաց : Այս խորհրդածութիւններէն ետև մանկամարդ կնոջ միտքը կարգ մը տխուր մտածումներով պաշարուեցաւ : Թ՛ւ և ի սկզբան շատ ջանաց կասքօնին արտասանած հնչանուագին վրայ ինդալով իւր ախրութիւնը փարատել, սակայն ոչ միայն իւր ջանքերն անօգուտ մնային, այլև անմեկնելի կանխազգացումներ, անորոշ երկիւղներ զինքն առաւել ևս անհանգիստ կ'ընէին, որպէս թէ իւր շուրջը պատող վտանդները բնազդմամբ կը տեսնէր : Քրօսթիյաք կը մտածէր վշտաղին . . . : Անձէլ այս վիճակին մշտեսնելով զայն, դուրը շարժեցաւ, և չորհեց այլ ևս երկարել այն պատրանքը որուն Քրօսթիյաք խաղաղիկ եղած էր . յանկարծ սեղանէն ելաւ, և լուրջ գէմքով մ'ըսաւ անոր .

— Եկէ՛ք, պարոն, երթանք պարտէզը խօսակցինք, Եռամալէն ալ կը գտնենք : Իւր բացակայութիւնը կը վշտացընէ զիս : Սրբիս մէջ անձկութիւն մը կայ . ինձ այնպէս կը թուի թէ այս տանը վրայ սաստիկ փոթորիկ մը պիտի փրթի :

Անձէլ սրահէն դուրս ելաւ, ասպիտակ թևը տուաւ անոր, երկուքն ալ պարտնելով պարտէզին զանազան սատիճաններէն վազ լջան : Անձէլի սրտին նեղութիւնը բազդախնդրին վրայ այնպիսի ցաւալի տպաւորութիւն մ'ըրած էր, իւր տածած յոյսերն այնքան նուազած էին . . . որ հազիւ համարձակեցաւ կնոջ խոստումը յիշեցընել անոր : Արջապէս վարանելով հանդերձ ըսաւ .

— Տիկին, խոստայար ինձ որ ձեր գաղտնիքը . . . :

Կապոյտ-Վօրուքն ասպետին խօսքն ընդմիջելով ըսաւ .

— Մտի՛կ ըրէք, պարոն . կ'ուզէք կարճամտութիւն համարեցէ՛ք, կ'ուզէք նախատեսութիւն, անձկութիւնս հետոյհետե կ'աւելնայ, ինձ այնպէս կը թուի թէ զլխուս մեծ գծրաղզութիւն մը պիտի գայ . ինչ որ ալ ըլլայ, այս վայրկենիս, քանի որ միտքս այսպէս երկիւղներով պաշարուած է, չեմ կրնար շարունակել կաստակ մը որ արդէն չափէն աւելի տեսց :

— Ի՞նչ, տիկին, կատակ մը :

— Այո՛, պարոն . բայց կ'աղաչեմ, քիչ մ'ալ իջնենք : Եռամալէն կը տեսնէ՛ք վարը :

— Ո՛չ, տիկին . թէպէտ պայծառ դիշեր մ'է, բայց մարդ չեմ տեսներ . . . : Ըսիք թէ կատակ մը . . . :

— Այո՛, պարոն, մեր բարեկամ հայր Արիֆօնէն իմանալով որ գիտաւորութիւն ունիք՝ հոս գալով զիս կնութեան խնդրել, ցլորսը զրկեցի որ ձեզ գտնէ . . . և հոս բերէ . . . : Արխոստովանիմ, և միանգամայն թողութիւն կը ինդրեմ, որ ձեզ ընդունելով՝ նպատակս վրանից խնդալ և քիչ մը գրօսնուլ էր :

— Բայց, տիկին, դուք այս իրիկուն պիտի բացատրէիք ինձ ձեր երեք անգամ այրի մնալուն գաղտնիքը . . . ձեր ամուսնոց մահը, հետոյհետէ ձուկսպատակին և . . . :

Անձէլ դարձեալ ընդմիջեց Կասքօնին խօսքն ըսելով .

— Ոտքի ձայն մը կը լսէ՛ք . . . : Եռամալէն չէ՛ :

— Ես բան մը չեմ տես, ըսաւ Քրօսթիյաք՝ իւր բոլոր յոյսերուն ի դերև ելնելուն վրայ սաստիկ վշտացած, թէ և ճմարիտ սիրոյ մը՝ իւր տղայական և ծաղրելի սնապարծութեան վախճան տալէն ի վեր գիտէր որ շատ բան կրնար պատահիլ իրեն :

— Քիչ մ'ալ առաջ երթանք, յարեց Կապոյտ-Վօրուքը, թերևս Քարայիպը նարնջներեաց անտատակին մէջ առաջանին մօտն ըլլայ :

— Բայց, տիկին, սա գաղտնիքը :

— Գաղտնիքը, յարեց Անձէլ, եթէ իրօք գաղտնիք մը կայ . . . դուք չէք կրնար . . . և սէտք չէ՛ ձեզ խնայողայն . . . այն գաղտնիքն այս իրիկուն ձեզի յայտնելու համար ըրած խոստումն կատակ մ'էր որուն համար, դարձեալ կ'ըսեմ, ամօթա-

պարտ եմ հիմա . . . Իսկ եթէ խօսքս բռնէի, ուրիշ պատրանքի մը խաղալիկ ըրած պիտի ըլլայի զձեզ, և ես ալ այն աստն աւելի մեղապարտ պիտի դանուէի :

— Ա՛հ, տիկին, ըսաւ ասպետն աշխուժիւ, շատ դժնգակ բան է այս :

— Ասկէ աւելի ի՞նչ կ'ուզէք, պա՛րոն . յանցանքս կը խոստովանիմ և ներում կը խնդրեմ ձեռնէ, ըսաւ Անժէլ քաղցր և տխուր ձայնով մը : Մի յիշէք ձեզ ըրած տղայական խօսքերս . հետոս ամուսնանալու գաղափարը մտքերնէդ հանեցէ՛ք, վասն զի ես և ոչ մէկուն կինը չեմ կրնար ըլլալ, այլ յիշեցէ՛ք երբեմն Գիւսարնակ-Բլուրին բանտարկեալը, որ թերևս միանգամայն . . . մեղապարտ և անմեղէ . . . : Եւ ասկէ զատ յարեց վարանելով, կըներէ՛ք որ իբր յիշատակ Կապոյտ-Մօրուքին . . . ձեզ ընծայեմայն աղաւմանդներէն մէկ քանին որոց վրայ զիս չտեսած այնքան սքանչաւցար . . . :

Ասպետը բարկութենէն և միանգամայն սրտին ցաւէն կարմրեցաւ . վասն զի Անժէլի վրայ զգացած ճշմարիտ սիրոյն պատճառաւ, նախատական բան մը կը համարէր այն ընծայն զոր անշուշտ առանց բնաւ հոգ ընելու պիտի ընդունէր եթէ առաջ տրուէր իրեն :

— Տիկին, ըսաւ գոռոզութեամբ և դառնութեամբ, զիս երկու օր հիւրընկալեցիք . վաղը պիտի մեկնիմ . միայն ուղեցո՛յց մը տուէք ինձ, ուրիշ չնորհք չեմ խնդրեր : Իսկ ձեր առաջարկութիւնը զիս կըրկնակի վերաւորեց :

— Պա՛րոն . . . :

— Այո՛, տիկին . . . վասն զի ստակ առնելով՝ ձեր անարդիշ վարմունքը մոռնալու չափ սինլքոր անձ մը կը կարծէք զիս . . . :

— Պա՛րոն . . . այդ չէ իմ դիտաւորութիւնս . . . :

— Տիկին, թէպէտ աղքատ եմ, ծաղրելի եմ, սնափառ եմ, նեղն ինկած աստնս ինքզինքս աղատելու չափ վարպետորդի վե՛մ, բայց ես ալ իմ պատիւս ունիմ :

— Բայց, պա՛րոն . . . :

— Բայց, տիկին, եթէ կղզւոյս ընակիչներէն մէկն ինձ հիւրընկալութիւն ըրած ըլլար, և ես ալ ասոր փոխարէն զինքը զուարճացնելու յանձն առնէի, առուտոր մ'ըրած պիտի ըլլայի . . . թէ և կը խոստովանիմ որ շատ օրինաւոր առուտուր մը չպիտի ըլլար : Իրմէ աւելի երջանիկ անձէ մը կախում ունեցող մարդ մը շատ բարակը փնտրելու չէ . . . : Նաւորուէքիս փոխարէն Ալփրէի նաւապետը զբօսեցուցի . . . առուտուր մ'ըրած եղանք, և շատ աղէկ դիտեմ որ ըրածս շատ անարդ բան մ'էր, բայց սա ալ աղէկ դիտեմ որ ինձի չափ թշուառութիւն կրող մարդ խիստ քիչ կը գտնուի . . . :

— Խեղճ մարդ, ըսաւ կամայ մը այրին արգահատելով : :

— Այս ըսելով միտքս ձեր դուր շարժել չէ, տիկին, յարեց գոռոզութեամբ Քրուսթիյար, միայն սա հասկըցնել կ'ուզեմ ձեզ թէ՛ եթէ նեղն իյնալով հացկատակութիւն ըրած եմ, նախատիքի մը փոխարէն երբէք ստակ առած մարդ չեմ : Յետոյ փղձկեալ ձայնով մը յարեց .

— Տակաւին չէ՛ք ըմբռներ, տիկին, թէ ձեր առաջարկութիւնը ո՛րքան վիշտ պատճառեց ինձ, ոչ այնքան ըստ ինքեան անարդական ըլլալուն համար, որ չափ այդ սիսի առաջարկութիւն մ'ինձ ընողը զուք ըլլալնուդ համար . . . : Ճշմարիտ կ'ըսեմ որ զիս ծաղրելի պիտի այնչափ հոգ չէի ընէր . . . բայց երբ այն ծաղրաբանութեանց փոխարէն ստակ տալու ելաք . . . ա՛հ, տիկին, այն աստն զգացուցիք ինձ չքաւորութեան մէկ դառնութիւնն ալ զոր տակաւին չէի դիտեր . . . : Պահ մը լուռ կեանալէ ետեւ յարեց կակձաղին . Արդարեւ ինչո՞ւ այսպէս չվարուէիք հետս . ո՞վե՛մ ես, որո՞ն յանձնարարութեամբը եկայ հոս : Սա հազած զղեստներս անգամ իմն չեն . . . : Ինչո՞ւ սրտերնիդ հատցնեմ, այնպէս չէ՛, տիկին :

Խեղճ ասպետն այս վերջին խօսքերն այնպիսի վշտազին ձայնով մ'արտասանեց, որ մանկամարդ կնոջ սիրտը շարժելով դառնապէս զղջաց ըրած առաջարկութեանը վրայ : Գլուխը խոնարհեցուց, և պահ մ'այսպէս Քրուսթիյարի քովի ի վեր քալեց :

Անձէլ և Քրուսթիյաք բաւական մօտեցան այն սպիտակ մարմա-
րիննէ աւազանին որուն վրայ խօսուեցաւ : Մանկամարդ կինը
բազմախնդրին թևը չէր թողուր : Քանի մը վայրկեան մտածելէ
ետե ասպետին ըսաւ .

— Իբաւունք ունիք . . . պակասութիւնն իմն է . . . ձեր
վրայ սխալ գողափար ունեցայ . . . ձեզ առաջարկած հատուցումն
զրեթէ թշնամանք մ'էր . . . : Ա՛ղաչեմ, մի՛ կարծէք բնա-
որ զձեզ նուաստացրնել ուզեցի . . . յիշեցէ՛ք այս առտու ձեզ ը-
սած խօսքերս . . . ձեր արի և աղիւ սրտին նկատմամբ . . .
հիմա ալ այսպէս կը հաւատամ . . . : Ա՛րսէք թէ զիս կը սիրէք .
. . . եթէ այդ սէրն անկեղծ է . . . չեմ վշտանար . . . դէշ
բան մ'ըրած կ'ըլլամ եթէ այդպիսի զգացման մը վերաւորիչ եղա-
նակաւ սրտասխանեմ. ուրեմն հաշտուեցանք, այնպէս չէ, յարեց
խիստ շնորհալի կերպով մը. տակաւին ռի ունիք ինձ դէմ, . . .
ո՛չ ըսէք ինձ, որպէս զի ես ալ կարենամ ձենէ խնդրել որ մի քա-
նի օր հոս կենաք . . . իբր բարեկամս . . . վտահ ըլլալով
որ չպիտի մերժէք առաջարկութիւնս :

— Ա՛հ, տիկին, գոչեց Քրուսթիյաք ուրախութենէն յափշտա-
կուած . . . հրամայեցէ՛ք, պատրաստ եմ հնարանդելու . . .
իբրև ձեր ծառայն . . . ձեր գերին . . . ձեր շունը . . . :
Այդ անուշ խօսքերնիդ լսելով ամեն բան մոռցայ . . . : Ձիս
բարեկամ կոչեցիք . . . : Ա՛հ, տիկին, ես այսպէս սղորմելի
Աստուծոն մ'ըլլալու չ'ի . . . : Ձեզ իմ անձնանուիրութեանս փոր-
ձը տալու կարող ըլլալու չափ երջանիկ չպիտի ըլլամ երբէք :

— Ա՛՞ գիտէ . . . բայց ձեզ հատուցում մ'ունիմ ընելիք . . .
. . . : Սպասեցէ՛ք հոս, երթամ նայիմ ո՛ւր է Երուսաղէն, և բան մը
բերեմ . . . ինձայ մը . . . այո՛, սլարոն ասպետ, այնպիսի ըն-
ծայ մը . . . զոր հաւասարի եմ թէ այս անգամ չպիտի կրնաք մեր-
ժել . . . :

— Բայց, տիկին . . . :
— Դեմ մի՛ խօսիք . . . : Ա՛հ, տէ՛ր Ատուած, քանի կը
յիշեմ որ դուք կ'ուզէիք ըլլալ . . . իմ ամուսինս . . . : Սպա-

սեցէ՛ք հող . . . ես հիմա կու գամ :

Այս ըսելով՝ Անձէլ որ խօսակցելով մինչև մարմարունէ տա-
ղանը հասեր էր, դարաստանին ծառուղիէն վեր ելաւ յուշիկ և
տանը կողմը երթալով աներևոյթ եղաւ :

— Կ'նչ ըսել կ'ուզէ, ի՛նչ ընել կ'ուզէ, ըսաւ ինքնիրեն Քրուս-
թիյաք մեքենայաբար աւազանին ջուրը գխտելով : Յետոյ յարեց
խանդաղին . Կ'նչ կ'ուզէ թող ըլլայ, այսուհետե ցմահ ես իքն եմ.
բարեկամ անուանեց զիս . անշուշտ այլևս չպիտի տեսնեմ զինքը,
բայց հող չէ, միշտ կը պաշտեմ զինքը . ասկէ ի՛նչ փաստաւաջ կու
գայ . . . չպիտեմ . . . բայց ինձ այնպէս կը թուի թէ սէրք
զիս ուղղեց . . . երկու օր առաջ այս աղամանդները պիտի ընդ-
ունէի . . . : Այսօր . . . կ'ամաչեմ . . . : Ջարմանալի
բան, սէրը ո՛րչափ կը փոխէ զմարդ . . . :

Քրուսթիյաքի փիլիսոփայական խորհրդածութիւնները յանկարծ
ընդմիջեցան : Բիւթէր գնդապետը գիշերտան ալօտ լուսոյն մե-
ջէն տեսեր էր բազմախնդրին Աստուծոյ՝ Մօրուքին հետ ստըտիլը .
Անձէլի առ Քրուսթիյաք ուղղած սա վերջին խօսքերը լսեր էր .

— ամուսինս . . . սպասեցէ՛ք հող . Բիւթէր շտաբակուսեցաւ թէ
Աստուծոյ իւր փնտոած մարդն էր . յանկարծ պահուրտած տեսէն
եղիւնով ասպետին վրայ յարձակեցաւ, երեսին քողմը ձգեց, տես-
նելով որ ապշեր մնացեր է՝ դետինը վարկաւ գայն . յետոյ ձեռքե-
րը հանդոյց մ'անցրնելով դիմադրելու միջոց մը չթողուց, վառն
զի Բիւթէր կարգէ գուրս ուժ մ'ունէր : Ասպետին այսպէս գե-
տինը դարնուիլը, կաշկանդուիլը, բերանը դոյլ գրուիլը մէկ
վայրկենի գործ եղաւ : Այնուհետե գնդապետը ասպետին կոկոր-
զին վրայ դաշոյն մը գնելով ըսաւ .

— Յիլորա-գուքս, եթէ շարժում մ'ընէք, կամ դքսուհին
օղնութեան կանչէք, միտած էք . . . : Յանուն Աիլոմ ա՛Օրան-
ժի, թողաւորին Անդղիոյ, կը ձերբակալեմ զձեզ իբրև դաւաճան
հայրենեաց . . . հետս պիտի գաք . . . :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Մ Ի Լ Ո Ր Տ - Գ Ո Ւ Բ Ս

Քրուսթիյաք՝ արտաքոյ կարգի ուժի տէր հակառակորդէ մը յարձակում կրելով, չփորձեց գիմադրել: Երեսը պատած քողը շնչառութիւնը կ'արդիւէր: Հազիւ թէ կրնար խեղդուկ ձայներ հանել: Քիւթէր ականջին մօտեցաւ, և Հոլանտական արտասանութեամբ Անդղիարէն ըսաւ.

— Մի՛ւրտ-գուքս, կրնամ երեսնիդ բանալ: Բայց զդուշացէ՛ք . . . : Եթէ օգնութեան կանչէք, մտած էք: Գաշոյնիս ծայրը կ'զգամք:

Խեղճ Քրուսթիյաք, որ Անդղիարէն չէր հասկընար, բայց դաշոյնին ծայր կ'զգար, գոչեց.

— Գաղղիարէ՛ն խօսեցէք, Գաղղիարէ՛ն խօսեցէք: . . . :

— Կ'իմանամ որ Ձեր Աղնուութիւնը Գաղղիոյ մէջ մեծցած ըլլալով, նախապատիւ կը համարի այդ լեզուն, ըսաւ Քիւթէր, կարծելով թէ իւր Հոլանտական հնչման պատճառաւ խօսքերը չէին հասկըցուեր, յետոյ յարեց. Ուրեմն ներողամիտ եղիք, տէ՛ր իմ, եթէ Գաղղիարէն լաւ չխօսիմ. . . : Պատիւ անձին կը համարէի ըսել Ձեր Աղնութեան թէ՛ եթէ ձայն մը հանէիք՝ պիտի սպաննէի զձեզ: Նաև եթէ ձեր կինը, դքսուհին, եկած ատեն թողուք որ օգնութեան կանչէ, կեանքերնիդ կը կորսընցունէք:

— Անեկիրոյ եմ որ զիս ուրիշ մը կը կարծէ, մտածեց ասպետար: Տէ՛ր Աստուած, արդեօք որ ստտանին ծակը ինկեր եմ: Խնչէ այս նոր դազանիքը . . . որմը դէմ կառուեր է այս վայրագ Հոլանտացին որ իւր սոսկալի դաշոյնովը Մի՛ւրտ-գուքս կ'ըսէ կ'երթայ: Գէթ այս ալ բան մ'է որ զիս ստորին աստիճանի

մէկը չկարծեց: Կապոյտ-Մօրուքն ալ դքսուհի է եղեր . . . և իմ կինս կը կարծուի . . . :

— Մտի՛կ ըրէք, մի՛ւրտ, ըսաւ Քիւթէր վայրկեան մը լուռ կենալէ ետև, Ձեր Աղնութեան հանդատութեանը համար այդ քողէն կ'ազատեմ զձեզ. բայց դարձեալ կ'ըսեմ, եթէ դքսուհին փոքրիկ ձայն մը հանէ, եթէ ձեր դերիններն զձեզ պաշտպանելու փոքրիկ ցոյց մ'ընեն . . . պիտի ստիպուիմ զձեզ սպաննել. . . իմ սիրոյ՞ թագաւորին խօսք տուած եմ զձեզ տանիլ մեռեալ կամ ողջ:

— Այլ խեղդուիմ . . . նախ երեսս բացէ՛ք . . . ձայն չեմ հաներ, մըմնջեց Քրուսթիյաք, կարծելով թէ զնդապեան խր սխալած ըլլալը պիտի տեսնէր . . . :

Քիւթէր՝ բառի վախճանը գէմքը պատող քողը հանեց. Քրուսթիյաք իւր քովը մարդ մը տեսաւ որ ծռնուի վրայ եկած էր և դաշոյն ի ձեռին կ'սպառնար իրեն: Գիշերը սոյն ըլլալով, սասկառ կրցաւ որոշակի տեսնել զնդապետին գէմքը որ բոլորովին անձանօթ էր իրեն:

— Տէ՛ր, յիշեցէ՛ք ձեր խոտտումը, ըսաւ Քիւթէր, որ բնաւ զարմանք մը չյայտնեց երբ բաղլախնդրին երեսը բացուեցաւ:

— Այս ի՞նչ պիտի ըլլայ . . . շանաներ որ սխալած է, մտածեց ասպետար ապշած:

— Հիմա, մի՛ւրտ-գուքս, յարեց գ'պապեալ օղնելով ասպետին որ հանդիսա նստի մարմարինէ առաջնին մտա, հիմա, մի՛ւրտ-գուքս, ձեր վրայ խիստ յարձակում մ'ընելուս համար թողութիւն կը խնդրեմ ձեռէ, բայց այսպէս ընել պարտաւորեցայ:

Քրուսթիյաք պատասխան չտուաւ. վախը մէկ կողմէն, հետաքրքրութիւնը միւս կողմէն զինքը պաշարած ըլլալով, սաստիկ անհամբերութեամբ կ'ուզէր զխնայ թէ զլքուող բառերը որմը ուղղեալ էին: Բնութեամբ բաղլախնդիր ըլլալով, ուրիշ մը կարծուէն, նա մանատանդ Կապոյտ-Մօրուքին ամուսինը կարծուէն կրնալով բան մը շահիլ, որոշեց որ կրցածին չափ իրեն ընծայուած դերը խաղայ, յուսալով որ թերևս այս կերպով կարե-

նայ Գիւարնակ-Բլուրին բնակչաց զաղտնիքն իմանալ : Հուսկ ուս
րեմն պատասխանեց .

— Ապահով էք, պարոն, որ ձեր փնտուած մարդը ես եմ :

— Թո՛ղ Ձեր Ազնուութիւնը չփորձէ զիս խաբել, ըսաւ Բիւթ-
լէր խտուութեամբ : Ստոյգ է որ մինչև այսօր ձեզ տեսնելու պա-
տիւր չունեցայ, միլլորա-գուքս, բայց դքսուհւոյն հետ ձեր խօ-
սակցութիւնը լսեցի . . . : Մնաց որ, տէ՛ր իմ, ձե՛նէ զատ
ն՝ վկրնայ այս ժամուս պտըտիլ անոր հետ . . . : Ձեր Ազնու-
ութենէն զատ ն՝ վկրնայ հագնիլ այս կարմիր թեղանիքով թիկնոցը ու-
րուն պատկերը հանած է ճէյմս Սիլըն, որ ձեր կեղտանագիրը
սոյն զգեստներով հանեց :

— Ինձ ալ շատ այլանդակ կ'երևէին այս զգեստները, ըսաւ
Քրուսթիյաք մտքէն :

— Ես զարմանալու բան մը չունիմ, միլլորա-գուքս, զձեզ
այս զգեստներով հագուած գտնելով, որք սակայն խիստ զժնդակ
յիշատակներ պէտք են զարթուցանել ի ձեզ . . . յարեց Բիւթլէր
խոժու գէմքով :

— Գժնդակ յիշատակներ, կրկնեց Քրուսթիյաք :

— Միլլորա-գուքս, ըսաւ գնդապետը, Պրայճ-Վաթէրի ա-
ղէտալի օրէն երկու տարի առաջ, միթէ այս հադուստով ձեր
յարգանքը չմատուցիք ձեր թագաւոր հօրը :

— Իմ թագաւոր հօրս . . . ըսաւ ասպետը բողբոլին սաղ-
շած :

— Ար հասկընամ Ձեր Ազնուութեան շփոթութիւնը, մի կար-
ծէք թէ ձեր միտքը ձգել կ'ուզեմ այն ատուր վէճերը որոց հա-
մար գուք խիստ անաչառ կերպով, և՛ եթէ կը ներէք ինձ ըսել,
միլլորա, արժանապէս պատժուեցաք :

— Ար ներեմ, ինչո՞ւ չէ, ամեն բան ըսէ՛ք, պարոն, մինչև
անդամ կ'ստիպեմ ձեզ, պատասխանեց Ատքօնը, և կամաց մը յա-
րեց . Թերևս այս կերպով բան մը հասկընամ :

— Ժամանակը թանկաղին է, ըսաւ Բիւթլէր, առանց վայր-
կեան մը կորսնցընելու պէտք է իմացընեմ Ձեր Ազնուութեան

թէ ի՞նչ հնազանդութիւն պարտիք տիրոջս Ախյօմ տ'Օրանժի, Անդ-
զիոյ թագաւորին հրամանացը :

— Ըսէ՛ք, պարոն, մանաւանդ որչափ կրնաք մանրամանա-
բար խօսեցէ՛ք աներկիւզ :

— Ձեր Ազնուութենէն պահանջելիքս ծանուցանելու համար,
հարկ է որ բացորոշ կերպով բացատրեմ ձեր կայութիւնը, միլլորա
-գուքս, թէ և խիստ տաժանելի պարտաւորութիւն մ'է այս :

— Բացատրեցէ՛ք, պարոն . . . բացատրեցէ՛ք համարձակ :
Խրարմէ բան չպահենք . . . Մենք մարդ ենք և զինուոր, ամեն
բան լսելու կարող ըլլալու ենք :

— Պէտք է խոստովանիք թէ այս պահուս ձեռքէս չէք
կրնար փախչիլ :

— Ճշմարիտ է :

— Թէ ձեր կեանքն իմ ձեռքս է :

— Այս ալ ճշմարիտ է :

— Բայց ամենէն աւելի սա կետը պէտք է նկատողութեան
առնէք, թէ՛ եթէ, ձեռքէս փախչելու փորձ մ'ընելով, կամբե-
րած հրամաններուս հնազանդիլ չուզելով, . . . զիս՝ զձեզ սպաննե-
լու ցտալի հարկին մէջ գնէք . . . :

— Այդ ցտալի հարկը երկուքնուս համար ալ է . . . պա-
րոն :

— Ձեր Ազնուութիւնը թո՛ղ լաւ ուշադրութիւն ընէ խօսքե-
րուս, և գնդապետը ու ժողնապէս արտասանեց հետևեալ բառերը,
Ես կրնամ զձեզ անպատիժ կերպով սպաննել . . . միլլորա-գուքս,
քանի որ դուք արդէն Քասա՞մ եք . . . հետևաբար ձեր արեան
համար բնաւ որ և է պատասխանատուութեան հարկ չմար :

Ասպետն ապուշ կրթած՝ Բիւթլէրի երեսը նայեցաւ, կարծե-
լով թէ լաւ չհասկըցաւ ըսածը :

— Ա՛րքէք թէ, յարեց, կրնաք զիս անպատիժ կերպով սպան-
նել . . . :

— Քանի որ Ձեր Ազնուութիւնն արդէն մեռած է . . . ըսաւ
Բիւթլէր սատանայական ժպիտով մը :

Քրուսթիյաք դարձեալ զխտեց զայն ուշադրութեամբ, կարծեալ լով թէ զիմացինը խենթ է. ապա վայրկեան մը լուռ կենալէ ետե յարեց .

— Եթէ ըսածնիդ լաւ ըմբռնեցի, հասկըցընել կ'ուզէք ինձ թէ կրնաք անսպասիժ կերպով սպաննել զիս, սա սպարուակաւ թէ ես արդէն մեռած եմ, այնպէս չէ՞ :

— Ստուգիւ . . . միլլորտ-գուքս, շատ բնական բան մ'է այս :

— Շատ բնական բան կը համարիք այս :

— Չեմ կարծեր, միլլորտ-գուքս, որ ուրանալ ուզէք ինչոր ամեն մարդ զիտէ, ըսաւ Բիւթլէր քիչ մը նեղանալով :

— Սակայն ինձ այնպէս կը թուի թէ, եթէ հարկը պահանջէ, առանց ամենուն զխոցածը սխալ է ըսելու չափ պինդ գլուխ մէկը համարուելու, կրնամ մինչև աստիճան մը ուրանալ մեռած ըլլալս :

— Բնաւ չէի կարծեր, միլլորտ-գուքս, որ դուք այսպէս պիտի կատակաբանէք այն սոսկալի վայրկեանները վրայ, որ սակայն պէտք էր խիստ զարհուրելի յիշատակներ թողուլ ձեզ, ըսաւ Գնդապետը զարմանօք :

— Ստուգիւ, պարոն, այնպիսի վայրկեան մը երբէք պէտք չէ որ մտոյուի, երբէ՛ք . . . բայց դժուարութիւնը մի միայն միտ պահելուն մէջ է, ըսաւ Քրուսթիյաք ծիծաղելով :

Գնդապետը չկրցաւ զայրոյթը զսպել, և դռնէն .

— Կը ծիծաղէ՛ք, կը ծիծաղէ՛ք, մինչդեռ ամենէն ազնիւ արեան մը հեղման շնորհիւն է որ դուք հոս էք այսօր . . . : Ա՛հ, միշտ այսպէս պիտի ըլլայ ուրեմն իշխանաց երախտադիտութիւնը :

— Պէտք է զիտնաք, պարոն, որ, յարեց Քրուսթիյաք նեղանալով, այս գործին մէջ երախտադիտութեան կամ ապերախտութեան բան չկայ, և . . . : Բայց, շարունակեց Քրուսթիյաք վախնալով որ սխալ բան մը չփախցընէ բերնէն, բայց կարծեմ ինդիրէն շեղեցանք . . . աւելի ազէկ է որ ուրիշ բանի վրայ

խօսինք . . . :

— Կ'իմանամ որ այսպիսի նիւթի մը վրայ եղած խօսակցութիւնը շատ հաճելի չլինար ըլլալ Ձեր Ազնուութեան :

— Աւելի զուարթ նիւթ ալ կայ, պարոն . . . բայց ձեր հոս դալուն պատճառը հասկընանք. ի՞նչ կ'ուզէք ինէ :

— Հրաման ունիմ, տէ՛ր, զձեզ Պարսպատ տանելու, ուրկէ պիտի փոխադրուիք և բանտարկուիք Լոնտրայի Աշտարակին մէջ, որուն յիշատակը հարկաւ Ձեր Ազնուութեան մտքէն ելած չէ :

— Բա՛նա . . . ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն՝ այս առաջարկութիւնը շատ հրապուրիչ չլուծելով իրեն. բանա . . . Լոնտրայի Աշտարակ . . . : Պէտք է որ այս Հոլանտայի աւանակին իմացընեմիւր սխալը. ուրիշին տեղ բանտ երթալ գործիս չղար : Անիծից արմատ, Լոնտրայի աշտարակ մի . . . այս գնով Ձեր Ազնուութիւնն ու միլլորտ-գուքսը քիչ մը սուղ կ'իյնայ :

— Հարկ չեմ տեսներ ըսել ձեզ, միլլորտ-գուքս, որ հոն ձեր դժբաղդութեանց և աստիճանին արժանավայել յարգանք պիտի վարուին ձեզի հետ : Բայ ի պատուութենէ որ երբէք չպիտի արուի ձեզ, ամեն ինամբ և պատկառանք պիտի դանէք ձեր շուրջը :

— Ի վերայ այսր ամենայնի, ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն, ինչն՞ այս հիւսիսային արջը տարհամոզելու աշխատիմ : Բնաւ յոյս չունիմ, աւա՛ղ, իմ մարտիրոսութեանս վրայ Ասպոյտ-Մօրուքին զուժը շարժելու : Հեռուէն հեռու կրնշմարեմ որ այս Հոլանտացուին իմ մասին ունեցած սխալէն կրնայ օգուտ մը յատաճղալ այն հրաշաղեղ արարածին : Եթէ այսպէս ըլլայ, շատ պիտի ուրախանամ . . . : Անդդիս հասնելուս պէս սխալը պիտի ձանձկուի, և զիս պիտի արձակեն : Արդ՝ քանի որ ինձ համար Եւրոպա վերադառնալէն զատ ուրիշ ձաք չկայ, լաւադոյն կը համարիմ, եթէ կարելի է, իբր իշխան, իբր միլլորտ վերադառնալ, քան թէ իբր ձրի նաւորդ Գանիէլ նաւապետին : Պէթ այս ալ շահ մ'է ինձ որ չպիտի պարտաւորիմ քեծիս վրայ սպառաքանդ կանդնեցընել, և վառած ճրագներ կուլ տալ :

Գնդապետը ասպետին մտախոհ լուռ թիւնը տաղնապ կարծե-
լով, ըստ անոր սակաւ ինչ մեղմանալն .

— Կը տեսնեմ որ Ձեր Ազնուութիւնն անձկութեամբ կ'երևա-
կայէ իրեն սահմանեալ ապաղայն :

— Գիւրին բան չէ, պարոն, Լոնտրայի Աշտարակին մէջ յա-
ւիտեան բանտարկեալ մնալ :

— Այո՛, մի՛ լորտ-գուքս . . . : Սակայն և այնպէս . . .
հաս կատարեալ ազատութիւն չէիք վայելեր . կարելի է որ այսպի-
սի անձկութեամբ և մտատանջութեամբ վարած կեանքերնիդ շատ
չսլիտի փնտռէք :

— Գեղահատը ոսկեղոծել կ'ուզէք, պարոն, ինչպէս կ'ըսեն
Ռամիօրէն . պատճառը գովելի է . . . բայց զիս Պարպատ, և
անկէ Լոնտրայի Աշտարակը տանելու մասին շատ վստահ կ'երե-
ւիք :

— Մի՛ լորտ-գուքս, այս պաշտօնը կատարելու համար ամեն
բան աչքն առած մարդ մը բերած էի հետս . մեռաւ նա . . .
և զարհուրելի մահուամբ :

Բիթլէր չլրջաւ սարսուռը բռնել ճօնի մահը յիշելով :

— Այնպէս որ, ըստ ասպետը, այս արշաւանքն ի գլուխ
հանելու համար բնաւ օդնական չունիք :

— Ա՛յ, մի՛ լորտ-գուքս :

— Խեղբերնիդ կը կարէ՞ որ մինակ կրնաք զիս վերցընել :

— Այո՛, մի՛ լորտ-գուքս :

— Աստա՛հ էք :

— Ամենավստահ :

— Ի՞նչ հրաշքով :

— Հրաշքի պէտք չկայ, մի՛ լորտ, ասկէ աւելի բնական բան
չկրնար ըլլալ :

— Կրնամ՞ զիմնալ :

— Անշուշտ, պէտք է որ ամեն բան իմանաք, մի՛ լորտ-
գուքս, որովհետեւ յոյսս գլխաւորապէս ձեր վրայ է :

— Ձեզ օգնելու որ զիս տանիք :

— Այո՛, մի՛ լորտ-գուքս :

— Սա ստոյգ է որ, պարծանք չըլլայ, կրնամ այս պարագա-
յիս մէջ, եթէ գործին խառնուիլ ուզեմ, քիչ շատ օգնել ձեզ .
Պահ մը լուռ կենալէ ետեւ, Բիթլէր յարեց .

— Ձեր Ազնուութեան արիւթ թիւնը գովածնուն չափ կայ ե-
ղեր . . . դժբաղդութեան մէջ ասկէ աւելի հաստատուն սիրտ
մը, և անխուով հոգի մը չկրնար ըլլալ, մի՛ լորտ-գուքս :

— Կը հաւաստեմ զձեզ, պարոն, որ ուրիշ կերպով կարելի
չէր զիմնալ :

— Այս գիտողութիւնն ընելուս պատճառն այն է, որ դուք
անխուով հոգի մը և արի սիրտ մը կրողանձ մ'ըլլալով, շատ ա-
ղէկ կրնաք հասկընալ . . . որ այսպիսի հոգուով և այսպիսի
սրտով մարդ կը համարձակի մեծ բաներու ձեռք զարնել . արդ՞
ձեզ հասկէ վերցընելու համար ուրիշ միջոց չունիմ . . . :

— Ըսէ՛ք նայինք, պարոն, եթէ միջոցը լաւ է, առաջին ան-
գամես կ'ընդունիմ զայն : Բայց վայրկեան մը համբերեցէ՛ք . կար-
ծեմ կը մոռնար որ հոս առանձին չեմ ես :

— Գիտեմ որ առանձին չէք, մի՛ լորտ . գքսուհին հիմա բաժ-
նուեցաւ ձեռէ . . . կրնայ ըլլալ որ վրայ գայ :

— Եւ ոչ առանձին . . . զիտոյած ըլլաք :

— Եթէ հետը ոտքէն մինչև գլուխը զինեալ հարիւր մարդ
այլ ըլլայ, չեմ՞ վախնար :

— Իրմաւ կ'ըսէք :

— Բնաւ չեմ վախնար, մի՛ լորտ . . . այս ալ ըսեմ ձեզ . . .
շատ հաւանական է որ գքսուհին գալով զձեզ համողէ ինձ հետե-
ւելու եթէ պատահի որ վարանիք :

— Խօսքերնիդ հանելուկ կը թուին ինձ, պարոն :

— Հիմա կ'իմանար, մի՛ լորտ . բայց նախ պէտք է զիմնար
որ ձեր Լոնտրայէն փախչելէն ի վեր ձեզի պատահած ամեն բան
գրեթէ երևան ելած է :

— Այս բոսձը ժխտելով կ'ստիպեմ զինքը որ խօսի, թերևս
քիչ մ'աւելի բան իմանամ, ըստ ասպետը մտքէն : Յետոյ յարեց

բարձրաձայն . Չեմ կարծեր որ այդպէս եղած ըլլայ , սպանն , բնաւ չեմ կարծեր . . . անկարելի է :

— Մտիկ ըրէք ուրեմն , միւրրա-դուքս . չորս տարի առաջ այս տանը տիրուհւոյն հետ ամուսնացաք : Այս ամուսնութիւնը կ'ուզէ օրինաւոր ըլլայ , կ'ուզէ ոչ , ձեր գլխատութեանէն ետե կատարուած ըլլալով , հետևարար ձեր առաջին կնոջայրիութեան ատեն . . . այդ իմ գիտնալու բանս չէ , խղճի և Աստուածաբանութեան վերաբերեալ խնդիր մ'է :

— Ստուգիւ այդ միւրրա-դուքսը բոլորովին բացառիկ կայու-թեան մը մէջ գրած է ինքզինք , ըստ Քրուսթիլյաք ինքնիրեն , զինքը կրնան եղեր սպաննել , վասն զի մուած է , և կրնայ եղեր վերստին ամուսնանալ , վասն զի խը կ'ինն այրի մնացած է իրմէ : Գաղափարներս տակնուվրայ սկսան ըլլալ , ինչու որ երէկուրնէ ի վեր խնտ արատուոց բաներ կը պատահին բոլորապէս :

— Կը տեսնէ՞ք , միւրրա-դուքս , թէ անդեկութիւններս ինչպէս ճիշդ են :

— Ճիշդ են . . . ճիշդ են . . . մինչև աստիճան մը . կը կարծեք թէ ես գլխատուէն ետե գարձեալ ամուսնանալու կարող մէկն եմ , դէթ այս ենթադրութիւնը քիչ մը յանդուգն է : Ի՞նչ բտել է , սպանն , գիտէ՞ք որ մարդ խը ըսածին վրայ դռնէ շատ վտաս ըլլալու է գիմացինը այդպիսի այլանդակութեանց տէր հնչակելու համար :

— Բայց , միւրրա-դուքս , անշուշտ՞ դուք զձեզ իմ իշխանութեանս ներքե չկարծելով . . . կը ծաղրարանէք . . . ձեր զուարթութիւնը զարմանք չպատճառեր ինձ . մնաց որ Ձեր ԱԳ նուութիւնն խը մտաց ազատութիւնը : պահած է ասկէ աւելի ծանրակշիւ պարտոյաներու մէջ :

— Հասցա ի՞նչ ընեմ , սպանն . զուարթութիւնը աղքատին հարատւութիւնն է . . . :

— Միւրրա-դուքս , դուչեց գնդապետը խտտութեամբ , իմ տէրս՝ թողաւ որն այդ պարտանաց արժանի չէ . . . :

— Ի՞նչ սրբաւանք , սպանն , հարցուց Կասթրոնի՞սպալած :

— Ձեր Ազնուութիւնը կ'ըսէ թէ զուարթութիւնը աղքատին հարստութիւնն է :

— Աղէ՛կ , բայց այս խօսքէն ի՞նչ նախատինք կ'ենէն ձեր տիրոջը , թողաւ որին համար :

— Աղկէ չը՛հետևիր թէ , միւրրա , դուք զձեզ իմ տիրոջս իշխանութեան ներքե տեսնելով , բոլոր ինչքերնիդ կողպտուած կը համարիր :

— Գիւրաղղած էք , սպանն : Ապահովեղիք . այս խորհրդածութիւնը պարզապէս փիլիսոփայական էր , և բնաւ չէր ակնարկեր իմ մանաւոր դիրքս :

— Այդ ուրիշ , միւրրա-դուքս . ես ալ զարմացայ աղքատութեան խօսք ընենիդ լսելով :

— Շխալը , թշուառութիւն բառն աւելի կը յարմարէր ինձ , ըստ Քրուսթիլյաք ինքալով :

— Տակաւին ձեր հարստութեանը հաւատարող քիչ կայ , տէ՛ր իմ : Ձեր ծախած ազամանդներուն մէկ մասին փոխարէն ստացած ահագին դուսարներնիդ ձեզի և ձերիններուն համար սխալ պահուի : Իմ տէրս , Կիլոմ ա՛Օրանժ , անուց կարդէն չէ որ իրենց մարդիկը կը հարստացընեն քաղաքական թշնամիներու ինչքը գրաւելով :

— Այդչափ հարուստ ըլլալը չ'իտէի , խեղճ Քրուսթիլյաք , ըստ Կասթրոնի ինքնիրեն : Եթէ այս բանը դուշակէի , մի խենթիցեր էր որ այնքան ճրայ կ'ընէր այն ծովային գազան Գանիէլ նաւակառը զբօսեցընելու համար : Յետոյ յարեց բարձրաձայն . Այս կէտին մէջ ձեր տիրոջը վիհանձութիւնը կը տեսնեմ , սպանն . ուստի իմ անբաւ ստացուածքներս , դանձիրս . . . Կասթրոնը ցած ձայնով յարեց . Այս ալ հաճելի բան մ'է որ մարդ մէկ անդամ խը կենաց մէջ լսէ . Իմ անբաւ ստացուածքներս , իմ գանձերս :

— Տէ՛րս ինձ հրամայեց բտել ձեզ , միւրրա , թէ կրնաք նա մը վարձել տալ ձեր բոլոր ճսխութիւններն Անդղլիա տանելու համար :

— Օ՛, Հին դուլթաներս, Հին թիկնոցս, մազերը թափած
 թաղեայ գլխարկս և Հին սուրս, ըսաւ Քրոսթիյաք ինքնիրեն .
 ահա ասոնք են իմ բոլոր շարժուն և անշարժ օտացուածքս : Ասոնք
 փոխադրելու համար նաւատորմիդ մը վարձելու հարկ չկայ :
 Յետոյ շարունակեց բարձրաձայն . Գառնանք Հիմա, պարոն, ձեր
 հոս գալու պատճառին և իմ անցեալ կենացս նկատմամբ ձեր ը-
 րած զիւտերուն :

— Երեք տարի է որ, միլորտ-դուքս, եկաք այս կղզին բնա-
 կելու, անտեսանելի մնայով ամենուն, և ծովասպառակի մը և
 ուրիշ վարձեալ մարդոց բերնով ձեր բնակարանին վրայ այլանդակ
 զրոյցներ տարածեցիք, որպէս զի հետաքրքիր մարդիկ չմտենան
 անոր :

— Ալ բնաւ բան մը չեմ հասկընար ըսածներէն, մտածեց
 Քրոսթիյաք . Կապոյտ-Յօրուքը . . . ո՛չ . . . այրին . . .
 այսինքն . ո՛չ . . . դքսուհին . . . կամ մանաւանդ մեռեալին կի-
 նը . . . ո՛չ . . . վերջապէս որո՞նք կինը կ'ուզէ թող ըլլայ, չէ՞
 որ այս երեք շտափիներուն հետ պատուական ժամանակ կ'անցը-
 նէ : Յակայն տեսայ . . . աչքովս տեսայ ասոնց հետ իւր տար-
 օրինակ մտերմութիւնը . . . լսեցի . . . : Բայց ի՞նչ կ'ուզէ
 թող ըլլայ . եթէ քիչ մ'ալ սյուպէս երթայ, ինելքս պիտի թուցու-
 նեմ . . . կարծես իրօք ապուշ եղայ և ուղեղիս մէջ հրախաղու-
 թիւններ կ'ըլլան :

Գ Լ Ո Ի Խ Ի Ն Ն Ի Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

Ջ Ա Բ Մ Ա Ն Ք

Բիւթէք շարունակեց .

— Ձեր գաղտնի գործակատարաց արարքը կատարելապէս յա-
 ջողեցան, միլորտ-դուքս, և երկու ամիս առաջ, կարգէ դուքս
 դիպուածով մը ձեր գոյութիւնը տիրոջս յայտնուեցաւ, որով և ի-
 մացաւ թէ յանդէտս ձեր, կամ ձեր կատարեալ հաւանութեամբը
 զձեզ, միլորտ-դուքս, վտանգաւոր գործիք մ'ընել կ'ուզեն :

— Ձիս գործիք ընել կ'ուզեն, ի՞նչ գործիք, պարոն :

— Ձեր Ազնուութիւնն ինձի չափ գիտէ . Աւերայլի գահձին
 և Սէն-Ժեռմէնի Պապական արքունեաց քաղաքագէտներուն հա-
 մար միջոց մը չկայ որ անկարելի ըլլայ . անոնց հօյը չէ թէ
 քաղաքային պատերազմն ընդ երկար պառակտէ դժբաղք երկիր
 մը, բաւական է որ իրենց առաջադրութիւններն զլուխ ելնեն :
 Հարկ չկայ այս մասին աւելի խօսելու, միլորտ-դուքս :

— Ինչո՞ւ չէ, պարոն, ինչո՞ւ չէ, կ'ուզեմ որ աւելի ևս
 խօսիք ասոր վրայ, որպէս զի տեսնեմ թէ մինչև ո՞ր աստիճան
 խարեր են զձեզ : Խօսեցէք, պարոն, խօսեցէք :

— Միլորտ, խաբուած չըլլալուս ապացոյցն այս է թէ իմ
 պաշտօնին նպատակը Գաղղիացի նուիրակի մ'առաջադրութիւններն
 ի դերև հանել է . այս նուիրակը, Ձեր Ազնուութեան հետ միա-
 բանած ըլլայ կամ չըլլայ, այս վայրկենիս կղզիս կ'սպասուի :

— Կ'երդնում, պարոն, որ այդ Գաղղիացի նուիրակին գա-
 լուստը չէի գիտեր :

— Կը հաւատամ, միլորտ : Սակայն ինչ ինչ զրոյցներ տիրոջս,
 թագաւորին, կարծել տուին թէ Ձեր Ազնուութիւնը իւր հօրեղ-

բոր՝ Յակոբ Սթուարթի գէմունեցած հին ատելութիւնները մոռնալով, սոյն գահընկէց թագաւորին՝ դրով ծառայութիւն խոստացեր է :

— Յակոբ Սթուարթ գահընկէց ըլլալով, ըստ Քրուսթիայք ձայնը վստահեցնելով, իրաց կերպարանքը բոլորովին կրփոխուէր, և ես ալ հետևաբար կրնայի զիջանիլ . . . հօրեղբօրս . . . նպաստաւոր շարժումներ ընելու զոր գոռողութիւնս չէր ներեր ինձ առաջ :

— Աւրեմն, մի՛լորտ, ըստ ձեր տեսութեան, ձեր որոշումը մեհանձնութեանն թելագրուած պիտի ըլլար :

— Անտարակոյս, առանց զիս վտանգի ենթարկելու, կրնայի մտանալ . . . գահընկէց թագաւորի մը . յարեց Քրուսթիայք աներկիւզ, բայց կ'երգնում ձեզ որ այդ բանը չըրի :

— Այլ հաւատամ Ձեր Ազնուութեան :

— Աւրեմն, այն ատեն ձեր պաշտօնն այլ ևս նպատակ չունենալով . . . :

— Գիտէք հարկաւ, մի՛լորտ-դուքս, որ ձեր խոստման երաշխաւորութեանն հակառակ, պարագաները կրնան փոխուիլ, և ձեր որոշումներն ալ պարապայից պէս կրնան փոխուիլ : Անդղիոյ գահը բարձրանալու յոյսը կրնայ շատ խոստումներ մտցընել տալ, մի՛լորտ-դուքս : Քաւ լիցի ինձ անցելոյն մէջ պատահածները յիշել հոս, բայց Ձեր Ազնուութիւնը գիտէ թէ ինչե՛ր զոհեց երբ ուղեց յանգուցն ձեռք մ'երկրեցընել Միսցեալ-Թագաւորութեանց թագին :

— Օհ, Օհ, ըստ Քրուսթիայք ինքնիրեն, կ'երեի թէ շատ անձարակ չեմ եղեր, և բռնածս փրցունող շուտիկներէն եմ եղեր : Եթէ գիտնամ այս գործին ինչ վախճան ունենալը, շատ պիտի զուարճանամ :

— Իմ տէրս, թագաւորը, չկրնար մոռնալ, մի՛լորտ-դուքս, մինչև Անդղիոյ գահին թեկն ածելնիլ :

— Ահ, ճշմարիտ է այդ . գոչեց Քրուսթիայք այնպիսի գէմքով մը որպէս թէ իւր ըրածն անկեղծութեամբ կրխոստովանէր,

Ճշմարիտ է այդ, չեմ ուրանար : Բայց ի՞նչ ընէի . յաղթասիրութիւնը, փառքը, երիտասարդութիւնը : Բայց հաւատացէ՛ք ինձ, սպարոն, յարեց հառաչանք մ'արձակելով և վշտագին ձայնով մը խօսելով, հաւատացէ՛ք ինձ, մարդս քանի տաղիքն առնէ, խելքը զլո՛ւրդ-կու գայ . տարիներուն հետ փառասիրութիւնն ալ կ'անցնի կ'երթայ, և քիչէն գոհ ըլլալով մարդ առանձնութեան մէջ կ'աղբի : Անգամ մ'որ իւր անգորրութիւնը գտնէ նաւահանգստին մէջ, մարդս կրից փոթորիկներուն վրայ փիլիսոփայական հայեացք մը ձգելով, հայրենի արտերը կրմշակէ . . . եթէ ունի . . . կամ գտնէ կենաց վտակին հոսումը կրգիտէ խաղաղութեամբ . . . որ քիչ ատենն սիտի երթայ անհետանայ յախտնականութեան ովկիանոսին մէջ : Աւերջապէս, սպարոն, կրնայք հասկընալ թէ՛ եթէ մեր առաջին երիտասարդութեան ատեն յանդուգն խորհուրդներ յղացանք, ասկէ չհետևիր թէ տարիքիս առնելով անոնց ունայնութիւնը չճանչնանք : Հիմա ես առանձնութեան մէջ անչուք և խաղաղ կեանք մը կրվարեմ մատաղ և գեղանի կիսջ մը հետ, բոլորախիս գանուողներուն սիրելի ըլլալով և քիչ մ'ալ բարիք գործելով : Ա՛հ, սպարոն, ահա միայն այսպիսի կեանք մը կը յարմարի ինձ . չեմ վարանիր ուրեմն, խօսքերս հաստատելու համար, երգնուլ ձեզ, թէ երբէք աչք չունիմ Անդղիոյ գահուն . կ'երգնում անգնուականութեանս վրայ, որ բնաւ երբէք ամենափոքր փափաք մը, ցանկութիւն մը չունիմ :

— Գժբողգաբար, մի՛լորտ-դուքս, ձեր երգումն ընդունելու իրաւունք չունիմ . իմ տէրս, թագաւորը միայն կրնայ զայն ընդունիլ և տեսնել թէ այդ երգումը նոր խոսովութեանց գէմ գոհացուցիչ երաշխաւորութիւն մը կրնայ համարուիլ : Իսկ ես հրաման ունիմ Ձեր Ազնուութիւնը Լոնտրա տանելու, և պէտք է որ պաշտօնս կատարեմ :

— Շատ ժրջան անձ մ'էք, սպարոն . կը տեսնեմ որ երբ միտքերնիդ բան մը դնէք, ալ բնաւ խօսք չէք հասկընար :

— Ինչ որ ալ պատահի, մի՛լորտ-դուքս, ինձ արուած հրամանները կատարող մէկն եմ ես : Սեր խօսակցութեան մէջ տիրող

Հանդարտութենէն պէտք է հասկընաք որ ձեռնարկութեանս յաջողելուն վրայ կասկած չունիմ. քանի որ Ձեր Ազնուութիւնն այս վայրկեանս իմ պաշտօնիս ինչ ըլլալը գիտէ, տարակոյտ չունիմ որ առանց ամենափոքր ընդգրկմութիւն մ'ընելու պիտի հետևի ինձ :

Գրուածիցաք կրցածին չափ երկարեր էր խօսակցութիւնը. կամ պէտք էր զնդապետին հետևիլ, կամ ճշմարտութիւնը խոստովանիլ անոր : Կասքօնը Բիւթլէրին քսաւ .

— Կնթաղրենք թէ, պարոն, հաւանիմ ձեզի հետ երթալու, ինչ եղանակաւ պիտի քալենք :

— Ձեր Ազնուութիւնը, միշտ ձեռքերն այսպէս կապուած, պիտի ներէ ինձ որ ձախ թևս իրեն տամ. աջ ձեռքովս դաշոյնը պիտի բռնեմ, որպէս զի եթէ ձայն մը հանէք՝ սպաննեմ զձեզ, մի'լորտ, և ձեր տան ճամբան պիտի բռնենք :

— Յե՞տոյ, պարոն :

— Երբ ձեր տունը հասնինք, մի'լորտ, անմիջապէս հրաման պիտի տաք ձեր գերիներէն միոյն, որ երթայ ձեր ձկնորս սևերուն պատուիրէ որ իրենց նաւը պատրաստեն . այն նաւը կրնայ զմեզ Պարպատ փոխադրել : Այն կղզին ինձ սպասող պատերազմական նաւ մը պիտի գտնենք, և այն նաւով, տէ՛ր իմ, Լոնտրա պիտի փոխադրուիք և Աշտարակի կառավարչին ձեռքը պիտի յանձնուիք :

— Բայց իրօք խելքերնիդ կը կտրէ՞ որ, պարոն, ես ինքնին հրամայեմ զիս փախցընելու համար պէտք եղած ամեն բան պատրաստելու :

— Այո՛, տէ՛ր իմ, և ասոր պատճառը շատ բնական է. Ձեր Ազնուութիւնը գաշոյնիս ծայրը կ'զգայ :

— Այո՛, անշուշտ . . . կը դառնաք, կը դառնաք, նորէն գաշոյնին կու գաք . . . մէկ բանը տասն անգամ կ'ըսէք, պարոն :

— Մեք, Հօլանտադիքս շատ բեղմնաւոր երևակայութեան տէր չենք . . . ինչ ընենք . . . մեր միջոցները շատ խժոժական են, բայց մեզի համար կարևոր բանը գործ մը գլուխ հանելն է .

հիմա՛ այս պողպատին կտորն իմ գործս կրնայ լինցընել, վասն զի եթէ մինչև անգամ ամենափոքր մէկ պատուէրիս չուզէք հնազանդիլ, մի'լորտ-գուքս, ինչպէս որ արդէն պատիւ ունեցայ աղբարարել ձեզ, անխնայ կ'սպաննեմ ձեզ . . . :

— Ես ալարդէն պատիւ ունեցայ, պարոն, ձեզ ըսելու . . . որ ձեր ընտրած միջոցը բիշ մը այլանպակ կը թուի ինձ . . . բայց գերիներ ունիմ . . . բարեկամներ ունիմ, և շատ աղէկ կրնաք գուշակել որ ձեր արիութեան հակառակ . . . :

— Աստուած իմ, ինչ կ'ըսէ ինձ . . . բայց, մի'լորտ . . . եթէ զձեզ սպաննեմ . . . շատ յայտնի է որ ետքն ալ ես պիտի սպաննուիմ կամ ձեր գերիներէն, կամ ծովասպատակ ու ցլորս ըստած շուտիկներէն, կամ Գաղղիացի պաշտօնակաշներէն, ո՞րք կատարեալ իրաւունք պիտի ունենան զիս հրացանի բռնելու, ինչու որ Անգղիացի եմ, և պատերազմի ժամանակ ոտք կը կոխեմ այս կղզին, որ ամուր տեղ մը կը համարուի :

— Ինչպէս որ կը տեսնէք, պարոն, մահս անպատիժ չպիտի մնայ :

— Այս պաշտօնն ընդունելով, ես արդէն կեանքս կանխաւ զոհեցի. իմ բոլոր ուզածս այն էր որ, մի'լորտ, այսուհետև տիրոջս համար երկիւղի, և Անգղիոյ համար խռովութեանց պատճառ մը չըլլաք. Այի՛՛՛՛՛՛՛ թաղաւորն արիւն չ'իռեր, բայց քաղաքային պատերազմը կ'ատէ : Ձեր մշտնջենստոր բանտարկութիւնը կամ մահը միայն կրնայ սպաճովել զինքը. հիմա, մի'լորտ-գուքս, կամ գաշոյնն ընտրեցէ՛ք կամ բանտը. կամ գերի պիտի ըլլաք ինձ կամ զոհ : Խօսք մ'ալ ունիմ. եթէ բայարձակապէս իմ իշխանութեանս ներքև չըլլայիք, մահս աչքս առնելով սա ըսելիքս չէ՛ք ըսեր ձեզ :

— Խօսեցէ՛ք, պարոն :

— Այս գաղտնիքը մէկ կողմանէ ապացուցանելով ձեզ այն չաբիքը զոր պիտի կրնաք հասցընել Անգղիոյ, մի'լորտ-գուքս, միս կողմանէ պիտի ապացուցանէ նաև թէ Այի՛՛՛՛՛ թագաւորին համար ո՞րքան կարևոր բան մ'է որ ձեզ նման քաղաքական թշնամի մը

գործելու անկարող վիճակի մը մէջ գրուի. ձեր առաջին ապստամբութեան կուսակիցները, որք ձեր գլխատու թիւնն աչքովն տեսան, զձեզ մոռցած չեն տակախին :

— Իրաւ կ'ըսէք . . . այդ մասին չեմ զարմանար, և ո՛րչափ անկեղծ են անոնց զգայունները, որովհետեւ իրաւունք ունէին հաւատարու որ երբէք չպիտի կրնայի չնորհակալութիւն յայտնել իրենց . . . Յետոյ կատրօնն ըստ ինքնիրեն. Այս Հոլանտացին թէպէտ բաւական իմաստութեամբ կը խօսի, սակայն միայլ գրեթէ որ անպատճառ զլուխ կտրուած է :

Գնդապետը յարեց .

— Ա՛հ, մի լորտ, ձեր աղգեցութիւնը շատ սուղի պիտի նստի ձեզ :

— Շատ սուղի պիտի նստի, պարոն, շատ սուղի . . . եթէ այս աղգեցութեան իրապէս ինչ ըլլալը անգամ մը մտածուի :

— Ինչո՞ւ կ'ուրանար զայն, մի լորտ, քանի որ ձեր թշնամիներն անգամ ձեր աղյեցութեան կարեւորութիւնը կը խոստովանին . . . : Եթէ մտածէք անգամ մը թէ ձեր կուսակիցները ձեր արեամբը ներկիալ հանդերձներուն կտորները սրբոց մատուցներու պէս կը պահեն, ամեն օր կ'արտասուեն ձեր մահուան վրայ . . . : Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն եթէ յանկարծ երկիք անոնց աչքին : Ի՞նչ եռանդ, ի՞նչ խանդ պիտի բորբոքէք անոնց սրտերուն մէջ : Արկրկնեմ ձեզ, մի լորտ, որովհետեւ այս խօսովութեան և վրդովման ժամանակներուն մէջ ձեր աղգեցութիւնը կրնայ աղէտալի ըլլալ, անոր համար, ինչ կերպովալ ըլլայ, պէտք է չհրաբայընել զայն :

— Գուք մէկը սպաննելուն կամ մշտնջենաւոր կերպով բանտարկելուն աղբեցութիւնն ո՞ր չեղապայքէ՞լ կ'ըսէք, ըստ Գրուսթիյաք : Լու ուրեմն . . . կ'երևի թէ քաղաքականութեան մէջ այդպէս կ'ըսուի . . . : Ինչ որ է, իմ վրայ եղած այդ անվտանգութիւնն անտեղի չէ, վասն զի ես անուղղայ դաւադիր մ'եմ : Առսակիցներուս աջի զլուխ կտրեցին, կարծելով թէ թերեւս ասով կը բարեփոխիմ : Բնաւ երբէք : Փոխանակ միտ դնելու այս

հայրական աղգարարութեան, դարձեալ կը դաւաճանեմ առջինէն աւելի. տարակոյս չկայ որ այս բանը ձեր տիրոջը համբերութիւնը հատցուց . . . : Բայց զիսցած ըլլաք որ ձեր տէրը շատ կը սխալի. վասն զի այս վերջին անգամ ըլլալով հանդիսա որասէս կը յայտարարեմ ձեր և երկնից առջև թէ չեմ դաւաճաներ, թո՛ղ իւր դահուան վրայ հանդիստ քնանայ, իւր թաղը բնաւ ցանկութիւն չըրգուեր յիս . . . : Բաւական սարղ և որոշ չէ՞ այս խօսքս, պարոն :

— Շատ սարղ է, շատ որոշ է, մի լորտ. բայց պէտք է որ չնդունած հրամաններս կատարեմ : Հիմա երբ տուն երթանք, վեհապետ Ալիյոմ թաղաւորին մէկ ինքնադիր նամակը պիտի յանձնեմ ձեզ, որով բնաւ կասկած չպիտի ունենաք ինձ յանձնուած սպառնալի հեղինակութեան և նպատակին վրայ . . . : Օ՛ն, մի լորտ, անձնատուր եղիք, պատերազմի բաղէն է այս : Սակայն, եթէ վարանիք, յոյս զօրաւոր օժանդակի մը վրայ դրած եմ . . . :

— Ա՞րն է այդ :

— Տեղեկանալով ինէ թէ ինչ վիճակ կ'սպաննայ ձեզ, դաշոյնիս ներքև տեսնելով զձեզ . . . :

— Գաշոյն կ'ըսէ կ'երթոյ . . . ըստ Գրուսթիյաք մտքէն, այդ բառէն զատ ուրիշ բան չունի . . . ձեռքը . . . :

— Գրուսթին, շարունակից Բիթլէր, լուսադոյն պիտի համարի ձեր բակալուած տեսնել զձեզ քան թէ սպաննուած . . . զիտենք թէ ո՛րչափ կը սիրէ զձեզ, ո՛րչափ կը գողայ ձեր վրայ . . . : Եթէ պէտք ըլլայ, կեանքը կը զոհէ ձեզի համար, տարակոյս չունիմ որ ինչ ծանրակշիւ վիճակի մէջ ըլլանիդ պիտի երեւց հասկըցընել ձեզ . . . : Հիմա, մի լորտ-գո քս, սա երկու քին մէկն ընտրեցէ՛ք. կամ ձեր մարդոցմէ մէկ քանին կանչեցէ՛ք եթէ կրնան ձոյներնիդ լսել, կամ զիս ձեր սուներ տարէ՛ք, վասն զի պէտք է որ անյապաղ մեկնինք . . . :

Ի գովեստ Գրուսթիյաքի պարտիմք ըսել թէ՛ իմանալով որ Ասպոյն-Մօրուքը կտրուած է բարձրաստիճան ազնուականի մը

հետ, զոր կաթողին կը սիրէ, և զինքն այն բարձրաստիճան աղ-
նուականը կը կարծեն, վեհանձնութեամբ որոշեց ծառայութիւն
մ'ընել մանկամարդ կնոջ, Բիթլէր զնդապետին սխալման գործը
կարելի եղածին չափ երկարելով և թողալով որ անձանօթ մի-
լորտ-գուքսին տեղ զինքը բռնէ տանի: Բերկրութեամբ սրտի
մտածելով որ Անժէլկարի երախտապարտ սիրտի մնայ իրեն, Կաս-
քօնն արխութեամբ յանձն առաւ իւր ընդունած գրեց բոլոր հե-
տեանքը կրելու. միայն սա չլիտէր թէ ինչպէս գուրս ելնելու
է Գիւարնակ-Բլուրէն որ գործը չյայտնուի:

— Միլորտ-գուքս, ձեր հրամանաց կ'սպասեմ. հիմա անմիջ-
ջապէս պէտք է մեկնիլ, ըսաւ զնդապետն անհամբերութեամբ:

— Ե՛ս ձեր հրամանին կ'սպասեմ, յարեց ասպետը, որ բաւա-
կան սոսկմամբ կը տեսնէր այս խօսակցութեան ծանրակշիռ վայր-
կենին մօտենալը:

Յանկարծ Քրուսթիլյաքի միտքը բան մ'ինկաւ. այս վտանգէն
խուտափելու և Կայայտ-Մօրուքին խորհրդաւոր ամուսինն ազա-
տելու միջոց մը կարծեց թէ գտաւ:

— Մտիկ ըրէք, պարոն, ըսաւ բաղդախնդիրը ծանրու-
թեամբ, իբր աղնուական խօսք կու տամ ձեզ, որ զիս ուր ալ
սանիք, աղատ համարձակ հետերնիդ կու գամ, սալայն կ'ուզեմ
որ կինս՝ միայն իմ՝ մեկնելէս ետեւ իմանայ ձերբակալութիւնս:

— Ի՞նչ կ'ըսէք, միլորտ-գուքս, ձեր տիկինը պիտի թողուք
երթաք . . . առաջնի վիճակնիդ իրեն իմացընելու:

— Այո՛, աղոր պատճառը ե՛ս գիտեմ. . . ասկէ զատ սրտա-
ճմլիկ հրաժեշտներու չեմ գիմանար:

— Իմ ընդունած հրամաններս, միլորտ-գուքս, ըստ որում
ձեզ միայն կը վերաբերին, ըսաւ զնդապետը, ազատ էք տիկնոջ
նկատմամբ ուղածնուդ պէս վարուելու: Չեր առաջադրած նպա-
տակին հասնելէ աւելի զիւրին բան չկայ: Եթէ տիկինը զար-
մանքյայտնէ ձեր մեկնելուն վրայ, կ'ըսէք թէ հարկ անհրաժեշտ
է քանի մ'օրուան ուղեորութիւն մ'ընել ի Սէն-Փիէր . . . :
Իսկ հոս իմ ներկայութեանս գալով. . . զիւրաւ կրնաք պատճառ

մը գտնել . . . կը մեկնինք . . . և ձեր նաւակով Պարսպատ
կ'երթանք . . . :

— Անշուշտ, ըսաւ Կասքօնը շփոթած, վասն զի զնդապետին
առաջարկութեանցը մէջ բաղմադիմի վտանգներ կը տեսնէր, ան-
շուշտ, զիւրին է այսպիսի պատճառ մը մէջ բերել մեկնելուս.
բայց ձկնորսներուն հրամաններ տալու համար տանը մէջ աղմուկ
հանելու է, որմէ կնոջս ուշադրութիւնը պիտի արթընայ . . .
. . . Չափազանց երկչոտ է և ամեն բանէ գող կ'եղնէ . . . :
Հոս որովհետեւ մէկը չլրնար ոտք կոխել, ձեղ տեսնելով կասկածի
պիտի երթայ . . . և ասկէ պիտի յառաջ գայ այն ցաւալի տեսա-
րանը զոր երբէք չեմ ուզեր տեսնել:

— Ուրեմն ի՞նչպէս ընենք, միլորտ:

— Կայ միջոց մը որ անպատճառ կը յաջողի, պարոն. բռնե՛նք
այն ճամբան ուրկէ գուք հոս ելաք. որչափ վտանգաւոր ըլլայ՝
հոգ չէ. կղզիէն գուրս կ'եղնինք այն միջոցաւ որով գուք կրցաք
կղզին ելնել: Պարսպատ համելուս պէս կնոջս կ'իմացընեմ այս
գծնգակ պատահարը որ յախտեան զիս իրմէ կը բաժնէ, և գուք
ալ պիտի երդնուք ինձ, որ իմ մեկնելէս ետեւ նեղութիւն չպիտի
տրուի անոր:

— Գժբաղդաբար, միլորտ, ձեր առաջարկածն անկարելի է:

— Ինչո՞ւ:

— Ես մարդարտի որսորդին քարայրէն եկայ:

— Ա՛ւ, մարդարտի որսորդին քարայրէն երթանք:

— Ուրեմն, միլորտ, այն քարայրին և ձեր պարտեզը շրջա-
պատող անդունդին մէջ եղած դաղտնի հաղորդակցութիւնը չէ՛ք
գիտեր:

— Բնաւ չէի գիտեր . . . բայց քանի որ այդ հաղորդա-
կցութիւնը կայ, անոր միջոցաւ մեկնինք:

— Բայց անկարելի է, միլորտ. այն քարայրէն ներս մտնե-
լու համար պէտք է որ ինքզինքնիդ ալիքներուն յանձնէք, որք
զձեզ սահանքի մը վրայէն անցընելէ ետեւ ստորերկրայ լճի մը
մէջ կը գահալիժեն:

— Այդ քարայրէն ի՞նչպէս դուրս ելնելու է :

— Պէտք է քսան ոտք բարձրութիւն ունեցող ջրվէժէ մը վեր ելնել, մի՛ լորտա . . . :

— Այդ ինձ համար շատ դժուար բան է . . . : Ուրեմն ձեզ քարայրին դրսի կողմը բերող նաւը . . . :

— Պարսպատ դնաց, մի՛ լորտա . . . և՛ Գաղղլական լրտես նաւերուն հսկողութեան հակառակ, եթէ կրցաւ այն եղերքին մտնել, սլաքաձառն անոր անմատչելի ըլլալն է . . . :

— Կարծեմ այդ ճամբով չպիտի կրնանք երթալ, ըստ ասպետն անձկութեամբ :

— Եթէ զիս մտիկ կ'ընէք, մի՛ լորտա, այսչափ մը կ'իմացընէք դքսուհւոյն թէ միայն մի քանի օրուան համար կ'ուղևորիք : Ես կը հաւատամ ձեր խոստման թէ բնաւ ձեռքէս խոյս տալու վտրձ չպիտի ընէք :

— Այդ խոստումն ըրի ձեզ, պա՛րոն :

— Կը հաւատամ ձեր խօսքին, մի՛ լորտա . . . և դաշոյնս կ'երաշխաւորէ անոր գործադրութիւնը :

— Շատ սիտի զարմանայի եթէ դաշոյնը դարձեալ երևան չէնէր, ըստ Քրուսթիյաք մտքէն : Խօսքիս վրայ կատարեալ հաւատարմութիւն ունի . . . սակայն նոյնչափ ալ իւր դաշոյնին վրայ դրած է վատահումիւնը . . . : Տէ՛ր Աստուած, այս կասկածաութիւնը . . . : Բայց խնդիրն ասոր վրայ չէ : Կ'նչ ընեմ արդեօք . . . ի՞նչ ընեմ . . . Գքուհին բան մը չցիտեր : Եթէ գերիներուն հրաման տամ, չպիտի հնազանդին ինձ : Ամեն բան լմընցաւ . . . սուտերս ալ հատան . . . :

Քրուսթիյաք ճարահատեալ որոշեց ինքզինք բաղդին յանձնել : Շատ վշտացաւ տեսնելով որ Ասպոյտ-Վօրուքին համար բրած անձնանուիրութիւնը չպիտի կրնայ պէտք եղած արդիւնքը յառաջ բերել . վասն զի զիտէր որ տունը ոտք կոխելուն պէս իւր խորամանկութիւնը երևան պիտի ելնէր : Յետոյ ուրիշ երկիւղ մ'ալ ունեցաւ : Քաբայիպը տեսնելով որ Քրուսթիյաք սպառազէն օտարականի մը հետ կու գայ, կրնայ ըլլալ որ զնդապետին վրայ

յարձակի : Եւ արդէն Բիւթլէր բացորոշ կերպով իմաց տուած էր բաղդախնդրին թէ զայն անաշտրմաբար սիտի սպաննէ եթէ որ և է յարձակում մը տեսնէ : Ասպետն սկսաւ մտածել թէ իւր գերը կրնայ անհաճոյ հետեանք մ'ունենալ, և կ'անիծէր այն անխորհուրդ հետաքրքրութիւնն : ու տխմարութիւնը որ զինքն այսպիսի կնճառտ և վտանգաւոր կացութեան մը մէջ ձգեցին :

Պ Ե Բ Զ Ա Ռ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Ո Ր Ի

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ		ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ	
	ԵՐԷ		ԵՐԷ
Ա. Նաւորդը	3	ԺԲ. Ամուսնութիւն	114
Բ. Կապոյտ-Մօրու քը	13	ԺԳ. Ընթրիք	129
Գ. Ժամանումն	25	ԺԴ. Ճշմարիտ սէր	151
Դ. Հայր Կրիֆօնի տունը	36	ԺԵ. Գաղղիոյ նուիրակը	162
Ե. Չարմանք	44	ԺԶ. Մըրիկ	173
Զ. Ազգարարութիւն	51	ԺԷ. Յեղակարծ պատահար մը	181
Ը. Քարայրը	59	ԺԸ. Միլրտ-դու քս	192
Ը. Գիւարնակ-Բլուրը	72	ԺԹ. Չարմանք	203
Թ. Գիշեր	86		
Ժ. Խոհարան ցլորսաց	95		
ԺԱ. Հոգեկորդ վարպետը	104		

